



ԵՎՐԱՍԻԱ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՐԺԱՐԱՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Աշակերտական գիտաժողովի նյութերի ժողովածու

Երևան-2016

ՀՏԴ 94(479.25):06
ԳՄԴ 63.3(5Հ)
Կ 477

Հրատարակության և երաշխավորել
Եվրասիա միջազգային
համալսարանի
գիտական խորհուրդը

Խմբագրական խորհուրդ՝

Էդիկ Գևորգյան (պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի դասախոս)

Շիրակ Թորոսյան (պատմական գիտությունների թեկնածու, Ազգային ժողովի պատգամավոր, «Ջավախք» հայրենակցական միության նախագահ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս)

Արթուր Եղիկյան (ԵՄՀ վարժարանի պատմության ուսուցիչ)

Սյուզի Կարապետյան («Օհանյան» կրթահամալիրի պատմության ուսուցիչ)

Կ 477

Կիլիկյան Հայաստանի դերը հայկական պետականության կայացման գործում: Աշակերտական գիտաժողովի նյութերի ժողովածու.-Եր.: Եվրասիա միջազգային համալսարան, 2016. - 148 էջ:

Աշակերտական գիտաժողովի նյութերի ժողովածուում ընդգրկված են 2016թ. ապրիլի 16-ին Եվրասիա միջազգային համալսարանում կայացած համաժողովի զեկուցումները՝ նվիրված հայկական պետականության կայացման գործում Կիլիկյան Հայաստանի ունեցած դերին:

Ժողովածուում ընդգրկված նյութերը կարող են օգտակար լինել բարձր դասարանի աշակերտներին նմանատիպ գիտահետազոտական և ստեղծագործական բնույթի աշխատանքներ կատարելու համար:

ՀՏԴ 94(479.25):06

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-866-02-4

© Եվրասիա միջազգային համալսարան, 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանում 2016թ. ապրիլի 16-ին տեղի ունեցավ աշակերտական գիտաժողով՝ նվիրված Կիլիկյան Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական, պետական, հոգևոր և մշակութային կյանքին: Գիտաժողովն իր բնույթով միջոպրոցական էր, որին մասնակցելու թույլտվություն ստացան Երևանի և մարզերի դպրոցների մոտ երեք տասնյակ աշակերտներ: Նկատի ունենալով գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ուղղությամբ աշակերտների համընդհանուր ակտիվությունը, ինչպես նաև նմանատիպ գիտաժողովի նորությունը՝ համաժողովի կազմկոմիտեն որոշեց այն դարձնել ամենամյա: Երկրորդ համաժողովը կհրավիրվի 2017թ. ապրիլին:

Գիտաժողովի աշխատանքներն իրականացվեցին երկու բաժիններով՝ ըստ քաղաքական-ռազմական պատմության և սոցիալ-տնտեսական, կրոնական ու մշակութային ոլորտների:

Տեղի ունեացան գիտական քննարկումներ Կիլիկյան հայկական իշխանության առաջացման, հզորացման, թագավորության հռչակման, պետության վարած ներքին և արտաքին քաղաքականության, տարածաշրջանում ունեցած դերի, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի թուլացման և անկման պատճառների վերաբերյալ:

Միաժամանակ քննարկվեցին Կիլիկիայի հայոց պետության սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային կյանքին վերաբերող բազմաթիվ հիմնախնդիրներ՝ հաճախ անելով ուշագրավ եզրակացություններ: Զեկուցումների մեծ մասը ուղեկցվեց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Սույն գիտական ժողովածուում ներառված քսանմեկ զեկուցումները մեր կարծիքով առանձնանում են հետազոտական պատշաճ մակարդակով, գիտական, տեսական ու գործնական աշխատանքի խորությամբ ու արդիականությամբ: Այն սովորող երիտասարդությանը սեփական պատմությամբ հայեցի դաստիարակելու, մերօրյա անկախ պետականությունը հզորացնելու լավագույն միջոցներից է:

ԲԱԺԻՆ 1
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Գայանե Միրաքյան, Նանե Ներսիսյան

Աբովյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց, 8-րդ դասարան
Ուսուցիչ՝ Ռուզաննա Միրզոյան

Հայտնի է, որ պատմական զարգացման հին փուլերում ամեն մի ժողովրդի ճակատագրի վրա խոշոր ազդեցություն է ունեցել նրա հայրենիքի աշխարհագրական դիրքը: Հայ ժողովրդի պատմությունը, սկսած նախապատմական ժամանակներից մինչև վերջին դարերը, եղել է չընդմիջվող մի պայքար իր հայրենիքի խստաշունչ բնության և այդ հայրենիքի վրա բոլոր կողմերից եկած չար ուժերի դեմ: Հասկանալի է, որ այս բազմադարյան պայքարն էլ պայմանավորել է մեր ժողովրդի հոգեբանության ու ազգային կերպարանքի շատ ու շատ կողմեր, դարձել մեր պատմությունն առաջ մղող ամենավճռական գործոնը:

Հայոց պատմությունը լի է երևույթների ամենաանսովոր դրսևորումներով, վիճակների արտառոց լուծումներով, ճակատագրի ամենաաղետալի հարվածներով: Բայց նույնիսկ այսպիսի պատմության հյուսվածքի մեջ Կիլիկյան Հայքը, նրա պետությունն ու ազգային կյանքը հանդես են գալիս որպես բացառիկորեն արտասովոր երևույթներ, որոնք պիտի ապացուցեին, թե հայի մեղքով չէ, որ նրա պետությունն ու հանրային գոյությունը նախընթաց դարերում քանիցս ընկել են ու հառնել: Եվ, իսկապես, ինչպե՞ս կարելի էր հավատալ, թե չնվաճող մի ժողովուրդ իր բնաշխարհից այնքան հեռու՝ արևելքի ու արևմուտքի, հարավի ու հյուսիսի խաչմերուկում՝ անկուշտ բռնատիրությունների ճամփաբաժանի վրա, պիտի կարողանար ստեղծել իր ազգային ծաղկուն կյանքը և քաղաքական մի այնպիսի կազմակերպություն, որի հետ ստիպված լինեն հաշվի նստել նույնիսկ նվաճող անկուշտ բռնատիրությունները: Այն խաչմերուկ երկիրը, որի մասին խոսք է գնում, գտնվում է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան եզերքին՝ Փոքրասիական թերակղզու հարավ-

արևելյան մասում: Գոյություն ունի ավանդություն՝ կապված Կիլիկիա անվան ծագումնաբանության հետ:

«Կիլիկիա» անունը բացատրում է մի հնագույն առասպել, որի ընդերքում, անշուշտ, Փյունիկյան գաղութներ հիմնելու պատմական հիշողությունն է պահպանված: Փյունիկյան Ագենոլրոս թագավորի 3 որդիները՝ Կադմոսը, Փյունիկը և Կիլքիսը, գնում են որոնելու իրենց Եվրոպե քրոջը, որին առևանգել էր աստվածահայր Ջևսը: Փյունիկիայի վշտահար թագավորը հրամայում է իր որդիներին փնտրել-գտնել դստերը և առանց նրա չվերադառնալ: Եղբայրները երկար փնտրում են իրենց քրոջը, սակայն չգտնելով չեն վերադառնում հայրենի Փյունիկիա: Կադմոսը Հունաստանում հիմնում է Թեբե քաղաքը, իսկ Կիլքիսը, գալով Միջերկրականի այս գոտրիկ ծովափը, իր անունը տալով երկրին, դառնում է նրա թագավոր : «Կիլիկիա» անունը այլ բացատրություն էլ ունի: Իբր այն ծագել է եբրայերեն «քելկիմ» կամ «կալիկա» բառից: Երկուսն էլ նշանակում են «քարքարոտ»¹: Հնուց ի վեր նույնիսկ Ասորեստանի թագավոր Սալմանասար Գ-ի (մ. թ. ա. 860-825թթ.) վիմագրում այն կոչվել է Կիլիկիա²: Բայց ինչու՞ միայն քարքարոտ: Երկրի արևմտյան շրջանը կոչվում է Քարուտ Կիլիկիա, հյուսիս-արևելյանը՝ Լեռնային Կիլիկիա, իսկ ծովամերձ շրջանը՝ Դաշտային Կիլիկիա: Տավրոսի լեռնաշղթան, հյուսիս-արևմուտքից ձգվելով հարավ-արևելք՝ մինչև Անտիտավրոս, Կիլիկիան պատնեշում է Փոքրասիական երկրներից, որն անցանելի է միայն ամուր բերդերով պաշտպանված մի քանի կիրճերով: Քաղաքակրթության հնագույն այս օրրանը մշտապես կովախնձոր է եղել հեռու-մոտիկ հարևանների համար: Պատմության ամբողջ ընթացքում միշտ էլ աշխարհի նվաճողների ուշադրության կենտրոնում է գտնվել այս փոքրիկ՝ ընդամենը 50 հազար քառակուսի կմ տարածություն զբաղեցնող երկիրը: Հինարևելյան քաղաքակրթության օջախներից մեկը լինելով՝ սկզբնապես պատկանում էր Փոքրասիական թերակղզում մեկը մյուսին հաջորդող պետություններին, ապա անցավ Ալեքսանդր Մակեդոնացու ստեղծած աշխարհակալությանը, որից էլ ժառանգեցին Հռոմը, Բյուզանդական կայսրությունը: Հնագույն ժամանակներից հայերը զգալի թիվ են կազմել Կիլիկիայում: Նրանց քանակն աճեց, երբ Տիգրան

¹ Աննա Պետրոսյան – Բոլոր ժամանակների Հայաստանը, հատոր Գ, Երևան, 2010, էջ 9:

² Բագրատ Ուլուբաբյան – Զրուցարան: Ծաղկաքաղ հայոց պատմության, Երևան «Արևիկ» 1991, էջ 397:

Մեծի տերության կազմի մեջ մտան նաև Կիլիկիայի արևելյան շրջանները: Կիլիկիայում հայերի նոր խմբեր հաստատվեցին վաղ միջնադարում, հատկապես արաբական նվաճումներից հետո: Մ. Կերեցեցիին հայերը Կիլիկիայում առանձին եպիսկոպոսություններ ունեին և կարևոր դեր էին կատարում երկրի կյանքում: VII-IX-րդ դարերում Կիլիկիան արաբների ձեռքում էր, X դարի կեսից՝ վերստին Բյուզանդիայի, մինչև որ հաջորդ հարյուրամյակում այստեղ հայերն աստիճանաբար դրության տերը դարձան և իրենց ձեռքը վերցրին երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի տնօրինությունը:

Կիլիկիայի բնակչության կազմում ասորիների, հրեաների ու հույների հետ միասին հայերը միշտ էլ զգալի թիվ են կազմել: Արաբաբյուզանդական արշավանքների պատճառով Հայաստանից դուրս մղված հայ զանգվածների մի զգալի մասն էլ VIII-X դարերում ապաստանեց այդ երկրում: XI դարի սկզբին սելջուկ թուրքերի դեմ ռազմական պատվար ստեղծելու նպատակով Բյուզանդիայի կայսր Բարսեղ Բ-ն Վասպուրականից շուրջ 15 հազար ընտանիք գաղթեցրեց Կիլիկիա: Հայոց մյուս նահանգներում անպաշտպան մնացած բազմաթիվ իշխանական տներ էլ իրենց հպատակ բնակչությամբ ու ռազմական ուժերով վասպուրականցիների հետքերով փոխադրվեցին այնտեղ, և դարի երկրորդ կեսում արդեն Կիլիկիայի դաշտային ու լեռնային մասերի մանր իշխանությունների գլուխ էին կանգնած հայերը: Հետզհետե իրենց տիրույթները ընդարձակելով՝ աստիճանաբար նրանք իրենց ձեռքում կենտրոնացրին նաև ռազմական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը:

Առաջիններից մեկը Աբղարիբ Արծրունին էր, ով, տաղանդաշատ ու քաջ զորավար լինելով, իսկույն գրավեց բյուզանդացի կառավարիչների ուշադրությունը: Նրան հրավիրեցին Կոստանդնուպոլիս, որտեղ արքունիքում շատ արագ վստահություն ձեռք բերեց և, համարվելով Բյուզանդիոնին անվերապահ նվիրված զորավար³, 1042 թ-ին նշանակվեց Կիլիկիայի Տարսոն, Մամեստիա, Ադանա, Պապեռոն, Լամբրոն հայաշատ շրջանների կառավարիչ: Աբղարիբը ոչ միայն տաղանդավոր զորավար էր, այլև հմուտ կառավարիչ, ով իր հովանավորությամբ կարողացավ բարձրացնել տեղի հայերի զինական, տնտեսական և մշակութային կշիռը:

³ Ա. Պետրոսյան – Բոլոր ժամանակների Հայաստանը, հատոր Գ, Երևան, 2010, էջ 12:

Մեկ այլ իշխան Արցախ նահանգից՝ Օշին անունով, խուսափելով սելջուկների հալածանքներից, 1073 թ. իր ողջ ազգուստհմով գաղթեց Կիլիկիա , արժանացավ Արծրունի Աբլղարիի իշխանի բարձր հովանավորությանը և որպես պարզև ստացավ Լամբրոն անառիկ բերդը՝ շրջակա հողերով և գյուղերով հանդերձ⁴: Աբլղարիի, չբավարարվելով այսքանով, Օշին իշխանին կնության տվեց իր դստերը և զինական ու խնամիական կապերով ամրապնդեց հայերի դիրքն ու առաջնությունը Կիլիկիայում: Օշին իշխանը Հեթումյան տոհմի հիմնադիրը դարձավ:

Աբլղարիի Արծրունին խնամիական կապեր էր հաստատել նաև Գագիկ II Բագրատունի գահընկեց արքայի հետ, որի որդի Դավիթն ամուսնացած էր Աբլղարիի Արծրունու դստեր հետ⁵:

1071թ. Մանազկերտ քաղաքի մոտ սելջուկների դեմ ճակատամարտում բյուզանդական բանակի պարտությունից հետո Փիլարտոս Վարաժնունին կարողացավ ստեղծել ընդարձակ ինքնավար հայկական իշխանություն՝ Մարաշ կենտրոնով, որի սահմանները Մեծ Հայքի Ծոփք նահանգից տարածվում էին մինչև Անտիոք և Եդեսիա: Փիլարտոսը իր հրամանատարության տակ հավաքեց հայկական զինական մեծ ուժ, որով հաջողությամբ կռիվներ մղեց բյուզանդացիների և սելջուկների դեմ միաժամանակ: Բյուզանդիան իսկապես ստիպված էր ճանաչել Փիլարտոսի նվաճումները: Բյուզանդիայի կայսրը նրան մեծամեծ նվերներ ուղարկեց: Փիլարտոսն ինքն անձամբ գնաց Կոստանդնուպոլիս՝ կայսրին շնորհակալություն հայտնելու: Նրան այնտեղ բարձր գնահատելով՝ նվիրեցին ոսկյա զենքեր և հռչակեցին որպես «Ավգուստ»՝ Օգոստոս...⁶:

Շատ կարճ տևեց Փիլարտոսի ստեղծած իշխանության կյանքը: 1083 թվականին այն սկսեց խարխլվել, և սելջուկների նոր, կատաղի հարձակումների ժամանակ հայերը կորցրին Ադանան, Տարսուր, Մսիսը, Անարզաբան, Անտիոքը: Մակայն Կիլիկի

⁴ Հ. Ժամկոչյան, «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, էջ 119:

⁵ Ա. Պետրոսյան – Բոլոր ժամանակների Հայաստանը, հատոր Գ, Երևան, 2010, էջ 14:

⁶ Ա. Պետրոսյան – Բոլոր ժամանակների Հայաստանը, հատոր Գ, Երևան, 2010, էջ 16:

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՆՐԱ ԴԵՐԸ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ**

Ռոբերտ Հարությունյան

Երևանի թիվ 167 հիմնական դպրոց, 8-րդ դասարան
Ուսուցիչ՝ Վալենտինա Գլոյան

Յուրաքանչյուր պետության կայացման գործում ամենակարևորագույն և հիմնարար խնդիրներից է համարվում արտաքին փոխհանաբերությունները հարևան երկրների հետ: Տվյալ հոդվածում ներկայացվում է Կիլիկիայի հայերի ավելի քան հարյուրամյա համառ և արյունալի պայքարը հանուն անկախության և միջազգային ճանաչման: Հաջողությունների հիմնական պատճառը Ռուբինյանների վարած խելամիտ ներքին և, հատկապես, արտաքին քաղաքականությունն էր: Տվյալ հոդվածի համատեքստում դիտարկվում է նաև միջզգային առևտրի խնդրի ուսումնասիրումը և կարևորումը, ինչը ապահովում է երկրի քաղաքականապես առողջ մրցակցությունը տվյալ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական հոլովույթում:

Իշխանության ստեղծումից (1080 թ.) մինչ թագավորության հաստատումն (1198 թ.) ընկած ժամանակահատվածում Ռուբինյանները կարողացան ներքին ասպարեզում սանձահարել խոշոր ֆեոդալների անջատողական ձգտումները, իսկ արտաքին ճակատում խելոք քաղաքականությամբ և համառ պայքարով ամրացնել և ընդարձակել իշխանության սահմանները: Նրանք արևելյան կոպիտ ուժի քաղաքականությանը կարողացան զուգակցել արևմտյան նուրբ ու հաշվենկատ դիվանագիտությունը և հասան ցանկալի արդյունքի: Քանի դեռ Բյուզանդացիները զբաղված էին Սելջուկ-թուրքերի դեմ պաշտպանություն կազմակերպելու գործով՝ սկսած Ռուբեն I-ինից Ռուբինյանները սկսեցին ամրանալ երկրի լեռնային մասում և մաքրել այն ընդհամադիր ֆեոդալ-ավատատերերից¹: Երբ Բյուզանդացիները Մանազկերտի (1071 թ.) ճակատամարտի խայտառակ պարտությունից նահանջել էին Արևմուտք, իսկ Սելջուկները 12-րդ դարի 30-40-ական

¹ Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները//Պատմա-բանասիրական հանդես, 1964, N 1, էջ 51:

թվականներին արդեն մասնատվել էին՝ այդ ժամանակ բյուզանդական կայսր Հովհաննես Կոմնենոսը հասկացավ, որ իր կայսրության հարավարևելյան անկյուններից մեկում ստեղծված հայկական իշխանությունը գրավելով նորանոր տարածքներ ձգտում է Միջերկրական ծովի ափերին իր բարեբեր հողերով ու հարուստ նավահանգիստներով: Դաշտային Կիլիկիա հայերի առաջընթացին Բյուզանդացիները պատախասնեցին ռազմական բախմամբ 1137 թ., արդունքում հայերը պարտություն կրեցին, գերի ընկավ Լևոն 1-ինը և ուղղարկվեց Կոստանդնուպոլիս: Գերությունից փախած Լևոն 1-ինի որդին՝ Թորոս 2-րդը (1145-1169 թթ.) Կիպրոսում կազմակերպում է ջոկատներ և նրանց օգնությամբ մաքրում է Կիլիկիան բյուզանդացիներից և վերականգնում իշխանապետությունը²: Ռուբինանների կողմից խելացի է օգտագործվում նաև խաչակրաց արշավանքները, որոնք ուղղված էին Բյուզանդացիների և Սելջուկ-թուրքերի դեմ: Խաչակիրների երկու արշավանքներն (1096-1099 և 1147 թթ.) էլ հայերը հմտորեն օգտագործեցին ի շահ Կիլիկիայի: Հայոց իշխանությունը և Լևանտում ստեղծված խաչակիրների եվրոպական պետությունները դարձան մի հակաիսլամական և հակաբյուզանդական բռունցք³:

Մլեհի կառավարման շրջան

Ռուբինանների արտաքին քաղաքականության մեջ ավելի արգասաբեր եղավ Մլեհի (1169-1175 թթ.) վարած քաղաքականությունը: Պատմական հին աղբյուրներում Մլեհը ներկայացվում է անփառունակ և անարժան մի անձնավորություն⁴ այն բանի համար, որ նա արտաքին և մասամբ էլ ներքին քաղաքականության մեջ փոփոխություններ մտցրեց, որոնք դեմ էին միջնադարյան քաղաքականության դոգմաներին: Մինչ Մլեհը Կիլիկյան իշխանները Բյուզանդացիների դեմ պայքարում հիմնականում դաշնակցում էին լատինական խաչակիր իշխանությունների հետ⁵: Մլեհը դիվանագիտական հարաբերությունների մեջ մտավ հարևան մահմեդական պետությունների հետ՝ հատկապես

² Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները//Պատմա-բանասիրական հանդես, 1964, N 1, էջ 72:

³ Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները//Պատմա-բանասիրական հանդես, 1964, N 1, էջ 74:

⁴ Մութաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 42:

⁵ Նույն տեղում էջ 74:

Հալեպի սուլթանության⁶: Մաքրելով պետական ապարատը հակառակորդներից կարողանում է վերահսկել ամբողջ կառավարական համակարգը և Կիլիկիայի տարծքը մաքրում խաչակիրներից ու թշնամի մահմեդական տարրերից: Տիրանալով որոշ ծովային նավահանգիստների Կիլիկիայի հսկողության տակ է դնում Արևելք-Արևմուտք առևտրական ճանապարհներ: Սա բերում է տնտեսական առաջընթաց, որն էլ իր հերթին զագացնում է քաղաքական, ռազմական, մշակութային և իրավական համակարգերը: Նրա օրոք վերաշինվեց և մայրաքաղաք դարձավ Միս քաղաքը: Անջատողական ձգտումներ ունեցող ավատատերերին ու կրոնական դոգմաներով շարժվող հոգևորականությունը դուր չէր գալիս այս քաղաքականությունը: 1175 թ. Միս քաղաքում դավադրություն կազմակերպվեց և Մլեհը սպանվեց դաժան մահով:

Ռուբեն 3-րդի կառավարման շրջան

Նրան փորանինեց Ստեփանեի որդին Ռուբեն 3-րդը (1175- 1187 թթ.), որը շարունակեց հորեղբոր գործը: Նրա ժամանակ Իկոնայի սուլթանության օգնությամբ երկիրը մաքրվեց վերջին Բյուզանդիական վասալ Կիո Սահակից⁷: Գերեվարված Կիո-Սահակին հանձնում են Անտիոքի դուքսին և սրանով վերանում է վերջին Բյուզանդական հենակետը Կիլիկիայում: Ամբողջ եկիրը միավորվեց հայկական իշխանության ներքո, որի սահմանները ձգվում էին Սելևկիայից մինչև Ամանոսի (ՄՆ) լեռները⁸:

Այսպիսով, ավելի քան հարյուրամյա համառ և արյունալի պայքարի գնով Կիլիկիայի հայերը կարողացան երկրից դուրս քշել բյուզանդացիներին, կազմակերպել ու ամրապնդել իրենց իշխանությունը, ձեռք բերել քաղաքական անկախություն և ստիպել Բյուզանդիային ու հարևան այլ պետություններին ճանաչել այն: Վերոհիշյալ հաջողությունների հիմնական պատճառը Ռուբինանների վարած խելամիտ ներքին և հատկապես արտաքին քաղաքականությունն էր: Ռուբինանների խելացի արտաքին քաղաքականության վառ օրինակներից է Մլեհի կողմորոշումը դեպի հարևան պետությունները,

⁶ Նույն տեղում էջ 101:

⁷ Մուքիսայան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978, էջ 99:

⁸ Նույն տեղում, էջ 100:

չնայած որ նրանք մահմեդական երկրներ էին: Նա բյուզանդացիների և իսլամականների դեմ (1169-1176 թթ.) մղած պայքարում ընդունեց սելջուկների կողմնորոշումը: Սակայն այդպիսի ժամանակավոր դաշինքները եզակի էին:

Փոխհարաբերությունները հարևան երկրների հետ /12-րդ դարից սկսած/

12-րդ դարից սկսած Կիլիկիան Հայաստանը սեղմված էր Եգիպտոսի և Իկոնյայի սուլթանությունների միջև, որոնց հյուսիս-արևելյան փեղերին բոլոր Կոմենենոսները, Ալեքսեյ 1-ից (1081-1118 թթ.) մինչև Ալեքսեյ 2-րդը (1180-1183), թշնամաբար են վերաբերվել Ռուբինանների մեծ իշխանությանը, քանի-որ Կիլիկիային դիտում դեմ նա պայքարում էր մերթ՝ միայնակ, մերթ՝ լատին-իսլամականների հետ դաշնակցած⁹: Բյուզանդիան միշտ էլ թշնամաբար էր վերաբերվում Մեծ Հայքի նկատմամբ: Նա էր, որ կործանեց Անիի Բագրատունիների պետությունը 1045 թվականին: Նրա մեծապետական և ագրեսիվ ստրատեգիան միշտ էլ խոչընդոտել է Կիլիկյան Հայաստանի ստեղծմանն ու զարգացմանը: Անհետատես ու անհանդուրժող քաղաքականության շնորհիվ իրենցից վանեցին Կիլիկիային, որը կարող էր դառնալ քրիստոնեական վահան Միջերկրական ծովի էին որպես կայսրության անբաժանելի մաս: Կայսրությունը 1136 թվականից անընդհատ հարձակումներ է գործել Կիլիկիայի վրա:

Լևոն 2-րդի կառավարման շրջան

Թորոս 2-րդի հետնորդներին հաջողվեց երկիրը արևմուտքը մաքրել բյուզանդացիներից, իսկ արևելքը՝ իսլամականներից: Ռազմականից բացի վարում էին նաև ագրեսիվ կրոնակա քաղաքականություն, որի նպատակն էր հայ եկեղեցու ձուլումը հունական ուղղափառ եկեղեցուն: Հունադավան դառնալով հայ եկեղեցին կհունացներ նաև հայ ազգին: 1179 թվականին Հռոմկլայում հրավիրված հայ եպիսկոպոսների ժողովը 17 ձայնով ընդդոմ 15-ի մերժեց Մանուիլ կայսեր և Միխայիլ պատրիարքի եկեղեցիների միավորման առաջարկը: Կայսրության եկեղեցական քաղաքականությունը ստիպեց հայերին «փրկություն» որոնել Հռոմի պապերի մոտ, որոնք էլ իրենց հերթին էին ջանում կաթոլիկություն ներարկել հայերի մեջ: Ալեքսեյ Անգելուս 3-րդ կայսրը (1195-1203) Լևոն 2-

⁹ Սուրբասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978, էջ 109:

րոյ ին առաջարկեց եկեղեցիների միավորում և հետո 1196-ին արքայական թագ ուղարկեց նրան¹⁰: Լևոն 2-րդի կառավարման ամբողջ ժամանակաշրջանը (1187-1219 թթ.) համարվում է Ռուբինանների արտաքին քաղաքականության հաղթանակների շրջան: Նա շատ խելացիորեն կարողացավ օգտագործել միջազգային բարենպաստ պայմանները ի շահ հայկական պետության: Արդյունքում նրա օրոք Կիլիկիան դարձավ Մերձավոր Արևելքի զարգացած պետություններից մեկը: Նա նաև օգտագործեց խաչակիրների 3-րդ արշավանքը (1189 թ.), որի իրակացնողներն էին Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ Բարբարոսա Շիկամորուսը, Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծապիտուրը և Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ 2-րդը: Նպատակը Միջերկրականի արևելյան ափերին ստեղծված լատինական պետությունների պաշտպանությունն էր Սալահ-էդ-Դինի արշավանքներից¹¹: Ճանապարհ տալով խաչակիրներին Լևոն 2-րդը չեզոքացրեց նրանցից սպասվող վտանգը և ձեռք բերեց դաշնակիցներ Սալահ-էդ- Դինից պաշտպանվելու համար:

Միջազգային առևտրի նշանակությունը

Միջազգային առևտուրն առաջնային նշանակություն ուներ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության համար: Լայն սպառում ապահովելով բազմատեսակ ապրանքների համար՝ այն խթանում էր երկրի արհեստների ու գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև մեծ եկամուտներ բերում պետական գանձարան: Արդեն XIII դ. սկզբից Կիլիկյան Հայաստանն առևտրական կապեր հաստատեց միջերկրածովյան երկրների՝ մասնավորապես Վենետիկի և Ջենովայի Հանրապետությունների հետ¹², որոնք անմիջապես սկսեցին մրցակցել Հայոց թագավորությունում ամուր դիրքեր գրավելու համար: Գրեթե հարյուր քառասուն տարի Հայկական Կիլիկիան կարևոր դերակատարում էր պահպանում միջերկրածովյան առևտրում, ինչը չէր կարող չանդրադառնալ պետության արտաքին քաղաքականության վրա: Ընդ որում, հատուկ ուշադրության է արժանի առևտրի՝ որպես Հայոց թագավորության անկման գործոն հիմնախնդիրը: Այսպես, առաջին

¹⁰ Մուքիասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978, էջ 100:

¹¹ Նույն տեղում, էջ 77:

¹² Մուքիասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978, էջ 77:

հերթին նշենք XIII-XIV դդ. թե՞ Արևելքում, և թե՞ Արևմուտքում տեղի ունեցած ռազմաքաղաքական վճռորոշ իրադարձությունները, որոնք շրջադարձային նշանակություն էին ունենում նաև միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար: Ապա, համադրելով աշխարհաքաղաքական այդ կարևոր փոփոխությունների և Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրային պայմանագրերի կնքման ժամանակագրական տվյալները՝ կարելի է երևան հանել դրանց միջև եղած պատճառահետևանքային կապը, ինչի օրինակով կարելի է բավական փաստարկված դիրքերից ներկայացնել տնտեսական շահի և քաղաքական հարաբերությունների փոխազդեցության ընթացքը: Կիլիկյան պետության 2-րդ շրջանից անցնելուց առաջ հարկավոր է կանգ առնել նաև նրա ներքին քաղաքականության մի կարևոր հարցի վրա: Ե՛վ իշխանական, և թագավորական շրջանում, այն ֆեոդալական պետություն էր, ու կատարում էր գյուղացիության ու այլ աշխատավորական զանգվածների շահագործման ու դիմադրությանը ճնշելու ֆունկցիան: Երկրի կառավարումը կենտրոնացնելու համար Ռուբինանները գրեթե մեկ դար շարունակ պայքարում էին կենտրոնախույս ուժերի դեմ: Ներքին կյանքում նրանց մղած առաջադիմական պատերազմներ կարելի է համարել Օշինյանների և Նաթանայեյանների դեմ մղված պայքարը: Արդյունքում այդ երկու հայկական հզոր իշխանական տները ենթարկվեցին կենտրոնական իշխանությանը: Իշխելով երկար տարիներ: Ռուբինանները Հեթումյաններին թողեցին տնտեսապես և քաղաքականապես հզոր պետություն:

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կարեն Ավդալյան, Վահե Կարապետյան

Լ.Միրիջանյանի անվան հ.155 հիմնական դպրոց, 9-րդ
դասարան

Ուսուցիչ՝ Ա. Սարգսյան

Դինանագիտությունը հզոր զենք է, քանի որ այն հիմնված է խոսքի ուժի վրա, և հաղթում է այն կողմը, ում խոսքն ավելի համոզիչ ու հիմնավոր է: Դիվանագիտության մեջ խոսքի մեծ ուժի մասին ասել է Սոկրատեսը. «Խոսել սկսիր երկու դեպքում՝ կամ երբ որ խոսքի առարկան պարզորոշ կշռադատել ես կամ երբ որևէ բանի մասին ասելն անհրաժեշտ է, որովհետև միայն այդ երկու դեպքում է խոսքը լռությունից ավելի լավ, իսկ մնացած դեպքերում անհամեմատ ավելի լավ է լռելը, քան խոսելը»¹:

Կիլիկյան Հայաստանի, որպես պետություն կայանալու գործում անչափ կարևոր էր դիվանագիտության դերը, հաշվի առնելով այդ երկրամասի աշխարհաքաղաքական դերը, քանի որ միայն ճիշտ հաշվարկված շախմատային քայլերի շնորհիվ էր հնարավոր արդյունավետ կապեր ստեղծել, բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան պետությունների հետ, որոնք ոչ միշտ են բարեկամաբար տրամադրված:

Ուսումնասիրելով Կիլիկյան Հայաստանի պատմությունը, մենք եկանք այն համոզման, որ այն բոլոր հաջողությունները, որ ունեցան Կիլիկյան Հայաստանի իշխաններն ու արքաները՝ նրանց հաջող դիվանագիտական քայլերի արդյունք են, ինչպես նաև պարտությունները, որոնք վկայում են որոշ քաղաքական գործիչների կատարած անհեռատես քայլերի մասին, որոնք հանգեցրել են մեծագույն կորուստների: Ելնելով այս ամենից, մենք Կիլիկյան Հայաստանի պատմությունը դիտարկում ենք որպես «Դիվանագիտական պատերազմների պատմություն» և դասակարգում ենք Կիլիկիայի քաղաքական գործիչներին համաձայն նրանց վարած արտաքին քաղաքականության:

I խումբ - Ապլդարիպ Արծրունի, Փիլարտոս Վարաժնունի, Գող Վասիլ, Ռուբեն I - այս գործիչները դիվանագիտական ասպարեզում

¹ Վլ. Վորոնցով - «Բանականության սիմֆոնիա» Երևան 1981թ., Էջ 272:

փայլուն հաղթանակներ չեն տարել, սակայն Կիլիկիայի ներսում կարողացել են ուժեղացնել ներքին ինքնավարությունը:

II խումբ – Լևոն I, Թորոս I և Թորոս II – Կիլիկիայի կայացման ժամանակաշրջանն է, երբ պետք էր պահպանել նախորդների ձեռք բերածը:

III խումբ - Հեթումյան, Լուսինյան հայոց այն արքաները, որոնց կատարած դինանագիտական քայլերը ներքին և արտաքին քաղաքականության մեջ չտվեցին մեծ արդյունքներ:

IV խումբ - մեզ առավել հետաքրքիր է այս խումբը, որը մենք պայմանականորեն անվանել ենք «ՌԻժեղ խումբ»: Նրանք են՝ Կոստանդին Ռուբինյան, Մլեհ, Լևոն II Ռուբինյան, Հեթում I: Այս գործիչներն ասպարեզ են մտել այն ժամանակ, երբ պահը բեկումնային է եղել Կիլիկիայի համար և կարողացել են ճիշտ կողմնորոշվել բարդ իրադրության պայմաններում:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ I ՌՈՒԲԻՆՅԱՆ (1095-1100թթ.)-Իրեն նախորդող իշխաններ Ապլղարիպ Արծրունուց, Փիլարտոս Վարաժնունուց, Գող Վասիլից և Ռուբեն I-ից, նա տարբերվում էր նրանով, որ ժամանակին հասկացավ հարևանների հետ արդյունավետ կապեր հաստատելու անհրաժեշտությունը: Նա իր նախորդների նման պայքարը չսահմանափակեց Կիլիկիայի ներսում բերդեր և ամրոցներ գրավելով, այլ ճիշտ հասկացավ խաչակիրների հետ համագործակցելու անհրաժեշտությունը՝ Բյուզանդիայի դեմ մղած պայքարում: Նա ոչ միայն իր գործը տրամադրեց ասպետներին Անտիոքի, Եդեսիայի, Երուսաղեմի գրավման ժամանակ, այլ նաև օգտագործեց իր ազդեցությունը՝ տեղի բերդատերերին իր կողմը գրավելու և սելջուկների ու բյուզանդացիների դեմն ուղղելու գործում: Նա լայնորեն օգտագործում էր դիվանագիտության մեջ ընդունված բոլոր միջոցները, ընդուպ մինչև դիվանագիտական ամուսնություն: Իր դստերը կնության տալով Եդեսիայի դուքս Ջոսլինին, նա ոչ միայն կնքեց ռազմական փոխօգնության դաշինք, այլ ստացավ նաև դուքսի և մարկիզի տիտղոսներ:

ՄԼԵՀ (1169-1175թթ.)-Ցավոք, մեր հոգևորական պատմիչները շատ քիչ տեղեկություններ են թողել այս տաղանդավոր քաղաքական գործչի մասին: Պատճառը հավանաբար նույն էր, ինչ որ Պապ թագավորինը, նրանց վարած ներքին և արտաքին, եկեղեցուն ոչ համակրելի քաղաքականությունը Մլեհը իշխանական գահ բարձրացավ իր

եղբորորդի Ռուբենի մահվանից հետո: Այդ ժամանակ Մլեհը ապրում էր Կիլիկիայից դուրս: Պատմիչներ Մատթեոս Ռոնհայեցին և Կիրակոս Գանձակեցին ամենայն մանրամասնությամբ նկարագրում են եղբայրներ Թորոս Բ-ի և Մլեհի վեճը, վերջինիս վտարվելը Կիլիկիայից, նրան վերագրում չափազանց դաժանություն: «Իր տեր Նուր-ադ-Դինի գործի օգնությամբ, առնելով իր եղբոր՝ Թորոսի մահվա լուրը, նա մտավ Կիլիկիյա, իր հակառակորդներին բանտ նստեցրեց, եպիսկոպոսների ատամները փշրեց...»² -գրում են հայ պատմիչները: Սակայն օտար պատմիչները նշում են, որ «մտնելով Կիլիկիա, նա թույլ չտվեց օտար զինվորներին թալանել երկիրը և վնասել բնակչությանը, այլ ինքը անձամբ առատորեն նրանց վարձատրել...»³: Ինչ՞ու այս մարդն այդպես չսիրվեց իր ժամանակակիցների կողմից: Կիրակոս Գանձակեցի պատմիչը նշում է նրա իշխանատենչությունը, վկայելով, որ այդ պատճառով էլ Թորոս Բ-ն նրան վտարեց Կիլիկիայից: Իհարկե, Մլեհը ձգտում էր իշխանության, սակայն դա փառամոլություն, ամեն ինչ ոտնահարող տենչանք չէր, այլ մի խելացի և ուժեղ մարդու ձգտում, որը հասկանում էր իր նշանակությունը իր երկրի համար, հասկանում էր, որ եթե այդ պահին ինքը ծառայում է սելջուկ Նուր-ադ-Դինին, ապա դա է միակ միջոցը նրա արյունոտ թաթերը Կիլիկիայից հեռու պահելու համար: Մլեհը լավ էր հասկանում, թե ինչ սպառնալիք է մանկահասակ Ռուբեն II-ի կառավարելը Կիլիկիայի համար: Խաչակիրները Ռուբենին սիրաշահում էին, քանի որ նրանց ձեռնտու էր թույլ Կիլիկիան, իսկ բյուզանդական փոխարքան պատրաստ սպասում էր...

«Եթե լսում էր, որ ինչ-որ մեկի մոտ ոսկի և արծաթ կար, խլում էր և լցնում իր գանձարանը» գրում է պատմիչը Մլեհի մասին, իսկ ինչ՞ու ոչ, չէ որ Մլեհը այդ գանձերի հաշվին ամրացնում էր Կիլիկիայի բերդերը, կառուցում ճանապարհներ, ուժեղացնում բանակը և թանկարժեք նվերներով «գնում» հարեվան երկրների բարեկամությունը: Իսկ այս բոլորը քայլեր էին, որոնք տանում էին դեպի հզոր Կիլիկիա: Սակայն հայ հոգևորականության և խոշոր ավատատերերի համբերությունը սպառվեց, երբ Մլեհը ցանկացավ իր դիրքերն էլ ավելի ամրապնդել «անհավատների» հետ դաշինք կնքելով: 1175թ Սսի իր պալատում սպանվեց իշխանաց իշխան Մլեհ: «Նրան սպանեցին իր վատ

² Ա. Պետրոսյան - «Բոլոր ժամանակների Հայաստանը», Երևան 2010թ., հատոր Գ, էջ 76:

³ Ա. Պետրոսյան - «Բոլոր ժամանակների Հայաստանը», Երևան 2010թ., հատոր Գ, էջ 77:

բնավորության համար»,- գրում է Մմբատ պատմիչը⁴: Ո՛չ, կարծում ենք մենք, նրան սպանեցին, որովհետև նա ամուր, անզիջում, կենտրոնաձիգ իշխան էր: Նա ավելի հեռուն էր տեսնում, քան իր շատ ու շատ ժամանակակիցներ:

ԼԵՎՈՆ II ՌՌԻԲԻՆՅԱՆ (1187-1219)-Իր քաղաքական հեռատեսությամբ նա, իրոք յուրահաստուկ կերպար էր և նրա այդ հատկանիշը դրսևորվում էր բոլոր հարցերում: Օրինակ, երբ մշտական պայքար էր մղվում Ռուբինյան և Հեթումյան իշխանական տների միջև, Լևոնը «կոչ արձակեց բոլոր հայ ռազմիկներին, կանչեց, բերեց բոլոր նրանց, և հավաքվեցին նրա մոտ հայոց բոլոր զորքերը», - գրում է Մատթեոս ՌԻճԻԱԵՑԻՆ: Այս քայլով, նախ Լևոնն ուզում էր Կիլիկիայում շատացնել հայ բնակչության թիվը, մյուս կողմից՝ մեծացնել իր կողմնակիցների բանակը: 1190-ական թթ. միջազգային իրավիճակը բավական բարենպաստ էր Կիլիկիայի համար, Լևոն II-ը որոշեց օգտագործել պահը: Սկսված խաչակրաց III արշավանքը տարածաշրջան էր բերել եվրոպական 3 հզոր տիրակալների՝ Ֆրիդրիխ Բարբարոսա, Ռիչարդ Առյուծասիրտ և Ֆիլիպ II: Իշխանաց իշխանը նրանց խոստանում է ամենայն աջակցություն և դառնում է Անգլիայի արքայի հարսանյաց հանդեսի պատվավոր հյուրը: Այստեղ, ինչպես նշում է արքահայր Բենեդիկտոսը, Լևոն II-ը լայն զործունեություն է ծավալում, նա համագործակցում է «Հյուրընկալներ» և «Տաճարականներ» խաչակիր միաբանությունների հետ Աքրա և Տիր քաղաքների գրավման ժամանակ: Հռոմի պապի, Հռոմեական Սրբազան կայսրության և Բյուզանդիայի միջև եղած հակասությունները նա կարողանում է օգտագործել՝ անառիկ պահելով իր երկրի սահմանները, իսկ IV արշավանքի ժամանակ՝ 1204թ. նա հմտորեն պահպանում է չեզոքություն: Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ Բարբարոսան դիմում է Լևոն II-ին՝ խնդրելով մթերքով և ձիերով ապահովել իր զինվորներին: Լևոն II-ը որպես պատվիրակ կայսրի մոտ է ուղարկում կաթողիկոս Գրիգոր Ապիրատին, որին Բարբարոսան ասում է, որ ինքը իր հետ թագ է բերել և «պատրաստ է դնել նրա գլխին, ում կցանկանա հայոց կաթողիկոսը», - գրում է Վարդան Բարձրաբերդցին իր «Պատմություն տիեզերական» մատյանում: Լևոն II-ը օգնություն է ուղարկում գերմանական զորքին, սակայն 2 օր անց կայսրը խեղդվում է գետում: Սակայն, ինչպես նշեցինք, Լևոն II-ը հմուտ դիվանագետ էր և լավ

⁴ Նույն տեղում, էջ 78:

էր հասկանում իր պետության անկախության համար խիստ վտանգավոր խաչակիր պետությունների առկայությունը: Այս լույսի տակ հասկանալի է դառնում Գրիգոր կաթողիկոսի ուղարկած տեղեկությունը Սալլահ-ադ-Դինին՝ Բարբարոսայի զորքի առաջխաղացման մասին: Չպետք է մոռանալ, որ խաչակիրներն ունեին նվաճողական ծրագրեր, որոնք կանգ չէին առնի նաև Կիլիկիան նվաճելու առաջ, հետևաբար Լևոն II-ը մեծ հմտությամբ իր երկրի անկախությունը և չեզոքությունը պահպանելու նպատակով, համագործակցում էր և նրանց և սելջուկների հետ: Եվ այս ամենը, ի վերջո, հանգեցրին նրան, որ 3 հակամարտող կողմերն էլ ընդունեցին Լևոն II-ին՝ որպես ինքնուրույն քաղաքական գործիչ և 1198թ. թագ ուղարկեցին: Նրա թագադրումը կայացավ Սուրբ Ծննդյան օրը Տարսուսի մայր տաճարում:

Լևոն I արքայի մասին հիացմունքով են խոսել ժամանակակից հայ և օտարազգի պատմիչները, վկայելով, որ «նա արքա էր հարուստ և անվանի, որ սարսափ էր ներշնչում օտարներին» (Միքայել Ասորի «Պատմություն»): Լևոն Մեծագործի դիվանագիտական տաղանդը դրսևորվեց ոչ միայն արտաքին հարաբերություններում, այլ նաև առևտրական պայմանագրեր կնքելիս: Նա շատ լավ էր հասկանում ծովային առևտրի դերը երկրի տնտեսության զարգացման գործում, այդ պատճառով էլ առևտրական պայմանագրեր կնքվեցին Վենետիկի, Ջենովայի, Պիզայի և այլ վաճառաշահ ու նավահանգստային քաղաքների հետ, սակայն դրանք սովորական պայմանագրեր չէին, դրանք ունեին մի կետ, որի շնորհիվ միջերկրական ծովով երթևեկող նավերը ձգտում էին նավարկել Կիլիկիային պատկանող ջրերով: Գաղտնիքը նրանումն էր, որ այդ կետի համաձայն, Կիլիկիայի ջրերում նավաբեկության ենթարկված առևտրական նավերի՝ ծովից հանած բեռների մի մասը պատկանում էր Կիլիկիային, իսկ մյուս մասը տրվում էր տիրոջը⁵:

Լևոն I-ը մահացավ 1219թ -ին՝ իր հաջորդին թողնելով ծաղկուն երկիր, իսկ սերունդներին իր «Մեծագործ» պատվանունը: Սակայն պատվանունը միայն այն ժամանակ է ճիշտ, երբ բռնում է քննությունը սերունդների, երբ մեծ գործերը նաև մեծ հետքեր են թողնում:

ՀԵԹՈՒՄ I (1226-1269թթ.) – Կոնստանտին Գունդստաբլի, որը նաև Ջապելի խնամակալն էր, որդի Հեթումը թագավոր դարձավ՝ շնորհիվ արքայադստեր հետ իր ամուսնության: Սակայն նա ապացուցեց, որ իր

⁵ Ա. Մելքոնյան - «Հայոց պատմություն» VII դասարանի դասագիրք, Երևան 2014թ., էջ 176:

տոհմը ոչնչով չի զիջում Ռուբինյաններին: Դառնալով արքա, նա իր նուրբ դիվանագիտությունը նախ օգտագործեց ներքին հարցերը կարգավորելու համար: Մշտական ընդդիմադիր Կոնստանտին իշխանին վերադարձրեց կռվախնձոր Լամբրոնի բերդը և նրան շնորհեց թագադիրի պաշտոնը: Իշխանությունը էլ ավելի կենրոնաձիգ դարձնելու համար նա իր ավագ եղբորը՝ Սմբատին տվեց սպարապետությունը, Լևոնին՝ մարաջախտությունը (սպառազինման մատակարարման գծով բանակի հրամանատար), Օշինը նշանակվեց պայլ, իսկ Բարսեղը՝ Սսի արքեպիսկոպոս: Անպայման պետք է նշել, որ և՛ Հեթում արքան, և՛ նրա եղբայրները, փայլուն կրթություն ստացած մարդիկ էին⁶: Հեթում I-ը լավ էր հասկանում Կիլիկիայի շուրջ ծավալված իրավիճակը: Խաչակիր պետությունները հուսալի դաշնակիցներ չէին, Բյուզանդիան բզկտվում էր սելջուկ-թուրքերի արշավանքներից, տարածաշրջանում ավերածություններ էին անում մոնղոլները, որոնք 1243թ. Չմանկատուկի ճակատամարտում դաժան պարտության մատնեցին թուրքերին: Այս պայմաններում միակ դաշնակիցը կարող էին լինել մոնղոլները, որոնք նույնպես հոգնել էին իրենց երկարատև արշավանքներից, և նրանց «շունչ քաշելու» ժամանակ էր պետք:

Հայ – մոնղոլական դաշինքը կնքվեց 1254թ. Հեթում I-ի և Մանգու խանի միջև Կարակորումում: Պայմանագրի համաձայն.

1. Երկու կողմերը պետք է օգնեին միմյանց պատերազմի ժամանակ:

2. Առանց Կիլիկիայի թագավորի համաձայնության և պահանջի, մոնղոլական զորքերն ու պաշտոնյաները հայկական թագավորության սահմանները չպետք է մտնեին:

3. Այն հողերը, որոնք զավթվել էին հայկական իշխանություններից, պետք է վերադարձվեին հայերին:

4. Մոնղոլական պետությունը հանձն էր առնում կարգավորել բուն Հայաստանի բնակչությունից գանձվող հարկերը և թեթևացնել հայկական եկեղեցուց վերցվող տուրքերը:⁷

Ինչպես տեսնում ենք, կնքված դաշինքը շահավետ էր Կիլիկիայի համար: Միգուցե, թվում է, թե Կիլիկիան վասալական կախվածության մեջ է ընկնում Ռսկե Հորդայից: Սակայն, կարդալով պայմանագիրը, այն

⁶ Ա. Պետրոսյան - «Բոլոր ժամանակների Հայաստանը», Երևան 2010., հատոր Գ, էջ 228:

⁷ Հ. Ժամկոչյան - «Հայ Ժողովրդի պատմությունը», Երևան, 1975թ., էջ 530:

տպավորությունն է ստացվում, որ այն կնքել են իրար հարգող և հավասար ուժեր ունեցող պետություններ:

Ինչպես և իր նախորդը՝ Լևոն I արքան, Հեթում I-ը մեծ ուշադրություն էր դարձնում երկրի տնտեսական զարգացմանը և այդ իմաստով, հայ-մոնղոլական պայմանագիրը, բացի ռազմաքաղաքականից, ունեցել է նաև տնտեսական մեծ նշանակություն, քանի որ, ըստ նրա, Կիլիկիայի վաճառականները կարող էին ազատ մուտք գործել մոնղոլական հսկայական տերություն և «Մետաքսի ճանապարհով» հասնել մինչև Չինաստան:

Հեթում I-ը դիվանագետ արքա էր և նրա բոլոր քայլերը, ինչպես լավագույն շախմատիստի մոտ խորը մտածված էին, որոնք նպաստեցին այդ ժամանակաշրջանում Կիլիկիայի պետության կայունացմանը: Մակայն նա հաշվի չէր առել մի շատ կարևոր հանգամանք, ավելի ճիշտ, չափից ավելի էր վստահել դրան, դա հայ իշխանների՝ կենտրոնաձիգ և կենտրոնախույս, միջև եղած հակասություն էր, որը հանգեցրեց 1266թ. Մառիի ճակատամարտում հայերի պարտությանը եզրիպտական մամլուքներից: ՌԻսուլմնասիրելով ժամանակաշրջանի պատմիչներ Վարդան Վարդապետի, Մբատ Սպարապետի, Գրիգոր Ակներցու և Մաղաքիա Աբեղայի հիշատակությունները այս դեպքերի կապակցությամբ, պատմաբանները նշում են, որ նկատելիորեն թուլացել էր հայկական բանակի կորովն ու մարտական ոգին երկրի ներսում սրված հակասություններից: Մասնավորապես սուր էին կենտրոնական իշխանության և կենտրոնախույս ուժերի՝ խոշոր հողատեր իշխանների միջև եղած հակասությունները: Հեթում I-ը մերժեց Սուլթան Բեյբարսի պահանջները՝ հույս դնելով իշխանների միասնության վրա, մինչդեռ Հեթումի 50 մեծ իշխաններից միայն 12-ը թշնամու դեմ հանեցին իրենց զորքերը, որոնցից շատերն էլ առանց կռվելու փախան՝ ավելի մտահոգվելով իրենց բերդերի ու տիրույթների ապահովությամբ⁸:

Հեթում I-ը այս հզոր շղթայի վերջին օղակն էր, շղթա որի բոլոր իշխաններն ու թագավորները, ճիշտ կողմնորոշվելով իրավիճակի մեջ, կատարում էին քայլեր, որոնք շատ հաճախ չէին հասկացվում ժամանակակիցների կողմից, քննադատվում էին, հաճախ վարկաբեկվում: Նրանք՝ այդ հզոր անհատականությունները, կատարում էին իրենց գործը՝ հասկանալով, որ դա անում են իրենց երկրի համար,

⁸ Հ. Ժամկոչյան – «Հայ ժողովրդի պատմություն», Երևան 1975թ հատոր 3, 781 էջ:

թեպետ կարող էր նաև այդ արարքի գինը շատ թանկ լիներ, այնքան թանկ, ինչպես մարդու կյանքը:

Կիլիկիայի դասերը. – Չինական ասացվածքն ասում է «Երբեք մի մոռացեք անցյալը, նա ապագայի ուսուցիչն է»: Երբ այս ռեֆերատը պատրաստում էինք, մեզ համար կարևոր էր պատասխանել մի հարցի. արդյո՞ք դիվանագիտորեն միշտ են ճիշտ կողմնորոշվել Կիլիկիայի իշխաններն ու թագավորները: Չ՞է որ, ըստ էության, Կիլիկիան որպես պետություն ձևավորվեց բարդ աշխարհաքաղաքական ժամանակաշրջանում, երբ իրար դեմ էին ելել հզոր ուժեր և կործանվեց նաև այն պատճառով, որ Կիլիկիայի վերջին արքաները չկարողացան հանդես բերել դիվանագիտական հեռատեսություն: Ինչ՞ուր Լևոն II իշխանը կարող էր Հռոմի Պապին ձևական խոստում տալ, որ հայկական և կաթոլիկ եկեղեցիները միացնելու մասին կմտածի և դրա դիմաց թագ ստացավ, ինչ՞ուր Կոնստանտին I-ը ծառայության մտավ սելջուկ փաշայի մոտ և դրա շնորհիվ Կիլիկիայում շատացրեց հայերի թիվը, ինչու Հեթում I-ը պայմանագիր կնքեց «անհավատ» Մանգու Խանի հետ, իսկ Սսի եկեղեցական ժողովը միանգամից մերժեց ունիթորների առաջարկը և հալածանք սկսեց նրանց դեմ այն ժամանակ, երբ կանգնած էր Կիլիկիայի լինել-չլինելու հարցը:

Մենք չենք պնդում, որ եթե Ունիան կայանար Կիլիկիան անպայման կփրկվեր: Որ դա այդպես չէր լինի, վկայում է թեկուզ և այն փաստը որ երբ մամլուքները հարձակվեցին Կիլիկիայի վրա Հեթում I-ը օգնություն խնդրեց Անգլիայից, սակայն մերժվեց: Ո՛չ, Ունիան միանշանակ փրկություն չէ, պարզապես մենք փորձում ենք հասկանալ մեր նախորդների սխալները, մենք ցանկանում են, որ այնպիսի հեռատես քաղաքական գործիչներ, ինչպիսիք Մլեհն ու Պապ թագավորն էին, իրենց կյանքով չհատուցեն այն բանի ամար, որ իրենք ավելի հեռուն են տեսնում, քան իրենց շրջապատող մարդիկ:

ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾ ԱՐՔԱ

Մարիետա Ալեքսանյան

Օհանյան կրթահամալիր, 9-րդ դասարան
Ուսուցիչ՝ Սյուզի Կարապետյան

Հայ միջնադարյան պատմության փառավոր էջերից է Կիլիկյան Հայաստանի պատմությունը, որն իրավամբ հայոց պետականության նորովի դրսևորման մի ժամանակաշրջան էր: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան նշանավորվում է իր անուններով, իրադարձություններով, կատարված ու անկատար գործերով: Կիլիկյան Հայաստանի թեմային են անդրադարձել հայ և օտար պատմիչներ, ճանապարհորդներ, արվեստի և մշակույթի գործիչներ, նկարիչներ: Հայ ժողովրդի ընկալմամբ Կիլիկիան ոչ միայն աշխարհագրական տարածք էր, այլև Բագրատունյաց Հայաստանի անկումից հետո նորովի վերստեղծված հայրենիք, ասպետական մի երկիր, որ մաքառում էր տարածքային ամբողջականության, ժողովրդի ապահովության, ինչպես նաև միջազգային ասպարեզում ունեցած իր բարձր դիրքի համար: Հենց այդ բարձր դիրքն էր, որ ստիպեց ժամանակի նշանավոր գործիչներին՝ եվրոպական ու արևելյան միապետներից մինչև խաչակիր ասպետներ, կաթոլիկ առաջնորդներից մինչև մահմեդական աշխարհ, հաշվի նստել այս երկրի հետ, խրախուսել, խոստումներ տալ, իրենց կողմը գրավել, իշխանություն ճանաչել, ռազմական համագործակցության գնալ, առևտրական հարաբերությունների մեջ մտնել և այլն: Կիլիկիան իշխանությունից մինչև թագավորություն իր ձևաչափով, անցած բարդ ու դժվարին ճանապարհով հավակնում էր վերածվելու Արևելքի հզորագույն քրիստոնեական պետության: Եվ այս ամենը չէր կարող իրականություն դառնալ առանց հմուտ գործիչների մասնակցության:

Կիլիկյան Հայաստանի գործիչներից իր ծանրակշիռ դերն ունի Լևոն Մեծագործ արքան՝ մի գործիչ, որ կերտեց հայոց արքայի, ռազմավարի, դիվանագետի ինքնատիպ կերպար: «Լևոն Բ իշխանը պատմության մեջ մնաց «Մեծագործ», «Մեծահաղթ», «Բազմահաղթ» և «Բարեպաշտ»

պատվանուն-տիտղոսներով, քանի որ ոչ միայն հզորացրեց Կիլիկիայի հայկական իշխանապետությունը, այլև այն հռչակեց թագավորություն»¹:

Լևոն Ռուբինյանը՝ կիլիկյան իշխան Ռուբեն Գ-ի եղբայրը, գահը ժառանգեց քառասուն տարեկանում և 1187թ. հռչակվեց որպես հայոց Մեծ իշխան: Նրա համար կարևորագույն խնդիրներից էր արտաքին թշնամիների հետ հարաբերությունների կարգավորումը: 1187թ. Ռավինի ճակատամարտում սելջուկներին հաղթելուց, այնուհետև Հալեպի ու Դամասկոսի սուլթանին երկրից վտարելուց հետո Լևոնը կանգնեց Եգիպտոսի Այուբյան Սուլթան Սալահ Էդ-Դինի կողմից Կիլիկիային սպառնացող վտանգի առջև: Բարեբախտաբար սկսվեց Խաչակրաց երրորդ արշավանքը, և Սալահ Էդ-Դինը Կիլիկիա չարշավեց: Ինչպիսի՞ն էին առհասարակ խաչակիրների և Կիլիկյան Հայաստանի հարաբերությունները: Լևոն իշխանը, գործի դնելով իր դիվանագիտական ընդունակությունները, ձգտում էր խաչակիրների հետ բանակցությունների շնորհիվ հասնել այն բանին, որ վերջիններս ճանաչեն Կիլիկյան Հայաստանը թագավորություն, իսկ իրեն՝ Կիլիկիայի թագավոր: Լևոնի թագադրության հարցը հետաձգվեց Ֆրիդրիխ Բարբարոսայի (1190թ. հունիսի 10) անակնկալ մահվան պատճառով: Խաչակիրների հետ բազմաբնույթ հարաբերությունները բնականաբար իրենց ազդեցությունն ունեցան Անտիոքի գահաժառանգության հարցում: Բանն այն է, որ խաչակրաց պետություններին Կիլիկյան Հայաստանի առաջխաղացումն ու Միջերկրական ծովի արևելյան ափին Լևոն իշխանի դիրքերի ամրապնդումը ամենևին ձեռնտու չէին, ուստի Անտիոքի դուքս Բոհեմունդը հրահրեց Սալահ Էդ-Դինին 1193թ. գարնանը արշավել Կիլիկիա: Դքսի մտադրությունները իրականություն չդարձան: Սահմանային Սև գետի մոտ Սալահ Էդ-Դինը հանկարծամահ եղավ, իսկ դուքսը գերեվարվեց Լևոն իշխանի կողմից և հարկադրված ընդունեց վերջինիս գերիշխանությունը: Դաշինքն ամրապնդվեց խնամիական կապերով: Բոհեմունդի որդի Ռայմոնդն ամուսնացավ Լևոնի զարմուհու՝ Ռուբեն Գ-ի դուստր Ալիսի հետ: Ըստ պայմանագրի՝ նրանցից ծնված զավակն էլ պետք է ժառանգեր Անտիոքի գահը: Ինչպես պատմաբան Արտակ Մովսիսյանն է նշում, սա «ունիա»² էր, (լատիներեն՝ միություն):

¹ Մովսիսյան Ա., 10 «հայ ականավոր արքաներ», Երևան, 2012թ. էջ 103:

² Մովսիսյան Ա., «10 հայ ականավոր արքաներ», Երևան, 2012թ. էջ 96:

Մինչ հանգուցյալ կայսր Ֆրիդրիխ Բարբարոսայի որդին՝ Հենրիխ Զ կայսրը, կշտապեր իր հոր՝ Լևոնի նկատմամբ ստանձնած խոստումը կատարելու, Բյուզանդական Ալեքսիոս Անգելոս կայսրը մեկ քայլով առաջ անցավ Հենրիխից և 1196թ. թագ ուղարկեց Լևոն իշխանին:

Ուշագրավ է նաև Բյուզանդիայի դիրքորոշումը Կիլիկիայի նկատմամբ: Ինչպես Լևոն Տեր-Պետրոսյանն է գրում, Բյուզանդիան իրեն համարում էր աշխարհի միակ օրինական երկիրը, քանի որ Հռոմեական կայսրության ժառանգորդն էր, և դա նրան հիմք էր տալիս «եթե ոչ անպայման հավակնելու համաշխարհային տիրապետության, ապա գոնե ձգտելու իր իշխանությունը տարածել հռոմեական կայսրության նախկին տարածքների ու քրիստոնյա աշխարհի վրա»³: Նշենք, որ Կիլիկիան ժամանակին եղել է Հռոմի տիրույթ, իսկ վերոնշյալ քաղաքական իրադարձությունների ժամանակաշրջանում համարվել է քրիստոնյա երկիր:

Լևոնը թագ ստացավ նաև Հենրիխ Զ-ից: Երկու կայսրերի կողմից թագադրվելուց հետո կասկածից վեր էր, որ Կիլիկիան հասել էր քաղաքական բարձր դիրքի և գտնվում էր հայոց թագավորության հռչակման միջազգային ճանաչման շեմին: Լևոն Բ իշխանը թագադրվեց 1198թ. հունվարի 6-ին՝ Սուրբ ծննդյան օրը:

Ըստ պատմաբանների՝ Լևոն արքայի՝ Սուրբ ծննդյան օրը թագադրվելը մտածված էր: Այդ քայլով նա ցանկանում էր աշխարհին հայտնել Արևելքում իր կողմից նոր քրիստոնեական պետություն հիմնադրելու մասին: Սրանով Կիլիկիան դառնում էր Բյուզանդիայի հակառակորդը նաև այս տեսակյունից:

Լևոն արքային հայ առաքելական եկեղեցու ծեսով օծեց Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսը, իսկ լատինական ծեսով՝ պապի ներկայացուցիչ Մայնցի եպիսկոպոս Վիտելբախը: Այսպես ամրապնդվում էին Կիլիկյան Հայաստանի հարաբերությունները նաև կաթոլիկ եկեղեցու հետ: Ինչպես ակադեմիկոս Ս. Զուլայանն է նշում. «1198թ. -ից Կիլիկիայի հայ գործիչները ձգտում էին ընդհանուր լեզու գտնել կաթոլիկ աշխարհի հետ, որպեսզի կարողանային դիմագրավել իրենց հարևան մուսուլմանական երկրների և Բյուզանդիայի ոտնձգություններին»⁴:

³ Տեր-Պետրոսյան Լ., «Խաչակիրները և հայերը», Հատոր Բ, Երևան, 2007թ., էջ 6:

⁴ Զուլայան Ս., «Հայ ժողովրդի XIII-XVIII պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների», Երևան, 1990թ. էջ 67:

Պատահական չէ, որ թագադրությանը ներկա էին օտարերկրյա բարձրաստիճան հյուրեր. Բյուզանդիայի, Գերմանական ազգի Հռոմեական Սրբազան կայսրության, Բաղդադի խալիֆայի ներկայացուցիչները: Այսպիսով, Լևոն արքան օծվեց որպես «Թագաւոր ամենայն Հայոց եւ Կիլիկիայի նահանգի ու Իսաւրիայի»⁵: Սա Բագրատունիների թագավորության կործանումից հետո հայոց պետականության նոր զարթոնքն էր: Գահ բարձրանալուց հետո Լևոն արքայի առաջին խնդիրը եղավ ազգի համախմբումը, և այդ գործընթացը սկսվեց վերնախավից: Նա հնազանդեցրեց երկրի ամենաազդեցիկ իշխանական տներից Հեթումյաններին, լուծեց նաև հայոց կաթողիկոսության խնդիրը՝ կաթողիկոսական գահին բազմեցնելով պետականամետ և արքայի խորհրդատու Գրիգոր Զ Ապիրատին: Լևոն արքան կատարեց բազում գործեր, որոնք նպաստեցին հայոց պետության ամրապնդմանն ու հզորացմանը: Սահմանեց կայուն հարկեր, վերակառուցեց ավերված քաղաքներն ու նավահանգիստները, կառուցեց նոր եկեղեցիներ, հստակեցրեց երկրի դրամական քաղաքականությունը՝ հատելով ոսկյա ու արծաթյա դրամներ՝ «ԼԵԻՈՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ»⁶ մակագրությամբ: Արտոնյալ պայմաններ ստեղծվեցին գիտնականների և արվեստագետների համար: Նրա օրոք ընդօրինակվել և ոչնչացումից փրկվել են բազմաթիվ հին ձեռագրեր, հայերեն են թարգմանվել գիտական ու գրական արժեքավոր երկեր⁷:

Անշուշտ բուռն էր նաև Լևոն արքայի վարած արտաքին քաղաքականությունը: Այդ քաղաքականության մեջ հայոց պետության շահերը անընդհատ խաչաձևվում էին մե՛րթ Բյուզանդական կայսրության, մե՛րթ Եվրոպայի, մե՛րթ խաչակրաց պետությունների, մե՛րթ էլ կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիների հետ: Չմոռանանք նաև Լևոն արքայի ունեցած սերտ հարաբերությունները նաև Հայաստանի իշխանությունների հետ: Լևոն Մեծագործի նման քաղաքականություն վարելու պատճառներից մեկը թերևս Կիլիկիայի աշխարհաքաղաքական դիրքն էր:

⁵ «<Ազատ օր>> օրաթերթ, «<Լևոն Բ Մեծագործ (Ռուբինեան 1150-1219). Ամենայն հայոց Կիլիկիոյ թագաւորեութեան Մեծայաղթ հիմնադիրը>>, Կալիթեա (Հունաստան), չորեքշաբթի 02 մայիս, 2012թ.:

⁶ Մովսիսյան Ա., «<10 հայ ականավոր արքաներ>>, Երևան, 2012թ. էջ 98:

⁷ Հայկական համառոտ հանրագիտարան, Հատոր 2-րդ, Երևան, 1995թ., էջ 432:

Երկու խոսք Չաքարյան Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի հարաբերությունների մասին: Ներկայացնենք մի դրվագ հոգևոր հարաբերությունների մասին: Կաթողիկոսական աթոռը Կիլիկիայում հաստատվելուց հետո Չաքարյան իշխաններն այլևս թույլ չտվեցին Հայաստանում կաթողիկոս ընտրել և ճանաչեցին Հռոմկլայում հաստատված հայոց կաթողիկոսությունը: Հոգևոր կապերը շարունակվեցին նաև հետագայում: Պատերազմների ժամանակ վրացական բանակում պատարագն անցկացվում էր շարժական սեղանի վրա, հայոց զորքի մոտ չկար այդ սովորությունը: Նման սեղան ունենալու և հայ-վրացական եկեղեցական տարաձայնությունները հաղթահարելու համար Չաքարե ամիրսպասալարը դիմում է Հովհաննես Օ կաթողիկոսին և Լևոն արքային: Հովհաննես կաթողիկոսը Չաքարեին է ուղարկում պատարագի համար հատուկ նախատեսված վրան և մարմարե շարժական սեղան:

Խոսելով Եվրոպայի մասին՝ անդրադառնանք Լևոն Տեր-Պետրոսյանի կարծիքին: Ինչպես վերը նշեցինք, եթե Բյուզանդիան իրեն համարում էր Հռոմի օրինական ժառանգորդ և իրավասու Հռոմի նախկին տիրույթների նկատմամբ, ապա Արևմտյան Եվրոպան «քրիստոնյա աշխարհի գերական լինելու Բյուզանդիայի աշխարհակալական մենաշնորհը սկսել էր վիճարկել դեռևս Կարլոս Մեծի ժամանակներում»⁸:

Լևոն արքան մեծ ճկունությամբ էր կատարում եվրոպական ու բյուզանդական առուծախի, շահերի բախման խաչմերուկներից Կիլիկիան գերծ պահելու քայլերը:

Արտաքին քաղաքականության մեջ յուրահատուկ էին հատկապես Լևոն արքայի հարաբերությունները եվրոպացի վաճառականների հետ: Նա 1201 և 1212 թթ. առևտրական արտոնություններ շնորհեց և պայմանագրեր կնքեց Վենետիկի, Ջենովայի և Պիզայի վաճառականների հետ, հանեց առևտրի համար որոշ արգելք՝ համարվող խոչընդոտներ: Ինչպես փաստում է ակադեմիկոս Զուլայանը՝ մահմեդական երկրների և Բյուզանդիայի ոտնձգություններին դիմակայելու համար Կիլիկիայի հայոց թագավորները, Լևոն Մեծագործի ժամանակներից սկսած, այլևայլ տնտեսական և քաղաքական արտոնություններ էին շնորհում Մերձավոր Արևելքում հաստատված խաչակիր պետությունների, Վենետիկի և

⁸ Տեր-Պետրոսյան Լ., «Խաչակիրները և հայերը», Հատոր Բ, Երևան, 2007թ., էջ 10:

Ջենովայի հանրապետությունների ներկայացուցիչներին⁹: Լևոն Մեծագործի դրամը լայնորեն օգտագործվում էր միջազգային առևտրում և նույնիսկ իր դրամաշրջանառությամբ գերազանցեց անգամ Տիգրան Մեծի դրամներին: Լևոնը նույնիսկ Խաչակրաց արշավանքների ժամանակ առևտրի իրավունքներ տվեց մահմեդականներին: Դա ևս դիվանագիտական քայլ էր:

Լևոն Մեծագործի արտաքին քաղաքական ձեռնարկումները շատ հաճախ ամրապնդվում էին ինսամիական կապերով կամ դինաստիական ամուսնություններով: 1209թ. Լևոն արքայի զարմուհին՝ Փիլիպպինեն, ամուսնացավ Նիկեայի կայսեր՝ Թեոդորոս Լասկարիսի հետ, դրանից հետո ինքը՝ արքան ամուսնացավ Կիպրոսի արքա Ամորի Լուսինյանի դուստր Միսիլի հետ: Հայոց թագաժառանգ Ռուբեն Ռայմոնդն ամուսնացավ Լուսինյան մյուս արքայադուստր Հելվիսի հետ¹⁰: Չմոռանանք նշել, որ Կիլիկյան արքայադուստր Ստեփանիան ամուսնացավ Երուսաղեմի արքա Հովհան Բրիենի հետ: Դինաստիական ամուսնությունների շարքը կարելի է թվարկել նաև Լևոն արքային հաջորդող կիլիկյան մյուս գահակալների օրոք:

Կիլիկիան, անընդհատ առնչվելով եվրոպական երկրների հետ և ծանոթանալով նրանց կենցաղին, ավանդույթներին, սովորույթներին, չէր կարող նրանց ազդեցությունը չկրել: Դա են փաստում նաև հայոց արքայադուստրերի կամ արքայական ընտանիքի այլ անդամների եվրոպական անձնանունները:

Լևոն արքան հետևողականորեն պայքարեց Անտիոքի գահաժառանգության համար: Ինչպես նշեցինք, համաձայն պայմանագրի՝ Ալիսի և Անտիոքի դքսի որդու ամուսնությունից ծնված զավակը պետք է ժառանգեր Անտիոքի գահը, իսկ երբ Անտիոքը միավորվեր Կիլիկիային, ապա նա կբազմեր երկու երկրների գահին միանգամից: Այդպես էլ եղավ.այդ ամուսնությունից ծնված Ռուբեն Ռայմոնդը որդեգրվեց Լևոն արքայի կողմից և հայտարարվեց հայոց գահի ժառանգորդ: Այդ ժամանակ Անտիոքի գահը զավթել էր Ռուբեն Ռայմոնդի եղբայրը՝ Բոհեմունդ Միակնանին.«1203թ. Լևոն Բ-ն գրաւեց Անտիոքը, որուն գահը յափշտակած էր Ռեյմունտի կրտսեր եղբայրը՝ Տրիպուլիի դուքս Պոհեմունտ Միակնանին, Անտիոքէն

⁹ Զովայան Մ., <<Հայ ժողովրդի XIII-XVIII պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների>>, Երևան, 1990թ. էջ 67:

¹⁰ Մովսիսյան Ա., <<10 հայ ականավոր արքաներ>>, Երևան, 2012թ. էջ 100

վտարեց ինքնակոչին աջակցած Տաճարական ուխտի ասպետներուն, պատանի Ռէյմունտին կարգեց դուքս»¹¹:

Լևոն Մեծագործի մյուս կարևոր քայլը եղավ հայոց գահաժառանգ Ռուբեն Ռայմոնդի՝ որպէս իր գահի ժառանգորդի, միջազգային ճանաչումը: Նա օծվեց որպէս թագաժառանգ 1211թ. Ինկենտիոս Գ Պապի և Գերմանական կայսր Օտտոն Դ-ի կողմից ճանաչվելուց հետո: Սակայն Ռուբեն Ռայմոնդը այդքան էլ չարդարացրեց Լևոն արքայի հույսերը: Ռուբեն Ռայմոնդի ամբարտավան վարքից, ինչպէս նաև նրա կողմից Անտիոքը նորից կորցնելուց հետո արքան հիասթափված զրկեց նրան գահաժառանգությունից և ժառանգորդ հռչակեց իր դուստր Զաբելին, որն էլ հետո դարձավ Կիլիկյան Հայաստանի թագուհի:

Խաչակիրների հետ հարաբերությունները շարունակվեցին: Սկզբունքորեն դրանից խուսափելն անկարելի էր, քանի որ քաղաքական վիճակը դա էր թելադրում: Երբ խաչակրաց հերթական արշավանքի ժամանակ՝ 1218թ.–ին, Հունգարիայի արքա Անդրեաս Բ-ն այցելեց Տարսոն, Լևոնը նրան ջերմ ընդունելության արժանացրեց և փորձեց խնամիական կապ հաստատել՝ Զաբելին ամուսնացնելով Անդրեասի որդու հետ, սակայն հունգարական արքայազնը հրաժարվեց Լևոնի՝ իրեն Կիլիկիա տեղափոխվելու պայմանից:

Դիվանագիտական ձեռնարկումներից բացի, շատ կարևոր էր ռազմական քաղաքականությունը: Լևոն Մեծագործի օրոք Կիլիկիայի թագավորության սահմանները հասան Սելևկիայից մինչև Անտիոք, Միջերկրական ծովից մինչև Տավրոսի և Անտիտավրոսի լեռներ: Նրա զերակայությանը ենթարկվեցին Պամփիլիան, Իսավրիան, Լիկայոնիան, Կադառնիան, Գերմանիկեն¹²: Բնականաբար այս ամենը ամրացնելու հետո անհրաժեշտ էին ամրություններ և բերդեր: Կիլիկիայի ողջ տարածքը ողողվեց հզոր ու աննկուն պաշտպանական ամրոցներով: Ահա թե ինչ ժառանգություն թողեց մեր արժանավոր արքան Կիլիկյան Հայաստանին:

Ամփոփելով այս ամենը՝ հավելենք, որ Լևոն Մեծագործը հայոց արքայի անգուգական կերպարի յուրահատուկ օրինակ է, և բոլորովին էլ պատահական չէ, որ նա յուրայիններից ու օտարների կողմից մեծարվեց որպէս «Մեծագործ», «Բազմահաղթ» և «Բարեպաշտ»:

¹¹ «Ազատ օր» օրաթերթ, «Լևոն Բ Մեծագործ (Ռուբինեան 1150-1219). Ամենայն հայոց Կիլիկիոյ թագաւորութեան Մեծայաղթ հիմնադիրը», Կալիթեա (Հունաստան), չորեքշաբթի 02 մայիս, 2012թ.:

¹² Հայկական համառոտ հանրագիտարան, Հատոր 2-րդ, Երևան, 1995թ., էջ 432:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ

Մովսես Աղեկյան

Երևանի Խ.Աբովյանի անվան հ. 84 հիմնական դպրոց, 9-րդ դասարան
Ուսուցիչ՝ Ա. Բարսեղյան

Մլեհի մահից հետո իշխանությունն անցավ նրա եղբորորդի Ռուբենին (1175-1187թթ.): Վերցնելով իշխանությունը Ռուբեն Գ-ը մահապատժի ենթարկեց իր հորեղբոր սպանության գլխավոր մեղավորներին, որոնք կարծում էին, թե պարզև կստանան իրենց չարագործության համար¹: Այս փաստը ևս խոսում է հոգուտ այն բանի, որ Մլեհը որպես ողջախոհ քաղաքական գործիչ, որոշ շրջանակներում համակրանք է վայելել:

1176թ. բյուզանդացիները Մերիկեֆալունեում փոքրասիական սելջուկներից ծանր պարտություն կրեցին և ընդմիջտ հրաժարվեցին Ասորիքը, Կիլիկիան ու Հյուսիսային Միջագետքը նվաճելու ձգտումից: Օգտվելով բարենպաստ հանգամանքից, Ռուբեն Գ-ն ազատագրեց բյուզանդացիների ձեռքում մնացած Ադանան ու Տարսուը:

Դաշտային Կիլիկիայից բյուզանդացիներին վտարելուց հետո, Ռուբեն Գ փորձեց իրեն ենթարկել Լամբրոնի Հեթումյաններին, սակայն ապարդյուն: Մմբատի ասելով Ռուբեն Գ երեք տարի համառորեն պաշարեց Բերդը, սակայն «ոչ կարաց առնուլ»²: Դաշինք կնքելով Անտիոքի դուքսի հետ, Լամբրոնի իշխանը դրդեց նրան հարձակվել Ռուբեն Գ-ի վրա: Հույս չունենալով զենքի ուժով հայերից խլել Դաշտային Կիլիկիան, Անտիոքի դուքս Բոհեմունդը դիմեց խորամանկության: 1185թ. նա Ռուբեն Գ-ին հրավիրեց Անտիոք՝ բարեկամորեն, բայց բանտարկեց նրան, որից հետո Բոհեմունդը ներխուժեց Կիլիկիա, սակայն հանդիպեց Ռուբենի եղբոր՝ պարոն Լևոնի գլխավորած հայկական զորքի ուժեղ դիմադրությանն ու ստիպված եղավ ետ նահանջել: Խաչակիրներին զիջելով Ադանան ու վճարելով մեծ փրկագին (30,000 դինար), Ռուբեն Գ ազատվեց գերությունից: Իշխանության գլուխ անցած Լևոն Բ իշխանը (1187-1198թթ.) շուտով Կիլիկիային վերադարձրեց Ադանան: Այժմ արդեն Սելևկիայից մինչև Ալեքսանդրետ ձգված Միջերկրականի ափը գտնվում էր հայերի ձեռքում: Այսպիսով, հայերի և խաչակիրների պայքարը Դաշտային Կիլիկիայի համար լուծվեց հոգուտ հայերի:

Լևոն Բ-ի իշխանության տարիներին Կիլիկիայի արտաքին քաղաքական հարաբերությունները բավականաչափ բարդ էին: Մերձավոր Արևելքում տեղի էին ունեցել քաղաքական խոշոր իրադարձություններ ու փոփոխություններ: Մալահ ալ-Դինը ճնշում էր խաչակիրներին: Իննուկենտիոս Գ-ի օրոք (1198-

¹ Մմբատ Գունդստաբլ, Պատմություն, 1856, էջ 88:

² Մմբատ Գունդստաբլ, Պատմություն, 1856, էջ 91:

1216թթ.) աշխուժացել էր պապական դիվանագիտությունը արևելքում, տեղի էին ունեցել երրորդ, չորրորդ, հինգերորդ խաչակրաց արշավանքները, Անգելոսների (1185-1204թթ.) հարստության ժամանակ թուլացել էր Բյուզանդական կայսրությունը, հայկական և վրացական գորքերի հարվածների ներքո թուլացել էր փոքր-ասիական սելջուկյան պետությունների երբեմնի ռազմական հզորությունը:

Միջագգային կյանքում տեղի ունեցած այս փոփոխություններն ընդհանուր առմամբ նպաստավոր էին Կիլիկիայի համար, և Լևոն Բ հմտորեն օգտագործեց դրանք իր արտաքին քաղաքականության մեջ: Գործ ունենալով Սալահ ալ-Դինի, Ֆրիդրիխ Ա Բարբարոսայի, Իննոկենտիոս Գ-ի և Փոքր Ասիայի սելջուկների հետ. նա դրսևորեց դիվանագիտական արտակարգ ընդունակություններ:

Լևոն Բ Կիլիկիայում սկսեց իշխել դեռևս 1185թ. իր եղբայր Ռուբենի գերության ժամանակ: Ազատվելուց հետո Ռուբենը հօգուտ իր եղբոր հրաժարվեց իշխանությունից, քաշվեց վանք, ուր և 1187թ. մահացավ³: Նույն թվականին Կիլիկիայի հյուսիս-արևմտյան կողմից ներխուժեցին վաչկատուն թուրքմենները, որոնք, ըստ երևույթին ալպյան մարզագետիսների համար, ընդհարվելով քրդերի հետ ու հալածվելով նրանցից, մուտք էին գործել Կիլիկիա⁴: Լևոնը կարողացավ ետ մղել թուրքմեն վաչկատուններին:

Լևոն Բ-ի իշխանության ժամանակ Կիլիկիային վտանգ էր սպառնում Եգիպտոսի Այյուբյան սուլթան Սալահ ալ-Դինի կողմից, որն իր իշխանությանն էր ենթարկել Եգիպտոսը, Արաբիան, Դամասկոսի և Հալեպի ամիրայությունները, իսկ 1187թ. հաղթելով խաչակիրներին, գերել էր Երուսաղեմի թագավոր Գվիդոն Լուսինյանին և նվաճել Երուսաղեմը⁵:

Թուրքմեններից հազիվ ազատնած Կիլիկիան ասպատակեցին Սալահ ալ-Դինի զինվորները: Ամանոսյան լեռներից Կիլիկիա ներխուժեց Սալահ ալ-Դինի զորքը ամիր Ռոստոմի առաջնորդությամբ: Այդ մասին Սմբատի մոտ կարդում ենք. «Ժողովեաց անթիւ թուրքման և եմուտ յաշխարհն Կիլիկեցոց և խրոխտայր բառնալ զանուն քրիստոնէից»⁶: Լևոնն իր բանակով հարձակվում է հակառակորդի «անհամար բազմութեան» վրա և հաջողացնում է առաջին իսկ հարվածից դառնալ ի միջո «զգլխատրն նոցա զրՌոստոմն»⁷, իսկ զորքը փախուստի է դիմում ու դուրս վտարվում երկրի սահմաններից: Այս անհաջողությունից մի տարի անց խաչակրաց երրորդ արշավանքի հետևանքով Սալահ ալ-Դինը հնարավորություն չունեցավ պատժիչ ջոկատներ ուղարկել Կիլիկիա:

³ Հայ ժողովրդի պատմություն, հ.3, Երևան, 1976, էջ 686:

⁴ Նույն տեղում էջ 686:

⁵ Նույն տեղում, էջ 688:

⁶ Սմբատ Գունդստաբլ, Տարեգիրք, 1956, էջ 200:

⁷ Նույն տեղում էջ 200:

Գլխավորելով երրորդ խաչակրաց արշավանքը՝ Ֆրիդրիխ Ա Բարբառոսան Հեռավոր նապատակներ էր հետամտում: Նա ձգտում էր ոչ միայն Սալահ ալ-Դինից վերանվաճել Երուսաղեմը, այլև իր իշխանությանը ենթարկել Մերձավոր Արևելքի երկրները, ինչպես նաև Բալկանյան թերակղզին: Սակայն այս արշավանքի միակ շոշափելի արդյունքն էր Կիպրոսի նվաճումը, որը տրվեց գահագուրկ Գվիդոն Լուսինյանին:

Հայտնի է, թե ինչպիսի գրկանքներ էին կրում գերմանացի խաչակիրները Փոքր Ասիայում պարենի պակասության հետևանքով: Վարդան պատմիչը հայտնում է, թե գերմանացի ասպետները Իկոնիա հասան խիստ քաղցած և ուժասպառ⁸: Դուրս գալով Իկոնիայից՝ Ֆրիդրիխ Ա Բարբարոսան երիցս դիմեց Լևոն Բ-ին՝ օգնելու իրեն պարենամթերքով, միանալու արշավանքին, խոստանալով նրան թագ շնորհել: Լևոն Բ քանակցություններ սկսեց Ֆրիդրիխ Ա Բարբարոսայի հետ. հայոց դեսպանները Ֆրիդրիխի մոտ եկան 1190թ.-ի հուլիսի 8-ին, սակայն 2 օր անց կայսրը խեղդվեց Սելևկիա գետում: Աղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ Լևոն Բ վերին աստիճանի զգույշ վերաբերմունք է ցուցաբերել Ֆրիդրիխ Ա Բարբարոսայի արևելյան արշավանքին:

1193թ. Այյուբյան սուլթանը Լևոն Բ-ի մոտ ուղարկեց հատուկ դեսպանություն, պահանջելով իր իշխանությանը հանձնել ոչ միայն հարևան պետություններից Կիլիկիային միակցված երկրամասերը, այլև՝ բուն Կիլիկիան⁹: Լևոնը մերժեց հանդուգն այդ պահանջը: Սա ճակատագրական մի վերջնագիր էր, որտեղ դրվում էր Կիլիկիայի գոյության հարցն առհասարակ: Սալահ ալ-Դինը իր զորքը շարժում է Կիլիկիայի վրա և հասնում մինչև Սև գերը, սակայն արշավանքի ընթացքում նա մահանում է (1193թ. մարտի 4), իսկ բանակը ետ է վերադառնում: Սալահ ալ-Դինի մահից հետո Այյուբյանների պետությունը կործանվեց գահակալական երկպառակություններից: Թուլացած եգիպտական այս պետությունը այլևս չէր սպառնում Կիլիկիային: Այժմ Դաշտային Կիլիկիայում գերիշխանություն ձեռք բերելու համար նորից սուր պայքար վերսկսվեց կիլիկյան հայերի և Անտիոքի դքսության միջև:

1193թ. Անտիոքի դուքս Բոհեմունդը Գ (1163-1201) դավադրաբար Անտիոք հրավիրեց Լևոն Բ-ին: Սակայն Ռուբինյան իշխանը, նախօրոք իմանալով Բոհեմունդի նենգության մասին, հանդիպեց նրան սահմանազլխում գտնվող Գաստոն ամրոցում: Լևոն Բ-ն ինքը գերեց Բոհեմունդ Գ-ին (1194թ.): Անտիոքի դուքսը ստիպված իր համար ստորացուցիչ պայմանագիր կնքեց Լևոն Բ-ի հետ, ըստ որի հրաժարվում էր Գաստոնից մինչև Այաս ձգված Դաշտային Կիլիկիայի հարավային մասերի նկատմամբ ունեցած հավակնությունից, Կիլիկիային էին վերադարձնում Ռուբեն Գ-ի գերության ժամանակ խաչակիրների կողմից զավթ-

⁸ Վարդան, Երևան, 1966, էջ 178:

⁹ Սմբատ Գունդստաբլ, Տարեգիրք, 1956, էջ 204:

ված սահմանամերձ մի շարք վայրեր, այդ թվում և Դրունք Աստրվոցը (Պորտե-լլան):

Բացի այդ, համաձայն պայմանագրի Բոհեմունդի որդի Ռայմունդը ամուսնանալու էր Լևոն Բ-ի եղբոր աղջիկ Ալիսի հետ: Այդ ամուսնությունից ծնված Ռայմունդ-Ռուբենը հետագայում Լևոնի կողմից հայտարարվեց գահա-ժառանգ: Այս քայլով Լևոն Բ փորձում էր իր իշխանությանը ենթարկել նաև Անտիոքը:

Լևոն Բ սահմանամերձ մի շարք շրջաններ նվաճեց նաև Իկոնիայի սել-ջուկյան սուլթանությունից: Այսպիսով, իր իշխանության առաջին շրջանում (1187-1198թթ.) նա ընդարձակեց պետության սահմանները: Խիստ բարձրացավ Լևոն Բ-ի միջազգային հեղինակությունը: Նա ծաղկեցրեց Կիլիկիան:

Սմբատ պատմիչը գրում է. «645թ. (հայկական տոմարով 1196թ.) հունական կայսրը ուղարկեց պարոն Լևոնին թանկարժեք թագ և ջանում էր բարեկամական միասնություն ստեղծել նրա հետ: Եվ նա ընդունեց թագը ուրախությամբ»¹⁰: Լևոն Բ-ին շտապեց թագ ուղարկելու համաձայնություն հայտնել բյուզանդական Ալեքսիոս կայսրը(1195-1203թթ.): Կոստանդնուպոլիս ուղարկվեց հատուկ պատվիրակություն՝ Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ, իմանալու Բյուզանդիայից արքայական տիտղոս ստանալու պաշտոնական պայմաններն ու հանգամանքները, քանի որ դրա հետ էր կապված Կիլիկյան հայկական թագավորության և հայ եկեղեցու անկախության հարցը¹¹: Ներսես Լամբրոնացին բյուզանդական կայսրի կողմից ընդունվում է մեծ շուքով: Հայոց իշխանին առաջարկվում է թագ ստանալ Բյուզանդիայից, որի հետ բանակցությունները սկսվել էին ավելի վաղ: Կայսրը Լևոնին խորհուրդ էր տալիս կրել բյուզանդական թագը, քանի որ Բյուզանդիան ավելի մոտ է Կիլիկիային:

Բանակցություններն ուղղորդվում էին հայ և հույն եկեղեցիների միջև գոյություն ունեցող դավանաբանական վեճերով: Հույն հոգևորականությունը հայոց եկեղեցում հորդորեց մտցնել ծիսական փոփոխություններ: Հայոց պատվիրակությունը մերժեց Բյուզանդիայի պահանջը:

1196թ. Լևոն Բ Հռոմի պապ Կելեստինոս Գ-ի մոտ ուղարկեց մի պատ-վիրակություն, որի խնդիրն էր պապի միջնորդությամբ թագ ստանալ Հռոմե-ական Սրբազան կայսրությունից: Կելեստինոս պապը՝ շահագրգռված արևելքում կաթոլիկ եկեղեցու դերի և ազդեցության ուժեղացմամբ, ուրախությամբ ընդառաջեց Լևոն Բ-ին:

Պապի ուղարկած պատվիրակությունը թագ հանձնելու պայմանների մասին բանակցություններ սկսեց Լևոն Բ-ի հետ: Պատվիրակությունը պապի անունից Լևոն Բ-ից պահանջեց ընդունել կաթոլիկ եկեղեցու դավանանքի մի

¹⁰ Սմբատ Գունդստարլ, Տարեգիրք, 1956, էջ 226:

¹¹ Աննա Պետրոսյան, Բոլոր ժամանակների Հայաստանը, հ. 3, Երևան, 2010, էջ 78:

շարք կետերը և այդ մասին տալ պարտավորագիր¹²: Մա հռոմեական կաթոլիկ եկեղեցու կողմից կիլիկեցիներին ներկայացվող պահանջների սկիզբն էր: Հետագայում եվրոպացի կաթոլիկները ավելի հեռուն գնացին՝ կիլիկեցիներից պահանջելով կաթոլիկացում ոչ միայն դավանությամբ, այլև լեզվով (լատինացում)¹³:

Լևոն Բ կաթողիկոսին և եպիսկոպոսներին ժողովի հրավիրեց քննելու կաթոլիկ եկեղեցու առաջարկները: Ժողովն առերես ընդունեց Հռոմի Կելեստինոս Գ պապի ներկայացուցիչ՝ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադի առաջադրած մի շարք պայմանները:

Ներսես Լամբրոնացու «Թղթերում» կարդում ենք. *«Հայոց 647 թվականին (1198թ.) նորից տիտղոսավորվեց հայոց արքա Լևոնը Ռուբենի տոհմից: Նրա քաջագործությունների փառքը հասել էր մինչև հնագույն Հռոմի Հենրիխ և նորագույն Հռոմի Ալեքսիոս ինքնակալներին, որոնք պսակեցին նրան թանկագին քարերով զարդարված թագերով, Տարսոն քաղաքի տաճարում, որի անարժան վանահայրն էմ էս»:*

Լևոն Բ-ի թագադրության հանդիսավոր արարողությունները տեղի ունեցան 1198թ., Տարսոնում: Հանդեսին ներկա էին աշխարհիկ և հոգևոր բազմաթիվ իշխաններ, ընծաներով եկած հարևան պետությունների դեսպաններ, ինչպես նաև Բաղդադի խալիֆի ներկայացուցիչը: Այս բոլորը վկայում են Լևոն Բ-ի հեղինակության բարձրացման և նրա թագավորության միջազգային ճանաչում գտնելու մասին:

Լևոն Բ-ի թագավորությունը ժամանակակիցների կողմից դիտվել է որպես հայկական թագավորության վերականգնում, որպես մեծ իրադարձություն հայոց պատմության մեջ: Այդ մասին Սմբատը գրում է. *«647 (1198) թվականի հունվարի 6-ին, Հայտնության օրը, Հռոմի եկեղեցու և գերմանական կայսեր հովանավորությամբ օձեցին Լևոնի հայոց թագավոր: Հայերը ուրախացան, որովհետև նրանք, հանձին հայոց թագավոր Լևոնի, տեսնում էին իրենց վերջերս կործանված թագավորության վերականգնումը»¹⁴:*

Կիլիկյան հայկական պետությունը մինչև իր գոյության վերջը միանգամայն ինքնուրույն քաղաքականություն վարեց Հռոմեական Սրբազան կայսրության և Բյուզանդիայի նկատմամբ: Չնայած գործադրած բոլոր ջանքերին, Հռոմին երբեք էլ չհաջողվեց Կիլիկիայում ունենալ քիչ թե շատ ուժեղ հենարան: Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ 1201թ. մարտին, Ջենովայի հետ կնքած առևտրական պայմանագրերում Լևոն Բ-ն իրեն հորջորջում է *«Աստժռ ողորմածությամբ Հայոց թագավոր՝ Լևոն»*, ինչպես և դրամների վրա գրում էր *«Ողորմածութեամբն Աստուծոյ Հայոց թագաւոր»¹⁵:*

¹² Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1971, էջ 142:

¹³ Հայ ժողովրդի պատմություն, հ.3, Երևան, 1976, էջ 690:

¹⁴ Սմբատ Գունդատարլ, Տարեգիրք, Երևան, 1971, էջ 251:

¹⁵ V. Langlois, Le tresor des chartes d'Arménie, p. 105, 114, 122:

ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՀԵԹՈՒՄՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Մարիամ Մուկույան, Մոնա Ասատրյան

Հայրապետ Հայրապետյանի անվան հ. 78 հիմնական դպրոց,

9-րդ դասարան

Ուսուցիչ՝ Կարինե Դավթյան

Մեր կողմից ներկայացվող աշխատանքում՝ «Հեթումյան հարստության հաստատումը Կիլիկիայի Հայոց թագավորությունում», ներկայացված է Հեթումյանների արքայատան հաստատման նախադրյալները Կիլիկյան գահին, անդրադարձել ենք Հեթումյանների Կիլիկյան գահին հստատվելու համար առաջացած նպաստավոր պայմաններին: Ներկայացրել ենք քաղաքական իրավիճակը, ինչպես նաև գահակալական կռիվները: Անդրադարձ է կատարվել նաև արտաքին քաղաքականությանը, Կիլիկյան Հայաստանը Հեթում Առաջինի կառավարման տարիներին, ներկայացրել ենք Հեթումյանների կենտրոնաձիգ պետություն ստեղծելու փորձերը, հարաբերությունները Ռումի (Իկիոնիայի) Սուլթանության, Մոնղոլների և եգիպտական մամլուքների հետ, ինչպես նաև Հեթումյանների արքայատան անկմանը, նրա պատճառներին:

Կիլիկյան Հայաստանի գրեթե ամբողջ պատմության ընթացքում՝ մինչև Լևոն Երկրորդի մահը հատկապես, լարված են եղել երկու խոշոր իշխանական տների՝ Ռուբինյանների և Հեթումյանների միջև հարաբերությունները:

1216 թվականին, Ռայմոնդ-Ռուբենի հետ գժտվելուց հետո, Լևոն Երկրորդը գահը ժառանգեց իր մանկահասակ դստերը՝ Ջաբելին, որը այդ ժամանակ 4 տարեկան էր, իսկ մայրը՝ Սիլվիան, Կիպրոսում իշխող Լյուզինյանների և Պլանտագենետների դինաստիայից էր: Կիլիկիո թագավորության Արքունի աստանը վավերացրեց Լևոնի կայացրած որոշումը և հավատարմության երդում տվեց Հայոց նոր գահաժառանգին: Երկու տարի անց, երբ Հունգարիայի թագավոր Անդրաշ II-ը, հինգերորդ խաչակրաց արշավանքից տուն դառնալու ճանապարհին ջերմորեն հյուրընկալվեց Կիլիկիայում, նրա և Լևոնի միջև համաձայնություն կայացավ՝ Ջապելին ամուսնացնել իր որդիներից մեկի՝ Անդրաշ կրտսերի հետ, վերջինիս Հայոց գահին ժառանգորդ ճանաչելու պայմանով, և այդ

համաձայնությունը հաստատվեց համապատասխան փաստաթղթով¹: Մակայն այս պայմանավորվածությունը կյանքի չի գործվում: Լևոն Երկրորդը 1219 թվականին, մահվան մահճում գտնվելով, հավաքում է երկրի իշխաններին և Միր Ատանին նշանակում է Ջապելի խնամակալ²:

Շուտով հեռացվեց Միր Ատան պայլը, և Կոստանդին պայլը մնաց Ջապելի միակ խնամակալն ու երկրի փաստական կառավարիչը: Նա, ինչպես կտեսնենք, իրադարձությունների հետագա ընթացքն օգտագործեց, որպեսզի թագավորական գահին բազմեցնի իր որդի Հեթումին: Շուտով թագի հավակնորդների շուրջ հավաքված խմբավորումների միջև պայքար սկսվեց, իշխանության համար: Գահակալական կռիվները տևեցին 6 տարի, որը բերեց երկրի ներքին կյանքի թուլացմանը, ինչպես նաև արտաքին դժվարություններ ստեղծեց պետության համար:

Լևոնի մահից հետո Կիլիկյան Հայաստանի գահի հավակնորդներ, որոնցից էր նաև Լևոն Բ-ի ավագ դուստր Ռիթայի ամուսինը՝ Երուսաղեմի թագավորը, որն ուզում էր իր որդուն դնել Կիլիկիայի թագավորական գահին: 1220 թվականին Ռիթայի և իր որդու մահով դադարում է այդ պայքարը:

1220 թ. Տարսնի և Մսիսի հույն և հայ իշխանները Կոռիկոսի Վահրամ իշխանի գլխավորությամբ ապստամբություն են բարձրացնում Կոստանդին պայլի գլխավորած կենտրոնական իշխանության դեմ, սակայն վերջինս կարողանում է հնազանդեցնել կենտրոնախույս ուժերին: Ադանայի և Մսիսի միջև ընկած տարածքում հանդիպելով նրանց, ստիպում է նահանջել մինչև Տարսոն, որտեղ տեղի է ունենում վճռական ճակատամարտը: Ճակատամարտում ապստամբների ուժերը փաղչում են, մի մասն էլ գերի է ընկնում³:

Այս ընթացքում շարունակվում էին գահակալման հավակնություններ ներկայացնողները, որոնցից մեկը Ռուբեն-Ռայմունդն էր: Լինելով Ռուբեն III-ի թոռը՝ նա անհաջող փորձ կատարեց արեց տիրել Կիլիկիայի գահին, Կոստանդինի հրամանով նրան ձերբակալում և բանտ են նետում⁴:

¹ Տեր-Պետրոսյան Լևոն, Խաչակիրները և հայերը, Երևան 2007 թ., էջ 237:

² Նույն տեղում, էջ 239:

³ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 3, Երևան 1976 թ., էջ 696:

⁴ Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան 2007 թ., էջ 296:

Լևոնի մահից հետո Կիլիկյան Հայաստանի գահի հավակնորդներ, որոնցից էր նաև Լևոն Բ-ի ավագ դուստր Ռիթայի ամուսինը՝ Երուսաղեմի թագավորը, որն ուզում էր իր որդուն դնել Կիլիկիայի թագավորական գահին: 1220 թվականին Ռիթայի և իր որդու մահով դադարում է այդ պայքարը:

Կոստանդին Պայլը, վախենալով այլ իշխանական տների ապստամբությունից, զգուշավոր գտնվեց և խուսափեց իշխանության գլուխ դնել իր որդի Հեթումին:

Այս դեպքերը ստիպեցին Կոստանդին Պայլին արագացնել թագաժառանգ Ջաբելի ամուսնությունը: 1220 թվականին նա այս առիթով խորհրդակցություն հրավիրեց իշխանական տների ներկայացուցիչների, բարձր հոգևորականության և զինվորական վերնախավի մասնակցությամբ:

Խորհրդաժողովը, որը տևեց մի քանի օր որոշեց Ջաբելին ամուսնացնել Անտիոքի իշխան Բոհեմուդի որդի Ֆիլիպի հետ: Կոստանդինը այստեղ ևս ուզում էր Ջաբելին ամուսնացնել իր որդի Հեթումի հետ: Կոստանդինը այս անգամ էլ գերադասելով երկրի միասնականությունը կրկին հրաժարվեց իր վաղեմի ցանկությունից՝ Հեթումին Ջաբելի հետ ամուսնացնելու մտքից: Կոստանդինն ու ավագանին Ֆիլիպի առաջ դրեցին որոշ պայմաններ, որ նա հետևեր Հայկական սովորություններին, պահպաներ և հավատարիմ մնար հայ եկեղեցու դավանաբանությանը և պահպաներ ծիսկարգը⁵:

Ֆիլիպը տասնվեց տարեկան էր երբ ամուսնացավ Ջաբելի հետ, հետևաբար երկրի քաղաքական իշխանությունը դեռևս մնում էր Կոստանդինի ձեռքում: Սակայն շուտով, օգտագործելով իր թագավորական իրավունքները, Ֆիլիպը դրժեց վերոհիշյալ պայմանները և աշխատեց մեկուսացնել Կոստանդինին և մյուս հայ իշխաններին: Սմբատ Սպարապետը հաղորդում է, երբ որ Ֆիլիպը 20 տարեկան էր հոր խորհրդով որոշեց պետական պաշտոններից հեռացնել բոլոր հայ իշխաններին և փոխարինել նրանց յուրայիններով (ֆրանկներով)⁶: Այս պայմաններում, Կոստանդին պայլը, կատարելով հայ ֆեոդալական ավագանու պահանջները, իշխանությունից հեռացրեց Ֆիլիպին, որին բանտարկեցին Թիլ ամրոցում, որտեղ էլ նա մահացավ:

⁵ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 3, Երևան 1976 թ., էջ 695:

⁶ Նույն տեղում, էջ 697:

Օգտվելով այս հանգամանքից, որ երկիրը այլևս կառավարիչ չուներ, Կոստանդինը իր ձեռքն է վերցնում ոչ միայն Ջաբելի խնամակալությունը այլև ամբողջ թագավորության կառավարիչը՝ դառնալով երկրի փաստական կառավարիչը: Սկայան պետք է նշել, որ այսքանով հանդերձ թագավորական գահը կրկին մնում էր թափուր: Կոստանդին պայլը այս անագամ ևս առաջ է քաշում գահի համար թեկնածու ընտրելու հարցը: Այս անգամ կաթողիկոսի և իշխանական տների ներկայացուցիչների համաձայնությամբ, որոշվեց Ջաբելին ամուսնացնել Կոստանդին պայլի որդի Հեթումի հետ և միաժամանակ նրան ճանաչել որպես հայոց թագավոր: Ջաբել թագուհին սկզբում չհամաձայնեց ամուսնանալ Հեթումի հետ, քանի որ վերջինս պատանի էր, և մորը տեսնելու պատրվակով մեկնեց Սելևկիա: Սա հարմար առիթ էր Կոստանդինի համար արշավելու Հյուրընկալների օրդեն՝ նրանց պատժելու համար: <<Իսկ Կոստանդինը առավ բոլոր զորքերը, պաշարեց քաղաքը, մինչև որ ստիպված թագուհուն հանձնեցին նրան: Տարավ նրան ամուսնացրեց իր որդու հետ: Նրանց որդիներ ծնվեցին: Այդ կինը չափազանց բարեպաշտ էր ու բարոյական, սիրում էր Աստծու բոլոր երկյուղածներին և աղքատասեր էր, միշտ անց էր կացնում պասերով ու աղոթքներով>>⁷, - գրում է Կիրակոս Գանձակեցին: Պատմիչի վկայությամբ, թեև Կիլիկյան Հայաստանի թագավոր է դառնում Հեթումը, սակայն երկրի փաստական կառավարիչ մնում էր Կոստանդինը ...Հեթումի համար թագավորական իշխանությունը առնելուց հետո արքայության ամբողջ հոգսը վերցրեց իր վրա և իմաստուն կերպով կարգավորեց: Մի մասը սիրով հնազանդվում էր, իսկ անհնազանդներին մեջտեղից վերացնում էր՝ ոմանց փախստական դարձնում, ոմանց սպանում: Հույների Ալադին անունով սուլթանի հետ հաշտություն ու միաբանություն հաստատեց, որն իր ձեռքի տակ ուներ բազմաթից երկրներ: Այդպես վարվեց բոլոր շրջակա ազգերի հետ և բոլոր կողմերից մեր երկիրը խաղաղեցրեց⁸:

Այսպիսով, 1226 թվականին ոչ միայն իշխանության գլուխ անցավ Հեթումյանների հարստությունը, այլև միաժամանակ թուլացավ խաչակիրների և լատին տարրերի քաղաքական ազդեցությունը Կիլիկիայում: Երկրում վերականգնվեց կարգ ու կանոնը, ստեղծվեցին կենտրոնացված միապետական կարգեր: Այսքանով վերջացավ

⁷ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան 1982, էջ 140:

⁸ Նույն տեղում:

Հեթումյանների և Ռուբինյանների երկարատև պայքարը իշխանության համար, քանի որ Հեթումի և Ջաբելի ամուսնությունը միավորեց երկու իշխանական տներ⁹: Այս միավորումից առաջացավ Ռուբինյան-Հեթումյան դինաստիան: Փաստորեն իշխանությունն անցավ Հեթումյաններին: Այս դինաստիայի անդամները զբաղեցրեցին երկրի բարձրագույն պաշտոնները: Հեթում արքայի հայր Կոստանդինը դարձավ որդու իշխանակիցը, Հեթումի եղբայր Սմբատը ստացավ կոննետաբլի (գունդատար, սպարապետ) պաշտոնը, և, այսպիսով դարձավ պետության զինված ուժերի հրամանատարը, մյուս եղբայրը՝ Օշինը, դարձավ ծովափնյա Կոռիկոս բերդի ու ու նավահանգստի տերը, կրտսեն եղբայրը՝ Լևոնը, հետագայում դարձավ պետության զինված ուժերի մարշալ, մյուս ազգականները դարձան վահահայրեր ու եպիսկոպոսներ: Լամբրոնի ամրոցն ու տիրույթը վերադարձվեցին Հեթումյանների ազգակիցներից մեկին՝ Կոստանդինին¹⁰:

Հեթում Առաջինը դարձավ նոր արքայատան՝ Հեթումյանների հիմնադիրը: Նրա անվան հետ են կապված Կիլիկիայի թագավորության արտաքին քաղաքականության երեք նշանակալից հաջողությունները՝ ձևական ենթակայության ճանաչման գնաով իր վերելքի շրջանն ապրող Ռումի սուլթանության չեզոքության ապահովումը, մոնղոլների հետ կնքված ռազմավարական դաշինքը և Անտիոքի իշխանապետության նկատմամբ փաստացի հայկական պրոտեկտորատի հաստատումը: Հարկ է նշել նաև, թե ինչպես են ժամանակակիցները արտահայտվել Հեթումի մասին: Միջնադարյան պատմագիրները նրան տվել են բազմաթիվ պատվանուններ՝ «Աստվածասեր», «Բարեպաշտ» «բարի», «Մեծն», «Քրիստոսասեր», «Քրիստոսապսակ» և այլն, այս պատվանունները ընդհանուր բնույթ կրելով, հատկացվում են համարյա բոլոր հայ գահակալներին: Սակայն, ինչպես նկատում է Լևոն Տեր-Պետրոսյանը, Հեթումին տրվող պատվանունների շարքում ամենատարածվածը բարեպաշտն է, ինչով նա առանձնանում է մնացյալ բալոր հայ թագավորներից, և ինչը ևս մեկ անգամ հաստատում է նրա սրբակենցաղության մասին ձևավորված պատկերացումը: Հեթումի առնչությամբ մեզ հայտնի է միջնադարյան աղբյուրներում «բարե-

⁹ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 3, Երևան 1976 թ., էջ 698:

¹⁰ Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան 2007 թ., էջ 298:

պաշտ>> բառի ետադաս գործածության տաս դեպք ինչն ակնհայտ է դարձնում նրա մականվանային իմաստը: Այս ամենից, թերևս, կարող է ստեղծվել այն միակողմանի տպավորությունը, որ Հեթումը սուկ Քրիստոնեկան առաքիճություններով օժտված բարոյական կերպար էր, այնինչ անժխտելի է, որ դրանով հանդերձ նա դրսևորել է պետական մեծ գործչին վայել բազմաթիվ ունակություններ, ընդ որում, թե՛ տնտեսական, թե՛ ռազմական, և թե՛ դիվանագիտական ասպարեզներում¹¹:

Հեթում Առաջինի (1226-1270 թթ.) թագավորման առաջին տարիները համընկան Իկոնիայի սուլթանության առավելագույն հզորության՝ սուլթան Քեյ Կուբադի (1219-1236 թթ.) կառավարման ժամանակաշրջանի հետ: Սակայն շուտով աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններ են հասունանում այստեղ: Մոնղոլական բարբարոսական վաչկատուն ցեղերը կենտրոնական Ասիայի խորքերից խոշոր զանգվածներով ներխուժեցին Միջին Ասիա և Մերձավոր արևելք: Մոնղոլները գրավեցին նաև Պարսկաստանի զգալի մասը ու Անդրկովկասը, ապա պարտության մատնելով փոքր Ասիայի սելջուկներին, 13-րդ դարի սկզբներին նրանք սկսեցին սպառնալ Կիլիկյան Հայաստանի գոյությանը¹²:

Հեղաշրջումներ էին նախապատրաստվում նաև մահմեդական աշխարհում: Մոտ 1250 թ, Ռումի սելջուկյան սուլթանը և եգիպտաստորիքյան Այուբյան սուլթանությունը հաջորդաբար հպատակեցվում և ոչնչացվում են երկու նոր և հազոր ռազմաքաղաքական ուժերի կողմից, որոնք շուտով առաջատար դեր են ստանձնում. հեթանոս մոնղոլները թագավորություն են հիմնում Պարսկաստանում, իսկ մահմեդական թյուրք մամլուքներն իրենց ձեռքն են վերցնում իշխանությունը Եգիպտոսում և Ասորիքում¹³:

Մոնղոլների առաջին արշավանքը դեպի անդրկովկաս ազդեցություն չունեցավ Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի քաղաքական իրադարձությունների վրա, սակայն վիճակը շուտով փոխվեց: 1243 թվականի Էզրումի և Երզնկայի միջև գտնվող Քյոսադաղի մոտ մոնղոլների և Իկոնիայի սելջուկների միջև տեղի ունեցած ճակատամարտի նախօրեին Կիլիկիայի Հայկական պետության առաջ

¹¹ Տեր-Պետրոսյան Լևոն, Խաչակիրները և հայերը, Երևան 2007 թ., էջ 291:

¹² Հայ ժողովրդի պատմություն, հատոր 3, Երևան 1976 թ., էջ 699:

¹³ Մուրաֆյան Կոլո, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան 2001, էջ 415:

ծառացել էր մի դժվարին հարց կամ նրանք պետք է օգնեին սելջուկներին և դրանով իրանց վրա վերցնեին մոնղոլներ հաջորդ հարվածը կամ հրաժարվելով սելջուկներին օգնելուց պիտի շահեին մոնղոլների բարեկամությունը և դրանով գերծ մնային մոնղոլական ահարկու վտանգից: Կիլիկիան ընտրեց երկրորդ ուղին, որով անմիջապես թշնամանում է Իկոնիայի սուլթանության հետ, իսկ հետո նաև Եգիպտոսի հետ¹⁴:

Քյոսադաղի ճակատամարտում պարտություն կրեց Ռումի սուլթանությունը, իսկ Կիլիկյան Հայաստանը շնորհիվ ճկուն դիվանագիտության խուսափեց մոնղոլների ամայացուցիչ ներխուժումից, սակայն սրվեցին թշնամական հարաբերությունները Ռումի սելջուկների հետ: Այս հանգամանքից ելնելով տեղի է ունենում հայ-մոնղոլական հարաբերությունների նոր մերձեցում: Այս նպատակով Հեթումի եղբայրը՝ Սմբատը, ուղևորվում է մեծ խան Գույուկի մոտ: Եթե մոնղոլների համար Սմբատի գալը նշանակում էր Կիլիկյան Հայաստանի կողմից նրանց գերիշխանության ճանաչման հաստատում, ապա Կիլիկիայի համար թագավորի եղբոր դիվանագիտական առաքելությունը նշանակում էր օգնության խոստման ստացում՝ Իկոնիայի սուլթանության դեմ մղվող պայքարում:

Վերադառնալուց հետո Սմբատը Գույուկ խանի հրամանը՝ հայերին ընդդեմ սելջուկների օգնելու մասին, հաղորդեց մոնղոլ զորավար Բաչուին: Բայց օգնությունը սահմանափակվում էր միայն նրանց կողմից սելջուկների վրա դիվանագիտական ճնշումով: Կիլիկյան Հայաստանի զորքերի ռազմական գործողություններն ընդդեմ Իկոնիայի սուլթանության XIII դարի 50-ական թվականներին հաջող էին ընթանում: Այս նույն ժամանակահատվածում մոնղոլները լրջորեն պատրաստվում էին նր արշավաքի դեպի առաջավոր Ասիա, որպեսզի ամրապնդեն իրենց իշխանությունը ինչ այդ գրաված երկրներում, որպեսզի նվաճեին Միջագետքն ու Սիրիան: Այդ կապակցությամբ մոնղոլ խաները ձգտում էին ուժեղացնել իրենց ազդեցությունը Կիլիկիայում և Մերձավոր Արևելքի ուրիշ վասալ երկրներում, որպեսզի դրանք նպաստեին իրենց առաջիկա արշավանքի հաջողությանը: Այդ իսկ պատճառով, այս անգամ, մոնղոլները Ոսկե Հորդա են կանչում անձամբ Հեթումը թագավորին, այլ ոչ թե նրա եղբորը: 1254 թվականի գարնանը Հեթումը ձոնարկում է դժվարին

¹⁴ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 3, Երևան 1976 թ., էջ 699:

մի ճանապարհորդություն դեպի հեռավոր Ղարադորում (Կարակորում)՝ մեծ խան Մանգուի մոտ¹⁵:

Հեթումը Հորդայում ապրեց 50 օր: Նրա այնտեղ գտնվելու մասին քիչ տվյալներ են պահպանվել, սակայն այս դեպքում մեր կարծիքով, նշանակլին այն է, թե ինչ նա բերեց այդ ուղևորությունից: Ուղևորության գլխավոր արդյունքն այն էր, որ Կիլիկյան Հայաստանը չի ճնշվելու մոնղոլ զորապետերի կողմից: Բացի այդ հայ եկեղեցին ազատվում էր հարկերից: Այսպիսով՝ Հեթում Առաջինի ցուցաբերած քաղաքական գորչին բնորոշ հատկությունների շնորհիվ Կիլիկյան Հայաստանը առժամանակ ապրեց խաղաղ կյանքով, ինչ նպաստեց առևտրի զարգացմանը, երկրի տնտեսապես զարգացմանը, ինչպես նաև վերելք ապրեց մշակույթը, հատկապես մանրանկարչությունը:

Հեթումը իր կյանքի վերջին տարիները անց կացրեց վանքում: Ինչպես Հեթում պատմիչն է գրում,-<<...և ինքն հրաժարեալ ի շքոյ կենցաղոյ՝ և մուտ ի կրօն, ր կոչեցաւ Մակար, և յետ սակաւ ժամանակի հանգեաւ խաղաղութեամբ յամի 1270>> :

Կիլիկյան Հայաստանի ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության անմոռանալի էջերից է: Կորցնելով իր պետականությունը Հայկական Լեռնաշխարհում հայ ժողովուրդը օտար երկրում նույնպես կարողանում է ստեղծել իր պետականությունը: Կիլիկյան Հայաստանում զարգացում է արձանագրվել առևտրականության, մշակույթի, ռազմարվեստի բնագավառներում:

Մենք այս աշխատանքի մեջ անդրադարձանք Հեթումյանների կառավարման նախադրայալներին և Հեթում Առաջինի գահակալությանը: Արդեն XIII դարասկիզբին հասունացել էր հայ իշխանների միաբանության պատմական անհրաժեշտությունը: Խոսքը վերաբերում է հատկապես երկու, կարելի է ասել թշնամի, իշխանական տներին՝ Ռուբինյաններին և Հեթումյաններին: Միասնությունը տեղի ունեցավ, երբ Լևոնի դուստր Զաբելը ամուսնացավ Կոստանդինի որդի Հեթումի հետ: Այսպիսով վերացավ երկու իշխանական տների միջև թշնամանքը և միասնությունը լավագույնս բերեց իր օգուտները Կիլիկյան թագավորությանը: Մենք ներկայացրել ենք Հեթումի կառավարման տարիներին գրանցված հաջողությունները: Մենք դրանք

¹⁵ Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան 2007 թ., էջ 309:

պայմանավորում ենք Հեթումի անհատականությամբ: Նրան հաջողվել էր ստեղծել այնպիսի միապետական երկիր, որի գլուխ կանգնած էր Քրիստոնյա, բարեպաշտ մի առաջնորդ (Հեթում Առաջինը), և իրեն շրջապատել էր նույն հավատքին և գաղափարին ծառայողներով:

Հեթում Առաջինը դարձավ նոր արքայատան՝ Հեթումյանների հիմնադիրը: Նրա անվան հետ են կապված Կիլիկիայի թագավորության արտաքին քաղաքականության երեք նշանակալից հաջողությունները՝ ձևական ենթակայության ճանաչման գնալով իր վերելքի շրջանն ապրող Ռումի սուլթանության չեզոքության ապահովումը, մոնղոլների հետ կնքված ռազմավարական դաշինքը և Անտիոքի իշխանապետության նկատմամբ փաստացի հայկական պրոտեկտորատի հաստատումը:

Այսպիսով՝ գալիս ենք այն եզրակացությանը, որ Հեթումը Քրիստոնեկան առաքինություններով օժտված բարոյական կերպար էր, այնինչ անժխտելի է, որ դրանով հանդերձ նա դրսևորել է պետական մեծ գործչին վայել բազմաթիվ ունակություններ, ընդ որում, թե՛ տնտեսական, թե՛ ռազմական, և թե՛ դիվանագիտական ասպարեզներում: Ուստի պետք է պետության կառավարման գործում կարևորել անհատի դերը:

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՆՂՈՒՆԵՐԻ ԵՎ ՄԱՍԼՈՒՔՆԵՐԻ
ՄԻՋԵՎ.
ՀԵԹՈՒՄ Ա-Ի ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ**

Ռոզա Աբրահամյան

Հ. Շիրազի անվան հ. 169 հիմնական դպրոց, 9-րդ դասարան
Ուսուցիչ՝ Աստղիկ Խորշիկյան

Կիլիկիան հայկական թագավորության պատմությունը նշանավորվել է բազմաթիվ դժվարություններով ու պահանջել է դիվանագիտաան կատարյալ հմտությունները, որոնք թույլ են տվել այս հայկական թագավորությանը մի քանի դար շարունակ գոյատևել ամենաշատ հակամարտություններ տեսած աշխարհի այս հատվածում: Մերձավորարևելյան իրողությունները հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ապացուցել են, որ այս տարածաշրջանը միջազգային խաղաղության համար կենսական դեր է ունեցել, քանի որ թե՛ ռեսուրսների և թե՛ ռազմավարական դիրքի առումով մեծ նշանակություն ունի: Կանգնած լինելով քաղաքակրթությունների խաչմերուկում՝ Կիլիկիան հայկական թագավորությունը հաճախ հարկադրված է եղել ընտրություն կատարել տարբեր հարևանների միջև՝ որպես դաշնակիցներ, ինչը իր հերթին թշնամանք ու հակասություն է ծնել մյուս հարևանների հետ: Այս ընտրությունը հատկապես էական ու կենսական նշանակություն ունեցավ, երբ Կիլիկիան հայոց թագավորությունը կանգնեց «մոնղոլ լ, թե մամլուք» երկընտրանքի առաջ:

Հոդվածում քննարկվում է Հեթում Ա-ի արտաքին քաղաքական քայլերն ու հայ-մոնղոլական դաշինքը, որի հետևանքները՝ հայ-մամլուքյան թշնամանքի տեսքով, երկար սպասեցնել չտվեցին:

13-րդդ. Եգիպտոսում իշխանությունը գրավեցին մամլուքները¹, իսկ նույն տարի կեսերին Մերձավոր Արևելքում հայտնվեցին մոնղոլները:

¹ Դեռևս Աբրաայան Արաբական խալիֆայության (750-1258թ.թ.) ժամանակ խալիֆները իրենց ռազմական ուժերում սկսեցին օգտագործել օտարագրվել օտարագրի երիտասարդներ ստրուկներին, որոնք սկսեցին փոխարինել մինչ այդ բացառապես արաբներից կազմված արաբական զորքին: Այս ստրուկները կոչվեցին մամլուքներ կամ դուլամներ: Նրանց հետագայում ձեռք էին բերում գլխավորապես պատանի հասակում թուրքերից, դիչաղներից, քրդերից, հույներից և այլն: Եգիպտոսում Այյուբյան սուլթանության գահակալման տարիներին (1171-1260թ.թ.) մամլուքների թիվը կտրուկ աճեց, ինչը ի վերջո

Գրավելով Այսրկովկասը և Հայաստանը՝ մոնղոլական հորդաները մտան Փոքր Ասիա: Նրանք ծանր պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը: Մոնղոլական արշավանքները ծանր խնդիրներ դրեցին նաև Կիլիկիայի հայկական պետության առջև: Լատինական պետությունները, որոնք ձևավորվել էին խաչակրաց արշավանքների արդյունքում, մեկը մյուսի ետևից վերացան, իսկ եգիպտական մամլուքները գնալով հզորանում էին: Եթե առաջ խաչակիրները կարող էին օգնել հայերին սելջուկների ու արաբների դեմ պայքարում, ապա այժմ նրանք ունակ չէին անգամ իրենք իրենց պաշտպանել: Հայերն դեմ առ դեմ մնացին կանգնած մամլուքներին, որոնք պարբերական հարձակումներով սպառնում էին Կիլիկիան Հայաստանի գոյությանը: Ստեղծված իրադրությունը հարկադրեց Կիլիկիան հայկական թագավորության գլուխ կանգնած Հեթում Ա-ին դիվանագիտական կարևոր քայլեր ձեռնարկել: Անհրաժեշտ էր ընտրել դաշնակից, որի օգնությամբ հնարվոր կլիներ կասեցնել մամլուքների մուտքը Կիլիկիա: Ընտրության հնարավորությունը այդքան էլ մեծ չէր: Տարածաշրջանում մեծ դեր էին սկսել ձեռք բերել մոնղոլները, ուստի Հեթումը որոշեց դաշինք առաջարկ հղել մոնղոլներին: Հեթում Ա-ն դաշինք կնքելու համար դիմեց մոնղոլների հրամանատար Բաչու Նուխինին, ով 1243 թվականին կործանեց Իկոնիայի սուլթանին և դարձավ Փոքր Ասիայի տիրակալը³: Դեռևս Ջալեղի և Հեթում Ա-ի իշխանության օրոք, մոնղոլները ստեղծեցին միպետություն, որ ձգվում էր Միջին Ասիայից Մերձավոր Արևելք՝ նվաճելով Միջագետքն ու Սիրիան: 1243 թվականի հունիսի 26-ին մոնղոլները ջախջախեցին սելջուկ-թուրքերին Կոսե Դաղի ճակատամարտում⁴: Հեթում Ա թագավորը համագործակցության գնաց նրանց հետ: Նա 1247 թվականին իր եղբորը՝ Սմբատ Գունդստաբլին, ուղարկեց Կարակորում՝ պայմանագրի կնքման համար: Սմբատ Գունդստաբլը վերադարձավ 1250 թվականի խաղաղության պայմանագրով, որով մոնղոլները չէին հարձակվելու Կիլիկիայի

հանգեցրեց Այյուբյան սուլթանությանը՝ մամլուքների կողմից տապալմանը և մամլուքների (մինչև 1382 թվականի Բահրի մամլուքներ, ապա՝ Բուրջի մամլուքներ) գերիշխանության հաստատմանը Եգիպտոսում: Մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Հ. 1, Երևան, 2003, էջ 339-349:

³ Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ս., Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 528-529 (այսուհետ՝ Հայ ժողովրդի պատմություն):

⁴ Atwood C. P., Encyclopedia of Mongolia and the Mongol Empire, Facts on File, 2004, p. 321.

Հայկական Թագավորության վրա, նխոստանում էին ռազմական օգնություն՝ վերագրավելու սելջուկների կողմից գրավված բերդերն ու ամրոցները⁵:

Կարևոր է նշել, որ մոնղոլների համար ևս ձեռնտու էր հայկական թագավորության հետ դաշնակցելը, քանի որ նրանք լայնածավալ նվաճողական նկրտումներ ունեին, որոնց իրականացման համար հուսալի դաշնակից էր պետք:

Պայմանագիրը փաստորեն ժամանակակից տերմինաբանության նշելով, կարող ենք ասել «win-win» իրադրություն⁶ էր ստեղծում պայմանագրի կողմերի՝ հայերի և մոնղոլների համար:

Հաշվի առնելով, որ այս պայմանագիրը օղի ու ջրի նման անհրաժեշտ էր հենց Կիլիկիան Հայաստանին՝ Հեթումը, պետք է անձամբ գնար մոնղոլական քաղաքամայր՝ պայմանագրի վերջնական տարբերակը կնքելու համար: Սակայն որոշ հանգամանքներ, ինչպիսիք են օրինակ Զապելի մահը և ներքաղաքական իրադրությունը, հարկադրում էին Հեթումին հետաձգել այցը: Սակայն արտաքին քաղաքական իրադրությունը հարկադրեց Հեթումին ձեռնարկել այդ այցը և ճանապարհ ընկնել Մոնղոլիա՝ մեծ խան Մանգուի (Մունքե) մոտ՝ վերահաստատելու Բաչու Նուինի հետ դեռևս 1243թվականին կնքած նախնական դաշինքը:

1253 թվականին Հեթումը ժամանեց Կարակորում, որտեղ մոնղոլները նրան մեծ շուքով դիմավորեցին:

Այս պայմանագրի տեքստը Հեթում Ա-ի առաջարկներնում մոնղոլ խանի պատասխանները պահպանվել են Հեթում Պատմիչի «Արևելյան ժողովուրդների պատմության» երրորդ գլխում⁷:

Հաշվի առնելով պայմանագրի մեծ դերը, հարկ ենք համարում ներկայացնել այն կետերը, որոնց շուրջ ընթացել էին բանակցությունները: Ահա թե ինչ առաջարկներ էր կատարել Հեթում Ա-ն մոնղոլխանին: Այսպիսով՝ մոնղոլտիրակալին առավարկվեց՝

✓ ընդունել քրիստոնեություն ու ետ կանգնել մյուս բոլոր հավատներից ու կնքվել,

⁵ Հայ ժողովրդի պատմություն, էջ528-529:

⁶ Մի իրադրություն, երբ բոլոր կողմերը բավարարված են ու իրենց օգուտն են ունենում հակասության լուծման արդյունքում:

⁷ Գալստյան Ա., Մոնղոլական ժամանակաշրջանի հայ դիվանագիտության պատմության շուրջ, Լենինական, 1945, էջ 4:

✓ մոնղոլների ու քրիստոնյաների միջև հավերժ խաղաղություն հաստատել,

✓ մոնղոլների գրաված և հետագայում գրավվելիք բոլոր քաղաքներում ու երկրներում քրիստոնյա եկեղեցին ու հոգևորականությունը ազատ լինեն ստրկությունից ու անգամ հարկերից,

✓ խանը ետ գրավի սուրբ հողը՝ Հիսուսի գերեզմանն ու վերադարձնի քրիստոնյաներին,

✓ պատերազմ հայտարարել մուսուլմաններինն ու ւկովել Բաղդադի խալիֆի դեմ,

✓ խանը Հեթումին հնարավորություն տա անհրաժեշտության դեպքում օգնության համար դիմել լրոլոր մոնղոլներին, հատկապես նրանց, ովքեր գտնվում են հայոց թագավորության հարևանությամբ, և որ այդ օգնությունը անմիջապես ցուցաբերվի,

✓ բոլոր այն հողերը, որոնք պատկանել են հայերին և գրավվել մուսուլմանների կողմից իսկ այժմ անցել են մոնղոլներին վերադարձվեն հայերին, իսկ մյուս նմանատիպ հողերը ևս հետագայում ազատագրվեն մուսուլմաններից ու վերադարձվեն հայերին:

Խանը այս առաջարկություններին կետ առ կետ պատասխան է տալիս, համաձայն որի՝

✓ Նա կնքվում է և կձգտի, որ իր ժողովուրդը ևս կնքվի, սակայն առանց հարկադրանքի,

✓ Խանը ևս ցանկանում է, որ քրիստոնյաների ու մոնղոլների միջև հավերժ խաղաղություն լինի, սակայն հայոց արքան պետք է միջոցներ ձեռք առնի, որ քրիստոնյաները իրենց հերթին պահպանեն այս համաձայնագրի պայմանները,

✓ Նա ևս ցանկանում է, որ իր տիրապետության տակ գտնվող բոլոր տարածքներում եկեղեցին արտոնյալ լինի և չենթարկվի հալածանքների ու անհանգստության,

✓ Անձամբ զբաղված լինելով՝ նա իր եղբայր Հուլաղու խանին կհանձնարարի ազատագրել Քրիստոսի գերեզմանը,

✓ Նա ևս ցանկանում է ոչնչացնել Բաղդադի խալիֆին՝ իր ուխտերիմ թշնամուն,

✓ Նա մեծ հաճույքով օգնություն կցուցաբերի հայոց արքային, միայն, թե թող հայոց արքան ասի, թե ի՛նչ օգնություն է ակնկալում,

✓ Նա իր եղբայր Հուլադու խանին կիրամայի անմիջապես վերադարձնել հայերի հողերը, բացի այդ հայոց արքային կտրվեն նաև այլ հողեր ու ամրոցներ⁸:

Ինչպես երևում է պայմանագրից Կիլիկիային են վերադարձվում բոլոր այն հողերը, որոնք ժամանակին տիրել է Լևոն 2-րդը (1150-1219) և գրավվել էին Իկոնիայի սուլթանի կողմից:

Կարելի է նշել, որ Մոնղոլիայի մեծ խանի հետ կնքած բարեկամության և փոխօգնության պայմանագիրը երաշխավորում էր Հայոց թագավորության սահմանների անխախտությունը, պարտավորվում էր ռազմական օգնություն ցուցաբերել շրջակա իսլամական պետությունների հնարավոր հարձակման դեպքում, բացի այդ հայ առևտրականները արտոնյալ կարգավիճակ էին ստանում մոնղոլական տիրապետության տարածքներում⁹:

Ինչպես նշում էր ականավոր պատմաբան Հ.Սիմոնյանը՝ «Հայ-մոնղոլական պայմանագիրը մինչև 13-րդ դարի վերջը նշանակալից դեր խաղաց դրացի մահմեդական պետությունների դեմ հայերի պայքարում»⁷:

1258թվականին մոնղոլները գրավեցին Միջագետքը և շարժվեցին Սիրիա: 1258 թվականին մոնղոլական հուժկու հարվածի տակ ընկավ Արաբական խալիֆայության երբեմնի փառահեղ մայրաքաղաք Բաղդադը⁸, որի անկումից խալիֆայությունը այլևս ուշքի չէկավ: Հայերի հետ մոնղոլները սելջուկների ու մամլուքների դեմ մի շարք հաղթանակներ տոնեցին, որի արդյունքում Սիրիայի մի մասը Հալեպ քաղաքով անցավ Կիլիկիային: Սակայն այս դաշինքին հետագայում վիճակված չէր շարունակվել: Մունկե խանի մահից հետո Հուլադուն վերադարձավ Մոնղոլիա, իսկ մամլուքները կիլիկիացիներից խլեցին Հալեպ քաղաքը⁹:

⁸ Сукиасян А. Г., История Киликийского армянского государства и права, Ереван: Митк, 1969, стр. 68-71.

⁹ Սիմոնյան Հ., Հայոց պատմության հիմնահարցեր, Երևան 2000, էջ 67-68:

⁷ Սիմոնյան Հ., Հայոց պատմության հիմնահարցեր, Երևան 2000, էջ 68:

⁸ Աբրաայան խալիֆայության մայրքաղաք Բաղդադը ընկավ 1258 թվականին: Մեծ բանակ հավաքած մոնղոլները պաշարեցին քաղաքը և քանդելով քաղաքի պատը՝ նետվեցին հարձակման: Խալիֆ ալ-Մուսթասիմը առաջարկեց բանակցություններ սկսել, սակայն մոնղոլները մերժեցին: Փետրվարի 10-ին Բաղդադն ընկավ: Ավելին՝ Turnbull S., Genghis Khan & the Mongol Conquests 1190-1400, Osprey Publishing, 2003, p. 58.

⁹ Նույն տեղում, էջ 62-70:

Հեթում Ա-ի դիվանագիտական կարևոր քայլի, այն է հայ-մոնղոլական դաշինքի, շնորհիվ մոնղոլները իրենց վրա վերցրեցին հայոց պետության տարածքային ամբողջականության պահպանման խնդիրը: Սա սակայն չէր նշանակում, որ մոնղոլները իրավունք ունեին ներքին գործերին խառնվել, ինքը ապահովում էր Հեթումյանների լիակատար անկախությունը: Կարևոր է նշել, որ հայոց արքան մոնղոլ խանի հետ բանակցություններ էր վարում ոչ միայն Կիլիկիայի այլ նաև բոլոր հայկական տարածքների անունից: Այս վկայում է պայմանագրի կետերից մեկը, համաձայն որի մոնղոլները պետք է կարգավորեին հարկային համակարգը Հայաստանում ևս և ազատեին եկեղեցին հարկերից:

Հայոց փոքր թագավորության ու հսկայական մոնղոլական տերության դաշինքը բարվոք կերպով արտահայտվեց հայոց պետության արտաքին քաղաքական կյանքի ու թշնամական երկրների հետ դրա փոխհարաբերության վրա, մասնավորապես Իկոնիա ու Եգիպտոս: Այս դաշինքը կարելի է բնութագրել որպես մոնղոլների պրոտեկտորատ Կիլիկիայի նկատմամբ:

Սակայն պետք է նշել, որ բացի դրական կողմերից մոնղոլների հետ դաշինքն ուներ նաև իր բացասական գծերը: Հայոց թագավորը պարտավոր էր մասնակցել մոնղոլների վարած արտքանին քաղաքականությանը, զորք տրամադրել և խանի գանձարանը գումար տալ որպես նվեր: Ակնհայտ է, որ մոնղոլական կողմը փորձում էր օգտագործել Կիլիկիայի տնտեսական ու ռազմավարական հնարավորությունները Եգիպտոսի մամլուքների դեմ պայքարում:

Մոնղոլների և հաջող և անհաջող արշավանքները բացասական էին անդրադառնում հայկական թագավորության և դրա հարևանների վրա: Մոնղոլների նվաճողական արշավանքները, որոնց հարկադրված էին մասնակցել նաև հայերը, անընդհատ սրում էին կիլիկիայի ու դրա հարևանների, մասնավորապես մամլուքների հետ փոխհարաբերությունները: Բացի այդ մոնղոլները, զբաղված լինելով իրենց հարցերով, միշտ չէ որ կարողանում էին պատշաճ օգնություն ցուցաբերել կիլիկիացիներին:

1266 թվականին մամլուքները Հեթում Ա թագավորին առաջարկեցին միանալ իրենց ընդդեմ մոնղոլների և իրենց հանձնել այն բերդերն ու ամրոցները, որ Կիլիկիան նվաճել էր մոնղոլների օգնությամբ: Հեթումը հասկացավ, որ այն ծուղակ է և որմամլուքները չեն ցանկանում դաշնակցել հայերի հետ: Այդ իսկ պատճառով նա մեկնեց Իլ-Խանության

արքունիք՝ Պարսկաստան, ռազմական օգնության խնդրանքով: Մակայն նրա բացակայության ընթացքում մամլուքները ներխուժեցին Կիլիկիա. գորքը գլխավորում էին Հեթումի որդիները՝ Թորոսն ու ապագա արքա Լևոն Գ-ն¹⁰: Մտռի ճակատամարտում հայերը պարտվեցին, Թորոսը սպանվեց, իսկ Լևոնը տասնյակ հազարավոր հայ ասպետների հետ միասին գերի ընկավ: Հեթումը միայն զիջելով մի քանի սահմանամերձ բերդեր և վճարելով մեծ քանակությամբ փրկագին կարողացավ ազատել գերությունից Լևոնին¹¹:

Այս ընթացքում ոչ խաչակիրները, և ոչ էլ մոնղուները հայերին օգնության չեկան, երբ մամլուքները 1265-1266 թվականներին հարձակումներ էին գործում Կիլիկիայի վրա: Հեթում Ա-ն մոտ 1.5-2 տարի օգնություն սպասեց իր «ղաշնակիցներից», սակայն նրանք այդպես էլ չեկան, ինչից հետո նա 1268 թվականին հարկադրված էր դիմել Եգիպտոսի սուլթանին ու ընդունել նրա կողմից առաջարկված խաղաղ պայմանագրի պայմանները¹²:

Պայմանագիրը բավականին բարդ իրադրություն էր ստեղծում Կիլիկիան թագավորության համար: Նախ նշենք, որ 1269 թվականին Հեթումը հրաժարվեց գահից իօգուտ Լևոն Գ-ի, բացի այդ հայկական կողմը տարեկան մեծ քանակությամբ հարկ էր վճարում մամլուքներին: Չնայած հարկերի վճարմանը՝ մամուլքյան հարձակումները չէին դադարում:

Ի վերջո պատմությունը ցույց տվեց, որ մամլուքներին հարկատու Կիլիկիան պետք չէր, և որ մամլուքների գլխավոր նպատակը Կիլիկիան սեփական գերիշխանության տակ տեսնելն էր:

1275 թվականին մամլուքյան կողմը հանկարծակիի բերեց հայկականին: Առանց պատերազմ հայտարարելու մամլուքյան սուլթանի գլխավորությամբ մամլուքների բանակը ներխուժեց Կիլիկիա: Գրավվեց Տարսոնը՝ ավերելով ու թալանելով այն: Հսկայական թվով բնակչություն սպանվեց, մի զգալի մասն էլ ստրկացվեց:

Ստեղծված իրադրությունը հարկադրեց Լևոն Գ-ին հաշտության եզրեր փնտրել մամլուքների հետ, որի արդյունքը եղավ 1285 թվականին

¹⁰Չայ ժողովրդի պատմություն, էջ 532:

¹¹ Իրադրությունը սրվել էր նաև ներքին կյանքում: Կիլիկիան երբեմնի զարգացած ներտնտեսական իրադրությունը վատթարացել էր հատկապես 1268 թվականի երկրաշարժի արդյունքում:

¹²Այս մասին առավել մանրամասն տե՛ս Օրմանյան Ս., Ազգապատում, Հ. Բ, Բեյրութ, 1959:

հաշտության պայմանագիրը, որը սակայն չափազանց ծանր էր հայկական կողմի համար: Թեպետ ծանր պայմաններով, սակայն ստեղծված հարաբերական կայունությունը թույլ տվեց Կիլիկիային կատարել հաղթական մի քայլ: Սարվանդի քարի Երկրորդ ճակատամարտում հայերը հաղթեցին մամլուքներին, որի շնորհիվ ևս մի քանի տարի հայկական պետությունը երկարացրեց իր խաղաղ գոյությունը¹³:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Հեթում Ա-ի քայլերը և դեպի մոնղոլական կողմը թեքվելու ընտրությունը կարևոր ու առանցքային նշանակություն ունեն: Հեթում Ա-ն, գիտակցելով բոլոր հավանական ելքերը, գնաց մոնղոլական կողմի հետ պայմանագրի կնքմանը, քանի որ քաջ գիտակցում էր, որ իր զարգացման գազաթնակետին գտնվող այս պետությունը կարող էր ապահովել իր տարածքային ամբողջականությունն ու պատնել դառնալ մամլուքյան հարվածների համար:

Սակայն մյուս կողմից թերևս սխալ չի լինի նշել, որ Հայկական թագավորություն չկարողացավ այլընտրանքներ ստեղծել իր համար և մոնղոլական թուլացման հենց սկզբում գտնել առավել հզոր դաշնակից և պայմանագիր կնքել, օրինակ նույն մամլուքների հետ, դեռևս իր դիրքերի ամուր եղած ժամանակ: Այս բացթողումը պատճառ դարձավ մամլուքների հետ ոչ հավասար պայմանագրի, որը ըստ էության, առանձնապես կարևոր նշանակություն չունեն մամլուքյան կողմի համար, քանի որ նրանք գիտակցում էին Կիլիկիայի դրության թուլությունը և իրենց գենքի ուժը:

13-րդ դարի վերջին, հատկապես 14-րդ դարի սկզբին մոնղոլների օգնությունը գնալով ավելի խորհրդանշական էր դառնում, ինչը ստիպում է Կիլիկիայի հայոց թագավորությանը շրջվել դեպի արևմուտք՝ հույսով, որ նոր խաչակրաց արշավանքները լուրջ հարված կհասցնեն Եգիպտոսի մամլուքներին և դրանով իսկ կօգնեն հայոց թագավորությանը պահպանել իր պետականությունը¹⁴: Սակայն այս հույսերը ևս չէին արդարանալու, քանի որ խաչակրաց արշավանքները էական դեր չէին ունենում այլևս այս ժամանակահատվածում և հաճախ անգամ խաչակիրների չէին էլ հասնում Մերձավոր Արևելք:

¹³ Kurkjian V. M., History of Armenia: United States of America: Armenian General Benevolent Union of America, 1958, pp. 246–248.

¹⁴ Kurkjian V. M., History of Armenia: United States of America: Armenian General Benevolent Union of America, 1958, pp. 246–248.

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԽԱՉԱԿԻՐՆԵՐԻ ԵՎ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՀԵՏ**

Մուսե Սիմավորյան

Երևանի հ.147 հիմնական դպրոց, 9-րդ դասարան
Ուսուցիչ՝ Իրեն Դավթյան

Առաջարկ: Հայաստանից դուրս ստեղծված հայկական պետական կազմավորումներից ամենակենսունակը եղավ Ռուբինյան իշխանությունը:

1080 թ. հայ իշխան Ռուբենը Լեոնային Կիլիկիայում հիմնադրեց հայկական նոր իշխանություն, որը նրա անունով կոչվեց Ռուբինյան: Այդ իշխանության գոյությունը սպառնում էին ինչպես Բյուզանդիան, այնպես էլ սելջուկները: Ուստի Ռուբինյանները ստիպված էին պայքարել երկու ճակատով: Սակայն խաչակրաց առաջին արշավանքը որոշ ժամանակով շեղեց սելջուկների և Բյուզանդիայի ուշադրությունը Կիլիկիայից: Այդ իրավիճակը հնարավորություն տվեց հայերին՝ ամրապնդելու և ընդարձակելու նորաստեղծ իշխանությունը:

Կիլիկիայում հաստատված հայ իշխանները սկսեցին համագործակցել խաչակիրների հետ, սակայն նրանց հարաբերությունները միշտ չէ, որ բարեկամական էին¹:

1190-ականներին Եգիպտոսի հզորացումից ու Երուսաղեմի անկումից հետո խաչակիրների վիճակը խիստ ծանրացել էր: Նրանց օգնելու գործում Արևմտյան Եվրոպան հույսեր էր կապում նաև Կիլիկիան Հայաստանի հետ: Ուստի կատարվող իրադարձությունները առիթ հանդիսացան Կիլիկիայի հայկական թագավորության վերականգնմանը: Կիլիկյան թագավորությունը իր պատմության ընթացքում անցել է շատ պատերազմների միջով: Սակայն ես կանդրադառնամ միայն Իկոնիայի դեմ մղված պատերազմներին:

Անտիոք-Իկոնիական դաշինքի գորքերի ջախջախումը (1125-1226թթ.): Լևոն Բ-ն երկարատև համակարգված գործունեության շնորհիվ հզորության գագաթնակետին է հասցնում Կիլիկիայի հայկական թագավորությունը: Արքան իրենից հետո թողնում է բարգավաճող

¹ Աշոտ Մելքոնյան, Էդուարդ Դանիելյան, Հակոբ Մուրադյան, 7-րդ դասարանի Հայոց պատմություն, Երևան, 2014թ., 122 էջ:

տնտեսությունն ու ամուր պաշտպանված սահմաններ ունեցող մի պետություն, որը կարևոր դերակատարում ուներ տարածաշրջանային գործընթացներում:

Լևոնին հաջորդում է դուստրը՝ Ջաբելը, որին խնամակալ է նշանակվում Լամբրոնի իշխանական տոհմի ներկայացուցիչ Կոստանդինը: Վերջինս հայ իշխանների և հոգևորականների ժողով է հրավիրում՝ Ջաբելի ամուսնության հարցը քննարկելու համար: Ժողովականները որոշում են Ջաբելին ամուսնացնել Անտիոք-Տրիպոլիի Բռեհեմունդ Դ Միակնանու որդու՝ Ֆիլիպի հետ: Որպես նախապայման՝ Ֆիլիպ Անտիոքացուց պահանջվում է, որ նա հետևի հայկական կենցաղին ու հայ եկեղեցու ծեսերին: Ամուսնությունը տեղի է ունենում 1222թ.²:

Հայոց գահին հաստատվելով՝ Ֆիլիպը սկսում է խախտել տված խոստումը. արքունիքից հեռացնում է հայ իշխաններին և իրեն շրջապատում ֆրանկներով: Նրա այդ վարքագիծը արժանանում է իշխանների դժգոհությանը, և նրանք Կոստանդին Լամբրոնացու գլխավորությամբ ձերբակալում են Ֆիլիպին և բանտարկում Թիլ Համտունում, որտեղ 1225թ. նա մահանում է:

Կիլիկիայի հայկական թագավորությունում գերիշխանություն տարածել ձգտող Բռեհեմունդ Դ-ն չէր կարող հաշտվել որդու գահընկեցության և ձերբակալության հետ: Որոշելով, որ արքայի գահընկեցությունից հետո հայկական թագավորությունը խոցելի է դարձել, նա սպառնալից վերջնագիր է հղում Կիլիկիա և պահանջում իրեն հանձնել որդուն: Սակայն հայ իշխանները մերժումով են պատասխանում վերջնագրին: Ավելի ուշ նրանք նաև տեղեկություն են ստանում, որ անտիոքյան զորքերը արդեն սկսել են կենտրոնանալ Կիլիկիայի սահմանին:

Նախքան ռազմական գործողություններ ծավալել, փորձելով «հովանավոր» գտնել՝ Բռեհեմունդը Կիլիկիայի վրա հարձակվելու թույլտվություն է խնդրում Հռոմի պապ Հնոտրիուս Գ-ից: Վերջինս ոչ միայն մերժում է խնդրանքը, այլև բանադրանքի է ենթարկում քրիստոնեական պետությունների դաշինքի նշանակությունը չգիտակցող անխոհեմ իշխանապետին:

² Գ. Հարությունյան, Ս. Մարտիկյան, Մեր Հաղթանակները Երրորդ հատոր, Երևան, 2011թ., 261 էջ:

Այդ մասին իր «Լիակատար պատմություն» գրքում նշել է Իբն ալ-Ասիրը. «Բռնեմունդը լուր ուղարկեց մեծ Հռոմում ֆրանկների թագավորին, թույլտվություն խնդրելով հարձակվել հայերի վրա: Սակայն սա արգելեց նրան հարձակվել, ասելով՝ նրանք մեր համայնքին պատկանող ժողովուրդ են և չի կարելի նրանց երկրի վրա հարձակվել: Բարինսը չուզեց հնազանդվել... Ալ-Դաուիյա և ալ-Ասքիտար ասպետները, որոնք ֆրանկների եռանդուն ռազմիկներն են, ասացին, որ Հռոմի թագավորն մեզ այդ բանն արգելեց, սակայն եղան որոշներ, որոնք հնազանդվեցին բրինսին և մտան հայոց երկրի սահմանները»³:

Մերժելով պապի խորհուրդները՝ Բռնեմունդը 1225թ. կեսերին գորքը մտցրեց Կիլիկիա:

Առանց ժամանակ կորցնելու Կոստանդին Լամբրոնացին համախմբում է պետության ապագայով մտահոգ իշխանների ուժերը և շարժվում հակառակորդին ընդառաջ: Անտիոք-տրիպոլյան զորքերը մեծ դժվարությամբ ընդամենը կարողանում են հասնել Թիլ Համտուն, որտեղ նրանք տեղեկանում են Ֆիլիպի մահվան մասին:

Թիլ Համտունի մերձակայքում հայկական զորքերը հարվածներ են հասցնում հակառակորդին և վերջնականապես խափանում Բռնեմունդի ծրագրերը: Ավելին անել չկարողանալով՝ լատինների բանակը հեռանում է Կիլիկիայից:

Լատինների համար ռազմաքաղաքական իրադրությունը վերջնականապես անբարենպաստ է դառնում, երբ Հռոմի պապի պահանջով ասպետական միաբանությունները հրաժարվում են մասնակցել պատերազմին: Ակնհայտ էր, որ Բռնեմունդի ձեռնարկումն իրատեսական չէր, քանի որ եղած ուժերով նա ո՛չ կարողանալու էր նվաճել Կիլիկիան, ո՛չ էլ ինչ-որ նշանակալի հաջողության հասնել: Սակայն պատերազմի մտքից համառորեն չհրաժարվող իշխանապետը դիմում է Իկոնիայի Քեյ-Կուբադ Ա սուլթանի օգնությանը, ով առանց հապաղելու համաձայնում է միանալ Բռնեմունդ Դ-ի արկածախնդրությանը:

Սակայն Կիլիկիան ասպատակելու նպատակ ունեցող ուժերի համախմբում տեղի չի ունենում, հետևյալ պատճառներով.

³ Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, թարգմանություն բնակգրից Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981 թ., 9-րդ հատոր:

- Տարածաշրջանի քրիստոնեական պետությունների դաշինքը ամեն գնով պահպանել ձգտող Հոնոլուլուս պապի ջանքերով Անտիոքում ձևավորված ընդդիմությունը զսպելը ժամանակ և ջանքեր էին պահանջում իշխանապետից,

- Թեև միաբանությունների ասպետների մի մասը գայթակղվել էր ավար ձեռք բերելու գաղափարով և արհամարհելով Հռոմի պապի բանադրանքը՝ միացել էր Բոհեմունդին, սակայն ներքին տարածաշրջանների հետևանքով միասնական բանակ ձևավորել չի հաջողվում,

- Ամռանը կրած առաջին պարտությունից հետո լատինների բանակը պատրաստ չէր տարեվերջին իրականացվելիք նոր արշավանքին:

Ստեղծված իրավիճակում որոշվում է ներխուժում իրականացնել ինքնուրույն, և 1225թ. դեկտեմբերին առաջինը Կիլիկիա են ներխուժում Քեյ-Կուրադ Ա-ի զորքերը, որոնց հայկական բանակը կազմ ու պատրաստ է դիմավորում: Կոստանդին Լամբրոնացու գլխավորությամբ ձեռնարկվել էին մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր կասեցնել հակառակորդի առաջխաղացումը սահմանային շրջաններում և թույլ չտալ ներխուժել կենտրոնական շրջաններ:

Իկոնիայի բանակը հանդիպում է համառ ու հստակ կազմակերպված դիմադրության:

Ռազմավարական մտահղացման համաձայն՝ հակառակորդի հարձակումը պետք է կասեցվեր սահմանային ամրությունների գոտում: Երկրորդ փուլում, կլիմայական պայմաններն օգտագործելով, հայկական բանակը հասցնելու էր ջախջախիչ հարվածը:

Հայկական բանակի առաջխաղացումը կասեցվում է Տավրոսի լեռնային ամրոցների գծում, և միայն թվային գերազանցությունն է սուլթանին հնարավորություն տալիս գրավել 4 ամրոց: Դա սուլթանի ակնկալած արդյունքից անհամեմատ քիչ էր: Գլխավոր անհաջողությունը ժամանակի կորուստն էր, որը հնարավորություն չէր տալիս նախքան «ձմռան վրա հասնելը» Լեռնային Կիլիկիայից իջնել Դաշտային Կիլիկիա, որտեղ հնարավոր կլիներ շարունակել կռիվը:

Փաստացի, նախքան Բոհեմունդի բանակի հարձակումը սկսելը թուրքական բանակը հարկադրված է լինում նահանջել և հեռանալ Կիլիկիայից:

Այս ամենից կարելի է արձանագրել, որ արդեն այս փուլում դրվում են հայկական ուժի ապագա հաղթանակի հիմքերը:

1226թ. տարեսկզբին ռազմաքաղաքական իրադրությունը անբարենպաստ էր Բոհեմունդի համար, որը ժողովրդականություն չէր վայելում նույնիսկ սեփական երկրում:

Հետախուզական ծառայության միջոցով տեղեկանալով, որ Բոհեմունդը հարձակման պատրաստություն է տեսնում, հայկական կողմը նախապատրաստվում է ո՛չ միայն ներխուժումը կասեցնելու, այլև հակառակորդին վերջնականապես ջախջախելու: Ուստի կիրճերում նրանք այնպիսի դիմադրություն են ցույց տալիս, որ անստիք-տրիպոլիսյան բանակը զրկվում է առաջխաղացման բոլոր հնարավորություններից: Իսկ Կոստանդին Լամբրոնացու մարտավարությունը դառնում է Կիլիկիայի բանակի յուրօրինակ «ձեռագիրը»:

Սահմանի մոտ էլ հակառակորդը ծանր պարտություն է կրում և հարկադրված հրաժարվում պատերազմը շարունակելու մտքից:

Հերթական հաղթական պատերազմը Իկոնիայի դեմ (1246-1249): Բարձր Հայքում 1242թ. մոնղոլական զորքերը Բալուի հրամանատարությամբ երկամսյա պաշարումից հետո գրավում են Կարինը, իսկ հաջորդ տարի Չմանկատուկի ճակատամարտում մոնղոլական բանակը ծանր պարտության է մատնում Իկոնիայի սուլթան Քեյ Խոսրով Բ-ի զորքերին ու նվաճում Փոքր Հայքի մեծ մասը:

Կիլիկիայի հայկական թագավորությունը հայտնվում է մոնղոլների ներխուժման վտանգի առջև: Ուստի Հեթում Ա թագավորը 1243թ. Բանակցություններ է սկսում Բալուի հետ:

Հայկական կողմի համար Բալուին դաշնակցության առաջարկ անելու նպաստավոր պահ էր, քանի որ Բալուն ևս իրեն դաշնակից էր որոնում: Բացի այդ՝ մոնղոլ զորավարի համար պակաս կարևոր չէր նաև, որ Կիլիկիայի հետ դաշնակցելով՝ նա հնարավորություն էր ստանում Փոքր Ասիան կտրել իր նվաճումների գլխավոր թիրախ դարձած Միջագետքի և Ասորիքի մահմեդական ամիրաների դրույթներից ու թշնամիներին ջախջախել առանձին-առանձին:

Մոնղոլները պահանջում են իրենց հանձնել Իկոնիայի սուլթանի կնոջն ու դստերը, որոնք ապաստանել էին Կիլիկիայում: Սաի արքունիքը ստիպված է լինում կատարել այս պահանջը, և 1243թ. կնքվում է հայ-մոնղոլական դաշինքը:

Քեյ Խոսրով Բ-ի պատասխանը սպասել չի տալիս: Հայ-մոնղոլական պայմանագրի կնքումից անմիջապես հետո Կիլիկիայի հյուսիսարևմտյան սահմանային շրջաններում ընդհարումներ են սկսվում, որոնք, թեև

ընթանում էին սելջուկյան զորքերի առավելությամբ, սակայն էական արդյունքների չեն հանգեցնում:

Կարճատև դադարից հետո՝ 1246թ.-ին, Սուլթանը որոշում է մեծ հարձակում սկսել դեպի Կիլիկիա: Իկոնիական 30 հազարանոց բանակը ներխուժում է հայկական թագավորության տարածք: Երկրորդական խնդիրների կատարման վրա ժամանակ ու ջանքեր չծախսելով՝ սելջուկյան բանակը կենտրոնանում է Տարսոնի մոտ: Անհրաժեշտ վերախմբավորումներից հետո հակառակորդը պաշարում է քաղաքը:

Կատարելով իրենց դաշնակցային պարտականությունները՝ մոնղոլները Քեյ Խոսրով ից պահանջում են զորքը դուրս բերել Կիլիկիայից: Տեղեկանալով, որ մոնղոլները որոշ ժամանակ անց կկարողանան օգնության հասնել, սուլթանը հրաժարվում է դադարեցնել արշավանքը: Չնայած ստեղծված իրավիճակին՝ հայերը չեն դադարեցնում պայքարը:

Պատերազմի սկզբից ևեթ թյուրքական բանակը կենտրոնացած էր Տարսոնի պաշարման վրա և այդ պատճառով հաճախ հայտնվում էր անբարենպաստ իրադրության մեջ:

Հեթումը որոշում է նախքան հակահարձակման անցնել օգնել քաղաքում պաշարվածներին և Տարսոնի պաշտպանությունը ղեկավարելու համար այնտեղ է ուղարկում Կոստանդին թագավորահորը և Սմբատ սպարապետին:

Արդեն իսկ բազմափորձ զորավարի համարում ունեցող սպարապետը, կանխատեսելով թյուրքական ծանրագեն հետևակի գրոհներն անդրադարձնելու խնդիրը, իր հետ Տարսոն գնացող զորամասի մեջ լատին արքայետաձիգների ստորաբաժանում է մտցնում:

Թագավորահայրը և սպարապետը Տարսոն են հասնում ճիշտ ժամանակին, քանի որ թյուրքերը, վախենալով ժամանակի կորստի բացասական հետևանքներից, կատաղի գրոհներով փորձում էին գրավել քաղաքն ու շարունակել առաջխաղացումը: Ձգտելով արագ ավարտել Տարսոնի պաշարումը՝ թյուրքական բանակն ավելի մեծաթիվ ուժերով է իրականացնում գրոհները: Քաղաքի պաշտպանները հաջողությամբ ևս մի քանի գրոհ են անդրադարձնում: Մեծաթիվ զոհեր տալով՝ հակառակորդը հարկադրված է լինում ուժերը հետ տանել դեպի ելման բնագծերը:

Այս ընթացքում Հեթում արքան ի մի է բերում թագավորության բոլոր ուժերն ու հակահարձակողական ռազմավարություն մշակում:

Սակայն մինչ նախապատրաստական աշխատանքները ավարտելը, հայտնի է դառնում Քեյ Խոսրով Բ-ի մահվան մասին:

Իրադարձությունը հակառակորդի համար վերջնականապես վատանում է, երբ տեղեկություն է ստացվում հայկական բանակի առաջխաղացման մասին, ուստի թյուրքական բանակի հրամանատարությունը հարկադրված որոշում է նահանջել Կիլիկիայից: Հակահարձակման անցած հայկական կողմը կարողանում է նաև ջախջախել սահմանային ամրությունների շրջանում տեղակայված թյուրքական կայազորները:

Ասորիքում վարվող գործողություններն ավարտած մոնղոլական բանակի հրամանատարությունը իր օգնությունն է առաջարկում Կիլիկիայի հայկական թագավորությանը, սակայն հայկական բանակը չէր կարող դադարեցնել առաջխաղացումը և սպասել դաշնակիցներին, ուստի մերժում է մոնղոլների օգնության առաջարկը և պատերազմի ավարտը դնում սեփական ուժերով:

Այդ մասին իր «Տարեգրքում» Սմբատ սպարապետը գրել է. «Եվ ապա եկան թաթարներից առաջարկելով իրենց օգնությունը, սակայն մենք հրաժարվեցինք, քանզի քաղաքը մեր ձեռքում էինք պահում»⁴:

1248թ. հայկական կողմը հնարավորություն է ստանում մարտական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածք: 1249թ. հայոց բանակը մի շարք նոր հաղթանակներ է տանում:

Այսպիսով, 1246-49թթ. Իկոնիայի դեմ պատերազմի ընթացքում հայկական բանակը նախ կարողանում է կասեցնել Կիլիկիա ներխուժած հակառակորդի առաջխաղացումը, ապա թշնամուն դուրս է քշում երկրից և հակահարձակման անցնելով՝ մարտական գործողությունները տեղափոխում հակառակորդի տարածքը:

⁴ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ 1956թ., էջ 227:

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼԵՎՈՆ Ա-Ի ԵՎ ԹՈՐՈՍ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՄԱՆ ՕՐՈՔ

Ալբերտ Նիկողոսյան

Եվրասիա միջազգային համալսարանի վարժարան, 10-րդ դասարան
Ուսուցիչ՝ Արթուր Եղիկյան

1100 – 1129 թվականներին Կիլիկյան Հայաստանում իշխում էր Թորոս Ա Ռուբինյանը: Գահակալման սկզբնական տարիներին Թորոսին հաջողվում է հաղթել և երկրից վտարել բյուզանդական զորքերին, միավորել է Դաշտային Կիլիկիան: Թորոս Ա-ին հայ իշխան Գող Վասիլի հետ միասին հաջողվում է Բերդուսի մոտ ջախջախել երկիր ներխուժած սելջուկ-թուրքերին: Այնուհետև Թորոսը պետության արևելյան սահմաններն ամրապնդելու նպատակով իր դուստր Արտային կնության է տալիս Եդեսիայի դուքս Բալդուին II-ին, և դաշնակցում է նրան՝ ընդդեմ մուսուլմանական ամիրայությունների: Մաթեոս Ուռհայեցին վկայում է, որ Թորոս Ա-ն վրեժխնդիր է եղել Գագիկ Բ Բագրատունի աքսորյալ թագավորին նենգորեն սպանած հույն իշխան Մանդալեի որդիներից, բռնագրավելով նրանց կալվածներն ու Կնդոսկավիս բերդը: Թորոսը այնուհետև հարաբերությունները բարելավում է Բյուզանդիայի կայսեր՝ Ալեքսիոսի հետ և արժանանում «Առաջին Սեբաստոս» տիտղոսին: Սսի մոտ հիմնում է Դրազարկի հռչակավոր վանքը որտեղ էլ 1129 թվականին նրան հողին են հանձնում: Թորոսի մահից ամիսներ անց սպանվում է նրա որդին՝ Կոնստանդինը, և գահը անցնում է Թորոսի եղբորը Լևոնին¹:

Թորոսի կենդանության օրոք Լևոնը զբաղվում էր ռազմական գործերով, ինչպես նաև նա իր եղբոր գահակիցն էր: Ռազմական տաղանդի և քաջության համար ժողովուրդը Լևոնին անվանում է Նոր Աժդահակ²: Լևոնի գահակալման առաջին տարում, Թորոս Ա-ի մահից անմիջապես հետո, Կիլիկիայի վրա հյուսիս-արևելքից հարձակվում են սելջուկ-թուրքերը, իսկ հարավ-արևելքից՝ խաչակիրները:



¹ Runciman Steven. A History of the Crusades – Volume II.: The Kingdom of Jerusalem and the Frankish East: 1100–1187:

² Vahan M. Kurkjian. A History of Armenia:

Խելամտորեն օգտագործելով սելջուկների ու խաչակիրների միջև եղած թշնամանքը՝ Լևոնը առանձին-առանձին ջախջախում ու վտարում է նրանց Կիլիկիայից: 1132-ին Լևոնը բյուզանդական տիրապետությունից ազատագրում է Կիլիկիայի ծովեզրյա հայաբնակ շրջանները: Այնուհետև Լևոնը, դաշնակցելով Եդեսիայի կոմս Ջուլինին և Հալեպի Ջանգի ամիրային, 1135-36-ին հաջողությամբ պատերազմում է Անտիոքի դքսության ու Երուսաղեմի թագավորության դեմ, ընդարձակելով իշխանության սահմանները դեպի հարավ-արևելք: Անտիոքի դուքս Ռայմոնդը Մարաշի դուքս Բադդինի աջակցությամբ 1136-ին խարդախաբար ձերբակալում է Լևոնին: Իշխանը ազատ արձակվեց Մամեստիա, Ադանա, Սարվանդիքար քաղաքները Ռայմոնդին զիջելուց և 6000 դուկատ փրկագին վճարելուց հետո³:

Նույն թվականին Լևոնին հաջողվեց հետ վերադարձնել կորցված տարածքները պարտության մատնելով Ռայմոնդին: Բյուզանդիայի հարձակման սպառնալիքի պայմաններում, շուտով Լևոնը և Ռայմոնդը հաշտվեցին⁴: 1137 թվականին Բյուզանդիան գրավում է Դաշտային Կիլիկիան, երեսուկոթ օրյա պաշարումից հետո ընկնում է մայրաքաղաք՝ Անարզաբան, Լևոն Ա-ն իր ընտանիքի հետ նահանջում է Վահկա բերդ: Սակայն որոշ ժամանակ անց Լևոն Ա-ն իր կնոջ և որդիներ՝ Թորոսի ու Ռուբենի հետ միասին գերվում է Բյուզանդիայի կողմից և շղթայակապ տեղափոխվում Կոստանդնուպոլիս:



Մերձավոր Արևելքը 1135 թվականին

Մյուս երկու որդիներ՝ Ստեփանը և Մլեհը գտնվում էին անվտանգության մեջ Եդեսիայի կոմսությունում իրենց հորաքրոջ՝ Բեատրիսի մոտ վերջինս դուքս Ջուլին II-ի մայրն էր: Այսպիսով Կիլիկիայի հայկական իշխանությունը ժամանակավորապես

³ Claude Mutafian// Le Royaume Arménien de Cilicie, XIe-XIVe siècle// «Հայկական վերջին թագավորությունը» // «Mediacrat»:

⁴ Vahan M. Kurkjian. A History of Armenia

«գլխատվեց»: Այստեղ 1138–ին վշտից վախճանվում Լևոնը: Իսկ Թորոսին հաջողվում է 1143–ին փախչել գերությունից և վերականգնել հայոց պետականությունը: 1145 թվականին վերադառնալով Կիլիկիա Թորոսը իր տիրապետության տակ է առնում Լեռանային Կիլիկիայի մի մասը ներառյալ Վահկա և Ամուղ բերդերը: Հայտնի ժամանակագիր Գիյոմ Տյուրոսցին Թորոսին ներկայացնում է որպես՝ «Ամենահզոր հայ արքայագն» 1151 թվականին նա ամուսնանում է Ռաբանի սենյորի դստեր հետ՝ դաշինք կնքելով Լատինական թագավորության հետ: Թորոսը բյուզանդացիներից զրավում է Մամեստիան, Անարգաբան և Տարսոնը՝ ազատագրելով Դաշտային Կիլիկիայի մեծ մասը:

Բյուզանդիայի կայսր՝ Մանուիլ I Կոմնենոսը չհանդուրժելով հայերի դիրքերի ամրապնդումը զորավար Անդրոնիկոս Ա Կոմնենոսի հրամանատարությամբ Կիլիկիա է ուղարկում 12-հազարանոց բանակ:

Անդրոնիկոսին խոստումներով և ահաբեկումներով հաջողվում իր կողմը քաշել Արևմտյան Կիլիկիայի անջատամետ որոշ հայ իշխանների՝ Պապեռոնի տեր Սմբատ Հեթումյանին, Լամբրոնի տեր Օշին Հեթումյանին (Ներսես Լամբրոնացու հորը), Բարձրբերդի տեր Վասիլ Նաթանայեյանին և Պռականի տեր Վասիլին: Անդրոնիկոսը պաշարում է Մամեստիան և մերժելով Մեծ իշխան Թորոս Բ-ի հաշտության առաջարկը զորավարը հայտարարում է, որ խորտակելու է հայկական իշխանությունը, իսկ Թորոսին հոր՝ Լևոն Ա-ի նման, շղթայակապ տանելու է Կոստանդնուպոլիս⁵: Ըստ բյուզանդացի պատմիչ Նիկիտաս Քոնիատի և հայ պատմիչ Գրիգոր Երեցի, հայկական զորաբանակը, Թորոս Բ-ի և նրա եղբայրներ Ստեփանի ու Սլեեի հրամանատարությամբ, անձրևային մի գիշեր դուրս գալով պաշարված քաղաքից, պարտության է մատնում թշնամուն: Լքելով իր բանակը՝ Անդրոնիկոսը ապաստանում է Անտիոքի դքսի մոտ: Նիկիտաս Քոնիատը վկայում է, որ հայ զորականները բյուզանդացիներին գերազանցում էին թե՛ իրենց քաջությամբ, թե՛ հմուտ մարտավարությամբ: Գերված բյուզանդական հրամանատարներին ու զինվորներին ազատելու համար կայսրությունը վճարում է մեծ փրկագին, ի զարմանս բյուզանդացիների, Թորոս Բ-ն այն բաժանում է հայ զինվորներին⁶:

⁵ Runciman Steven. A History of the Crusades – Volume II.: The Kingdom of Jerusalem and the Frankish East: 1100–1187:

⁶ Ghazarian, Jacob G.. The Armenian Kingdom in Cilicia during the Crusades: The Integration of Cilician Armenians with the Latins (1080–1393).

Բյուզանդացիների կողմն անցած հայ իշխաններից Մմբատ Հեթումյանը գոհվում է մարտում, մնացածներն անձնատուր են լինում Թորոս Բ-ին: Մամեստիայի ճակատամարտը վճռորոշ նշանակություն ունեցավ Կիլիկյան Հայաստանի անկախության պահպանման գործում: Հաղթանակից հետո:

Ռուբինյանները դաշինք են կնքում Հեթումյանների հետ դաշինքը ամրապնդվում է Օշինի որդի Հեթումի և Թորոսի դստերից մեկի ամուսնությամբ⁷: Անդրոնիկոսը վերադառնում է Կոստանդնուպոլիս և կայսերը ներկայացնում իրադրությունը: Մանուիլը այլևս չէր կարող մարտնչել հայերի դեմ, և դիմում է նենգ, բայց միևնույն ժամանակ խորամանկ քայլի հայերի դեմ է լարում Սելջուկներին և Անտիոքի դուքս՝ Ռենո դը Շատիյոնին: Թորոսը վստահ հաղթանակ է տանում սելջուկների նկատմամբ Հայկական Տավրոսի մատույցներում: Հետագայում հաղթում է նաև Ռենոյին վերջինս հուսախաբ լինելով Մանուիլի հետ դաշինքից, անցնում է հայերի կողմը: Կիլիկիայի և Անտիոքի միասնական ուժերը մի շարք հաջող ռազմական գործողություններ են կազմակերպում Բյուզանդիայի դեմ և գերում են հույն հրամանատար Միքայել Վռանին: Մանուիլը ստիպված կազմակերպում է նոր արշավանք դեպի Կիլիկիա և Սիրիա, այս անգամ նրան հաջողվում է գրավել Դաշտային Կիլիկիան, Թորոսը նահանջում է լեռներ: Ռենոն դավաճանում է Թորոսին և անցնում է Մանուիլի կողմը: Քիչ հետո Թորոսը և Մանուիլը հաշտության պայմանագիր են կնքում: Թորոսը ընդունում է կայսերական մի շարք պարտավորվածություններ, իսկ Կիլիկիայում տեղակայվում է Բյուզանդական կայսրը:

Ըստ որոշ ժամանակակից պատմիչների Թորոսը օգնել է Ռենո դը Շատիյոնին թալանել Կիպրոսը և ուղեկցել է նրան Կիպրոսում, սակայն այս տեղեկությունների իսկությանը ապացուցումը անհնար է: Ըստ պայմանավորվածության Մանուիլը պետք է դրամական օգնություն տրամադրեր ռազմական գործողությունների ընթացքում սնանկացած և պարտքերի մեջ խրված Ռենոին, սակայն նա չի կատարում պայմանավորվածությունները: Ռենոն իր հերթին որոշում է Մանուիլից ստանալ գումարը հանցավոր ճանապարհով՝ համազործակցելով Թորոս Բ-ի հետ, հարձակվել և թալանել Կիպրոսը: Թորոսը վրեժով լցված համաձայնում է օգնել, ըստ անհայտ ժամանակագրի Անտիոքի դուքսը և

⁷ Vahan M. Kurkjian. A History of Armenia.

հայ իշխանը «անցան» ամբողջ կղզու տարածքով հյուսիսից հարավ, ավերելով ու թալանելով ամենինչ իրենց ճամփին: Ռենոն և Թորոսը վերադարձան Կիպրոսից հարուստ ավարով:

Առաջիկա 10 տարիների ընթացքում Կիլիկիայում նշանակվում էին Բյուզանդացի տեղապահներ: 1162 թվականին տեղապահ Անդրոնիկ Էվֆորբենոսը կազմակերպում է Թորոսի եղբայր՝ Ստեփանի սպանությունը: Չնայած նրան, որ Անդրոնիկը փոխարինվում է գորավար Կալամանոսով Թորոսը վրեժխնդիր է լինում: Նոր տեղապահ է նշանակվում Աքիուսը վերջինս մտերմանում է Ներսես Շնորհալու հետ: Սակայն հետագայում Բյուզանդացիները աքսորում են Աքիուսին: Մանուիլը նոր տեղապահ է նշանակում 15 տարի առաջ Կիլիկիայում ջախջախված Անդրոնիկոսին վերջինս ծառայությունը կատարելուց հետո վերադառնում է Բյուզանդիա: Մանուիլը նրան փոխարինում է Կալամանոսով վերջինիս վրա դրված էր Թորոսին գահընկեց անելու պարտականությունը: Սակայն այդ ծրագրերը անհաջողության են մատնվում Մլեհը գերեվարում է Կալամանոսին: 1169 թվականի փետրվարի 9-ին մահանում է Թորոս Բ-ն: Նրան հաջողվում է վերացնել կախվածությունը Բյուզանդիայից և իվերջո հիմք դնել հայկական ինքնավարությանը:

ԼԵՎՈՆ 6-ՐԴ ԼՈՒՍԻՆՅԱՆ. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԴԵԳԵՐՈՂ ԱՐՔԱՆ

Ռուզաննա Մարգարյան, Անի Հակոբյան
Երևանի թիվ 167 հիմնական դպրոց, 8-րդ դասարան
Ուսուցիչ՝ Վալենտինա Գլոյան

Ջիվանը թագավորի հորաքրոջ տղան էր՝ Լևոնի հորաքույր և Կիպրոսի թագավոր Ամորի Լուսինյանի այրի Ջապլունի կրտսեր որդին: Ջապլունի ավագ որդին՝ Գվիդոնը, համարվում էր մայրական գծով կիլիկյան գահաժառանգ, քանի որ երիտասարդ տարիքում մահացած Լևոն 5-րդը ժառանգներ չէր թողել¹: Ինչ վերաբերում է Ջիվանին, ապա նա ամուսնացած էր Բագրատունիների տոհմից սերող վրացական թագավորի դստեր հետ և երկու որդիներ ուներ՝ Պեմունդը և Լևոնը²: 1342 թ. Լևոն 5-րդի մահից հետո ժողովուրդը միաձայն համաձայնվեցին Ջիվանի խնամակալ նշանակվելուն, քանի որ բոլորը նրան սիրում էին լավ և հարմարվող բնավորության համար: Նա կատարում էր խնամակալի պարտականությունները՝ մինչև Կիպրոսից Սիս ժամանեց նրա զարմիկը՝ գահաժառանգ Գվիդոնը, ով Կիլիկիայի թագավոր դարձավ Կոնստանտին 2-րդ կամ Գվիդոն-Կի անունով: Բայց նա երկար չկառավարեց՝ ընդամենը երկու տարի և սպանվեց 1344 թ.: Այդ սպանության համար կային պատճառներ՝ կիլիկիացիները համարում էին, որ թագավորական գահ է բարձրացել օտարածին Լուսինյանը, ով բոլոր հույսերը կապում էր Հռոմի հետ: Նա իրեն շրջապատել էր օտարերկրացիներով՝ Հռոմին խոստանալով, որ հայերը կաթոլիկություն կընդունեն: Գրգռիչ գործոն էր նաև այն, որ լատիներենը Կիլիկիայում պաշտոնական լեզու ճանաչվեց³:

Խախտելով տոհմական իրավունքները (ժառանգորդ էր համարվում Պեմունդը՝ արդեն հանգուցյալ Ջիվանի որդին)՝ Կիլիկիայի հայրենասիրական ուժերը թագավոր ընտրեցին Նխրեյանների տոհմից մի իշխանի՝ Կոնստանտին 3-րդ անունով: Նա 20 տարի շարունակ հաջող կառավարեց երկիրը՝ կարողանալով չեզոքացնել սպանված Գվիդոն

¹ Ա. Ժամկոչյան, Հայոց պատմություն, ԵՊՀ, Երևան, 1975, էջ 524:

² Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, ԵՊՀ, Երևան, 2007, էջ 101:

³ Նույն տեղում, էջ 106:

Լուսինյանի բարեկամներին և կողմնակիցներին: Շատերին նա արտաքսեց երկրից, իսկ Զիվանի այրուն և նրա որդիներին՝ Պեմունդին ու Լևոնին, ովքեր այդ ժամանակ համապատասխանաբար 5 ու 2 տարեկան էին, արտաքսեց Կորակոս ամրոց: Մայրը վախենում էր իր որդիների կյանքի համար և ամրոցում 9 տազնապալի ամիսներ անցկացնելուց հետո վճռեց Կիպրոսի թագավորական ազգականների օգնությամբ փախուստի դիմել. նրան հայտնի էր դարձել, որ Կոնստանտին 3-րդը որոշել է թունավորել իր ընտանիքին: Կիպրոսի թագավոր Հյուզը փախստականներին տեղափոխեց Կիպրոս, նրանց ապաստան տրամադրեց և ամենամսյա թոշակ նշանակեց: Հյուզի մահվանից հետո որբերի համար հոգ էր տանում նրա որդին՝ Պետրոս 1-ինը, ով մտադիր էր նախ Կիլիկիայի գահին նստեցնել օրինական ժառանգորդ Պեմունդին, իսկ հետո արդեն անձամբ տիրել գահին՝ միացնելով Կիլիկիան ու Կիպրոսը⁴:

Պեմունդը՝ Կիլիկիայի գահի օրինական ժառանգորդը, սկսեց իր գործակալների միջոցով դավեր նյութել Կիլիկիայի թագավորի դեմ՝ նրա դեմ լարելով իշխանների մի մասին: Դրա հետևանքով ստեղծվեց թագավորի համար թշնամական հոսանք: Պետրոս 1-ինն ու Պեմունդը գիտեին, որ Կիլիկիայի իշխանները ցանկանում են գահընկեց անել իրենց թագավորին և գահին նստեցնել Պեմունդին: Դա համապատասխանում էր Պետրոս 1-ինի ծրագրերին, բայց նա որոշեց ձեռք բերել նաև Հռոմի պապ Ուրբան 5-րդի օրհնանքը, որի նստավայրն Ավինյոնում էր⁵:

1362 թ. Պետրոս 1-ինի հետ Եվրոպա ուղևորվեց նաև Պեմունդը, ով սակայն ճանապարհին ծանր հիվանդացավ և Վենետիկում մահացավ: Կիպրոսի թագավորը շարունակեց ճանապարհը և հասավ Պապի մոտ, ում պատկերավոր կերպով նկարագրեց քրիստոնյա հայկական Կիլիկիայի անմխիթար վիճակը, բարեհաճորեն արտահայտվելով Կիլիկիայի օրինական գահաժառանգ Լևոնի մասին և խնդրելով, որ Ուրբանն ուղերձ գրի հայկական հոգևորականությանը և իշխաններին և խնդրի, որ գահը վերադարձնեն օրինական ժառանգորդին:

⁴ Կ. Մուրաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, <<Նաիրի>>, Երևան, 2001, էջ 78:

⁵ Կ. Մուրաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, <<Նաիրի>>, Երևան, 2001, էջ 201:

Պետրոս 1-ինը մեկ ուրիշ խնդրանքով էլ դիմեց Պապին՝ օրհնել խաչակրաց նոր արշավանքի կազմակերպումը՝ հանուն Կիլիկյան քրիստոնյա Հայաստանի փրկության: Այդ նախաձեռնությանը համաձայն էր նաև Ֆրանսիայի թագավորը, բայց նրա մահը խախտեց այդ ծրագրերը: Ի դեպ կիլիկիահայերը միշտ օգնում էին խաչակիրներին՝ նրանց արշավների ժամանակ:

Տեսնելով թագավորության ծանր կացությունը՝ մի խումբ իշխաններ որոշեցին կրկին դիմել եվրոպական կառավարիչների օգնությանը, իսկ մնացած իշխանները շարունակում էին պնդել, որ գահ բարձրանա Պետրոս 1-ինը: Իսկ նա մինչ այդ այցելեց Հռոմ՝ եվրոպացիներին նախապատրաստելով Հայկական Կիլիկիայում իր ապագա գահակալմանը: Սակայն Կիպրոս վերադառնալուց քիչ անց՝ 1369 թ., նա մահացավ, այդպես էլ չհասցնելով իրականացնել իր վաղեմի երազանքը: Կիպրոսի նոր թագավոր դարձավ Պետրոս 2-րդը⁶:

Լևոնը Կիպրոսից անընդհատ դիմում էր եվրոպական երկրների կառավարիչներին՝ կիլիկյան գահի օրինական ժառանգորդի իր իրավունքները վերականգնելու հարցով: Միննույն ժամանակ նա ապստամբության էր դրդում Կիլիկիայի այն իշխաններին, ովքեր դժգոհ էին Կոնստանտին 4-րդի կառավարումից:

Կիլիկիայի գահի շուրջ նոր իրավիճակ ստեղծվեց 1373 թ.՝ Կոնստանտին 4-րդի սպանությունից հետո, երբ խնամակալուհի հռչակվեց Կոնստանտին 3-րդի այրին: Այս անգամ կիլիկյան իշխանները Լևոնի թագավորման հարցով դիմեցին անձամբ Պետրոս 2-րդին, բայց մերժում ստացան, քանի որ թագավորն անհրաժեշտ էր համարում նրա մասնակցությունը՝ Կիպրոսի վրա հարձակված Ջենովայի գորքերի դեմ մարտերին⁷: Շուտով Լևոնին գերեվարեցին և բանտարկեցին Ֆամագուստա ամրոցում: Նրան մեղադրեցին Պետրոս 1-ինի դեմ դավադրություն կազմակերպելու և նրան սպանելու համար: Նա կարողացավ արդարանալ, բայց ստիպված եղավ Ջենովային մեծ գումար վճարել՝ վաճառելով իր և կնոջ ունեցվածքը: Նրան հաջողվեց համոզել Ջենովայի

⁶ Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, ԵՊՀ, Երևան, 2007, էջ 104:

⁷ Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, ԵՊՀ, Երևան, 2007, էջ 126:

ծովակալին, որպեսզի իրեն և իր ընտանիքին ուղարկի Կիլիկիա՝ այնտեղ ձմեռելու:

Այսպես՝ Լևոնին և նրա ընտանիքին հաջողվեց հայտնվել Կորիկոսում՝ Կիլիկիայում: Եվ այստեղից նա շարունակեց ուղերձներ հղել Եվրոպային՝ կոչ անելով օգնել Կիլիկիային: Սակայն դա ջենովացիներին հայտնի դարձավ, և նրանք գործակալներ ուղարկեցին Կորիկոս՝ Լևոնին ձերբակալելու համար: Նա հասցրեց թաքնվել իր հավատարիմ մարդկանց հետ՝ ընտանիքին նույնպես թաքցնելով հուսալի վայրում: Իսկ Կիլիկիայի մայրաքաղաք Սիսում նրան արդեն սպասում էր արքայական գահը:

Մայրաքաղաքի բնակիչների ուրախությանը չափ ու սահման չկար, նրանք դուրս էին եկել քաղաքի փողոցներ՝ դիմավորելու համար երկար սպասված օրինական թագավորին: Եվ իշխանները, և բոլոր կիլիկիացիները հույս ունեին, որ կավարտվեն անիշխանության ժամանակները, և Լևոնը կկարողանա երկիրը դուրս բերել ճգնաժամից: Հսկայական թափորը՝ հոգևորականության ներկայացուցիչներ՝ կաթողիկոսի ղեկավարությամբ, պալատականներ, խաչերը, ջահերն ու գորադրոշները ձեռքերին հասարակ մարդիկ երաժիշտների ուղեկցությամբ դուրս եկան մայրաքաղաքի ծայրամաս՝ դիմավորելու Լևոնին, ով գանգերի և շարականների հնչյունների ներքո հանդիսավոր կերպով մտնում էր մայրաքաղաք: Այդ տոնակատարությունը տևեց երեք օր, և միայն դրանից հետո Լևոնը մարդիկ ուղարկեց Կորիկոս՝ մոր ու կնոջ հետևից, ով շուտով պետք է ծննդաբերեր: Լևոնն անհապաղ անցավ պետական գործերին՝ խորհրդակցություն հրավիրելով՝ կաթողիկոսի և բոլոր իշխանների մասնակցությամբ: Ապա նա խստորեն պատժեց թագավորական գանձարանի կողոպուտի մեղավորներին: Շուտով Լևոնի կինը՝ Մարգարիտան, ծննդաբերեց՝ նրան նվիրելով գույգ աղջիկներ: Եվ միայն դրանից հետո Լևոնը սկսեց պատրաստվել թագադրության արարողությանը: Այդ ճոխ արարողությունն անցկացվեց Սիսի գլխավոր եկեղեցում՝ սուրբ Սոֆիայի վանքում, հայ ազնվականների ու հոգևորականության ներկայացուցիչների ներկայությամբ: Լևոնի ու Մարգարիտայի կողքին, ձախում կանգնած էր Հայաստանի կաթողիկոսը, իսկ աջ կողմից՝ լատինական եպիսկոպոսը: Լևոնը որոշեց իր

թագադրությունը կատարել լատինական ծիսակարգով, ինչի պատճառով հայ իշխանները թագավորից վիրավորվեցին⁸:

Դեռ մինչև Միս ժամանելը՝ լինելով Կիպրոսում՝ Լևոնը չորս ինամակալ էր նշանակել: Նրանք վարում էին հարևան մահմեդական կառավարիչներին գոհացնելու քաղաքականություն, իսկ երկու բեկերին նույնիսկ ստիպված էին տուրք վճարել: Թագավորը փորձում էր շարունակել այդ քաղաքականությունը, բայց բեկերի հետ չհաջողվեց համաձայնության հասնել, քանի որ Լևոնից դժգոհ որոշ իշխաններ սկսեցին նրանց ներշնչել, թե նա պատրաստվում է հարձակվել իրենց վրա: Իշխանների մյուս մասն էլ, հակառակը, թագավորին դրդում էր այդ քայլին: Դրա հետևանքով էլ պատերազմ սկսվեց, որը շարունակվեց երեք ամիս, և միայն ազդեցիկ միջնորդների միջամտությունից հետո հայերը կրկին հնարավորություն ստացան Միս պարենամթերք բերել, բայց՝ տուրք վճարելու պայմանով: Սակայն Լևոնի հակառակորդներին այդ հաշտեցումը բնավ ձեռքնտու չէր, և նրանք «լատինական» թագավորին վերացնելու համար պատրաստ էին նույնիսկ ընկնել Եգիպտոսի սուլթանի իշխանության տակ: Եվ շուտով բեկերը 15 հազարանոց զորքով մոտեցան Միսին, որտեղ շուտով մոտեցավ նաև Հալեպի կուսակալի 15 հազարանոց զորքը: Իմանալով այդ մասին՝ թագավորը բոլոր քաղաքացիներին տարավ միջնաբերդ և հրդեհեց մայրաքաղաքի ծայրամասերը: Հաջորդ օրն սկսվեց թեժ մարտ, թագավորը ծնոտից վիրավորվեց, իսկ մահմեդականները ծանր կորուստներ կրեցին՝ այդպես էլ չկարողանալով միջնաբերդը գրավել: Բայց Լևոնի ներքին թշնամիները դավադրություն էին նյութել: Դավադիրներն սպանելով թագավորի թիկնապահների մի մասին՝ փորձեցին բռնել նրան, բայց նրան հաջողվեց փակվել անառիկ աշտարակում: Լևոնը հասկացավ որ չի կարողանալու երկար դիմադրել: Բացի դրանից՝ Եվրոպայից խոստացված օգնությունն այդպես էլ չհասավ: Եվ այդ ժամանակ թագավորը որոշեց հանձնվել պատվավոր պայմաններով, ինչը գրավոր երաշխավորել էր Հալեպի կուսակալը. վերջինս մեծ պատիվներով ընդունեց հանձնվող թագավորին և նրա 20 հոգանոց շքախմբին⁹:

⁸ Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, ԵՊՀ, Երևան, 2007, էջ 117:

⁹ Կ. Մուրաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, <<Նաիրի>>, Երևան, 2001, էջ 125:

Այդպես՝ 1375 թ. ապրիլին անփառունակ ավարտ ունեցավ Լևոն 6-րդի թագակալությունը, որը մեկ տարուց էլ կարճ տևեց: Սակայն դրա պատճառներից մեկն այն էր, որ Կիլիկիայի հարևան մահմեդական երկրները չէին մոռացել, թե հայերն ինչպես էին օգնում խաչակիրներին՝ նրանց արշավանքների ժամանակ:

Թերևս այդ ամենին իլիկիայի թագավորի կյանքի ուղին շարունակվեց Մերձավոր Արևելքում: Իր շքախմբի ուղեկցությամբ մեկնեց Հալեպ, իսկ մեկ ամիս անց՝ Եգիպտոս, Կահիրե: Փաստորեն Հալեպի տիրակալը չպահպանեց իր գրավոր խոստումը, որի համաձայն թագավորի պատվավոր կապիտուլյացիայից հետո պետք է նրան և շքախմբին ազատ արձակեր: Եգիպտոսում սուլթանը մեծ պատվով դիմավորեց հայոց թագավորին և նրան անմիջապես առաջարկեց դավանափոխ լինել՝ խոստանալով մեծ պաշտոն:

Սակայն Լևոն 6-րդը մերժեց այդ առաջարկները, ինչից հետո բոլոր գերիներին հանձնեցին եգիպտական զորահրամանատարի հսկողությանը: Կահիրեի հայկական համայնքի պատասխանատվությամբ թագավորին Կահիրեում ազատ տեղաշարժվելու հնարավորություն ընձեռեցին: Մնացած գերիներին ընտրության հնարավորություն տրվեց: Կաթողիկոսը մի քանի իշխանների հետ մեկնեց Սիս, թագավորի շքախմբի անդամներից մի քանիսն ուղևորվեցին Եվրոպա, իսկ Կոնստանտին 4-րդ թագավորի այրին՝ Մարիամը, մեկնեց Երուսաղեմ¹⁰:

Կահիրեի ազդեցիկ և հարուստ հայերը թագավորին նրան արժանի կացարան տրամադրեցին, իսկ սուլթանն ամենամյա թոշակ նշանակեց: Եվ չնայած Լևոնը կարող էր ազատ տեղաշարժվել Կահիրեում՝ այդ դրությունը նրան նեղում էր և նա չէր դադարում գերությունից ազատվելու հնարավորություն փնտրել՝ իր խոստովանահայր Դարդելի միջոցով դիմելով եվրոպական երկրների թագավորներին: Ճիշտ է՝ սուլթանին հաջողվեց հասնել նրան, որ թագավորն ստորագրի մի թուղթ՝ անձամբ հայտարարելով, թե ինքը՝ Լևոն 6-րդը, գոհ է իր դրությունից և պատրաստվում է մինչև կյանքի վերջն ապրել Եգիպտոսում¹¹:

Անսալով Լևոն 6-րդի խնդրանքներին՝ Կիպրոսի թագավորը դիմեց սուլթանին՝ խնդրելով ազատել գերուն: Նույն խնդրանքով սուլթանին

¹⁰ Микаелян Г., История Киликийского Армянского государства, ЕГУ, Ереван, 1952, с. 92.

¹¹ Микаелян Г., История Киликийского Армянского государства, ЕГУ, Ереван, 1952, с. 105.

դիմեցին նաև Պապը, Նեապոլի թագավորը և Բյուզանդիայի կայսրը: Բայց նրանց բոլորին սուլթանը պատասխանում էր, որ Լևոնը գոհ է իր դրությունից:

Եգիպտական գերության երրորդ տարում սուլթանի դեմ դավադրություն կազմակերպվեց, և նա խեղդվեց, իշխանությունն անցավ նրա յոթնամյա որդուն, իսկ խնամակալ դարձան եգիպտական հինգ զորահրամանատարներ: Դրանից օգտվեց Լևոն 6-րդը՝ փորձելով շահել նրանցից մի քանիսի բարեհաճությունը և խնդրել, որ օգնեն իրեն՝ ազատվելու գերությունից՝ հաշվի առնելով նաև եվրոպական միապետների խնդրանքները: Թագավորը գիտեր, որ Արագոնի թագավոր Պեդրո 4-րդը մի քանի անգամ սուլթանին այդ հարցով դիմել է, բայց ապարդյուն, քանի որ ոչ սուլթանին, ոչ էլ նրա խնամակալներին ճոխ նվերներ չէին ուղարկվել: Եվ Լևոն 6-րդն իր խոստովանահայր Դարդելին ուղարկեց Բարսելոնա՝ նրան տրամադրելով լիազորագիր: Նա նաև Դարդելին տվեց իր մատանին, որի վրա թագավորական զինանշանն էր, որպեսզի Դարդելը կարողանա գործել թագավորի անունից¹²:

Բարսելոնայում Դարդելը (նա այնտեղ հասավ 1380 թ.) կարողացավ որոշակի գումար հավաքել (եկեղեցիների եկամուտներից) և մի քանի թանկարժեք նվերներ գնեց սուլթանի ու խնամակալներից մեկի համար: Ավաղ, այս անգամ էլ Արագոնի թագավորի դեսպանը չկարողացավ համոզել Եգիպտոսի սուլթանին և խնամակալներին, որ Լևոն 6-րդին ու նրա ընտանիքին գերությունից ազատեն:

Թագավորի անխոնջ խոստովանահայր Դարդելն այս անգամ որոշեց դիմել Կաստիլիայի թագավոր Խուան 1-ինին: Կրկին ճոխ նվերներ վերցրին, և նոր պատվիրակությունը, որին միացավ նաև Պեդրո 4-րդի դեսպանը, երկու թագավորների նամակներով ուղևորվեց Կասիլիե: Այս անգամ Եգիպտոսի սուլթանի խնամակալներից մեկի օգնությամբ, որին նույնպես նվերներ էին տվել, թագավորների խնդրանքը բավարարվեց, և Լևոն 6-րդը ստացավ երկար փափագած ազատությունը: Սուլթանը Լևոն 6-րդին տրամադրեց նավ, որով նա իր մերձավորների հետ անմիջապես հեռացավ Եգիպտոսից: Եվ դա ճիշտ ժամանակին էր, քանի որ սուլթանը վախենալով թագավորի հնարավոր վրեժխնդրությունից՝ զոջացել էր, որ նրան ազատություն էր տվել և իր մարդկանց ուղարկել էր՝

¹² Микаелян Г., История Киликийского Армянского государства, ЕГУ, Ереван, 1952, с.244.

հանձնարարելով Լևոն 6-րդին չթողնել, որպեսզի լքի Եգիպտոսի սահմանները: Բարեբախտաբար, սուլթանն ուշացել էր:

Այսպես՝ Կիլիկիայի վերջին թագավորը յոթ երկար տարիներ անցկացրեց Եգիպտոսի սուլթանի մոտ՝ գերության մեջ՝ 1375 թ. ապրիլից մինչև 1382 թ. սեպտեմբեր¹³:

Եգիպտոսից մեկնելուց երկու շաբաթ անց Կիլիկիայի թագավորի նավը մտավ Ռոդոս կղզու նավահանգիստ: Ռոդոսի կառավարիչը, ով կրում էր «Հայաստանի մեծ սենեշալ» տիտղոսը, որը նրան շնորհել էր բյուզանդական կայսրը, մեծ պատվով դիմավորեց Լևոն 6-րդին: Այստեղ թագավորն իմանալով Կիպրոսի թագավոր Պետրոս 2-րդի մահվան մասին՝ որոշեց տեղափոխվել Կիպրոս, որպեսզի ժառանգեր գահը, որի նկատմամբ տոհմական իրավունք ուներ: Բայց կապիտաններից ոչ ոք չէր համարձակվում նրան Կիպրոս տանել՝ վախենալով ջենովացիներից, ովքեր այն ժամանակ կղզու տերերն էին: Լևոնը որոշեց մեկնել Եվրոպա, որպեսզի Պապի և եվրոպական միապետների օգնությամբ կամ Կիպրոսն ազատի, կամ Կիլիկիայի թագավորությունը վերադարձնի: Նա ճանապարհվեց Ավինյոն՝ Կլեմենտ 7-րդ պապի մոտ: Պապի նստավայրի ճանապարհին թագավորին ողջունում էր ավելի քան 2 հազար մարդ, ինքը՝ Պապը, նույնպես մեծ սիրով ու ջերմությամբ դիմավորեց Լևոն 6-րդին: Նույն օրը Պապը նրան սվեց մեծ գումար, որպեսզի նա կարողանար վերադառնալ Հայաստան՝ իր գահին: Նա նաև Լևոնին պարգևատրեց «Ոսկե վարդ» շքանշանով, որով սովորաբար պարգևատրվում էին քրիստոնյա միապետները: Եվ արդեն մի քանի օրից հետո թագավորն ուղևորվեց Իսպանիա՝ իր շնորհակալությունը հայտնելու Արագոնի և Կաստիլիայի թագավորներին:

Արագոնում Լևոնին դիմավորեցին թագավոր Պեդրո 4-րդը, թագուհին, Վերոնայի կոմսն ու կոմսուհին, թագավորի բոլոր պալատականները, ինչպես նաև հասարակ ժողովուրդը: Կիլիկիայի թագավորին տվեցին շատ թանկարժեք նվերներ, իսկ թագավորը նրան նշանակեց ցմահ թոշակ: Արագոնից հետո Լևոնը ճանապարհվեց Կաստիլիա, որտեղ նրան ավելի ճոխ ընդունելություն էր սպասում:

¹³ Одиссея царя Киликии Левона VI

<http://www.yerkramas.org/article/55444/odisseya-carya-kilikii-levona-vi-chast-2-ya>

Бриллиантова Н. А., Киселев И. Я. [и др.]; Трудовое право: учеб. / Т78 под ред. О. В.

Смирнова. - М.: ТК Велби, Изд-во Проспект, 2004. / <http://www.vuzlib.ru/beta3/html/1/19162/> (մուտքի ամսաթիվը՝ 03.02.2016):

Թագավոր Խուան 1-ինն իմանալով հայոց թագավորի այցի մասին՝ մի քանի օրով հետաձգեց Պորտուգալիայի թագավորի դստեր հետ իր հարսանյաց արարողությունը, որպեսզի դրան կարողանա ներկա գտնվել նաև Լևոն 6-րդը: Իմանալով թագավորի մոտենալու մասին՝ Խուան 1-ինն իր շքախմբի հետ դուրս եկավ քաղաքից և սուրը գլխից վեր բարձրացրած՝ ընդառաջ գնաց նրան: Հուզված Լևոնը ձիուց ցատկեց, ծնկի իջավ և հանեց իր գլխարկը՝ որպես Խուան 1-ինի հանդեպ խորին երախտիքի և հավատարմության նշան: Թագավորը և նրա ամբողջ շքախումբը նույնպես իջան ձիերից, և Լևոն 6-րդը թագավորին ողջունեց. «Ես պարտավոր եմ փառաբանել ձեր թագավորական մեծությանը, քանի որ ձեր ու ձեր բարության շնորհիվ եմ ազատվել ծանր գերությունից»: Հաջորդ օրը՝ Խուան 1-ինի հարսանյաց արարողության ժամանակ հայոց թագավորը նորապսակների կնքահայրն էր...

Որոշ ժամանակ անց Լևոն 6-րդը Խուան 1-ինի և նրա շքախմբի հետ մեկնեց Սեզովիա, որտեղ իսպանական վերնախավի ներկայացուցչական ժողովում թագավորը պատմեց իր դառը ճակատագրի մասին՝ թագադրությունից սկսած մինչև գահը կորցնելը և Կահիրեում կրած յոթնամյա գերությունը: Հետո Լևոնը հույս հայտնեց, որ թագավորը կօգնի իրեն վերադարձնել իր թագավորությունը, ինչի համար ինքը՝ Հայաստանի թագավորը, հավերժ երախտապարտ կլինի Կաստիլիայի թագավորին: Այդ խոսքերից հուզված թագավորը հայտարարեց, որ հայոց թագավորի ցմահ տնօրինմանն է հանձնում Մադրիդը և ևս երկու քաղաք, որպեսզի դրանցից ստացված եկամուտներն ապահովեն Լևոն 6-րդի արքայավայել կյանքը: Խուան 1-ինը թագավորին շատ թանկարժեք նվերներ տվեց, բայց ամենակարևորը՝ որոշեց օգնել Լևոնին՝ հետ նվաճելու իր թագավորությունը և նրան տրամադրեց վեց ռազմական՝ և վեց սովորական նավեր՝ իրենց անձնակազմերով¹⁴:

Մադրիդի մեծահարուստները վշտացել էին, որ թագավորն իրենց քաղաքի կառավարումը հանձնել է օտարերկրացու՝ վախենալով, թե նա կոտնահարի իրենց իրավունքները: Սակայն Լևոն 6-րդը պահպանեց քաղաքացիների բոլոր արտոնությունները: Թագավորը Մադրիդում իր մասին հիշատակ է թողել՝ վերանորոգելով թագավորական դղյակի խարխլված աշտարակները: Իհարկե դժվար է ենթադրել, թե Լևոնը

¹⁴ Одиссея царя Киликии Левона VI.

<http://www.yerkramas.org/article/55444/odisseya-carya-kilikii-levona-vi-chast-2-ya>.

կրավարարվեր երեք իսպանական քաղաքներով և կմոռանար իր կորցրած թագավորության մասին: Չորս ամիս անց Լևոն 6-րդը դուրս եկավ Կաստիլիայից և ուղևորվեց Նավարայի թագավոր Կարլ 2-րդի արքունիք: Խորապես հուզված Հայաստանի դժբախտությունների մասին թագավորի պատմաճներից՝ Կարլ 2-րդը նրան հատկացրեց 100 մարտիկ և 100 նետաձիգ՝ Կիլիկյան թագավորությունը վերանվաճելու համար:

Լևոն 6-րդին նույնքան ջերմ ընդունելություն ցույց տվեցին Բերանում, ինչից հետո թագավորը կրկին ուղևորվեց Արագոն, որտեղ Պեդրո 4-րդ թագավորը նրան խոստացավ օգնել նավերով ու զինվորներով: Սակայն այդ ամենը, իհարկե, բավարար չէր Կիլիկիայի թագավորությունը վերանվաճելու համար, ուստի Լևոն 6-րդը որոշեց այցելել նաև Ֆրանսիայի ու Անգլիայի թագավորներին:

Ֆրանսիայում Լևոն 6-րդին սպասում էր նույնքան ճոխ ընդունելություն, որքան Կաստիլիայում: Ֆրանսիայի թագավոր Կառլոս 6-րդն իր շքախմբով, որի կազմում կոմսեր էին, դուքսեր, իշխաններ, ասպետներ, կարդինալներ և եպիսկոպոսներ, դուրս եկավ Փարիզից՝ դիմավորելու հայոց թագավորին: Իսկ հասարակ ժողովուրդը տարակուսած էր, որ իրենց թագավորն այդքան հանդիսավոր է դիմավորում ինչ-որ անհայտ թագավորի, այն էլ՝ գահագուրկ: Լուվրում բարձրաստիճան հյուրի պատվին ճաշկերույթ կազմակերպվեց, որին ներկա էր ֆրանսիական ամբողջ վերնախավը:

Թագավորի խնդրանքով հայոց թագավորը բոլորին պատմեց այն դժբախտությունների մասին, որոնք բաժին էին ընկել իրեն: Հուզված Կառլոս 6-րդը Լևոնին տվեց բավականին մեծ գումար, ինչպես նաև նրան ամենամյա թոշակ նշանակեց, որպեսզի ոչ մի բանի կարիք չունենա և ապրի ճոխության մեջ: Նման սրտացավ ընդունելությունը նախանձի առիթ դարձավ ժամանակակիցների համար, ովքեր համարեցին, որ այդօրինակ առատաձեռնությամբ Կառլոս 6-րդը վնասում է գանձարանը՝ տեղի տալով տալով մի թագավորի շքեղ կենսակերպին, ով արդեն սովորել է ձեռքը մեկնել եվրոպական թագավորներին¹⁶:

Հանուն արդարության ասենք, որ Լևոն 6-րդը շատ օգտակար խորհրդական էր Ֆրանսիայի թագավորի համար, ով միշտ նրան հրավիրում էր թագավորական ժողովներին և հանդիսություններին: 1385

¹⁶ Одиссея царя Киликии Левона VI.

<http://www.yerkramas.org/article/55444/odissey-a-carya-kilikii-levona-vi-chast-2-ya>.

թ. գարնանը Կառլոս 6-րդն ամբողջ ֆրանսիական վերնախավին հրավիրեց խորհրդակցության՝ քննարկելու համար Անգլիայի հետ փոխհարաբերությունների հարցը, քանի որ արդեն ավարտվում էր երկու երկրների միջև կնքված հաշտության ժամկետը: Ներկաների մեծ մասը տրամադրված էր պատերազմի վերսկսմանը:

Պատերազմի հակառակորդները, ովքեր փոքրամասնություն էին, Լևոն 6-րդին խնդրեցին ելույթ ունենալ և աջակցել իրենց: Արքայի ելույթն այնքան համոզիչ և զգացմունքային էր՝ կարողացավ համոզել պատերազմի կողմնակիցներին, որ բանակցություններն անհրաժեշտ են: Լևոն 6-րդը պատրաստակամություն հայտնեց բանակցություններում միջնորդի դեր կատարել Ֆրանսիայի և Անգլիայի թագավորների միջև¹⁷:

Լևոն 6-րդն իր առաքելության մասին տեղեկացրեց Անգլիայի թագավոր Ռիչարդ 2-րդին, ով շուտով նրա համար Անգլիա մտնելու համար արտոնագիր ուղարկեց, որտեղ նշված էր, թե թագավորին քանի պալատական, քանի ծառա և քանի ձի կարող են ուղեկցել: Հետաքրքրական է, որ արքան Ռիչարդ 2-րդին առանձին խնդրել էր, որ թույլ տա որոշ քանակությամբ ֆրանսիական զինի բերել Անգլիա՝ հավանաբար բանակցությունների հաջող ընթացքի համար...

1385 թ. վերջին հայոց թագավորն իր մերձավորներով, ծառաներով, ձիերով, պարենի պաշարով ու զինիներով ժամանեց Դուվր, որտեղ նրան դիմավորեցին անգլիական թագավորի ներկայացուցիչները: Հետո՝ Լոնդոնի ծայրամասում, Լևոն 6-րդին դիմավորեցին թագավոր Ռիչարդ 2-րդը և թագավորի ամբողջ շքախումբը: Յոթ օր շարունակ նրանք պատվում էին հյուրին: Թագավորի և Լևոնի հանդիպումը շատ ջերմ էր, Ռիչարդ 2-րդը Լևոն 6-րդի հետ ողջագուրվեց համբույրով, որը խորհրդանշում է խաղաղ մտադրությունները: Հյուրի պատվին կազմակերպվեցին զանազան ժամանցային միջոցառումներ, իսկ հետո ճանապարհեցին նրան հատկացված շքեղ պալատ¹⁸:

Մի քանի օրից Ռիչարդ 2-րդը ժողով հրավիրեց բարձրաստիճանի խորհրդականների մասնակցությամբ՝ լսելու համար հայոց թագավորի առաջարկները: Լևոն 6-րդի ելույթը մեծ տպավորություն թողեց թագավորի և բոլոր ներկաների վրա: Արքան հակամարտող կողմերին

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Одиссея царя Киликии Левона VI

<http://www.yerkramas.org/article/55444/odisseya-carya-kilikii-levona-vi-chast-2-ya>

կոչ էր անում ցուցաբերել ողջամտություն՝ ամենամոայլ գույներով նկարագրելով բոլոր այն աղետները, որոնք երկու երկրների ժողովուրդներին կրերի նոր պատերազմը: Նա նաև հայտարարեց, որ հենց Անգլիայի և Ֆրանսիայի պատճառով է, որ այդ երկրները չէին կարողացել օգնության գալ քրիստոնյա հայկական Կիլիկիային՝ մահմեդականների դեմ պայքարում: Նա Անգլիայի թագավորին խնդրեց մոռանալ պատվախնդրության մասին ու մտածել միայն այն բարիքների մասին, որոնք կրերի ցանկալի խաղաղությունը: Իր պատասխան ելույթում Ռիչարդ 2-րդը չառարկեց խաղաղ բանակցությունների դեմ և համաձայնեց հանդիպել Ֆրանսիայի թագավորի հետ: Ու չնայած Լևոն 6-րդը կարևոր դեր կատարեց Ֆրանսիային ու Անգլիային հաշտեցնելու փորձում՝ նրա ջանքերն ապարդյուն անցան, քանի որ երկու կողմերում էլ կային ուժեր, որոնց համար առաջնահերթ էին նոր տարածքներ տիրելու ծարավը և փառասիրությունը...

Իսկ Ռիչարդ 2-րդ թագավորն առատաձեռն շնորհներ ընծայեց Լևոն 6-րդին: Նա ստորագրեց թուղթ, որով թագավորին ամենամյա թոշակ էր նշանակում՝ մինչև իր թագավորությունը վերա դարձնելը:

Մինչև Փարիզում իր վախճանը (նոյեմբեր, 1393 թ.)՝ Լևոն 6-րդը վայելում էր Կառլոս 6-րդի մեծ հարգանքը և միշտ ներկա էր լինում նրա բոլոր խորհրդակցություններին ու պաշտոնական միջոցառումներին: Ու չնայած ընդամենը 51 տարեկան էր՝ նա իրեն գառամյալ ծերունի էր զգում, անհամար ապրումների և գահի կորստի պատճառով: Իր կտակում նա մանրամասնորեն նկարագրել էր, թե ինչպես է ցանկանում, որ կազմակերպվի իր հուղարկավորությունը, ինչպես նաև թողել էր այն եկեղեցիների և անհատների ցուցակը, որոնց զգալի գումար էր կտակում: Լևոն 6-րդը թաղվել է Փարիզում, Սան Դենի տաճարում՝ արքայավայել արարողություններով¹⁹:

Մուսուլմանական երկրների հզորանալը և նրանց զորքերի առաջխաղացումը արևելքից դեպի արևմուտք՝ անխուսափելիորեն պետք է դառնային քրիստոնեական թագավորությունների կործանման պատճառ: Խաչակիրների՝ այդ գործընթացին դիմակայելու փորձերն անհաջող էին: Առաջինն այդ ճակատագրին արժանացան Բագրատունիների և Հայկական Կիլիկիայի թագավորությունները:

¹⁹ Одиссея царя Киликии Левона VI

<http://www.yerkramas.org/article/55444/odissey-a-cary-a-kilikii-levona-vi-chast-2-ya>

Հաջորդը դարձավ Բյուզանդական կայսրությունը: Լևոն 6-րդ Լուսինյանը, ով կորցրել էր Կիլիկիայի գահը, միամտաբար կարծում էր, թե ինքը կկարողանա համոզել եվրոպական միապետներին՝ ևս մեկ խաչակրաց արշավանք կազմակերպել իր թագավորությունը վերադարձնելու նպատակով: Գուցե և նրան կհաջողվեր հասնել այդ նպատակին, եթե յոթ անպտուղ տարիներ չանցկացնէր Եգիպտոսում՝ գերության մեջ: Եվ այն ժամանակ, երբ Կիլիկիայում մնացած հայերը դեռ փորձում էին պահպանել անկախության մնացորդները, Լևոն 6-րդը շրջելով եվրոպական թագավորների պալատներով՝ իրեն մխիթարում էր նրանցից օգնություն ստանալու պատրանքներով: Եվ այդ պատճառով էլ դժվար է միանշանակ գնահատական տալ Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն 6-րդի ամբողջ գործունեությանը: Ակնհայտ է միայն մեկ բան՝ Լևոն 6-րդի օրինակը, ում ճակատագիրն այդքան ողբերգական էր, դաս չդարձավ այն հայերի համար, ովքեր հետագայում էլ չէին դադարում ակնկալել եվրոպական երկրների օգնությունը:

**ԵԳԻՊՏՈՍԻ ՄԱՍԼՈՒՔՆԵՐՆ ՈՒ ԿԻԼԻԿՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ**

Արարատ Գևորգյան

Ս. Բյուրատի անվան թ. 125 հիմնական դպրոց, 8-րդ դասարան
Ուսուցիչ՝ Օդյաննա Համբարձումյան

Բագրատունյաց Հայաստանի անկումից հետո, հայ ժողովուրդը հալածվելով սելջուկ-թյուրքերի և այլ քոչվորական ցեղերի կողմից, իր ապաստանը գտավ հեռավոր Կիլիկիայում և կերտեց իր պետականությունը՝ հիմք դնելով ուրույն ու զարգացած մի պետության: Կիլիկյան Հայաստանը, իր ստեղծման օրվանից սկսած, գտնվում էր քաղաքակրթությունների խաչմերուկում, որը իր գոյությունը պահպանեց դիվանագիտական ճկուն քաղաքականության շնորհիվ: Սակայն 13-րդ դարի կեսերից Մերձավոր Արևելքում կատարված մեծ իրադարձությունները ճակատագրական եղան վերջինիս համար: Կիլիկիան սկսեց հետզհետե բռնել անկման ուղին, որի գլխավոր պատճառ դարձան մամլուքները: 1305թ. Լևոն IV-ը օժվում է որպես հայոց թագավոր, սակայն իրականում դեռ Հեթումը պահպանում էր իր ազդեցիկ դերը արքունիքում: 1306թ. Լևոն արքան դեսպան է ուղարկում դեպի Եվրոպա, որը շարժվում է Նեապոլով դեպի Հռոմ և Փարիզ: Կլեմենտ V պապը հայերին խոստանում է իրենց աջակցությունը, եթե հայերը ընդունեն կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը: Հայոց արքունիքը լատինամետ կաթողիկոս Գրիգորի VII-ի հետ միասին փորձում են հայկական եկեղեցին միացնել կաթոլիկ եկեղեցուն: Այս նպատակով 1307թ. Միսում տեղի է ունենում եկեղեցական ժողով, որտեղ մի շարք որոշումներ են ընդունվում երկու եկեղեցիների միացման հարցում: Սակայն այս ամենը բուռն դիմադրության է հանդիպում բուն Հայաստանի վանականության և Կիլիկիան Հայաստանի բնակչության կողմից: Արքունիքը այս ամենն անում էր Եվրոպայից օգնություն ստանալու ակնկալիքով, բայց եթե հետևենք դեպքերի ընթացքին, ապա ստեղծված պայմաններում խիստ կասկածելի է թվում, թե Արևմուտքը կկարողանար օգնել Կիլիկիային: Մի կողմից ակնհայտ էր, որ Հռոմի պապը կորցրել էր իր ազդեցությունը աշխարհիկ ղեկավարների վրա, որի վառ ապացույցն էին նրա բուռն ջանքերը խաչակրաց նոր արշավանք

կազմակերպելու ուղղությամբ, սակայն ապարդյուն: Մյուս կողմից եվրոպացի միապետները զբաղված էին ներքին պատերազմներով, և ազգաբնակչությունը նախկինի նման խանդավառված չէր արևելյան «հարստություններով»: Բսկ մոնղոլները այլևս աչքի չէին ընկնում իրենց նախկին հզորությամբ, անհաջող արշավանքներից հետո, մոնղոլները աստիճանաբար սկսում են հրաժարվել Ասորիքը գրավելու մտքից և կորցնում հետաքրքրությունը Միջերկրական ծովի նկատմամբ: Կիլիկիան նրանց միակ ելքն էր դեպի Միջերկրական ծով, որի համար և նրանք պաշտպանում էին հայերին, սակայն աստիճանաբար ետ քաշվելով դեպի արևելք, նրանք կորցնում են նաև իրենց հետաքրքրությունը Կիլիկյան Հայաստանի նկատմամբ, որում իր դերն ուներ կրոնական գործոնը, և այն փաստը, որ 1304թ. Ղազան խանը կնքում է իր մահկանացուն: Նա վերջին մոնղոլ միապետն էր, որ դեռ մտահոգված էր Ասորիքը նվաճելով: Նրա պատվին բազմաթիվ գովեստի խոսքեր կան հայ և լատին պատմիչների մոտ: Ղազանին փոխարինում է Օլջայտուն (Խուղաբանդան): Վերջինս հետզհետե մերձենում է իսլամական համայնքի հետ և հասնում նրան, որ ստիպում է քրիստոնյաներին կրել տարբերակիչ նշաններ¹:

Կիլիկյան Հայաստանում իշխանության է գալիս Օշինը (1307-1320թթ.): Նրա իշխանության տարիները աչքի են ընկնում հայ և կաթոլիկ եկեղեցիների միացման ջանքերով: Նա ցանկանում է սրանով ստանալ Եվրոպայի աջակցությունը մամլուքների դեմ պայքարում, քանի որ արդեն մոնղոլների դիրքերը ավելի էին թուլացել և օր օրի ավելի էին հեռանում մերձավոր Արևելքից: Միայն 1312թ. Օլջայտուն արշավանք կատարեց դեպի Սիրիա, որն անհաջող ավարտ ունեցավ նրա համար: Հայերն այս արշավանքին չեն մասնակցել, որը վկայում է նաև դաշինքի ձևականությունը: Մոնղոլների թուլացման մասին է վկայում նաև 1315թ. Եգիպտական սուլթանի զորքերի արշավը դեպի Մալաթիա քաղաք: Մոնղոլական զորքերը դուրս են գալիս Հալեպից և կարողանում են մեծ ավերածություններ կատարել Մալաթիայում, այնինչ Ռումի մոնղոլ կառավարիչ Չոբանը օգնության չի գնում քաղաքին:² Մամլուքները նաև ավելացնում են հայերից հավաքվող հարկը: Մակայն բարեկամական

¹ Մանանդյան Հ., Երկեր, հ. Գ, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Մելջուկյան շրջանից մինչև Մեֆյանների հաստատումը Իրանում, Երևան 1977թ, էջ 327:

² Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., Եր., 1994թ, էջ 67:

հարաբերությունները մոնղոլների հետ շարունակում են մնալ նաև Աբու Սաիդ խանի օրոք (1316-1335թթ.):

1318թ. սկսած՝ հաճախակի են դառնում հարձակումները մամլուքների և կարամանների կողմից:³ Կարամանները մամլուքների հետ կնքել էին հակահայկական դաշինք: 1318թ. կարամանների մի զորաջոկատ ներխուժում է Տարսոնի շրջան, սակայն օգնության եկած Կոռիկոսի պարոն Օշինը կարողանում է նրանց պարտության մատնել: 1320թ. Համայի կառավարիչ Աբուլֆեդան ներխուժում է Կիլիկիա Ամանոսով, նրանք հասնում են մինչև Միս և մեծ ավերածություններ կատարում քաղաքում: Օշին արքան, չդիմանալով մայրաքաղաքի ավերածություններին, մահանում է, նրան հաջորդում է իր անչափահաս որդին Լևոն V-ը (1320-1342թթ.), որի խնամակալ է դառնում պարոն Օշինը: Փաստացի նա իշխանությունը վերցնում է իր ձեռքը: Նա ինքը ամուսնանում է Իոնաե թագուհու հետ, իսկ իր աղջկան կնության է տալիս երիտասարդ արքային, որից հետո իրեն կնքում պայլ տիտղոսով և հայտարարում է ամբողջ Կիլիկիայի պարոն: Իր եղբայր Կոստանդինին դարձնում է զորքերի սպարապետ: Այս ամենը մեծ դժգոհություն է առաջացնում հայ ազդեցիկ ֆեոդալների մոտ, որոնք ցանկանում են հաշվեհարդար տեսնել Օշինի հետ: Նրանց աջակցում էր նաև հանգուցյալ արքա Օշինի քույր Իզաբելը, որը հարս էր գնացել Լուսինյանների ընտանիք: Իմանալով այս մասին՝ Օշին պայլը բանտարկում է Իզաբելին նրա երկու որդիների հետ, որոնք գտնվում էին Կիլիկիայում, իսկ մյուս որդիները կարողանում են ապաստան գտնել Հռոդոս կղզում՝ լատինների մոտ: Նրանց հորեղբայր՝ Կիպրոսի արքա Հենրիին, որոշում է հարձակվել Օշինի վրա, սակայն Հռոմի պապի միջամտությամբ բախում տեղի չի ունենում: Նման պայմաններում 1321թ. Չոբանի որդի Թեմուրտաշը ասպատակում է Կիլիկիան, Սամվել Անեցու մոտ նշվում է, որ նա մեծ ավերածություններ և թալան կազմակերպեց երկրում:⁴ Այնուհետև, կարճ ժամանակ անց, Կիլիկիայի վրա հարավից հարձակվում են մամլուքները և գրավում Այաս նավահանգիստը՝ ավերելով ու կոտորելով քաղաքը: Սա ծանր հարված է հասցնում երկրի առևտրային եկամուտներին, Այասի ավերումները ծանր են տանում նաև եվրոպացիները: Հռոմի պապը

³Հովհաննիսյան Ա., «Կիլիկիայի հայկական թագավորության եվ կարամանյան պետության հարաբերությունների պատմությունից (XIII դարի երկրորդ կես)», ՊԲՀ 2014թ. // [http://hpj.asj-oa.am/5938/1/2014-1\(123\).pdf](http://hpj.asj-oa.am/5938/1/2014-1(123).pdf):

⁴ Սամուել Անեցի. «Հաւարքունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893թ., էջ 530:

Ֆինանսական օգնություն է առաջարկում Այասի ռազմական խնդիրների բավարարման և վերականգման համար:

1323թ. Կոնստանդին կաթողիկոսը գնում է Կահիրե և մի նոր ծանր պայմանագիր է կնքում մամլուքների հետ, որով պարտավորվում է հայոց թագավորությունը տարեկան վճարել մեկ միլիոն երկու հազար դիրհեմ, հայերը պարտավորվում են արևմուտքից օգնություն չխնդրել և հրաժարվել անհավանական խաչակրաց արշավանաքի մտքից և զիջումներ անել Այասի առևտրի հարցում հոգուտ Ալեքսանդրիայի: Իրենց հերթին մամլուքները պետք է վերականգնեն ավերած բերդերը և քաղաքները՝ բացառությամբ Այասի: Այսպիսի ծանր պայմաններով հայերը կնքում են 15 տարվա զինադադարի պայմանագիր: Սակայն այս ժամկետը ձևական է լինում, քանի որ հայերը ժամանակ առ ժամանակ ենթարկվում են մամլուքների ասպատակություններին, հատկապես 1330թ. մամլուքները հարձակվում են Այասի վրա, սակայն պարտություն են կրում, բայց հաջորդ տարի նույնպես հարձակվում են և գրավում այն, թալանում և հեռանում: Մինչ այդ 1329թ. Լևոն V-ը, դառնալով չափահաս, հրամայում է ձերբակալել Օշին պալին և նրա եղբորը՝ Կոնստանդինին, որոնց մահապատժի են ենթարկում Ադանայում, նա հրամայում է սպանել նաև իր կնոջը՝ Օշինի դուստր Ալիսին՝ մեղադրելով դավաճանության մեջ: Այս ամենից հետո նա ամուսնանում է Սիցիլիայի արքա Ֆրիդրիխ I-ի դստեր հետ, Կիլիկիա է կանչում իր զարմիկներին՝ Իզաբելի որդիներին, որոնք ապաստան էին գտել Հռոդոս կղզում: Նրանցից Ջիվան Լուսինյանը դառնում է պալ, իսկ մյուս եղբայր Բոհեմունդը՝ Կոռիկոսի տերը: Արքունիքում ուժեղանում է լատինամետ տարրը, որն էլ հետագայում իշխանության է բերում Լուսինյաններին հայոց գահի վրա:

1332թ. Լևոն արքան դեսպան է ուղարկում Եվրոպա, որի արդյունքում Ֆրանսիայի արքա Ֆիլիպ VI-ը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Կիլիկիային: Սա վկայում է մի բան, որ դեռ Եվրոպայում կային մտածողներ դեպի արևելք արշավելու ուղղությամբ: Դա Ֆրանսիայի արքան էր, որի մասին Լևոն V-ին գրում է նաև Հռոմի պապը: Սակայն շուտով սկսվում է Անգլիայի և Ֆրանսիայի միջև 100 ամյա պատերազմը, որն ի չիք է դարձնում բոլոր պլանները:

Մամլուքները իմանալով հնարավոր նոր խաչակրաց արշավանքի մասին՝ սկսում են հարձակումների նոր ալիք: Մելիք Նասիրը 1335թ. Հալեպի էմիր Ալթուն Բուղային հրամայում է արշավել Կիլիկիա, որոնք

ավերածություններ են կատարում Մամեստիայում, Ադանայում և հասնում մինչև Տարսոն, որից հետո կարողանում են հարուստ ավարով ետ վերադառնալ: Կիլիկյան Հայաստանի համար ստեղծվել էին չափազանց ծանր պայմաններ: Երբ Լևոնը դեսպան է փորձում ուղարկել Կահիրե խաղաղության համար, դեսպանին Հալեպի մոտ ձերբակալում են: Միայն 1337թ. Մելիք Նասիրը համաձայնում է խաղաղության՝ հայերի համար չափազանց ծանր պայմաններով: Մուլթանը իր պետությանն է բռնակցում Պիրամոսի աջ ափը՝ այդ թվում նաև Այաս նավահանգիստը,⁵ ինչպես նաև Լևոնը երդվում է, որ այլևս չի ստեղծի հարաբերություններ ֆրանսիական թագավորության և կաթոլիկ եկեղեցու հետ ի վնաս սուլթանության:⁶

1342 թ. մահանում է Լևոն արքան, որից հետո հայոց գահը Ռուբինյաններից ու Հեթումյաններից անցնում է Լուսինյաններին, որոնք ազգակցական կապեր ունեին Կիպրոսի թագավորության հետ և խիստ լատինամետ էին: Սկզբում Լևոնից հետո թագավոր է դառնում Ջիվան Լուսինյանը, որը գահին է նստում մինչ իր եղբայր Գվիդոնը կժամաներ Կիլիկիա: Հայ ֆեոդալները, տեսնելով Գվիդոնի վարած քաղաքականությունը, նրան սպանում են:

Նրանից հետո հայ ֆեոդալների որոշմամբ գահին է նստում ազդեցիկ իշխան Կոնստանդինը (1345-1363): Հավանաբար տեղեկանալով հայերի և արևմուտքի միջև տարվող բանակցությունների մասին՝ Եգիպտոսի սուլթանությունը նոր արշավանք է կազմակերպում դեպի Կիլիկիա: Սակայն այս անգամ հայերի միջև որոշակի ոգևորվածություն է նկատվում, քանի որ նախ 1347թ. Լիպարիտ գորավարի գլխավորությամբ կարողանում են թուրքմենների ձեռքից ետ խլել Կապանը, որը նրանք գրավել էին 1346թ., այնուհետև հայերը, այս հաղթանակից ոգևորված, հարձակման են անցնում մամլուքների վրա և Կիպրոսի նավատորմի օգնությամբ կարողանում են գրավել նաև Այասը: Եգիպտա-կարամանյան դաշինքը վերջ է դնում այդ վերելքին. Մամլուքները կրկին վերահսկում են ծովափը, իսկ թուրքմենները կարողանում են գրավել նաև Պապերոնը:

⁵ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմ.՝ Խաչիկյան Լ. Ս., Երևան, 1950թ., էջ 78:

// http://serials.flib.sci.am/openreader/nyut_hay_jogh_patm_5/book/content.html

⁶ Charter of Fundamental rights of the European UNION (2000/C 364/01) http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf (մուտքի ամսաթիվը՝ 26. 03. 2016թ):

14-րդ դարի 60-70-ական թվականները Կիլիկիայի հայկական թագավորության գոյամարտի տարիներն են: Այդ մեկուկես տասնամյակի ընթացքում երկրի կեսից ավելին գտնվում էր Եգիպտոսի մամլուքյան սուլթանության տիրապետության ներքո, և հայոց թագավորությունը ամփոփվել էր Լեռնային Կիլիկիայի տարածքի մի մասում: Այս ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանը չունեք այլևս մոնղոլների պես հզոր դաշնակից: Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունները, որոնք նախորդ տասնամյակների ընթացքում քիչ թե շատ բարեկամական հարաբերություններ էին պահպանում հայոց թագավորության հետ, վաղուց արդեն իջել էին պատմության թատերաբեմից: Մերձակա քրիստոնյա պետություններից մնացել էր միայն Կիպրոսի թագավորությունը, որը, սակայն, այնքան հզոր չէր, որ կարողանար իրական ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային: Փոխարենը, Եգիպտոսի մամլուքներից բացի, հայոց թագավորության գոյությունը սպառնում էին նաև մամլուքների դաշնակիցները՝ թուրքմեն-կարամանները, որոնք հայոց թագավորության անմիջական հարևաններն էին դարձել:

14-րդ դարի կեսերից սկսած՝ ի վնաս Կիլիկյան Հայաստանի, կտրուկ կերպով բարդացավ Արևմտյան Եվրոպայի քաղաքական իրավիճակը: Ավելի քան հարյուրամյա պատերազմը (1337-1453 թթ.) արևմտաեվրոպական գերհզոր տերությունների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի միջև⁷ երկրորդական պլան մղեց խաչակրաց նոր արշավանքի ծրագրերը: Մինչդեռ իտալական քաղաք-պետությունները, մոռանալով քրիստոնեական համերաշխության մասին, շարունակում էին բազմակողմանի առևտրական հարաբերություններ պահպանել Եգիպտոսի սուլթանության հետ: 1345 թ. վենետիկցիների և մամլուքների միջև կնքված պայմանագրով, Վենետիկը կանոնավոր երթևեկություն հաստատեց Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստի հետ:

1350-ական թվականներին պարբերաբար տեղի են ունենում եգիպտացիների և թուրքմենների հարձակումներ, որոնք ծանր հետևանքներ են ունենում Կիլիկիայի, և հատկապես նրա արդեն քայքայված տնտեսության համար: Այս ամենին ավելանում էր նաև 1348թ. վրա հասած ժանտախտը, որից անմասն չի մնում նաև Կիլիկյան

⁷ Գալստյան Ա., Կիլիկյան հայոց թագավորության կործանման հարցի շուրջ, <<Լրաբեր>> (հաս. գիտ.), 1971թ, էջ 60, Հայ ժողովրդի պատմություն, հ. III (ՀՀ ԳԱԱ հրատարակչություն), Երևան, 1976, էջ 777:

Հայաստանը: 1355թ. հայերը կարողանում են ետ մղել Հալեպի էմիրի հարձակումը Ադանայի և Տարսոնի վրա, սակայն 1360թ. նրանց հաջողվում է վերջնականապես գրավել Դաշտային Կիլիկիան՝ իր Ադանա և Տարսոն քաղաքներով:

Այս արշավանքի ժամանակ սուլթանության զորքերը պաշարում են նաև Կիլիկյան Հայաստանի վերջին նավահանգիստ Կոռիկոս բերդը, որի բնակիչները, չկարողանալով պաշտպանել իրենց և տեսնելով Կոնստանդին արքայի թույլ հնարավորությունները, դիմում են Կիպրոսի արքա Պետրոս I-ին: Վերջինիս նավատորմը ազատում է բերդը և այն անցնում է նրա իշխանության տակ: Պետրոս I-ը տվյալ ժամանակաշրջանում կարողանում է հասնել իր հզորության գագաթնակետին, նա ցանկանում էր նոր խաչակրաց արշավանք կազմակերպել և միաժամանակ ցամաքում ունենալ ամուր հենարան, որը նրա համար կարող էր լինել Կիլիկյան Հայաստանը իր բերդերով ու ամրոցներով, մանավանդ, որ շատ հայ ֆեոդալներ բարյացակամ էին տրամադրված նրա հանդեպ: Նրան հաջողվել էր ստեղծել ուժեղ նավատորմ և պայքարել սուլթանության դեմ՝ հարձակումներ կատարելով ծովափնյա քաղաքների վրա: Նա 1367թ. Հարձակվում է նաև Այասի վրա, սակայն չի կարողանում գրավել այն: Իսկ 1365թ. նա թալանի է ենթարկում նաև Ալքսանդրիան, սակայն զորքերի պակասի պատճառով չի կարողանում պահել այն իր ձեռքում: Համենայն դեպս նա միակ քրիստոնյա միապետն էր, որ դեռ կարողանում էր պայքարել մահմեդական տիրակալների դեմ, բայց այս ամենը ընդհատվում է նրա մահով 1369թ.:

1363թ. մահանում է Կոնստանդին արքան և նրան փոխարինում է ազգականը՝ Կոնստանդին 5-րդը (1363-1373), չնայած որ Պետրոս I-ը այդ ժամանակ ցանկանում էր հայոց գահին տեսնել Ջիվան Լուսինայանի որդիներից մեկին՝ Լևոնին, որը գտնվում էր Կիպրոսում: Նա այս մասին գրում է նաև Հռոմի պապին: Նրա թագավորության տարիներին եգիպտական սուլթանությունը ավելի հաճախակի է դարձնում ավերիչ արշավանքները, այնինչ արքունիքը դեռ փորձում էր օգնություն խնդրել Արևմուտքից: Կոնստանդինին նույնպես սպանում են հայ ֆեոդալները, քանի որ տեղեկություններ կային, որ նա իր և իր ընտանիքի կյանքի դիմաց համաձայնել էր սուլթանությանը հանձնել թագավորությունը, որից հետո հայոց գահին բազմում է Լևոն Լուսինյանը՝ լատինամետ ուժերի օգնությամբ: Նա լինում է Կիլիկիայի վերջին հայկական

թագավորը: Նա իշխանության եկավ այնպիսի պայմաններում, երբ թագավորության օրերը արդեն հաշված էին: Սա իր հերթին ևս դիպչում է հայերի ինքնասիրությանը և իրենից վանում է Պողոս Սսեցի կաթողիկոսին:⁸

Ստեղծված պայմաններում Եզիպտոսի սուլթանության հպատակ Հալեպի էմիրը հարձակվեց և պաշարման մեջ առավ Սիս մայրաքաղաքը: Սիսի վրա հարձակումներ շատ էին եղել, բայց միջնաբերդը միշտ անառիկ է մնացել, սակայն այս անգամ երկարատև պաշարումից առաջացած սովը կարողանում է օգնել նրանց 1375թ. ապրիլի 16-ին գրավել միջնաբերդը:

Այսպիսով հայոց թագավորությունը դադարում է գոյություն ունենալ և ոչ թե Կիլիկիայի հայ ազգաբնակչությունը, որի մեծ մասը, կառչելով Տավրոսի և Անտիտավրոսի լեռներին, հաստատվում է անառիկ հենակետերում: Սսի կաթողիկոսարանը հարատևում է հին մայրաքաղաքում մինչև Առաջին աշխարհամարտը: Լևոն Լուսինյանը գերությունից 1382թ. ազատվում է Կաստիլիայի արքան ֆրանցիսկյան քահանա Ժան Դարդելի միջնորդությամբ, և նա իր կյանքը ավարտում է ֆրանսիական արքունիքում ու մահանում Փարիզում՝ 1393թ.:

Այսպիսով, հայ ժողովուրդը, որն իր նոր ապագան 1080 թվականից կերտել էր Միջերկրական ծովի արևելյան ափին գտնվող հեռավոր Կիլիկիայում, փակեց իր պատմության մեկ էջ ևս. անկում ապրեց Կիլիկիայի հայոց պետությունը՝ ապագա սերունդներին թողնելով պատմա-մշակութային հարուստ ժառանգություն:

⁸ Օրմանյան Մ., «Ազգապատում», 1961թ. Բեյրութ, էջ 1947: // http://ter-hambardzum.net/wp-content/uploads/2013/04/339_Azgapatum_2.pdf (Մուտքի ամսաթիվը՝ 27.03.2016թ.)

ԲԱԺԻՆ 2

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Գայանե Եսայան

Երևանի Դանիել Վարուժանի անվան թիվ 89 հիմնական դպրոց,
9-րդ դասարան
Ուսուցիչ՝ Արփիկ Դուրգարյան

Հայոց պատմությունը լի է երևույթների ամենաանսովոր դրսևորումներով, վիճակների արտառոց լուծումներով, ճակատագրի ամենաաղետալի հարվածներով: Բայց նույնիսկ այսպիսի պատմության հյուսվածքի մեջ Կիլիկյան Հայքը, նրա պետությունն ու ազգային կյանքը հանդես են գալիս որպես բացառիկորեն արտասովոր երևույթներ, որոնք պիտի ապացուցեին, թե հայի մեղքով չէ, որ նրա պետությունն ու հանրային գոյությունը նախընթաց դարերում քանիցս ընկել են ու հառնել: Եվ իսկապես, ինչպե՞ս կարելի էր հավատալ, թե չնվաճող մի ժողովուրդ իր բնաշխարհից այնքան հեռու, արևելքի ու արևմուտքի, հարավ ի ու հյուսիսի խաչմերուկում, անկուշտ բռնատիրությունների ճամփաբաժանի վրա պիտի կարողանար ստեղծել իր ազգային ծաղկուն կյանքը և քաղաքական մի այնպիսի կազմակերպություն, որի հետ ստիպված լինեն հաշվի նստել նույնիսկ այդ նվաճող, անկուշտ բռնատիրությունները⁹:

Այդ խաչմերուկ երկրի «Կիլիկիա» անվանումը առաջացել է հուներեն «կալիկա» բառից, որը նշանակում է «քարքարուտ»:

Այս հողվածով կփորձեն ներկայացնել Կիլիկյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները և քաղաքական կարգերը:

Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունները ավելի բարդ էին, քան բուն Հայաստանում, որովհետև երկրում հայերից բացի բնակվում էին տարբեր երկրներից եկած բազմաքանակ բնակիչներ: Այս հարաբերությունները իրենց վրա

⁹ Բ. Ուլուբաբյան, Զրուցարան, Երևան, 1991, էջ 397

կրում էին հայկական, արևմտաեվրոպական և բյուզանդական սովորույթների ուժեղ կնիքը:

Կիլիկիայի հասարակությունը բաժանված էր երկու գլխավոր խմբի՝ ազատների և անազատների: Ազատների, այսինքն՝ ազնվականների դասակարգը, բաժանված էր երկու մասի՝ աշխարհիկ ազնվականների և հոգևորականների: Աշխարհիկ ազնվականությունը բաղկացած էր բերդատեր պարոնների և ձիավորների դասերից: Այս բոլոր դասերը համարվում էին երկրի շահագործող դասակարգը: Անազատների, այսինքն՝ շահագործողների խումբը բաժանված էր տարբեր խավերի՝ գյուղացիության և քաղաքային բնակչության: Սմբատ Սպարապետը հասարակության տարբեր խավերի մասին գրում է.

«Կու հրամայէ արենքս, որ մարդկային ազգս շատ ազգեր են, և են որ ազատք են և հեծելորք, և են որ չեն, և յայլ ազգ՝ գործերն, որ գործ այնեն»¹⁰:

Կիլիկիայում գյուղացիության մեծագույն մասը ճորտացված էր, ամրացված հողին: Այսպիսի գյուղացիները կոչվում էին պարիկոսներ (հունական արտահայտություն): Պարիկոսների մի մասը կոչվում էր դարպասային ճորտ: Գյուղացիության երրորդ խավն էլ՝ դոմենյան, այսինքն, արքունի գյուղացիներն էին:

Սպարապետ Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրք»-ից երևում էր, որ գյուղացիները վճարում էին իրենց տարեկան բերքի մեկ հինգերորդը, առանձին տուրք էին վճարում անասունների համար և շաբաթվա մեկ օրը աշխատում էին ավատատիրոջ օգտին: Կատարում էին պետության ու ավատատիրոջ հանդեպ ունեցած զանազան պարտավորություններ և տասանորդ վճարում եկեղեցուն:

Քաղաքային բնակչությունը բաղկացած էր արհեստավորներից և առևտրականներից: Կիլիկիայում թե՛ արհեստավորները, և թե՛ առևտրականները վայելում էին անձնական ազատությունը: Այս երկու քաղաքային բնակչությունները ունեին իրենց կազմակերպությունները՝ համքարություններն ու միությունները, բայց զրկված էին քաղաքական իրավունքներից: Նրանք հարկ էին վճարում պետությանը և տուրք տալիս ֆեոդալին: Կիլիկիայում կար նաև մեկ այլ խավ՝ ծառաների ու աղախիհների խավը: Այս մարդիկ ստրկացված էին, զրկված ամեն մի

¹⁰ Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ-«Հայ ժողովրդի պատմություն» III հատոր, Երևան, 1976, էջ 715

իրավունքից, աշխատում էին տիրոջ տնտեսության մեջ: Տերը իրավունք ուներ ծախել, ծեծել, բայց ոչ սպանել ու պարտավոր էր, իր համար յոթ տարի աշխատելուց հետո, ազատել նրանց:

Կիլիկիայում գոյություն ունեին հողատիրության հետևյալ ձևերը.

- հայրենիք-Կիլիկիայում «հայրենիք» տերերը կոչվում էին հայրենատեր-բերդատերեր,
- պարզակականք-տերերը կոչվում էին ոչ հայրենատեր-բերդատերեր,
- արքունական կամ տերունիք հողեր-գտնվում էին արքունիքի տրամադրության տակ,
- պայմանական հողեր-տրվում էին մանր ազնվականների՝ ձիավորների դասին,
- եկեղեցական և վանքապատկան հողեր-համարվում էին հոգևորականության սեփականությունը:

Կիլիկիայում ֆեոդալական տարբեր դասերի կախվածությունն իրարից, այլ կերպ անվանում էին ֆեոդալական հիերարխիա:

Այդ հիերարխիայի բարձրագույն աստիճանն էր արքունիքը՝ թագավորի գլխավորությամբ: Երկրորդ աստիճանը կազմում էին բերդատեր պարոնները: Երրորդ աստիճանը կազմում էին ձիավորները (վասալները), ովքեր ենթակա էին այն ֆեոդալին, որից ստանում էին իրենց կալվածքները: Թագավորի և բերդատեր պարոնների վասալները Կիլիկիայում կոչվում էին լիճ, իսկ նրանց ծառայությունը սենյորի հանդեպ՝ լճություն:

Երկրի խոշոր հարցերը վճռում էր թագավորը՝ արքունի աստիճանի հետ խորհրդակցելով, որին մասնակցում էին բերդատեր պարոնները:

Երկիրը կառավարելու համար արքունիքին կից գոյություն ունեին կառավարման կենտրոնական օրգաններ, որոնք կոչվում էին գործակալություններ: Նրանցից յուրաքանչյուրը վարում էր թագավորության ներքին և արտաքին կյանքի վերաբերյալ որևէ բնագավառ: Կարևոր գործակալություններից էին.

- խնամակալության գործակալություն կամ պայլություն-ղեկավարում էր պայլը՝ թագավորի առաջին խորհրդականը,
- սպարապետություն-ղեկավարում էր գունդստաբլը (գործի ընդհանուր հրամանատարը),

- համբարակային (ինտենդանտության) գործակալություն–գլխավոր ինտենդանտի՝ մարաջախտի խնդիրն էր ռազմական հանդերձանք և պարեն մատակարարել բանակին

- արքունական քարտուղարություն–գլխավորին կոչում էին ջանցլեր կամ կանցլեր, այսինքն՝ ատենադպիր:

- սեղանապետություն–ղեկավարը սենեսկալն էր, ով հոգում էր արքունի երկրի բոլոր ծախսերը

- մաքսապետության գործակալություն–գլխավոր պաշտոնյան՝ պոռոքսիմոսը, կարգավորում էր երկրի ֆինանսները

Լևոն II–ի օրոք Կիլիկիայում կարգավորվեց դատարանական գործը: Ստեղծվեցին երեք կարգի դատարաններ (ատյաններ):

Առաջինը Արքունի դատարանն էր՝ վերին կամ մեծ դարբասը (ատյանը):

Երկրորդ կարգի դատարանը Սսի արքեպիսկոպոսական ատյանն էր: Դատարանը գլխավորում էր Սիս քաղաքի արքեպիսկոպոսը:

Երրորդ կարգի դատարանը Ստորին կամ Փոքր ատյաններն էին: Սրանք կոչվում էին բուրջես:

Կիլիկիայում գլխավոր դատավորը տուկն էր, իսկ Վերին ատյանի արքունի դատավորը կապիտանն էր: Մնացած դատարանների ատենապետերը անվանվում էին դիվանաբաշի, իսկ նրանց ենթակա մարդիկ՝ դիվընցիք:

Կիլիկիայում գործում էր օրենսդրությունը, որով ղեկավարվում էին դատավորները իրենց վճիռները կայացնելու ժամանակ:

Դեռևս Ռուբինյան առաջին իշխանների ժամանակներից սկսած Կիլիկիայում ստեղծվել էր մշտական բանակ, որտեղ զինվորների թիվը պատերազմների տարիներին մեծ չափով ավելանում էր և հաճախ անցնում հարյուր հազարից: Կիլիկիայի հայկական բանակը շատ հարցերում ընդօրինակում էր խաչակիրներից: Բանակում սահմանվեց ռազմական ուսուցում: Բանակը կազմված էր հետևակից և հեծելազորից: Հայ զինվորը գլխին ունեցել է սաղավարտ, հագին՝ գրահ, իսկ գրահի վրայից կրել է բրդյա պատմուճան՝ առջևից խաչի նշանով: Հատուկ տեղ ու դեր ունեին նաև ձիավորի կոչում ստացած մարդիկ:

Կիլիկիայում բնակչության գլխավոր զբաղմունքը երկրագործությունն էր: Հացահատիկային կուլտուրաներից մշակվում էին թելատու բույսեր: Երկրագործության մեջ կարևոր դեր էր գրավում նաև այգեգործությունը: Կիլիկիայում զարգացել էին նաև

գյուղատնտեսական գործիքներ, որոնց զգալի մասն արդեն պատրաստվում էին երկաթից: Անասնապահությունը զարգացած էր Կիլիկիայի լեռնային մասում՝ Քարուտ Կիլիկիայում: Խոշոր եղջերավոր անասուններից պահում էին կով, եգ, գոմեշ, ձի, իսկ մանր եղջերավորներից այծ և ոչխար: Մեծաքանակ հոտեր ունենալը հնարավորություն է տվել Կիլիկիայից արտահանելու նաև կաշվեղեն:

Շնորհիվ գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացման և գյուղատնտեսական արտադրանքի աճի՝ հնարավոր դարձավ ավելի լայն չափերով կատարել ապրանքափոխանակություն:

Կիլիկիայում զարգացած էր նաև արհեստագործությունը, որը դարձել էր արհեստավորի ապրուստի հիմնական միջոցը: Տարածված էր մանածագործությունը, մետաղամշակությունը, կաշեգործությունը: Արհեստագործության զարգացմանը նպաստում էին նաև երկրի ներքին շուկայի ընդլայնումը և Կիլիկիայի վրայով անցնող առևտրական ճանապարհները:

Կիլիկիան Արևելք-Արևմուտք ցամաքային և ծովային տարանցիկ առևտրական ճանապարհների խաչմերուկում էր: Միջազգային առևտրին Կիլիկիան մասնակցում էր գյուղատնտեսական և արհեստագործական ապրանքներով: Կիլիկիայից արտահանում էին երկաթ, ձիթապտուղ, չոր միրգ, կաշի, բուրդ, հացահատիկ, աղ, շինամիս, ձիեր: Կիլիկիա էին ներմուծվում մետաքսեղեն, զարդեղեն, զենք, օճառ: Հայոց թագավորների կողմից եվրոպայի վաճառականներին տրված առևտրական արտոնությունները նպաստում էին առևտրի զարգացմանը:

Առևտրից գանձվող մաքսերն ու հարկերն էին.

- ոսկե, արծաթե իրերի և թանկարժեք քարերի վաճառքից ստացվող հարկեր,
- սանսարյան-գանձվում էր Կիլիկիայի շուկաներում, խանութներում և տոնավաճառներում ապրանքներից,
- պասաժում-անցահարկը և տուրքը, որը գանձվում էր լեռնանցքների, գետերի և կամուրջների վրայով կատարվող առևտրից,
- անգորաժում-գանձվում էր նավահանգիստներում խարսխվող նավերից,
- տաբուլաժում-գանձվում էր շուկայում վաճառքի սեղան ունենալու համար,
- տրանզիտուգ-գանձվում էր թագավորի կողմից նրա տերիտորիայի վրայով փոխադրվող ապրանքների համար,

- Էզակցիո-գանձվում էր օտար պանդոկապետերից և գինեվաճառներից:

Բնական է, որ Կիլիկիան արքունի գանձարանը մեծ եկամուտներ էր ստանում արտաքին և տարանցիկ առևտրից, որն իր հերթին նպաստում էր Կիլիկիայի տնտեսական զարգացմանը:

Ներքին և արտաքին առևտրին զարկ տալու համար կիլիկյան իշխանավորները և թագավորները կտրեցին իրենց դրամները, որոնք գերազանցապես հայերեն գրերով արծաթե, ոսկե ու պղնձե դրամներ էին: Օրինակ՝ դրամի մի երեսին դրոշմվում էր հայոց թագավորի պատկերը, շուրջը գրված թագավորի անունը, մյուս երեսին՝ մեկ կամ երկու առյուծ՝ խաչի նշանով:

Կիլիկյան Հայաստանի նշանավոր քաղաքներից էին Սիսը, Տարսուրը, Այասը, Մսիսը, Ադանան, Անավարզան, որոնք ներառված էին արքունական տիրույթների մեջ և կոչվում էին թագավորական քաղաքներ:

Թագավորության մայրաքաղաք Սիսը, մյուսներից ավելի արագ է բարգավաճել: XII դարի վերջին քառորդի հեղինակ Ներսես Լամբրոնացին Սիսը կոչում է «իշխանանիստ լցեալ իշխանօք և ժողովրդօք»:¹¹

Արդյունաբերության և առևտրի զարգացման և ծավալման տեսակետից ավելի մեծ դեր է խաղացել Այաս քաղաքը:

Հռչակավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն 1271թ.եղել է Այասում և նկարագրել նրա աշխույժ կյանքը: Այդ նկարագրության մեջ ասված է. «... Երկիրը պարունակում է բազմաթիվ քաղաքներ և գյուղեր, և ամեն ինչ ունի առատորեն... Նրանք (այսինքն՝ հայերը) ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայաս, որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում: Որովհետև դուք պետք է իմանաք, թե բոլոր համեմունքները և մետաքսյա ու արծաթյա կերպասները և ուրիշ արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը: Ե՛վ Վենետիկի, և՛ Ջենովայի, և՛ ուրիշ երկրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները կամ գնելու՝ ինչ որ իրենք պետք ունեն: Ե՛վ որևէ անձնավորություն, վաճառական կամ ուրիշ, որ պիտի

¹¹ Հայկական ՄՄՀ ԳԱ պատմության ինստիտուտ, Հայ ժողովրդի պատմություն, III հատոր, Երևան, 1976, էջ 726

Ճամփորդե (Արևելք) Ներսերը, իր ճամփորդությունն սկսում է այս Լայաս քաղաքից»:¹²

Պետք է արձանագրել, որ հայոց պատմության հազարամյակների ճանապարհին Կիլիկյան Հայաստանը դարձավ հայ բազմատանջ ժողովրդի համար մի հանգրվան, երկրորդ հայրենիք:

Վերջացնելով թեման՝ նշեմ, որ այժմ պետք է մեծագույն ցանկությամբ սպասել այն բաղձալի օրվան, երբ երկրի դրախտավայր Կիլիկիան իր իսկական բնակչին՝ կարոտախտով տառապող հայ ժողովրդին, կընդունի մեծ սիրով:

¹² Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, պրակ 4, Երևան, 1958, էջ 259

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Թագուհի Տոռոզյան

Լ. Տոլստոյի անվան թիվ 128 հիմնական դպրոց, 8-րդ դասարան
Ուսուցիչ՝ Լիդա Խաչատրյան

Կիլիկիայի պետական կարգը թագավորության շրջանում.

Կիլիկիայի հայակական թագավորության պետական կարգը և բնույթը քննարկելիս պետք է ուշադրություն դարձնել մի շարք հանգամանքների վրա: Առաջին՝ 11-12-րդ դարերում Կիլիկիա ներգաղթած հայերը իրենց հետ բերել էին Բագրատունյաց թագավորության օրոք գոյություն ունեցող ավատատիրական հարաբերությունները: Երկրորդ՝ Բյուզանդական պետական համակարգի ազդեցությունը, քանի որ Կիլիկիան երկար դարեր եղել է բյուզանդական պրովինցիա: Երրորդ՝ Արևմտյան խաչակիրների, արաբների, սելջուկների և մոնղոլների հետ հայերի տնտեսական, քաղաքական և ռազմական կապերը որոշակի դեր են խաղացել Կիլիկիայի պետական կարգի և իրավական հարաբերությունների ձևավորման գործում:

Կիլիկիայի հայկական պետությունը թեև կազմավորվել և իր գոյությունը պահպանել է բուն Հակաստանից դուրս, սակայն հասարակական կառուցվածքով այն հայկական պետական կյանքի կազմակերպվածության առավել զարգացած ժամանակաշրջան է:

Երկիրը կառավարվում էր արքունիքի միջոցով, իսկ արքունիքի գլուխ կանգնած էր թագավորը, որը իր մեջ մարմնավորում էր երկրի գերագույն իշխանությունը: Ի տարբերություն բուն Հայաստանի Արշակունյաց և Բագրատունյաց ժամանակաշրջանի թագավորական արքունիքի և պետական կառավարման՝ Կիլիկիայում արևմտաեվրոպական և Սիրիայի ֆրանկ պետությունների օրինակով, որպես երկրի կառավարման օրգան, արքունիքում կազմակերպվել էր բարձրագույն, վերին կամ արքունի ատյան: Թեև ատյանը խորհրդատու օրգան էր, սակայն ձևով և բովանդակությամբ նման էր Արշակունյաց ժամանակաշրջանի <աշխարհաժողովներին>, որոնցում քննարկում էին երկրի համար կարևորագույն հարցեր: Բարձրագույն կամ վերին ատյանը ժամանակի ընթացքում սահմանափակում էր թագավորի իշխանությունը: Դա բացատրվում էր Կիլիկիայի թագավորության ճգնաժամով՝ թշնամի

պետությունների հարձակումներով: Սակայն ճգնաժամից դուրս գալուն պես, երբ ստեղծվում էին բարենպաստ պայմաններ, նորից ուժեղանում էր թագավորի մենիշխանությունը, իսկ վերին ատյանը հանդես էր գալիս որպես խորհրդատու օրգան: Կիլիկյան Հայաստանի թագավորի իշխանությունը երկրի ֆեոդալների նկատմամբ ավելի ուժեղ ու հեղինակավոր էր, քան նույն ժամանակաշրջանում Եվրոպական երկրներում: Կիլիկիայի թագավորները ստորագրում և իրենց անվանում էին <հայերի թագավոր>¹:

Կիլիկիայի հայկական պետության գործակալությունները. Ինչպես արդեն նշեցինք, Կիլիկիայի հայկական թագավորությունը ղեկավարվում կամ կառավարվում էր արքունիքի միջոցով, որի գլուխ կանգնած էր երկրի թագավորը:

Արքունիքը կազմված էր կենտրոնական պետական կառավարող մարմիններից՝ գործակալություններից, որոնք գլխավորում էին Կիլիկիայի անվանի և խոշոր իշխանական տների ներկայացուցիչ իշխանները²: Իշխանի՝ թագավորի հանդեպ կատարած պարտականությունները Սմբատ Սպարապետն անվանում է «ժառայություն», «հնազանդություն»³, իսկ Հ. Մանանդյանը՝ «գործ», կամ «գործակալություն»⁴: Ծառայությունն արտահայտվում էր թագավորի նկատմամբ վասալների կատարած մի շարք վարչական և զինվորական պարտականություններով, իսկ դրանք պայմանավորված էին հիմնականում թագավորից ստացված «*հայրենի ժառանգութեան դիմաց*»⁵ պարտավորությամբ: Սույն երևույթն ընդունված էր նաև ֆեոդալական Ֆրանսիայում XI-XII դարերում:

Գործակալության պարտականության հիմքում ընկած էր ֆեոդալական հողատիրության իրավունքը, հետևաբար այդ պաշտոնը հաճախ կրում էր ժառանգական բնույթ: Կիլիկիայում թագավորության հիմնադրման ժամանակաշրջանից սկսած՝ հողատիրության ժառանգականության ավանդույթը հաճախ խախտվում էր, արդեն գործակալներ և աստիճանավորներ էին նշանակվում առավել հմուտ և

¹ Г.Микаелян,История Киликийского Армянского государства, Ереван,1952,ст.251:

² Ս. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11 -12դդ,1973, էջ 73:

³ Սմբատ Սպարապետի <Դատաստանագիրք>,1265, էջ 17:

⁴ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, 1954, էջ 61:

⁵ Սմբատ Սպարապետի <Դատաստանագիրք>,1265, էջ 17:

ընդունակ ֆեոդալներից⁶, նույն կարծիքն է արտահայտում նաև Ա. Սուքիասյանը⁷:

Ս. Բոռնազյանը, նշելով այն հանգամանքը, որ Սմբատ Սպարապետը պաշտոնների բնույթի մասին չի խոսում, ենթադրում է, որ Կիլիկիայի հայկական պետությունում գործակալությունների մեծ մասն իր բովանդակությամբ և էությամբ նման է եղել Արշակունյաց և Բագրատունյաց հարըստության ժամանակաշրջանում գործող գործակալություններին: Նա նաև ավելացնում է, որ «... հարևան պետությունների ներգործության տակ մտցվել են մի շարք նոր պաշտոններ ու գործակալություններ, որոնք միայն հորջորջմամբ են տարբերվում հայկականից, իսկ բովանդակությամբ գրեթե նման են»⁸:

Թագադիր գործակալություն. Կիլիկիայում թագադիր գործակալություն իշխանական շրջանում, այսինքն՝ մինչև 1198 թվականը, գոյություն չունեի: Այս գործակալությունն ստեղծվել կամ վերականգնվել (նկատի ունենք հին ավանդույթը) է թագավորության հիմնադրումից հետո: Առաջին անգամ կիլիկյան հայկական պետությունում թագադիր գործակալությունն ստեղծել է Կոստանդին թագավորահայրը Հեթումյան հարստության հիմնադրման ժամանակ⁹:

Այս գործակալի պարտականությունը թագադրության արարողության ժամանակ թագավորի գլխին թագ դնելն ու արքայական պատիվը կապելն էր, և իբրև արարողապետ՝ թագավորի հանդիսությանց հետևողն էր¹⁰: Բացի այդ թագադիր իշխանը հիշվում է արքայի տոնական զգեստը փոխելիս:

Սպարապետություն. Կիլիկիայում սպարապետը կամ գունդստաբլն էր այս գործակալության գլխավոր պաշտոնյան: Սպարապետը կամ գունդստաբլը թագավորական բանակի գլխավոր հրամանատարն է թե՛ խաղաղ և թե՛ պատերազմի ժամանակ: Այս գործակալությունը թագավորը վստահում էր արքունական տան առավել մոտ կանգնած ֆեոդալներից մեկին, այսինքն՝ այս պաշտոնը ժառանգական չէր:

⁶ Ս. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11 -12րդ, 1973, էջ 59:

⁷ Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, 1978, էջ 162:

⁸ Ս. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11 -12րդ, 1973, էջ 60:

⁹ Ղևոնդ Ալիշան, Սիսուան, 1885, էջ 475:

¹⁰ Նույն տեղում էջ 475:

Գունդատաբլի հեղինակությունը շատ բարձր է եղել երկրում և այդ էր հիմնական պատճառը, որ երկրում թագավոր չլինելու դեպքում նրանք էին դառնում թագաժառանգի ինամակալները: Նրան վերապահված էր բացառիկ իրավունք, որը չունեին մյուս բարոնները: Միայն Գունդատաբլն իրավունք ուներ թագավորի ներկայությամբ նրանից շուտ ձի հեծնել¹¹:

Սպարապետության գործակալությունից բացի՝ Կիլիկիայի պետական բանակում հիշատակվում է նաև զինվորական մեկ այլ հրամանատարի՝ սպասալարի պաշտոնի մասին¹²:

Թագավորական պետական բանակում սպասալար էր անվանվում ողջ հեծելագործի հրամանատարը, իսկ սպարապետը կամ գունդատաբլըը գլխավորում էր ամբողջ բանակը¹³:

Պայլություն. Այս գործակալությունը եղել է ոչ մշտական, այն ստեղծվել, գործել և վերացվել է հենց այն ժամանակ, երբ ստեղծվել ու վերացել են նրան նպաստող պայմանները: Պայլություն գործակալությունը կոչվել է նաև մեկ այլ՝ «ինամակալություն» բառով:

Նրա պարտականությունը եղել է արքունիքի վերակացությունը, թագավորական ամրությունների և բերդերի պահպանությունը և արքունիքի գանձերի ու կալվածքների վերահսկողությունը:

Ինամակալության գործակալը, այլ կերպ ասած՝ պայլը, կատարել է իր պաշտոնը թագավորի անչափահասության ժամանակ: Շատ հաճախ այս պաշտոնը վստահվում էր երկրի ֆեոդալական խոշորագույն տների ներկայացուցիչներին, ինչպես օրինակ՝ սպարապետին, մարշալին, սենեշալին...

Արքունի քարտուղարություն. Այս գործակալությունը հայտնի է նաև «ջանցլեր»¹⁴ անվամբ: Այն, ըստ Ղևոնդ Ալիշանի, ծագում է լատինական Cancellarius, Chancellor բառից, որը հայտնի է նաև «Ատենադպիր» կամ «Քարտուղար արքունի» անվամբ¹⁵: Ս. Բոռնագյանի կարծիքով «ատենադպիր տիտղոսն ու պաշտոնը գոյություն ուներ նաև Հին Հայաստանում, սակայն Կիլիկյան թագավորությունում գործող ջանցլերի պաշտոնը նույն բովանդակությունը չուներ, թեև որոշ կողմերով

¹¹ Ղևոնդ Ալիշան, Միսուան, 1885, էջ 485:

¹² Ս. Բոռնագյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11 -12րդ, 1973, էջ 64:

¹³ Հայ ժող պատմություն, 1976, էջ 742:

¹⁴ Ղևոնդ Ալիշան, Միսուան, 1885, էջ 481:

¹⁵ Նույն տեղում, 485:

նման էր բուն Հայաստանի ատենադպիր արքունի քարտուղարությանը»: «Հետրաքար,-շարունակում է հեղինակը,-կարելի է հաստատ ասել, որ ջանքեր տերմինը և նրա բովանդակությունը վերցվել է ֆրանկ պետությունից»¹⁶:

Սույն պաշտոնը հանձնվում էր լեզուներ իմացող և գիտելիքներով հարուստ հոգևորականների: Ա. Սուքիասյանի կարծիքով «Կանցլերի պաշտոնում բարձր հոգևորականության ներկայացուցիչ նշանակելը կրկնակի նպատակ էր հետապնդվում. առաջին, հոգևորականության միջոցով ավելի բարձրացնել թագավորի հեղինակությունը բարոնների միջավայրում՝ երկրի ներսում, օտարերկրյա արքունիքի շրջանում և, երկրորդ, կանխել այդ պաշտոնի վերածումը ժառանգական մենաշնորհի»¹⁷:

Կանցլերը վարում էր նաև արտաքին գործերը և նրա մոտ էր պահվում արքունի կնիքը¹⁸: Նրա ղեկավարությամբ էին կազմվում թագավորի հրամանները, որոնք արքայից բացի, ստորագրում էր կանցլերը: Նրան էին ենթարկվում մեծ թվով գրագիրներ և թարգմանիչներ, որոնք ոչ միայն սուկ թարգմանիչներ էին, այլ նաև դիվանագետներ, որոնք բանակցություններ էին վարում օտար պետությունների ներկայացուցիչների հետ:

Մեղանապետություն. Այս գործակալությունը վարում էր «սենեշալը» կամ «սենեսկալը», հիշատակվում է նաև «սենեսչալ» անվամբ¹⁹: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ այս բառը ծագում է ֆրանսիական Siniscaleus, Senechal բառից, որը թարգմանվում է «սեղանադիր»: Արքունիքում սենեսկալը մեծ հեղինակություն էր վայելում. «նա թագավորի խորհրդականներից մեկն էր, նրա մաժորդումը (պալատի կառավարիչը) և վստահելի անձը»²⁰: Սենեսկալի ձեռքին է կենտրոնանում վերահսկողությունը արքունիքի գանձերի նկատմամբ, և նա սկսում է վարել երկրի տնտեսությունը:

Մաքսապետություն. Կիլիկիայի ազդեցիկ գործակալություններից էր նաև մաքսապետությունը, որը ղեկավարում էր երկրի ֆինանսական

¹⁶ Ս. Բոռնագյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11 -12րդ,1973, էջ 70:

¹⁷ Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, 1978, էջ 166:

¹⁸ Ղևոնդ Ալիշան, Սիսուան, 1885, էջ 485:

¹⁹ Ղևոնդ Ալիշան, Սիսուան, 1885, էջ 485:

²⁰ Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, 1978, էջ 167:

համակարգը: Երկրում արհեստագործությունից, առևտրից, հարկերից, մաքսերից հավաքված հսկայական գումարները ուղղորդվում էին մաքսապետություն գործակալություն: Մաքսերից ստացվող եկամուտը այն գլխավոր աղբյուրներից մեկն էր, որոնցով պահվում էր պետությունը և ապահովվում էին ռազմական ծախսերը:

Թագավորության ինքնակառավարման մարմինները. Կիլիկիայում գոյություն ունեին գավառներ ու քաղաքներ, որոնց կառավարիչը նշանակվում էր անձամբ թագավորի կողմից²¹, իսկ մնացյալ տիրույթները, որոնք գտնվում էին Բարոնների իշխանության տակ, կառավարվում էին վերջիններիս կողմից, այսինքն՝ նրանք այդ տիրույթներում և՛ կառավարիչներ, և՛ սեփականատերեր էին: Ա. Սուբիասյանի կարծիքով, Կիլիկիայի յուրաքանչյուր գավառ կազմված էր բազմաթիվ գյուղական համայնքներից, որոնք միաժամանակ եկեղեցական ծխեր էին, իսկ եկեղեցական ծուխը և համայնքը ձուլվում էին մեկ ինքնակառավարվող միավորի մեջ, ինչպես այդ գոյություն ունեցող միջնադարյան անգլիական գյուղում²²:

Տեղական կառավարման միավոր էին հանդիսանում նաև քաղաքները: Ա. Բոռնազյանը նշում է, որ «Կիլիկիայի քաղաքները մտնում էին թագավորական դոմենի մեջ և անմիջականորեն ենթարկվում էին արքունիքին՝ կառավարման կենտրոնական ապարատին»²³: Քաղաքներում թագավորի կողմից նշանակված պաշտոնակատար ներկայացուցիչները դրանք կապիտաններն էին: Ինչպես արդեն նշվել է, կապիտանները նավահանգիստներում ունեցել են վարչական և ոստիկանական լիազորություններ:

Քաղաքներում գոյություն ունեցող պաշտոններից էր նաև «ձեռներեցը»²⁴ և «դուկը»: Համապատասխան հոդվածում կարդում ենք, որ վերոնշյալ անձինք հսկում էին քաղաքների շուկաներում չափի ու կշռի կարգավորումները, գանձում էին մաքսեր ու տուրքեր, ինչպես նաև կամուրջների, ճանապարհների ու քաղաքի գլխավոր մուտքերում՝ կապալը:

²¹ Ղևոնդ Ալիշան, Սիսուան, 1885, էջ 370:

²² Ա. Սուբիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, 1978, էջ 169:

²³ Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11 - 12դդ, 1973, էջ 83:

²⁴ Թուրթ առ Լևոն, էջ 213:

Ղեկավար մարմիններ գոյություն ունեին նաև գյուղերում, որոնք նույնպես պատկանում էին պարոնների: Սմբատ Սպարապետը նշում է, եթե ինչ-որ ֆեոդալ գյուղ է կառուցում իր հողի վրա, ապա այդ գյուղն իրենն է, իսկ եթե ավերված գյուղը լցվի մարդկանցով և այն շենանա, ապա այդ գյուղը պատկանում է նախկին տիրոջը, որովհետև այդ հողերի տերն ինքն է²⁵: Այսպիսով՝ գյուղի գլխավոր ղեկավար մարմինը հանդիսանում է ֆեոդալը, սակայն գյուղերում գոյություն ունեին համայնքներ, որոնք ունեին իրենց ղեկավար մարմինները, դա ավագների խորհուրդն էր, որը նրա անդամներից ավագագույնի գլխավորությամբ կազմակերպում էր գյուղացիների վասալական պարտականությունների իրականացումը:

Բանակը. Կիլիկիայի հայկական թագավորությունը գրեթե մշտապես եղել է արտաքին թշնամիների սպառնալիքների ներքո, ուստի նրա ապահովության խիստ անհրաժեշտ գործոններից մեկը կանոնավոր, զորեղ բանակ ստեղծելն էր: Կարելի է ասել, որ Կիլիկիայում եղել է մշտական և ուժեղ պետական բանակ: Մշտական զինված ուժեր են պահել նաև Կիլիկիայի հայ իշխանները, հատկապես՝ սահմանամերձ շրջանների բերդատերերն ու սահմանապահ իշխանները²⁶:

Երկրի բոլոր զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը թագավորն էր, իսկ զորքերի գլխավոր հրամանատարը՝ սպարապետը (գունդստար): Բանակի սպառազինումն ու մատակարարումն իրականացնում էր մարաջախտը (մարշալը), որը սպարապետի օգնականն էր: Մյուս օգնականը սպասալարն էր՝ հեծելագործի հրամանատարը: Բանակի զինվորական մյուս աստիճանների մասին մեզ տեղեկություն է հաղորդում Կիլիկիայում կիրառվող «Զինվորաց օրենսգիրքը», որը թարգմանել է Ն. Լամբրոնացին:

Դատական համակարգը. Կիլիկիան, լինելով ֆեոդալական մանր իշխանությունների երկիր, հիմնականում կառավարվում էր պետական վարչական օրգաններով և տեղական՝ գավառական դատարաններով²⁷:

Երկրում զուգահեռ գոյություն ունեին 2 կարգի՝ բարձրագույն (կենտրոնական) և ստորին (տեղական) դատական ատյաններ:

²⁵ Սմբատ Սպարապետի <Դատաստանագիրք>, 1265 թ., էջ 72:

²⁶ Ս. Բոռնագյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11 -12րդ, 1973, էջ 95:

²⁷ Ա.Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, 1978, էջ 176:

Բարձրագույն դատական ատյաններն էին՝ պետական, եկեղեցական, հայերնակալվածքային ատյանները: Իսկ ստորին ատյաններն էին՝ տեղական, համայնքային ատյանները²⁸:

Դատարանները, որպես կանոն, կոլեգիալ էին՝ կազմված նախագահից և երկու կամ ավելի ատենակալներից: Գրեթե բոլոր աշխարհիկ դատարաններում մասնակցում էին երդվյալ ատենակալներ: Դատարաններում գոյություն ունեին նաև նոմիկուսներ կամ նոտարներ, որոնք կազմում էին դատական արձանագրությունները:

Հարկ է նշել, որ վերը նշված դատարաններից բացի՝ Կիլիկիայում գոյություն են ունեցել զինվորական դատարաններ: Այդ է վկայում Ներսես Լամբրոնացու կողմից թարգմանած և բանակում կիրառված «Զինվորաց օրենսգիրքը»: Զինվորական դատարանը ղեկավարում էր սպարապետը, ինչպես օրենսգիրքն է ասում «կոմս կամ տրիբուն»²⁹-ը: Մեր օրերում, երբեմն, տրիբունալ ասելով, նկատի ունենք միայն զինվորական դատարանը:

Այսպիսով նշենք, որ Կիլիկիայի պետության իրավական համակարգը բավականին բարդ էր, ինչը նույնպես վկայում է պետության կազմակերպվածության մակարդակի զարգացած լինելու մասին:

Կիլիկիայում հայկական պետական համակարգի պաշտոնների՝ գործակալությունների անունները մասամբ ընդօրինակված են եվրոպական երկրների պաշտոններից, սակայն բովանդակությամբ այդ գործակալությունները նման են Բագրատունյաց հարստության պետական համակարգին, այսինքն՝ սրանք նույնպես նման չեն եվրոպական երկրների պետական համակարգում նույն անվանումներն ունեցող գործակալություններին ու պաշտոններին, այլ տիպիկ հայկական են, որոնց նմանը չի հանդիպում ուրիշ երկրների պետական համակարգերում:

Բանակը նույնպես հայացված է, և որ կարևոր է, Կիլիկիայի հայկական պետությունն ունեցել է ուժեղ նավատորմ, բայց դրանով կատարել է ոչ թե հարձակողական արշավանքներ, այլ պաշտպանել է պետության սահմանները ծովից և առևտրական նավերը ծովահենությունից:

²⁸ Նույն տեղում, էջ 179-180:

²⁹ Ս. Բռոնագյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11 -12րդ, 1973, էջ 15:

Կիլիկիայի իրավական տերմինները, դատավարության ձևը, վերջապես, կիրառված օրենքները հիմնականում հայացվել և հարմարեցվել են հայկական ավանդույթին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Կիլիկիայի հայկական պետության պետական համակարգը, բանակը, իրավական դաշտը բավականին բարդ ու համակարգված կառույցներ են, ինչն ինքնին վկայում է Կիլիկիայի՝ կազմակերպված ու զարգացած հայկական պետություն լինելու մասին:

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Լիլիթ Ներսեսյան

Հովհ. Թումանյանի անվան թիվ 32 հիմնական դպրոց, 9-րդ
դասարան

Ուսուցիչ՝ Լուսինե Հարությունյան

Հայերը Կիլիկիայում բնակություն են հաստատել դեռևս հնագույն ժամանակներում: Ժամանակին այն մտել է Տիգրան Մեծի տերության մեջ: IV դարում Իսուսի ծովածոցը կոչվել է <<Հայկական ծոց>>: Հովհան Ոսկեբերանը V դարի սկզբին վկայում է Կիլիկիայում հայկական հոծ բնակչության մասին, որն ուներ իր իշխաններն ու հոգևոր հաստատությունները: Իսկ X դարում հայության թիվն այնքան էր աճել Կիլիկիայում, որ ստեղծվեցին նոր եպիսկոպոսություններ: Հայության ու հայկական իշխանությունների թիվը Կիլիկիայում և մերձակայքում հատկապես աճեց XI դարում Վասպուրականի, Անիի և Կարսի թագավորությունների անկումից հետո...

Կիլիկիան Հայաստանում մշտապես ձգտում էին հավատարիմ մնալ հայկական ավանդույթներին: Դա վերաբերվում է նաև պետական կառավարման ոլորտին: Հասկանալիորեն, Կիլիկիայում պետական կառավարման և հասարակական կարգը պետք է կրեին նաև բյուզանդական ու արևմտավրոպական (մանավանդ խաչակիրների) ազդեցությունը, ինչ և արտահայտվում է նաև կառավարման մարմինների անվանումներում¹:

Զարգացման սկզբնական՝ Մեծ իշխանապետության ժամանակաշրջանում (1080-1198), երբ երկրի գերագույն իշխանությունը մարմնավորում էր փաստորեն թագավորամեծար Հայոց իշխանաց իշխանը (Պարոնաց պարոն) կամ Մեծ իշխանը (Մեծ պարոն), հիմնականում ազատագրվեցին Կիլիկիայի հայաբնակ հողերը, հաղթահարվեց երկրի մասնատվածությունը, ձևավորվեցին կառավարման պետական մարմինները: Հայոց արքունիքը, նրանց առընթեր գերագույն աստանը (դիվան), բարձրագույն վարչական մարմիններն ու գործակալությունները ավարտուն ձևավորում և օրենսդրական հաստատում ստացան թագավորական միապետության

¹ Մովսիսյան Ա., «գիտահանրամատչելի պատկերագիրը», Երևան, 2011 թ., էջ 58

Ժամանակաշրջանում(1198-1375): Հայոց թագավորը, որպես պետության գլուխ և երկրի գերագույն տեր, օժտված է եղել բացառիկ իրավունքներով ու առանձնաշնորհումներով: Թագավորն ինքնակալորեն ղեկավարել է արտաքին հարաբերությունները, գլխավորել բանակը, պատերազմ հայտարարել, հաշտություն կնքել, դեսպանություններ ընդունել և ուղարկել, օրենքներ հրապարակել, դրամ հատել, հիմնել քաղաքներ, բերդեր, մաքսատուրք վերցնել ներմուծվող ապրանքներից, լուծել համապետական այլ կարևորագույն հարցեր:

Երկրի կառավարման կենտրոնի՝ արքունիքի, դարպասի կամ պալատի մեջ մտել են Վերին կամ Գերագույն ատյանը (դիվանը) և կենտրոնական կառավարման մարմինները՝ գործակալությունները: Վերին կամ Գերագույն ատյանը եղել է օրենսդրական խորհրդակցական մարմին, որի մեջ մտել են թագավորի վասալները՝ բերդատեր պարոնները:

Ի տարբերություն Մեծ Հայքում գոյություն ունեցող կարգի (գործակալությունները ժառանգաբար պատկանում էին որոշակի նախարարական կամ իշխանական տոհմերի), Կիլիկիան Հայաստանում գործակալությունները թագավորը հանձնարարել է տվյալ գործը վարելու ունակություն և արժանիքներ ունեցող իշխաններին, երբեմն՝ նույնիսկ իշխանական ծագում չունեցող մարդկանց: Պաշտոնը հաճախ կրել է ժառանգական բնույթ²:

Հայոց թագուհին մասնակցում էր Արքունի խորհրդի նիստերին: Նա երկրի կյանքում ուներ քաղաքական (արքայի բացակայության կամ մահվան դեպքերում) և, հատկապես մշակութային ու բարեսիրական մեծ դերակատարում: Նրա նախաձեռնությամբ ու միջոցներով հիմնվում էին եկեղեցիներ, կրթամշակութային հաստատություններ, հիվանդանոցներ և այլն:

Խնամակալության (պալլություն) գործակալությունը վարում էր պալլը (համեմատած Մեծ Հայքի մարդպետություն գործակալությանը), որը համարվում էր թագավորի առաջին խորհրդականը և գահաժառանգի դաստիարակը: Թագավորի անչափահասության դեպքում պալլն իրականացնում էր ամբողջ երկրի կառավարումը: Թագադրության գործակալությունը (հմմտ. Մեծ Հայքի թագադիր ասպետության

² Հայկական սովետական հանրագիտարան, V հատոր, Երևան, 1979 թ., Խմբագրական կոլեգիա Վ. Հ. Համբարձումյան, Մ. Վ. Արզումանյան, Հ. Տ. Ադոնց, Հ. Մ. Այվազյան և այլք:

գործակալությունը) թագադրում էր արքային, կապում սուրն ու արքայական նշանները, հսկում արքունի արարողությունները, նաև իշխանների տեղերը՝ նվիրապետական կարգում:

Ռազմական ուժերի կազմակերպումն ու ղեկավարումը հանձնարարված էր երեք գործակալության՝ սպարապետության, սպասալարության և մարաջախտության: Սպարապետը (գունդստաբլ) բանակի ընդհանուր հրամանատարն էր, սպասալարը՝ հեծելագործի հրամանատարը, իսկ մարաջախտը պատասխանատու էր սպառազինման և պարենավորման համար:

Ատենադպրության գործակալը՝ ջանցերը, թագավորի անունից վարում էր արտաքին գործերն ու դիվանագիտական հարաբերությունները, նրա հետ կազմում և իր մոտ պահվող պետական կնիքով վավերացնում հրովարտակները, շնորհագրերը, գրագրությունները: Ջանցերին ենթակա դպիր-թարգմանները դեսպանական և դիվանագիտական այլ ծառայությունների էին ուղարկվում օտար երկրներում: Ջանցերի գործակալությունը սովորաբար հանձնարարվում էր Սիս մայրաքաղաքի ընտրովի արքեպիսկոպոսին:

Սեղանապետության գործակալը (սենեսկալը կամ սենեսչալ) տնօրինում էր արքունիքի եկամուտներն ու ծախսերը: Նրա օգնականը սենեսկապետն էր (Ջամբոլայ), որը հսկում էր պետական դրոշը, արքայական հանդերձարանը, գանձերը, կազմակերպում պալատական հանդեսները: Սենեսկապետի օգնականը մատովակն (բողլեր) էր, որը պատասխանատու էր պալատական ճաշկերույթների և խնջույքների կազմակերպման համար:

Տենտեսական ոլուտի կարևորագույն գործակալություն էր մաքսապետությունը: Նա տնօրինում էր պետական եկամուտները, ներքին և արտաքին առևտրական հարաբերությունները:

Նրան են ենթարկվել քաղաքների, նավահանգիստների ու մաքսատների վերակացուները՝ կապիտանները կամ մինապանները, և ներքին հարկագանձումների, շուկաների, չափ ու կշիռների պահպանման հետ կապված մանր պաշտոնյաները, դուկերը, ձեռներեցները, մուխթասիբները, <<հարկավոր տանուտերները>>: Պետական փոստի գործակալությունը ղեկավարել է սուրհանդակապետը՝ <<ավագ չայուշը>>: Սմբատ սպարապետի դատաստանագրքի <<Վասն աստիճանավորած թագավորական պալատին>> հոդվածում թվարկված

են նաև արքունի պալատում զանազան ծառայություն կատարող մանր պաշտոններ՝ թագապահներ, արքայի թագը դնողները, վահանակիրներ, դրոշակիրներ, աղեղնավորներ, ձին թամբողներ, տերունական խաչը բռնողներ, դագաղը տանողներ, պալատի պահապաններ, զանգատներ լսողներ, ասացողներ ու երգիչներ, <<հացապաններ>>:

Կիլիկյան Հայաստանն ուներ բավականին զարգացած դատական համակարգ: Արքունի գերագույն ատյանը՝ Վերին կամ ՄԵՏ դարպասը թագավորի (կամ նրա հանձնարարությամբ՝ <<Մեծ պարունի>> կամ <<Պարոնաց պարոնի>>) նախագահությամբ քննում էր համապետական նշանակության հարցերը: Այն գերակա էր մյուս բոլոր դատարանների նկատմամբ և կարող էր հաստատել կամ բեկանել զանգատի ենթակա վճիռները:

Արքունի գերագույն ատյանին հաջորդում էր Սսի արքեպիսկոպոսական ատյանը, որը քննում էր բարձրագույն հոգևորականների, ինչպես նաև օտարերկրացիների վեճերն ու կատարած հանցագործությունները:

Պետական բարձրակարգ դատարան էր նաև պայլի ատյանը, որը քննում էր հայերի և օտարերկրացիների վեճերն ու թույլ տված խախտումները:

Դատական համակարգի 2-րդ աստիճանը Ստորին կամ Փոքր ատյաններն էին, որոնք կոչվում էին <<Բուրջես>> և քննում էին քաղաքային բնակիչների (բուրգերության) գործերը:

Արտաքին թշնամիներից երկիրը պաշտպանելու և ներսում իր դասակարգային տիրապետությունը ամրապնդելու համար պետությունը ստեղծել էր մշտական, կանոնավոր ու մարտունակ բանակ: Պարբերաբար զբաղված լինելով շրջակա թշնամի պետությունների դեմ պատերազմներով՝ Կիլիկյան Հայաստանը շարունակ կատարելագործել է ռազմական տեխնիկան, կառուցել կամ նորոգել հարյուրավոր բերդեր ու ամրոցներ (Բաղրաս, Բարձրբերդ, Բերդուս, Գաստիմ, Գուզլակ, Դարբասակ, Լամբրոն, Կապան, Կոռիկոս, Համուս, Հարգա, Հարուն, Վահկա և այլն) ստեղծել ռազմական նավատորմի, զենքի կոչել 80-100հզ. մարտիկ: Զինված ուժերը հիմնականում կազմվել են արքունական (պետական) բանակից (12հզ. հեծյալ, 50հզ. հետևակային) և վասալ իշխանների գորամասերից: Իշխանական գորամասերը՝ իշխանների գլխավորությամբ, արքունի բանակին միացել են թագավորի կամ սպարապետի հրամանով, պատերազմների, կարևոր գորահանդեսների

ու գորախաղերի ժամանակ: Նման դեպքերում արքունի բանակին են միացել նաև թագավորի վասալ խաչակիր ասպետների զորամասերը: Արքունի մշտական բանակը խաղաղ ժամանակ տեղավորվել է թագավորական զորակայաններում՝ քաղաքներում, բերդերում, ամրոցներում, կապաններում, կատարել «սահմանապահ» կամ «կողմնապահ» ծառայություն: Բանակի հեծելազորը համալրել են «ազատները»՝ խոշոր և մանր ազնվականները, հետևակը՝ «անազատները»՝ քաղաքի ռազմիկներն ու գյուղի շինականները: Ծառայության համար զինվորները ստացել են ռոճիկ (հեծյալը՝ 12, հետևակայինը՝ 3 ոսկեդրամ): Ձիավոր ազնվականները, ռոճիկից բացի, ստացել են պարգևական կալվածներ և ռազմական ավարի որոշ մասը: Ստորաբաժանումները կատարվել են ըստ զինվածության ու ռազմական մասնագիտացման: Սպասարկու անձնակազմի մեջ են մտել զինվորական բժիշկները, գումակավորները, մատակարարները: Ազատագունդ հեծյալները զինվել և զրահավորվել են խաչակիր ասպետների նման: Նրանք հագել են կապույտ համազգեստ՝ ոսկեղեն խաչի և առյուծի նշանով: Բաց ճակատամարտերում վճռական դեր են խաղացել կանոնավոր շարքերով գրոհող ծանրազեն հեծելակները, որոնք ամբողջովին ծածկվել են մետաղյա ծանր զրահով³: Բանակում մտցվել է կարգավարժ ռազմական ուսուցում ու դաստիարակություն, սահմանվել են զինվորական աստիճաններ ու կոչումներ: Ասպետության մասին ռազմական հրահանգի համաձայն՝ «ձիավոր ասպետի» աստիճան ստանալու համար չափահաս ազնվականները հրապարակայնորեն քննության են ենթարկվել զինախաղերից ու ձիավարությունից:

Նշանավոր իրադարձություններից՝ գահաժառանգի ծննդյան, մկրտության, թագադրման հաղթահանդեսների պալատական կամ կրոնական մեծ տոնախմբությունների ժամանակ աչքի ընկնողները ձեռնադրվել են «ձիավոր ասպետ» : Առաջին աստիճանին ասպետների կոչումը սովորաբար շնորհվել է սպարապետին, մարաջախտին, իշխաններին, երկրորդ աստիճանը՝ մանր ազնվականներին: XII դ. վերջին Ներսես Լամբրոնացին թարգմանեց Բյուզանդիայում գործող «զինվորական օրենքները» (57 հոդված), որոնք գործադրվել են Հայոց բանակում: Դա զինվորական ծառայությունը կարգավորող կանոնադրություն էր, որը սահմանում էր ծառայության ժամետը,

³ Հայկական սովետական հանրագիտարան, V հատոր, Երևան, 1979 թ.:

հրամանատարական կազմը, գորամիավորումների տեսակները, դասավորումը, զինվորական ծառայողների պարտականություններն ու իրավունքները, օրինախախտումների համար պատիժները: Հեծելագործին ազնվացեղ մարտական ձիեր մատակարարելու համար պետական հոգատարության է արժանացել ձիաբուծությունը: Ձիերի ու ջորիների արտահանումը սահմանափակելու համար պետությունը սահմանել է բարձր մաքս⁴:

Հայոց արքունիքը երաշխավորել է օտարերկրացիների ունեցվածքի ապահովությունը և հատուցել նրանց կրած վնասը Կիլիկիայում: Երկրի գլխավոր նավահանգիստներում հիմնված մաքսատներից, տոնավաճառներից, շուկաներից դրամով գանձվող բազմազան մաքսերը ու տուրքերը մտել են արքունի եկամտի մեջ: Միայն Այաս նավահանգստային շահաստանից արքունիքի օգտին գանձվող տարեկան մաքսերն ու տուրքերը կազմել են մի քանի մլն. ֆրանկ: Այդ շահագրգռությամբ Հայոց արքունիքը բարեկարգել է քաղաքները, նավակայանները, շուկաները, բաշտները, ճանապարհները, կամուրջները, առևտրական նավատորմիդը, հատել ոսկյա, արծաթյա, պղնձյա դրամներ, որոնք շրջանառության մեջ են դրվել նաև միջազգային շուկաներում: Լևոն Բ Մեծի հատած ոսկյա դրամը <<Թագավորականը>> (7,1գ.) միջազգային շուկաներում ավելի մեծ արժեք է ունեցել քան վենետիկյան հռչակված դուկատը:

Կիլիկյան Հայաստանի տնտեսական բացառիկ վերելքի արտահայտություններից մեկը հայոց դրամաշրջանառության ոսկեդարն էր. Կիլիկիայի դրամաշրջանառությունը գերազանցում էր անգամ Տիգրան Մեծի ժամանակվա հայկական դրամաշրջանառությանը: Կիլիկիայի հայկական դրամը՝ <<Թագավորը>> (<<Թագավորական>> բառի կրճատմամբ) դարձավ միջազգային կարևոր արտարժույթ: Դրամների վրա Կիլիկիո արքաները ներկայանում էին <<Թագավոր հայոց>> տիտղոսով:

⁴Հայկական սովետական հանրագիտարան, V հատոր, Երևան, 1979 թ.:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐԸ

Իրինա Մաշուրյան

Երևանի Ալ. Բլոկի անվան հ.122 հիմնական

դպրոց,

9-րդ դասարան

Ուսուցիչ՝ Հայկանուշ

Ղևոնդյան

Հայոց բազմադարյան պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Կիլիկյան Հայաստանը, որը, դուրս լինելով Հայոց լեռնաշխարհի սահմաններից, 11-րդ դարի վերջին դարձավ հայոց պետականության վերականգնման հիմնական օջախը: Կիլիկիայի հայկական պետությունը ծնունդ առավ միջազգային բարդ իրավիճակում, Բյուզանդիայի, Մելջուկների ու Արաբական էմիրությունների, Անտիոքի խաչակիրների միջև մղվող կատաղի կռիվների ժամանակ: Մարտերում լինելով վճռական, իսկ դիվանագիտության մեջ խոհեմ՝ հայ իշխանները կարողացան խոշոր պետությունների հակասություններից օգտվելով բուն երկրի սահմաններից դուրս ստեղծել ազգային պետություն: Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական ու հոգևոր մշակութային արժեքները վկայում են, որ Կիլիկիան ու նրա պատմությունը հնագույն ժամանակներից սերտորեն կապված են եղել Հայկական լեռնաշխարհի հետ¹: Կիլիկիայի հայկական պետությունը ավելի քան երեք հարյուր տարվա ընթացքում մեր պատմությանն ավելացրեց փայլուն էջեր, որի կարևորությունը միայն հայ ժողովրդով չի սահմանափակվում: Կիլիկյան հայկական թագավորությունը իր նավահանգիստների շնորհիվ տնտեսական վերելք ապրելով հանդերձ կարողացավ շփման մեջ մտնել Վենետիկի, Ջենովայի, Ֆրանսիայի, Մերձավոր Արևելքի ու Առաջավոր Ասիայի երկրների հետ: Կիլիկիայի տնտեսական բարգավաճումը, խոշոր քաղաքների առկայությունը, երկրի աշխարհագրական դիրքը՝ ծովային և ցամաքային ճանապարհներով այլ երկրների հետ հաստատված կապերը նպաստում էին ներքին և

¹ Տերյան Ա., Միտանի Հայոց հնագույն պետություն, Երևան, 2006, էջ 122:

արտաքին առևտրի զարգացմանը²: Կարևոր գործոն էր նաև կենտրոնացված պետության առկայությունը: Դեռևս Լևոն Բ-ի ժամանակ մեծ ուշադրություն դարձվեց երկրի տնտեսական կյանքի, հատկապես առևտրի զարգացման վրա: Կարգի բերվեցին նավահանգիստները, կամուրջները, առևտրական և ռազմական ճանապարհները, կառուցվեց առևտրական նավատորմիդ: Հատվեցին ոսկյա և արծաթյա դրամներ:

Ազգային դրամը ցանկացած երկրի պետականության խորհրդանիշն է և հարատևության երաշխավորը: Դրամների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս տեղեկություններ ստանալ ազգերի ռազմական, մշակութային ու տնտեսական վիճակի, հարևան պետությունների միջև առկա հարաբերությունների մասին: Կիլիկիայի հայկական պետության դրամները կարևոր աղբյուր են հանդիսանում Կիլիկիայի պատմության ուսումնասիրման համար: Կիլիկիա գաղթած հայ ժողովուրդը հայրենիքից իր հետ բերել էր բազմադարյան հարուստ մշակույթ և ազդվելով բնիկ և հարևան ժողովուրդների մշակույթից և նրանցից վերցնելով որոշ յուրահատկություններ, ստեղծեց մի յուրատիպ մշակույթ, որի արդյունքներից են Կիլիկիայի հայկական դրամները: Դրանցում ակնհայտ է հայկական մշակույթի ներկայությունը և հայի խոր հավատը՝ քրիստոնեության հանդեպ, բայց միևնույն ժամանակ առկա է նաև եվրոպական մշակույթի ազդեցությունը: Կիլիկիայի հայկական պետությունն իր ծագման ու զարգացման ողջ ընթացքում հայերեն գրերով դրամներ է թողարկել, որոնք լայն տարածում են ունեցել: Դրանք հայտնաբերվել են առանձին օրինակներով և ամբողջական գանձերի ձևով, ըստ որում ոչ միայն բուն Կիլիկիայում, այլև նրա սահմաններից դուրս, որովհետև սպասարկել են ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկաների պահանջները:

Կիլիկյան Հայաստանում դրամներ են թողարկվել թե իշխանապետության (1080-1198թթ.), և թե թագավորության շրջաններում (1198-1375թթ): Իշխանապետության շրջանների դրամները առանձին են եղել և տարբերվել են թագավորության շրջանի դրամներից: Դրանք եղել են միայն պղնձից, մեզ հասել են մաշված և վատ վիճակում: Դրանց վրա բացակայում է տիրակալի պատկերը: Բոլոր մետաղադրամների վրա կան

² ՄՍՄ Գիտությունների Ակադեմիա, Հայ ժողովրդի պատմություն, հատոր 3, Երևան 1970, էջ 729

քրիստոնեական խորհրդանշաններ, իսկ դարձերեսին՝ ամբոցների պատկերներ, ռազմական խորհրդանիշներ:

Տարածաշրջանում հայկական իշխանության առաջին դրամները հանդիսանում են Փիլարտոս Վարաժնունու հունաստառ դրամները³: Մեծ Հայքից դուրս գոյացած հայկական իշխանություններից բոլոր փորձություններին դիմագրավեց Ռուբինյան իշխանությունը, որը կարողացավ իր գոյությունը պահպանել՝ երկարատև ու ծանր պայքար մղելով բյուզանդացիների, սելջուկների և խաչակիրների դեմ: Իշխանության հիմնդիր համարվում է Ռուբենը: Ենթադրում են, որ նա եղել է Գագիկ Բ-ի թիկնապահ իշխաններից⁴:

Կիլիկիայի առաջին հայկական դրամները թողարկվել են Ռուբեն Ա-ի անունով, պղնձից են և ունեն 2-2.40 գրամ կշիռ: Դրանց երկու երեսներն էլ միանման են, որտեղ պատկերված է հավասարաթև խաչ (Նկ.1): Դիմերեսին խաչի շուրջ հայերենով գրված է <<ռաիԲեն>> բառը, որը Ռուբեն իշխանի անունն է: Դարձերեսին գրված է <<ծառա այ>>, որը նշանակում է <<ծառա Աստծո>>⁵: Դրամի վրա դրոշմած հավասարաթև խաչի պատկերը հանդիպում ենք Կիլիկիայի իշխանների և թագավորների գրեթե բոլոր դրամների վրա: Դրամագետները հավասարաթև խաչը Լատինական են անվանում և գտնում են, որ դա ընդօրինակված է եվրոպական դրամներից: Հայկական մշակույթի համար խաչը մեծ նշանակություն է ունեցել: Հայաստանում հայտնաբերված խաչի պատկերի հնագույն նմուշները թվագրվում են Ք.ա. 5-3-րդ հազարամյակներով և ամենահինն են⁶: Քրիստոնեության ընդունումից հետո խաչը դարձավ փրկության, հաղթանակի, հավիտենական կյանքի խորհրդանիշ: Հայաստանի վաղ միջնադարյան արվեստին բնորոշ են շրջանի մեջ առնված լայնացող թևերով հավասարաթև խաչերը, որոնք առկա են հայկական քրիստոնեական կոթողների վրա՝ 5-6-րդ դարերով թվագրվող: Իսկ Եվրոպայում նմանատիպ խաչերի օգտագործումը լայն տարածում է գտել խաչակրաց արշավանքների ժամանակ:

³ Յովսեփեան Շ., Կիլիկիայի հայկական դրամներ, Թեհրան, 2008, էջ 8:

⁴ ՀՄՍՀ Գիտությունների Ակադեմիա, Հայ ժողովրդի պատմություն, հատոր 3, Երևան 1970, էջ 677:

⁵ Յովսեփեան Շ., Կիլիկիայի հայկական դրամներ, Թեհրան, 2008, էջ 10:



Նկ. 1 Ռուբեն Ա-ի պղնձե դրամը

Պղնձից դրամներ է թողարկել նաև Թորոս Ա իշխանը (1100-1129թթ): Դրամի դիմերեսին պատկերված է հավասարաթև փոքր խաչ՝ եզերված մարգարտաշարով, որի շուրջը հայերենով գրված է <<ԹՈՐՈՍԻ Է ՌԲ>>, իսկ դարձերեսին պատկերված

է հունական խաչ և գրություն, որը դրամագետ Ջարեհ Պտուկյանը վերծանում է <<Թորոսի է Ռուբենյան>> և <<Տեր Քրիստոս հաղթող>>: Դրամի վրա օգտագործված մարգարտաշարերը ավելի ուշ օգտագործվում են Կիլիկյան թագավորության գրեթե բոլոր դրամների վրա: Հետաքրքիր է Ռուբեն Բ իշխանից մեզ հասած պղնձե դրամները, որոնց Ա երեսին պատկերված է ամրոցի դարպաս՝ շուրջը հայերենով գրված <<Ռ ԱԻ ԲԵՆ ՈՐ ՍՏԵՓ>>, որը կարելի է կարդալ <<Ռուբեն որդի Ստեփանի>>, իսկ դարձերեսին պատկերված է հավասարաթև խաչ՝ թևերի խորշերում չորս գնդիկներ:

Կիլիկյան հայկական որոշ դրամների վրա կան նշաններ, որոնց իմաստը պետք է փնտրել հայ ժողովրդի մշակույթի ակունքներում: Մի խումբ դրամների վրա կան տարբեր ձևերի տեղադրված գնդիկներ, որոնց հանդիպում ենք նաև հայկական ճարտարապետության մեջ: Որոշ ուսումնասիրողներ դրանք նույնացնում են նուան հետ, որը պտղաբերության և իշխանության խորհրդանիշն է համարվել: Քրիստոնեության մեջ նուոր Հիսուս Քրիստոսի խորհրդապատկերն է, խորհրդանշում է նաև Աստծո շնորհների բազմազանությունը: Դրամների մի մասի վրա գնդիկները տեղադրված են խաչի չորս խորշերում, որը հանդիպում է նաև խաչքարերի վրա: Կան նաև այնպիսիները, որտեղ երեք գնդիկները եռանկյունի են կազմում, որը ևս կարելի է գտնել որոշ եկեղեցիների վրա (օր. Նորավանքի եկեղեցին):

Կիլիկյան դրամների վրա հայտնվում են նշաններ, որոնք կապ չունեն ոչ հայկական, ոչ եվրոպական, ոչ էլ Առաջավոր Ասիայում այդ ժամանակաշրջանում գործածված աղբյուրների հետ: Դրամների վրա կան **հ**, **է** տառի նման, **8** թվի նման նշաններ, աստղ, կիսալուսին և այլն: Այդ նշանները պատմաբան Արտակ Մովսիսյանը համադրել է հայկական մեհենագրության բոլոր փուլերի և դրսևորումների գրային միավորների

⁶ Յովսեփեան Շ., Կիլիկիայի հայկական դրամներ, Թեհրան, 2008, էջ 14:

հետ: Համադրության արդյունքում նա ցույց է տալիս հայկական մեհենագրության և Կիլիկյան Հայաստանի դրամների ժառանգական կապը: Իսկ պատճառը, թե ինչու են Կիլիկիայի թագավորները այդ նշանները տեղադրել իրենց դրամների վրա, Արտակ Մովսիսյանը բացատրում է, Առաջին հայ արքաների և Կիլիկիայի տիրակալների ժառանգական կապն ընդգծելու միտումով⁷:

Ուշագրավ է Վարդան Արևելցու այն տեղեկությունը, որի համաձայն Լևոն մեծ արքայի օրոք Կիլիկյան հայաստանում գտնվել է դրամ՝ հեթանոս հայ արքաների հայերեն գրությամբ⁸:

Կիլիկիայի իշխանական և թագավորական շրջանների դրամներն իրար կապող օղակ է Լևոն Բ իշխանի պղնձե դրամները, որոնք ավելի նրբացված են և գեղեցկացված (Նկ. 2): Դրանց դիմերեսին պատկերված է մարգարտաշարով եզերված ձի հեծած մի ասպետ, որի շուրջը գրված է



Նկ. 2 Լևոն Բ իշխանի պղնձե դրամը

<<ԼԵՎՈՆ ԾԱ ՌԱ ԱՅ>>, այսինքն <<Լևոն ծառա Աստծո>>: Դարձերեսին պատկերված է մարգարտաշարով եզերված հունական խաչ <<ՈՐԴԻ ՍՏԵՓԱՆԵԻ>> գրությամբ: Դրամի շուրջը եղած գրության մեջ առկա է †

նշանը, որը ըստ ուսումնասիրողների չունի որևէ մեկնություն և գրության սկիզբը վերջից անջատելու համար է, որն օրինակվել է խաչակիրների դրամներից⁹:

Բազմազան են Կիլիկիայի թագավորական շրջանի դրամները: 1198թ. հունվարի 6-ին Տարսուն քաղաքում Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսի միջոցով Լևոն Բ-ն օժվում է հայոց թագավոր՝ հիմնելով Կիլիկիայի հայոց թագավորությունը: Օժման արարողությանը ներկա էին աշխարհիկ և հոգևոր իշխաններ, հարևան պետությունների դեսպաններ, իսալիֆայության, իսաչակիրների, Բյուզանդիայի ներկայացուցիչները, ինչը վկայում է Լևոն Բ-ի բարձր հեղինակության և նրա թագավորության միջազգային ճանաչման մասին: Լևոն Բ-ի թագավորությունը ժամանակակիցների կողմից դիտվել է որպես հայկական թագավորության

⁷ Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան-2003, էջ 47:

⁸ Նույն տեղում, էջ 217:

⁹ Յովսեփեան Շ., Կիլիկիայի հայկական դրամներ, Թեհրան, 2008, էջ 24:

վերականգնում: Լևոն Բ-ն օծվեց որպես «Թագավոր ամենայն Հայոց և նահանգին Կիլիկեացոց և Իսավրիոյ»։ Լևոն Բ-ն թագավոր հռչակվելով անմիջապես կարգավորեց երկրի դրամական տնտեսությունը: Նրա թողարկած դրամները շրջանառության մեջ են եղել ողջ XIII դարի ընթացքում: Լևոն Բ-ի թողարկած դրամները իրենց նրբությամբ և գեղեցկությամբ տարբերվում էին նախորդներից և օրինակ հանդիսացան Կիլիկիայում թողարկված հետագա դրամների համար: Թողարկվել են ոսկե, արծաթե, պղնձե, բիւռնե դրամներ: Բիւռնը համաձուլվածք է՝ արծաթի համեմատաբար ցածր պարունակությամբ:

Կիլիկիայի ոսկե դրամները կոչվել են Դահեկան, Դենար, Կարմիր և Ոսկի փող: Արծաթե դրամները՝ Թագվորին, Դրամ, իսկ պղնձե և բիւռնե դրամները՝ Դանգ, միջին չափը՝ Քարտեզ և փոքր չափը՝ Փող¹⁰:



**Նկ. 3 Լևոն Ա թագավորի
Օծման դրամը**

Լևոն թագավորն իր օծման առթիվ 1199թ. թողարկել է մի շարք արծաթե դրամներ, որոնք կոչվում են Օծման դրամներ: Այս դրամների դիմերեսին պատկերված է թագավորը՝ թագը գլխին, թագավորական զգեստով, Հիսուս Քրիստոսի առջև ծնկի եկած, իսկ Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով նրա գլխի վերևում է: Պատկերի շուրջը գրված է «+ԼԵՎՈՆ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ»։ Դարձերեսին երկու շար մարգարտաշարերի մեջ պատկերված են երկու առյուծներ, որոնք թիկունքները իրար են դարձրել ու նրանց միջև գտնվում է խաչ, որի շուրջը գրված է «+ԿԱՐՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՍՏ»։, այսինքն Աստծո կամքով (Նկ. 3):

Առյուծների պատկերները նման են Ռուբինյան տոհմի զինանշանին: Առյուծը և կատվազգի այլ կենդանիներ, լինելով Բագրատունյաց թագավորության և նրանց շառավիղների (Կյուրիկյաններ, Չաքարյաններ) զինանշանը հանդիպում է Հայաստանի տարբեր կառույցների վրա, ինչպես օրինակ Անի քաղաքի դարպասի վերևում, կամ միջնաբերդի պարիսպների վրա: Ռուբինյանները իրենց համարելով նրանց ազգակիցը, ևս պետք է օգտագործեին այն¹¹: Առյուծը նախաքրիստոնեական շրջանում համարվում էր արևի, իշխանության

¹⁰ Յուզեփեան Շ., Կիլիկիայի հայկական դրամներ, Թեհրան, 2008, էջ 26:

¹¹ Տիգրան Հայազն, Հայկական իշխանական զինանշանները, Երևան, 2005 էջ 42

խորհրդանիշ: Առյուծի պատկերներ հանդիպում են հայկական ժայռապատկերներում որպես արևին ուղեկցող կենդանի: Առյուծի պատկերներն առկա են ուրարտական արվեստում, օրինակ՝ Էրեբունի ամրոցի որմնանկարներում, որտեղ դեպի արև-հավերժությունն ուղղված վեհատես առյուծները պատկերված են երկիր-հայրենին պահելու վճռականությամբ: Հետագայում առյուծը դառնում է Կիլիկիայի հայկական թագավորության զինանշանի, դրամների պատկերագրության անբաժանելի տարրը: 13-րդ դարի վերջի հայ մատենագիր Ներսես Պալիանենցը գրում է, որ Լևոնի թագադրության ժամանակ Սրբազան Հռոմեական կայսրության կայսրը Հայոց նորընծա արքային թագի հետ ուղարկել է նաև անձնական նշան՝ առյուծի պատկերով նշանակ՝ անվանը համապատասխան, քանզի Լևոն առյուծ է նշանակում: Այսպիսով սրանով շարունակվում է Բագրատունի արքաների օրոք սկսված Հայոց թագավորների առյուծանշան շրջանը: Լևոն թագավորը և իր հաջորդները իրենց դրամների վրա շեշտում են Ամենայն հայոց թագավորի տիտղոսը՝ իրենց կապվածությունը ապացուցելով հայրենիքի հետ:



**Նկ. 4 Լևոն Ա թագավորի
ոսկե դրամը**

Լևոն թագավորի թողարկած ոսկե դրամները մասնագետները բաժանում են երկու խմբի՝ ըստ նրանց դարձերեսի պատկերների: Ոսկեդրամի առաջին տարբերակի դիմերեսին պատկերված է թագավորը՝ բազմած գահին, իսկ գահը դրված է երկու առյուծների ուսերին

(Նկ. 4):

Թագավորը գլխին թագ ունի, աջ ձեռքում մի գունդ՝ վրան խաչ, որը խորհրդանշում է քրիստոնեության գերազահությունը աշխարհի վրա, իսկ ձախ ձեռքում՝ շուշան, որը թագավորական իշխանության հերալդիկ խորհրդանիշ է՝ օրինակած ֆրանսիական դրամներից: Շուշանը միջնադարում քրիստոնեության մեջ համարվում էր Մարիամ Աստվածածնի, ինչպես նաև Սուրբ Երրորդության խորհրդանիշը: Միջնադարյան պատկերագրության մեջ շուշանի պատկերը հանդիպում ենք Ավետման տեսարաններում՝ Գաբրիել հրեշտակի ձեռքին, ինչպես նաև Ահեղ Դատաստանի տեսարաններում՝ որպես Հիսուս Քրիստոսի ատրիբուտ: Պատկերի շուրջ երկու մարգարտաշարերի մեջ գրված է <<+ ԼԵՎՈՆ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ>>: Թագավորի արքայական զգեստի վրա

որպես զարդարանք առատորեն կիրառված է Ռուբինյան զինանշանը: Նրա մեջքին կապած է սուր: Նմանատիպ պատկերագրությամբ մեզ է հասել Լևոն թագավորի 3 դիմանկարներ ձեռագիր մատյաններում, որոնցից երկուսի հեղինակը մանրանկարիչ Թորոս Ռոսլինն է¹²: Դրամի Բ երեսին պատկերված է դեպի ձախ քայլող առյուծ՝ աջ ձեռքով բռնած կրկնաթև խաչ: Առյուծի գլխին թագ կա, իսկ դեմքին նկատելի են մարդկային դիմագծեր:



*Նկ. 5 Լևոն Ա թագավորի
ոսկե դրամը*

Ոսկեդրամի մյուս տարբերակի դարձերեսին կան երկու իրար մեջք դարձրած առյուծներ, որոնց մեջ կա կրկնաթև խաչ (Նկ. 5): Կրկնաթև այդ խաչը անվանվում է Հայրապետական խաչ և հանդիպում է Հայ եկեղեցու հայրապետների պատկերներում: Դիմահայց առյուծների պատկերների հանդիպում

ենք նաև Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու հարթաքանդակներում, Մլքե թագուհու Ավետարանի մանրանկարներում՝ ստեղծված 862թ., որտեղ առյուծների միջև տեղադրված է կենաց ծառը:

Լևոն թագավորի մահից հետո գահը ժառանգում է նրա մանկահասակ դուստր Զաբելը, որին 1226թ. ամուսնացնում են Կոստանդին պալլի որդու՝ Հեթում իշխանի հետ: Հեթումը ճանաչվում է Կիլիկիայի թագավոր (1226-1270թթ): Նրա ժամանակ թողարկված դրամները ուսումնասիրողները բաժանում են երեք խմբի, որոնցից առաջիններն ունեն Զաբել թագուհու և Հեթում թագավորի պատկերները, երկրորդը միայն իր պատկերով դրամներն են, իսկ երրորդը հայերեն և արաբատառ դրամներն են:

Հեթում թագավորից մեզ հասել է ոսկե դրամի եզակի մի օրինակ, որի վրա նշված են թե Հեթում թագավորի, և թե Լևոն արքայի անունները: Դրամի դիմերեսին պատկերված է Լևոն թագավորը՝ բազմած գահին, շուրջը գրված «Լևոն թագավոր Հայոց», իսկ դարձերեսին՝ դեպի աջ քայլող առյուծ՝ ձախ ձեռքում բռնած խաչ, որի շուրջը կա «+ՅԵԹՈՒՄ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ» գրությունը: Այս դրամը թողարկելով՝ Հեթում

¹² Ազարյան Լ, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., Երևան 1964, էջ 127

թագավորը գուցե ցանկացել է իր տոհմը ներկայացնել Ռուբինյան տոհմի թագավորության շարունակող¹³:

Հեթում թագավորը թողարկել է իր և Ջաբել թագուհու պատկերով արծաթե դրամներ (Նկ. 6): Նրանք պատկերված են կանգնած դիրքով՝ բռնած իրենց միջև գունվող խաչը: Նրանց շուրջը գրված է <<ԿԱՐՈՂՈՒԹԻԻՆՆ ԱՅ Է>>, այսինքն <<կամքն Աստծունն>> է: Դարձերեսին առյուծի պատկեր է, որը դեպի աջ է քայլում և մեջքին ունի խաչ, որի շուրջը գրված է <<ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ>>: Այս դրամները մեզ փոխանցում են մի կարևոր փաստ, ըստ որի Հեթումն, ամուսնանալով Ջաբելի հետ, իրեն թագավոր հռչակեց, բայց դրամի դիմերեսին չնշելով իր անունը՝ որպես թագավոր, և Ջաբելին ներկայացնելով իր կողքին՝ կարծես ցույց է տվել, որ սկզբնական շրջանում պարտադիր է եղել հարգել նրա գահակից լինելը իր հետ¹⁴:



Նկ.6 Հեթում թագավորի արծաթե դրամը

1226թ Իկոնիայի Էմիրը ներխուժելով Կիլիկիա, ստիպում է, որ Հեթումն ընդունի նրա գերագահությունը, ինչի վկայությունն են այդ ժամանակաշրջանի դրամները, որոնց մի երեսը ներկայացնում է հայոց թագավորին՝ հայերեն գրությամբ, իսկ մյուս կողմը՝ սելջուկ

Էմիր Քեյդոբադին, ապա նրա հաջորդին՝ արաբերեն գրությամբ: Հեթում թագավորը պատկերված է ձի հեծած: Հեթում թագավորի երրորդ տեսակի դրամները պղնձից են: Դրանց մի մասի դիմերեսին արքան պատկերված է գույգ առյուծների վրա դրված գահին բազմած՝ գլխին թագ, աջ ձեռքում բռնել է շուշան, իսկ ձախում՝ աշխարհագունդը: Պատկերը կրկնում է Լևոն թագավորի դրամները: Բ երեսին հավասարաթև խաչ է՝ խորշերում՝ գնդիկներ: Գրությունից պարզ է դառնում, որ դրամները ստեղծվել են Սիս քաղաքում:

Կիլիկյան թագավորության մեզ հասած վերջին ոսկե դրամները պատկանում են Կոստանդին Ա թագավորին, որը Սիս քաղաքի պարիսպների տակ հաղթելով եղբորը՝ Սմբատին, 1299թ. իրեն հռչակում է

¹³ Յովսեփեան Շ., Կիլիկիայի հայկական դրամներ, Թեհրան, 2008, էջ 39

¹⁴ Յովսեփեան Շ., Կիլիկիայի հայկական դրամներ, Թեհրան, 2008, էջ 40

թագավոր: Նրա թողարկած դրամներում նկատելի են գահը գրավելու համար նրա մղած պատերազմների հետքերը (Նկ. 7): Նա Կիլիկիայի միակ թագավորն էր, որ իր դրամներում ներկայանում է սրով և շեշտում Միս քաղաքի տեր դառնալու իր իրավունքը:¹⁵ Դրամի դիմերեսին պատկերված է ձի հեծած թագավորը, որը քայլում է դեպի աջ, թագավորի ձախ ձեռքում ձիու սանձն է, իսկ մյուս ձեռքում՝ սուրը: Դարձերեսին պատկերված է երեք աշտարակներով բերդ, որը հավանաբար Միս բերդն է, շուրջը գրված է <<ՄՍՍՈՅ ԲԵՐԴԻՆ Է ԹԱԳԱՒՈՐ>>, այսինքն <<Միս բերդը թագավորինն է>>:



Նկ. 7 Գոստանդին Ա թագավորի արծաթե դրամը

Արծաթե և պղնձե դրամներ են կտրել նաև Լևոն Գ-ն, Օշին թագավորը: Օշին թագավորի արծաթե դրամներից մի տեսակը, որ ունի 2,8 գրամ կշիռ, կոչվում է Օծման դրամ: Դիմերեսին գահին բազմած թագավորի պատկերն է, իսկ դարձերեսին դրվագված են

երկու առյուծներ, որոնց մեջտեղում կրկնաթև խաչն է: Լևոն Դ թագավորի ժամանակ մամլուքներին վճարած դրամով տուրքերի մեծ մասը բաղկացած էր Լևոն Դ թագավորի անունով թողարկված արծաթե դրամներից, որոնք մամլուքները հալեցնելով թողարկել են իրենց դրամները: Սակայն հայտնաբերվել են նաև կիլիկյան դրամներ, որոնք շրջանառության մեջ են մտել կրկնադրոշմներով, որի արդյունքում մեզ հասել են արաբերեն գրությամբ դրամներ, որոնց վրա պահպանվել են կիլիկյան դրամների հետքերը: Դրանց մեջ հանդիպում են նաև Լևոն Ա-ի և Օշին թագավորի դրամները, որոնք ապացուցում են այն տեսակետը, որ մի թագավորի մահից հետո նրա թողարկած դրամները շարունակել են մնալ շրջանառության մեջ:

14-րդ դարում Կիլիկիայում դրամական տնտեսությունն անկում է ապրում: Դրամների պատկերներն ու մակագրությունները դառնում են միատիպ և անարվեստ: Կիլիկիայի թագավորությունն անկում ապրեց 1375թ.՝ իր անջնջելի հետքը թողնելով հայոց պատմության մեջ: Կիլիկյան Հայաստանի դրամների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Կիլիկիայի հայկական պետության պատմական ընթացքը՝ վերելքի ու ծանր

¹⁵ Յովսեփեան Շ., Կիլիկիայի հայկական դրամներ, Թեհրան, 2008, էջ 56:

Ժամանակահատվածներով, իր անմիջական արտացոլումն է գտել կիլիկյան դրամագործության և դրամաշրջանառության մեջ: Կիլիկիայի հայ իշխաններն ու թագավորները ճիշտ գնահատելով իրենց կարևոր դերը տարածաշրջանում, ժամանակին կարողացան կիրառել այնպիսի քաղաքականություն, որով ոչ միայն հաջողեցին գոյատևել հզոր պետությունների մեջ, այլև ձեռք բերեցին ռազմական ու տնտեսական կարևոր դիրք, ստեղծեցին ազգային պետություն, ունեցան սեփական հայատառ դրամ, որը շրջանառության մեջ էր ոչ միայն Կիլիկիայում, այլև նրա սահմաններից դուրս: Պատմական Հայաստանի տարածքից հայտնաբերված կիլիկյան արծաթե և պղնձե դրամները, որոնք պատկանում են Լևոն Ա, Հեթում Ա, Լևոն Բ, Հեթում Բ, Լևոն Ե արքաներին, վկայում են, որ Կիլիկիայի հայական պետությունը առևտրական կապերի մեջ է եղել Մեծ Հայքի հետ, իսկ Այաս-Թավրիզ առևտրական ճանապարհը յուրատեսակ կապ էր Կիլիկիայի և Մեծ Հայաստանի միջև¹⁶: Կիլիկյան Հայաստանը, կամուրջ լինելով քրիստոնյա Արևմուտքի և մահմեդական Արևելքի միջև, ստեղծեց մի յուրատիպ մշակույթ, որը կրելով հարևան երկրների ազդեցությունը, պահպանեց իր ազգային ինքնատիպությունը և իր հոգևոր ու նյութական արժեքներով լրացրեց հայ մշակույթի ու պատմության գանձարանը:

¹⁶ Մարգարյան Հ., Գարապետյան Մ., Կիլիկյան հայկական դրամների շրջանառությունը Հայաստանում, 1985, էջ 54-58:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԳՐԻՉՆԵՐՆ ՈՒ ԾԱՂԿՈՂՆԵՐԸ

Նունե Հակոբյան

Էդ. Բոյաջյանի անվան հ.121 հիմնական դպրոց, 8-րդ դասարան
Ուսուցիչ՝ Գայանե Հարությունյան

<<Հայ մանրանկարչությունը, որը շուրջ 14 հարյուրամյակի /6-19-րդ դդ./ պատմություն ունի, իր ոճական առանձնահատկությունների, գեղարվեստական բարձր մակարդակի, ընդգրկված թեմաների և դրանք ստեղծող տաղանդավոր նկարիչների շնորհիվ, այսօր համաշխարհային ճանաչման է արժանացել ու գիտական բազմաթիվ ուսումնասիրությունների նյութ դարձել: Հրատարակված աշխատություններն ու ալբոմները, որոնք վերաբերում են հայ գրչության տարբեր օջախներում ստեղծված մանրանկարչական ժառանգությանը կամ առանձին անվանի նակրիչների, մեծապես նպաստել են որպիսի միջնադարյան այդ հուշարձանները ըստ արժանվույն գնահատվեն>>: Ասողիկ Գևորգյան՝ գիտնական ու մանրանկարիչ:

Կիլիկիա. այստեղ 12րդ դարի սկզբից Հայոց վանքերի գրադարաններում հավաքվում էին **Բուն Հայաստանի** ձեռագրերը, ընդօրինակվում և նկարագարդվում էին ամենաբազմազան բովանդակության գրքեր:

Կիլիկիո մանրանկարիչները, պահպանելով հանդերձ Բուն Հայաստանից բերված ավանդույթները, բարձրագուն ներդաշնակությամբ իրենց տաղանդի անուրանալի ձիրքով կարողացան առաջ անցնել Եվրոպական Վերածննդի արվեստի կանխորոշումներց: Խորքի զգացողություն, կերպար-ների հոգեբանական խտացումներ, գեղարվեստական զանազան բովանդակությունների ներդաշնակություն, գունային անսահման տարբերակների համադրություն, իրական կյանքի մանրամասներով հագեցած նուրբ դիտողականություն...

Դրագարկում, Հռոմկլայում ծաղկազարդված 12-րդ դարի երկու Ավետարանները իրենց ոճերով դեռևս կապված են Մայր Հայաստանի ձեռագրերի հետ: Բայց հետո ձեռք են բերում իրենց ինքնուրույն ճաշակը:

Կիլիկյան Հայաստանի առաջին նշանավոր մանրանկարիչներն էին **Կոստանդին** և **Գրիգոր Մլիճեցին**, ովքեր կապված էին Սկևռա և Մլիճ գրչատների հետ: Հայտնի են Ներսես Լամբրոնացու պատվերով Գրիգորի

ընդօրինակած և ծաղկագարդած «Նարեկը» և «Սկևռա Ավետարանը», Կոստանդինի ծաղկած «Ավետարանի» մանրանկարները, որոնք արդեն կանխորոշում էին Կիլիկյան դպրոցի առանձնահատուկ ոճը:¹

...Կոստանդին Առաջին կաթողիկոսի և արքայական ընտանիքի անդամների պատվերներով նկարագարված ձեռագրերը սքանչելի են իրենց գեղագիտական զգացողությամբ:



Գրիգոր Մլիճեցի «Սկևռա»



Գրիգոր Մլիճեցի «Մատյան ողբերգության»

ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ.

Սակայն Կիլիկյան բոլոր տաղանդաշատ մանրանկարիչների մեջ ամենաբարձր կատարելության հասավ Թորոս Ռոսլինի տաղանդը, որը բացեց ոգեղեն, վեհաշուք կատարելության հասած արվեստի շքեղ գաղտնիքները:²

Թորոս Ռոսլին մարդու, նկարչի, առհասարակ ստեղծագործողի պատկերացումներն ու ներշնչանքները դուրս էին մինչև իր ժամանակները հայտնի բազմազանությունից: Նրա հերոսների ոչ միայն վեհությունն ու հանդիսավորությունը, ոչ միայն նրանց հոգեբանական նկարագիրը, այլև մարդկային ամենատարբեր ապրումների խորին

¹ Ա.Պետրեայան «Բոլոր ժամանակների Հայաստանը» էջ 159

² Ա.Պետրեայան «Բոլոր ժամանակների Հայաստանը» էջ 165

զգայնությունը, թեմաների դասավորությունը նույնպես՝ կարծես զգուշորեն հեռանում են ավանդական պատկերացումներից: Նրա նկարներում մարդկանց կերպարները տեղավորված են այնպես, որ ապահովում են խորության պատրանքը:


Թորոս Ռոսլինի պատկերագրությունը ոչ միայն պատմողական է, այլև խորապես հոգեբանական: Ի դեպ, նրանցից ոմանք հիշեցնում են Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարներն ու որմնաքանդակները:

Զարդարվեստի ասպարեզում ևս, այնուամենայնիվ, Ռոսլինը, շարունակելով ավանդները, խորաններում և անվանաթերթերում ներմուծում է այնպիսի պատկերներ, որոնք պարզ կամ չափազանց բարդ իրնեց դրսևորումներով՝ հնագույն հավատալիքները բացահայտող խորհրդանշաններ են. ծաղիկ բռնած այծազլուիս մարդ, երկար վարսերով մերկ կանայք, առյուծ հեծած մերկ մարդ...

1272թ. գրված և նկարագրողված <<Կեռան թագուհու Ավետարանի>> մարդկանց իրանները կարծես ավելի են ձգված հագուստների նրբագեղ ոսկե ծալքագծերի պատճառով: Տեսարանները հասցված են մեծ հուզականության: Եվ ամեն ինչ այդ նկարներում՝ դեմքերի արտահայտությունները, կեցվածքները, խորացնում են հուզականությունը: <<Խաչելություն>> պատկերում Քրիստոսը մարդկայնորեն տառապում է, հրեշտակները լացակումած են, Տիրամայրը հասել է նվաղումի, նրան պահում են ողբերգական զգայնությամբ լեցուն յուղաբեր կանայք:



Թորոս Ռոսլին
«Կեռան թագուհու Ավետարանի»



Թորոս Ռոսլին
«Խաչելություն»

<<Պայծառակերպություն>> պատկերում առաքյալներից մեկը պառկած է՝ ծածկելով լույսից կկոցվող աչքերը, մյուսը, չդիմանալով ճառագավող լույսի ուժգնությանը, ընկնում է երեսնիվայր...

<<Կեռան թագուհու Ավետարան>>-ում և << Վասակ արքայազնի Ավետարան>>-ում առաջին անգամ մանրանկարչության փորձառության ընթացքում ճշգրտորեն պատկերվել են արքայական տան անդամների դիմանկարները:

Թորոս Ռոսլինի դիմանկարները և՛ խոհական են, և՛ հերոսական, և՛ տազնապահույզ ու եղերգա-կան, որը հասնում է մինչև ողբերգություն:

Թորոս Ռոսլինը իր բազմաթիվ մատյանների և՛ գրիչը, և՛ նկարիչն է եղել: Սակայն նրանց հիշատակարաններում չենք գտնում նրա ծննդյան և մահվան տարեթվերը: Գիտենք, որ ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսին, աշխատել է Հռոմկլայի վանքին կից գրչատանը և Միս մայրաքաղաքում: Գիտենք, որ աշակերտել է Հռոմկլայի տաղանդաշատ ծաղկողներ **Կիրակոսին և Հովհաննեսին:**

Թորոս Ռոսլինի գրած ու նկարագարդած բազմաթիվ մատյաններից ընդամենը յոթն են կարողացել հաղթահարել անհանգիստ, վայրիվերո, մութուլույս ծանր ժամանակների քառսը և հասել 21-րդ դար: Այդ յոթից ընդամենը երկու լրիվ Ավետարան և Հեթում Առաջին թագավորի Ավետարանի մանրանկարների պատառիկներն են գտնվում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 10450, 10675, 5458, 8321 համարների տակ: Յոթից մեկը գտնվում է Բալթիմորի Ուոլտերս պատկերասրահում, երեք Ավետարան և մեկ <<Մաշտոց>> Երուսաղեմի Սբ. Հակոբյան վանքի մատենա-դարանում, իսկ <<Վասակ արքայազնի Ավետարանը>>՝ Վաշինգտոնի Ֆրիք պատկերասրահում:

Թորոս Ռոսլինը երբեք չի կրկնել ինքն իրեն, թեև հաճախ է անդրադարձել ավետարանական նույն պատմություններին...

Մասնագիտական խորին ուսումնասիրությամբ թերևս կարելի է միայն սպառել մեծ նկարչի տաղ-անդաշատ կարողության մասին պատմությունը... Այստեղ միայն այսքանը, որպես չնչին հավաստում սքանչելի **Ամբողջի:**

Ուրիշ բազմաշնորհ անուններ. Ուրիշ բազմաշնորհ անուններ էլ կան Դրագարկի, Սկևռայի, Ակների, Գոների, Բարձրաբերդի, Հռոմկլայի գրչատներից մեզ հասած: Հիշել ենք արդեն, **Գրիգոր Մլիճեցուն, Կոստանդինին:** Մյուս-ներն էին **Վարդանը, Կիրակոսը, Հովհաննեսը, Գրիգոր Պիժակը** և էլի ուրիշներ: Բազմաթիվ են նրանք, ինչպես

բազմաթիվ են բարձրարվեստ մանրանկարներով զարդարված ձեռագրերը, որոնց ծաղկողների անունները չեն հասել:

Գրիգոր Մլիճեցու պատկերագարող Նարեկացու «Մատյան ողբերգության» ձեռագրում, նուրբ ծաղկագարդումներից բացի նա ստեղծել է նաև բանաստեղծի չորս դիմանկար: Դիմանկարների պատճառով այս «Նարեկը» անչափ սիրելի է և անչափ կարևոր հայ մարդու զգայուն ընկալումների համար:

Գրիգոր Մլիճեցու նկարագարած «Նարեկը» գտնվում է մատենադարանի 1568 թվահամարի տակ: Գրիգոր Մլիճեցին ինչպես նաև վարդանը ու Կոստանդինը Սկևռայի մանրանկարչական դպրոցի ստեղծագործողներ էին:

Հովհաննես Արքաեղբոր անվան հետ են կապում Ակների Գոների, Բարձրաբերդի գրչատները: Նա ծնորհալի գրիչ էր և ծաղկող: Արտագրել է բազմաթիվ ձեռագրեր և նակարագարողել: ԵՎ, որովհետև այս նկարագարողումները առանձնակի մեկնաբանություններ ունի և ինքնուրույն խումբ էին կազմում, ապա ակներիվ Գոների, Բարձրաբերդի, գրչատները միասին կոչվում էին «Հովհաննես Արքաեղբոր դպրոց»: Մքանչելի գրիչ ու ծաղկող Հովհաննես Արքաեղբայրը մերժելով պալատական կյանքի աշխարհիկ զվարճմանները, գծի և գույնի ներդաշնակությամբ փորձում էր իմաստավորել սերը Ոգեղենի հանդեպ:

Հռոմկլան Կոստանդին Առաջին Բարձրաբերդու հովանավորությամբ 13-րդ դարի 2-րդ կեսից դարձավ Կիլիկիայի մանրանկարչության գլխավոր կենտրոնը: Նրբագեղ ու սքանչելի զարդանկարներ, կենդանիների ու մարդկանց երևակայական կերպարներ, անկաշկանդ, համարձակ, աշխատառճ, հոգեբանական ներքին լարվածություն, բազմագույն և բազմերանգ ներկապնակ... Այս խոսքերը ոչինչ չեն ասում մանրանկար-հրաշալիքների մասին: Բացառիկ, գեղագիտական հաճույք ստանալու համար հարկավոր է բացել այն ալբոմները, որտեղ փորձ է արվում տեղավորել Հայոց մանրանկարչության մի չնչին քանակ և որևէ գեղեցիկ, հոգեպարար երաժշտության տակ երկար նայել այդ պատկերներին, զարդանախշերին, որոնց գույնն ու զիծը կարող են տանել մինչև ներքին անսահմանության զգացում...

Բոլոր Ա'րժանի անուններից ընտրենք ևս մեկին և մի քանի խոսք ասենք նրա մասին:

ՄԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ.

Սարգիս Պիծակը ծաղկող Գրիգոր Պիծակի որդին էր: Սարգիսը մինչև զառամյալ հասակը ընդօրի-նակել է ու ծաղկել: Այսինքն՝ և՛ գրիչ է եղել, և՛ նկարիչ: Նրա վերջին մատյանը <<Բժշկության Ավետարանն>> է, որը մատենադարանի N5795 ձեռագիրն է:

Սարգիս Պիծակի մասին մի գեղեցիկ ավանդազրույց է պահպանվել:

... **Գրիգոր Պիծակի** մոտ հյուրեր են լինում: Նրա պատանի որդին՝ Սարգիսը, հյուրերից առանձին, մի կողմ քաշված, զբաղված էր նկարչությամբ, երբ պատուհանի գոգին մի պիծակ է նստում: Սարգիսն արագ նկարում է նրան նույն տեղում: Բայց պիծակը անհանգստացնում է հյուրերին, և նրանք փորձում են նրան նստած տեղից դուրս քշել: Երբ նրանց ջանքերն ապարդյուն են անցնում, և պիծակը շարունակում է նույն տեղում նստած մնալ, Գրիգորը ծիծաղում է և հյուրերին ներկայացնում իր որդուն: Հիացած և զարմացած հյուրերը Սարգիսին կնքում են **Պիծակ** անունով:

Սարգիս Պիծակը, ըստ երևույթին, անհանգիստ բնավորության տեր մարդ է եղել: Թափառել է Կիլիկիո Հայոց թագավորության բոլոր վայրերում, աշխատել տարբեր վանքերում՝ Միս, Սկևռա, Դրազակ, Կոպիտաս, ապա և Փոս անապատում: Իր երկար կյանքի ընթացում նա հասցրել է ծաղ-կագարդել քառասուն ձեռագիր՝ պատկերելով իր ժամանակակիցներին՝ Լևոն Չորրորդ թագավորին, Հակոբ կաթողիկոսին, Մարիուն թագուհուն, Ներսես Շնորհալուն և նույնիսկ նկարել երեք ինքնանկար:

Սարգիս Պիծակի կերպարներն են՝ առարկաները, զարդանախշերը, նրանց ոսկյա ուրվագծերը, ծիածանագույն երանգները իբրև աստվածային լույսի խորհրդանշան, ժամանակակից մարդիկ, կամ ավետարանական երկրորդական կերպարներ՝ իշխաններ, հովիվներ, վաճառականներ, կուրեր, մուրացիկներ՝ զգեստավորված ժամանակակից հագուստներով, իսկ մարգարեները, ավետարանիչները, առաքյալները՝ կանոնիկ հին հունական պարեգոտներով: Գլխազարդերը, լուսնազարդերը, սյուններն ունեն ոսկյա տարածք, որոնք պայծառ ծիածանային գույների հետ ստեղծում են տեսողական պատրանքների շղթա:

Սարգիս Պիծակի նկարները իրենց գունեղ պայծառությամբ ամենաողբերգական պահերին անգամ ժողովրդի կենսափիլիսոփայության ու լավատեսության անկորնչելի ուժի

խորհուրդն են ներշնչում:

Ռուս արվեստաբան, իր ուսումնասիրությունների զգալի մասը հայ միջնադարյան մոնումենտալ գեղանկարչությանը, քանդակագործությանը և մանրանկարչությանը նվիրած երախտավոր գիտնական Լիդիա Դուռնովան այսպիսի գնահատական է տվել հայ մանրանկարչությանը. <<Գեղանկարչության հազարամյա պարմության մեջ Կիլիկյան մանրանկարչությունը միանգամայն ուրույն տեղ է գրավում: Հայկական արվեստի մեջ մենք այլևս երբեք և ոչ մի տեղ չենք գտնի այնպիսի շքեզ դեկորատիվ զարդանկարներ, պայծառ, բայց ներդաշնակ ու ազնիվ գույների այնպիսի փայլ, այնպիսի նրբություն ու ճարտարապետություն, մարդկային մարմինները պատկերելու այնպիսի հմտություն, ինչպես եղել է 12-13-րդ դդ. Կիլիկիայում>>:

Իրոք այդ գրիչներն ու ծաղկողները ամենածանր պայմաններում անգամ, ամենատարբեր ժամանակների, ամենատարբեր զավթիչների հարձակումների, նախճիրների, գերեվարության բուն միջավայրում ջանացել են իրենց հոգու ողջ ուժը, կամքը ի մի բերելով ստեղծագործել անդադար, ապագայի համար ապահովելով անկորնչելի և սքանչելի ժառանգություն:

Հայոց մշակույթի ընթացքը երբեմն դանդաղել է, սակայն երբեք կանգ չի առել:

300 տարի ապրեց, բարգավաճեց, անկում ապրեց Կիլիկիայի Հայոց թագավորությունը: Բայց մինչ այս թագավորությունը հայ ժողովուրդը կար այնտեղ: Թագավորությունից առաջ և հետո նաև:³

Հիմա խորհենք. արդյոք, այդ 300 տարիների Հայոց պատմության մատյանում Կիլիկիո թագավորության ռազմական ու քաղաքական, հզոր վերելքի ու անկումի էջերը գրվեցին միայն: Մաշված մագաղաթներին մի քանի հիշատակներ մնացին, և ժողովրդի հիշողության մեջ վաղուց անցած-գնացածի հանդեպ թեթև մի ափսոսանք, որը բնավ էլ չի արժեքավորվում ժամանակի վայրիվերումներում, թե սա՛ այս 300 տարին, այն արժեքն է, որը հայոց բոլոր ժամանակների **Ոգեղենի տիրույթներում** իր պատվավոր տեղն ունի և կազմում է նրա անքակտելի ու կարևոր մասը:

Ժողովուրդների պատմությունը միայն նրանց քաղաքական, ռազմական, հարուստ կամ աղքատ ապրելակերպի պատմությունը չէ:

³ Ա. Մովսիսյան, << Հայոց պատմությունը 5000-ամյա և...20-ամյա>> էջ 78:

Որևէ ժողովուրդ համաշխարհային հիշողության մեջ է մնում նախ և առաջ իր **ոգեղեն արժանի հայտնագործումներով**: Այդ հայտնագործումների չափն ու կշիռն են որոշում նրա տեղը մարդկության համընդհանուր պատմության մեջ և դարձնում հավերժական ժամանակի արժանավոր ուղեկիցներից մեկը:

300 տարի ապրեց, բարգավաճեց, անկումի ահավոր գահավիժում ունեցավ Կիլիկիայի Հայոց թագավորությունը:

Բայց ինչպիսին էլ լիներ Հայոց քաղաքական կյանքը, **նրա ստեղծագործական մտքի ու տաղանդի համար իր էության խորքերում մշտապես ազատ է եղել ընդարձակ ասպարեզը**:

Մեր այսօրվա մշտապես կենդանի հիշողության համար ամենից առաջ պարտական ենք մեր սքանչելի պատմիչներին, ովքեր առանց թողնելու, որ կտրվի ժամանակների հաջորդական շղթան, մեկը մյուսին հանձնեցին Հայոց պատմությունը ոգեկոչելու պարտականությունը:

Անցյալում և այսօր մեր ունեցած արժեքների անաչառ ճանաչողությունը մեզ կարող է բերել ազգային արժեհամակարգի հստակ վերականգնմանը և գիտակցմանը:

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՃԱՌԱՇԱՀ ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՑԱԼՆԵՐԸ

Միլենա Խալենյան

Վ. Տերյանի անվան թիվ 60 հիմնական դպրոց, 9-րդ դասարան
Ուսուցիչ՝ Սոնա Դանիելյան

1198թ. Կիլիկյան հայկական իշխանությունը հռչակվեց թագավորություն և Կիլիկյան Հայաստանի առաջին թագավոր դարձավ Լևոն II Մեծագործը: Կիլիկիայում թագավորության հռչակումը և անկախության ամրապնդումը, երկրի միավորումը և մասնատվածության վերացումը պայմաններ ստեղծեցին երկրում տնտեսական կյանքի հետագա զարգացման ու վերելքի համար: Լևոն II Մեծագործի քաղաքական, վարչական և տնտեսական բարենորոգումներն էլ ավելի ամրապնդեցին երկրի անկախությունը և պաշտպանությունը, նպաստեցին տնտեսական կյանքի, այդ թվում նաև առևտրի հետագա զարգացմանը: Այդ բարենորոգումների հետևանքով կարգի բերվեցին Կիլիկիայի նավահանգիստները, կամուրջները, առևտրական ու ռազմական ճանապարհները, կառուցվեց առևտրական նավատորմի, հատվեցին ոսկյա և արծաթյա դրամներ: Այս ամենը նպաստեց ներքին և արտաքին առևտրի զարգացմանը: Ռուբինյան իշխանության հաստատման սկզբին, երբ հայերը աշխատում էին տիրանալ Կիլիկիային, քաղաքական իրավիճակը չէր թույլատրում, որպեսզի զարգանա առևտուրը, իսկ Լևոն II թագավորի օժվելուց հետո երկիրը արդեն հզոր էր և լավ կազմակերպված, ինչը պայմաններ ստեղծեց առևտրի զարգացման համար: Կիլիկյան Հայաստանը XIII-XIV դդ. նշանակալի դեր էր խաղում միջազգային տարանցիկ առևտրում: Նա լայն առևտրական կապեր էր պահպանում հատկապես Արևմտյան Եվրոպայի երկրների՝ Ջենովայի, Վենետիկի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Բելգիայի հետ: Երկիրն ուներ 500կմ. Երկարությամբ ծովային սահմաններ՝ 26 ծովային նավահանգիստներով, որոնց մեջ խոշորագույնները Այասն ու Կոռիկոսն էին: Ծովից ոչ հեռու, կամ հենց գետաբերանում էին գտնվում նաև երկրի խոշորագույն վաճառաչահ կենտրոնները՝ Անարզաբան, Ադանան, Տարսոնը և Մամեստիան:

Կիլիկյան առանձնապես կարևոր դեր էր խաղում տարանցիկ առևտրում: Եթե առաջ Եվրոպայի և Ասիայի միջև միջնորդի դերում հանդես էին գալիս Վենետիկի ու Ջենովայի առևտրականները, ապա XIII-XIV դդ. նույնպիսի դեր են ստանձնում Կիլիկիայի վաճառականները: Խաչակրաց արշավանքների առաջին իսկ օրերից Կիլիկիան կամուրջ դարձավ արևմտյան և արևելյան երկրների միջև: Ներքին, արտաքին ու տարանցիկ առևտրի զարգացմանը նպաստելու նպատակով, սկսած 1201թ. առևտրական պայմանագրեր կնքեցին Վենետիկի, Ջենովայի, Պիզայի, Ֆլորենցիայի, Սիցիլիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների վաճառականների հետ, ինչի մասին վկայում են մեզ հասած բազմաթիվ փաստաթղթեր, որոնք թվագրված են 1201-1335թթ.: Կիլիկիայի ամենահարուստ վաճառաշահ նահանգասնիստը Այասն էր, այն համարվում էր Մերձավոր Արևելքի ծովային դեսպանը: Այասի նշանակությունը էլ ավելի մեծացավ այն պահից, երբ Արևելքում 1261թ. ընկավ Լատինական կայսրությունը, և երբ խաչակիրները իրենց վերջին հենակետերը կորցրին Սիրիայում: Ընդհանուր առմամբ և խաչակրաց արշավանքների, և Եվրոպայում սկսված տնտեսական առաջընթացի հետևանքով XII-XIII դարում Միջերկրածովյան ավազանը զգալի նշանակություն ձեռք բերեց Արևմտյան Եվրոպայի տնտեսական ու առևտրական կյանքում: Առևտուրը ընդգրկում էր նորանոր տարածքներ, այն դառնում էր շատ պետությունների ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև քաղաքական զարգացման հիմքը և նույնիսկ որոշում էր միջազգային հարաբերությունների բնույթը: Կիլիկյան Հայաստանը, լինելով Միջերկրածովյան պետություն և ունենալով բարենպաստ աշխարհագրական դիրք ակտիվորեն ներգրավվեց Միջերկրածովյան առևտրի մեջ ու մեծ ներդրում ունեցավ այդ բնագավառում: Կիլիկիայում ներքին ու արտաքին առևտրի զարգացմանը նպաստում էին մի շարք հանգամանքներ: Նախ՝ Կիլիկյան հայկական թագավորության տնտեսական կյանքի ընդհանուր վերելքը, և ապա քաղաքական այն վիճակը, որ ստեղծվեց Մերձավոր Արևելքում և հատկապես Միջերկրական ծովի հարավ-արևելյան ափերին ընկած երկրներում: Ինչպես հայտնի է, Միջերկրական ծովի արևելյան ափերին 12-րդ դարի սկզբներին ստեղծված իշխանությունները 13-րդ դարի II կեսին նվաճվեցին Եգիպտոսի մամլուքների կողմից: Վերջին հանգամանքը նպաստավոր պայմաններ ստեղծեց Կիլիկիայի հայկական պետության արտաքին և տարանցիկ առևտրի զարգացման համար: Հատկապես

1258թ. մոնղոլների կողմից Բաղդադի գրավումից հետո Ասիայի և Եվրոպայի միջև կատարվող առևտրական ուղիները անցնում էին Կիլիկիայի տարածքով:

Կիլիկիայում ներքին և արտաքին առևտրի զարգացմանը նպաստեցին նաև Կիլիկիայի թագավորների ձեռնարկումները: Մկսաձ Լևոն II -ից Կիլիկիայի թագավորները օտար առևտրականներին ու առևտրական ընկերություններին շնորհում էին առևտրական արտոնություններ ու շնորհագրեր: Բացի առևտրական շնորհագրերից, օտար վաճառականները իրավունք էին ձեռք բերել Կիլիկիայի քաղաքներում ունենալու իրենց թաղամասերը, դատարանները, եկեղեցին և նույնիսկ զբաղվելու արհեստագործությամբ: Սակայն, նշելով Կիլիկիայում առևտրի զարգացմանը նպաստող վերոհիշյալ հանգամանքները, չպետք է մոռանալ, որ առևտրի ծաղկումը կապված էր նաև XII-XIV դդ. Եվրոպայում սկսված տնտեսական առաջընթացի հետ: Պատմաբանների մի խումբ գտնում էր, որ այդ առաջընթացն ու Լևանտյան առևտրի զարգացումը կապված էին խաչակրաց արշավանքների հետ: Ճիշտ է, անժխտելի է այն փաստը, որ Արևելքի հետ եվրոպական երկրների ունեցած քաղաքական, դիվանագիտական հարաբերությունները սկսեցին XI դ. վերջից՝ կապված խաչակրաց արշավանքների հետ, և խաչակիրները եվրոպացի ավատատերերի և առևտրականների առաջ բաց արեցին հեքիաթային Արևելքը, բայց այնուամենայնիվ, մենք համամիտ ենք Մ. Չաբորովի այն կարծիքի հետ, որ խաչակրաց արշավանքը չի կարելի համարել Լևանտյան առևտրի ծաղկման հիմնական պատճառը¹: Լևանտյան առևտրի ծաղկման արդյունք էր տնտեսական-ներքին առաջընթացի, որը սկսվել էր դեռևս XI դ.՝ կապված Եվրոպայում քաղաքների աճի, արհեստի և առևտրի զարգացման հետ և այն հանգամանքի, որ ազնվականների ու քաղաքացիների պահանջարկը Արևելքից բերվող ապրանքների նկատմամբ մեծանում էր: Կիլիկյան Հայաստանում առևտրական հարաբերությունների զարգացումը ավելի լավ պատկերացնելու համար նախ պետք է պատկերացում կազմել Կիլիկյան Հայաստանի խոշոր վաճառաշահ քաղաքների մասին: Կիլիկիայի քաղաքները առաջացել են դեռևս մեր թվարկությունից առաջ՝ հելլենիզմի շրջանում, բայց, պետք է նշել, որ այդ քաղաքները սկսեցին բուռն թափով զարգանալ Կիլիկյան

¹ Заборов М., Крестовые походы, Москва, 1960, стр. 160:

հայկական պետության շրջանում: Քաղաքների զարգացման համար նպաստավոր էր 12-րդ դարի վերջին հայկական կենտրոնացված պետության՝ թագավորության ստեղծումը: Կիլիկիայի քաղաքային կյանքին և քաղաքների աճին ու զարգացմանը առավել թափով նպաստեց բուն Հայաստանի ծաղկած և զարգացած քաղաքների՝ Անիի, Կարսի, Վանի, Կարինի, Արծնի և մյուս քաղաքների արհեստավորների մասսայական գաղթը դեպի Կիլիկիայի քաղաքները 11-12-րդ դդ.²: Կիլիկիայի քաղաքային կյանքի զարգացմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ XII-XIV դդ. միջնադարյան Եվրոպայի կյանքում տնտեսական առաջընթացի տարիներ էին: Աշխատանքի հասարակական բաժանման, քաղաքների աճի վրա հիմնվելով՝ ապրանքադրամային հարաբերությունները դուրս էին եկել նոր ասպարեզ: Հին ժամանակներից Կիլիկիայում հայտնի քաղաքներ էին Տարսոնը, Ադանան, Մամեստիան, Անարզաբան և Սիսը, իսկ նավահանգիստներից՝ Այասն ու Կոռիկոսը: Կիլիկիայի ամենախոշոր վաճառաշահ ու հարուստ քաղաքներից էր Տարսոնը, որ գտնվում է Կյուդնոսի գետաբերանում՝ Միջերկրական ծովի ափին: Կյուդնոսը միջին դարերում նավարկելի էր, ընդ որում նավերը բարձրանում էին մինչև քաղաքը, որն էլ ավելի էր բարձրացնում քաղաքի առևտրական և ռազմական նշանակությունը: Տարսոնը Կիլիկիայի երկրորդ մայրաքաղաքն էր: Տարսոնի աշխարհագրական դիրքը նրան դարձրել էր Կիլիկիայի ամենավաճառաշահ քաղաքը՝ Այասից հետո: Նրա նշանակությունը հատկապես մեծացավ, երբ Այաս 1337թ. գրավվեց եգիպտացիների կողմից: 1201-1215թթ. Ջենովացիները Լևոն II-ից իբրև Պարզև ստացան Տարոնի մի ամբողջ փողոց: Կոռիկոսը ևս, որ հաստատված էր ծովի եզերքին, արդեն շատերի կողմից ճանաչված էր իբրև մի կարևոր նավահանգիստ: Կոռիկոսը Կիլիկիայում առևտրի զարգացման կարևոր կենտրոններից մեկն էր, այն մի միջազգային կենտրոն էր հանդիսանում, ուր բազմաթիվ ազգերի վաճառականներ գալիս էին առևտուր անելու: Սակայն Կիլիկիայում առևտրի զարգացման ու ծավալման տեսակետից ավելի մեծ դեր էր խաղացել Այաս նավահանգիստը: XIII-XIV դդ. ժամանակակիցների վկայությամբ Այասը այդ ժամանակ համարվում էր միջազգային առևտրի ամենակարևոր նավահանգիստներից մեկը: Այսպես խոշոր նշանակություն է ստանում

² Բոռնազյան Մ., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում:

Միրիայի խաչակիր ֆրանկ պետությունների անկման շրջանում և որպես այդպիսին առաջին անգամ հիշատակվում է 1261թ. ու նրանից հետո: Ղ. Ալիշանը նշում է, որ առաջին անգամ որպես վաճառաշահ քաղաք, Այասը հիշվում է 1261թ., այն կապակցությամբ, որ ոչ միայն Տարսոնում, Միսում և Մսիսում, այլ նաև Այասում վենետիկցիներին թույլատրվում է բնակության վայր ունենալ: Իսկ արդեն 1274թ. ջենովացի վաճառականների մուրհակներում Այասը կոչվում էր «Նավահանգիստ թագավորին Հայոց» (*Portus Ayacii Domini Regis Armenia*)³: Չնայած որոշ պատմաբաններ, այդ թվում նաև ֆրանսիացի պատմաբան Է. Դյուլորին են այն կարծիքն են հայտնում, որ Այասի բարգավաճմանը նպաստել են խաչակրաց արշավանքները, այնուամենայնիվ դա իրականությանը չի համապատասխանում: Ընդհակառակը, Այասի վերելքը սկսեց (1291) հենց խաչակիրների պարտությունից հետո և զարգացման գագաթնակետին հասավ XIV դ. սկզբին: Ինչպես ճշմարտացիորեն նշում է Վ. Հեյդը, Այասի վերելքը կապված էր այն հանգամանքի հետ, որ «երբ մուսուլմանները հետ վերցրին մերձծովյան երկրներ Տրիպոլին, Ակրան, ֆրանկները այլևս մուտք չունեին Միրիայի նավահանգիստները, և դրա համար նրանք նետվեցին դեպի Այաս, որը դարձավ նշանավոր նավահանգիստ, որտեղ հանդիպում էին ցամաքային և ծովային բոլոր առևտրականները»: Այասի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 1271թ. Այասում եղած նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն, որը գրում է. «Պետք է իմանալ, որ կա երկու Հայաստան՝ Մեծ և Փոքր: Շատ քաղաքներ ու դղյակներ կան Փոքր Հայաստանում և ամեն բանի մեջ առատություն է տիրում: Ծովեզերքում մի քաղաք կա, որ Լայաս է կոչվում, որ մեծ առևտրի տեղ է: Իմացեք, որ բոլոր համեմունքները, գործվածքները, թանկարժեք ապրանքները բերում են այստեղ ներսից, իսկ Վենետիկի, Ջենովայի և ուրիշ քաղաքների վաճառականները գալիս են, ծախում են իրենց բերած ապրանքները և գնում, տանում են ինչ որ իրենց պետք է»:⁴ Մարկո Պոլոյի մեզ տված այս տեղեկությունից հստակ երևում է որ Այասի բարգավաճումը սկսվել է Ակրայի անկումից շատ վաղ՝ Բաղդադի (1258) և Լատինական կայսրության (1261) անկումից հետո: Այդ մասին վկայում է նաև և հետևյալ փաստը, որ 1271թ. վենետիկցիներին տրված առևտրական արտոնագրի մեջ ասված է, որ վենետիկցիները իրավունք են ստանում

³ Ալիշան Ղ., Միսուան, Վենետիկ, 1886թ., էջ 359:

⁴ Марко Поло, Путешествие, Л., Москва, 1940, стр. 10

Այսպես եկեղեցի կառուցել, իսկ դա նշանակում է որ վենետիկցիները մինչ այդ արդեն հիմնել էին իրենց գաղութը Այասում:⁵ Կիլիկյան Հայաստանի առևտրական կյանքի և հատկապես Այասի մասին կարևոր տեղեկություններ է պարունակում Ֆլորենցիայի առևտրական ընկերության գործակալ Պալտուչի Պեկոլոտիի «Հրահանգ վաճառականության» գիրքը: Չնայած նա իր գրքում առավելապես անդրադարձել է Կիլիկյան Հայաստանի չափ ու կշռի միավորների համեմատությանը այլ երկրների դրամների հետ, բայց այնուամենայնիվ նա, 1336թ. լինելով Այասում, մեզ տեղեկացնում է, որ Այասը Մերձավոր Արևելքի՝ առևտրական ու վաճառականության խոշորագույն կենտրոններից մեկն էր և նշում է, թե ինչ ապրանքներ էին ներմուծվում Այաս ու արտահանվում Այասից:⁶ Թե որքանով էր Այաս նավահանգիստը համարվում Կիլիկիայի խոշոր առևտրական կենտրոն, վկայում է Այասում կատարվող առևտրի մեծ ծավալը: Ղ. Ալիշանը իր «Հայ-Վենետ» աշխատության մեջ մեջբերում է Այասում նստող վենետիկյան պայլի նամակը Վենետիկի դքսին, որտեղ պայլը նշում է, որ իր նպատակների առևտրական գործողություններից ստանում էր 0.5% մաքսաշահույթի իրավունք և 1,5 տարվա նրա ստացած եկամուտը Այասում կազմել է 7200 ֆրանկ: Հետևաբար, միայն վենետիկցիների կողմից կատարված առևտրի շրջանառության գումարը հասնում էր 1,5 մլն. ֆրանկի:⁷ Միայն վենետիկցիների տարեկան շրջանառության մեջ դրան գումարի մեծությունից երևում է, թե որքան մեծ էր Այասում կատարվող առևտրի ծավալը:

Կիլիկյան քաղաքներին վերաբերող վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, որ Կիլիկիայի քաղաքները XIII-XIV դդ. ակտիվ կերպով մասնակցել են արտաքին և տարանցիկ առևտրին: Դեպի Կիլիկիայի նավահանգիստներն էին գալիս բազմաթիվ առևտրական քարավաններ Այասի մայրցամաքի խորքերից, իսկ Արևմուտքից՝ առևտրական նավեր: Ինչպես նավահանգիստներում, այնպես էլ լեռնանցքներում հաստատված և տեղադրված էին մաքսատներ և բաժտներ: Վերոհիշյալ բոլոր մաքսային ու տուրքային գործառնությունները կարգավորելու համար ստեղծված էր երկրի ֆինանսները ղեկավարող մի գործակալություն՝ պրոքսիմոս

⁵ Микаелян Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 372

⁶ Պալտուչիան Զ., Կիլիկյան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963թ., էջ 43:

⁷ Ալիշան Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896թ., էջ 60:

գործակալի գլխավորությամբ:⁸ Կիլիկյան պետությունը մեծապես հոգում է Այաս և Կոռիկոս այցելող օտար առևտրական նավերի ու քարավանների համար: Կիլիկիայի թագավորին ու պրոքսիմոսին այդ նավահանգիստներում ներկայացնում էր մի պաշտոնյա, որը կոչվում էր բաժտան կապիտան: Նա էր կապ հաստատում, պայմանագրեր կնքում, ակտեր կազմում օտար երկրների առևտրականների հետ և պրոքսիմոսի անունից բանակցություններ վարում օտար առևտրականների ներկայացուցիչների՝ պայլերի ու հյուպատոսների հետ: Հայկական մատենագրական աղբյուրները ցավոք սրտի համարյա ոչ մի տեղեկություն չեն հաղորդում օտարներից գանձվող մաքսերի, հարկերի ու տուրքերի մասին: Ինչպես հայտնի է, օտար վաճառականները շնորհագրեր էին ստանում ազատվելու այն հարկերից ու մաքսերից, որոնք առհասարակ գանձվում էին օտար առևտրականներից պետական գանձարանի օգտին, հետևաբար այդ կարգի մաքսերի ու տուրքերի մասին հիշատակություններ կան միայն առևտրական փաստաթղթերում: Ս. Բոռնազյանին հաջողվել է վերականգնել մի շարք հարկերի և տուրքերի տեսակները, որոնք չեն նշվում հայկական աղբյուրներում, դրա համար այդ տերմիններին համապատասխանող հայկական տերմիններ չի հաջողվել գտնել:

Օտար առևտրականներից գանձվող հարկի հիմքում ընկած էր փոխադրվող կամ վաճառվող ապրանքներից որոշ տոկոսների գանձումը, այսինքն՝ տոկոսային հարկը: Օտար առևտրականները ընդհանրապես վճարում էին 4% մաքսային տուրք, իսկ ջենովացիներին ու վենետիկցիներին տրված արտոնագրերով, նրանք վճարում էին 1%-ի չափով: Բացի տոկոսային հաստատուն մաքսային տուրքից, գոյություն են ունեցել նաև մասնակի՝ հարաբերական հարկեր, որոնք գանձվում են որոշ ապրանքներից, ինչպիսիք էին՝ գինի, յուղ, անասուններ, երկաթ, պղինձ, բամբակ, կտորեղեն և այլն:⁹ Օտարերկրացի առևտրականների գանձվող մաքսերը, տուրքերը շատ մեծ նշանակություն ունեին Կիլիկիայի թագավորության համար, քանի որ դրանցից ստացվող եկամուտը գլխավոր աղբյուրներից մեկն էր, որով պահվում էին պետությունը և բանակը:

⁸ Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դդ., 1967., Երևան, էջ 275:

⁹ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ հրատ., հ. 3, Երևան, 1976., էջ 734:

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Հայկ Մնացականյան

Երևանի Դ. Դեմիրճյանի անվան հ. 27 հիմնական դպրոց, 8-րդ դասարան
Ուսուցիչ՝ Լիլիա Օհանյան

Միջնադարյան Կիլիկյան Հայաստանի իշխանապետությունում, ապա նրան փոխարինած Կիլիկիայի հայկական թագավորությունում քաղաքային կյանքի 11-13-րդ դարերի վերելքը կապված էր հայերի կողմից աստիճանաբար յուրացված ու նրանց ռազմաքաղաքական տիրապետության ներքո անցած այս երկրամասում ինքնիշխան հայկական պետության ստեղծման հետ:

Բուն Հայաստանի քաղաքային բնակչության մաս կազմող հազարավոր արհեստավորներն ու առևտրականները զանգվածաբար տեղափոխվեցին Միջերկրական ծովի ափերին գտնվող այս բերրի ու հարուստ երկրամաս: Կիլիկիայում քաղաքային կյանքի զարգացման վրա որոշակիորեն ներազդեցին նաև խաչակրաց արշավանքները, որոնք առհասարակ Ասիայի և Եվրոպայի բազմաբնույթ հարաբերությունների, մասնավորապես առևտրի ու տնտեսության բնագավառներում կապերի շատ մեծ ակտիվացման խթան հանդիսացան: Սկզբնական շրջանում Կիլիկյան Հայաստանի կարևորագույն քաղաքները հետևյալներն էին.

- Միսը
- Տարսոնը
- Ադանան
- Մամեստիան
- Անարզաբան:

Դրանք ամրոցներ և բերդաքաղաքներ էին և մեծ դեր էին խաղում երկրի տնտեսական և քաղաքական կյանքում: Սակայն դրանց կարևորագույն դերը երևում էր հատկապես ռազմական ոլորտում:

Հետագայում վերոհիշյալ կարևորագույն քաղաքներին ավելացան նաև հետևյալները՝

- Այասը
- Կոռիկոսը:

Միս: Ընդհանրապես նոր քաղաքների հիմնումը վերապահված էր թագավորին: Կիլիկյան Հայաստանի քաղաքների շարքում որպես վարչաքաղաքական և մշակութային կենտրոն առանձնանում էր Միս մայրաքաղաքը: Հայկական թագավորության շրջանում այն դիտվում էր որպես համահայկական կենտրոն: Թեև նրա մասին հիշատակություն կա 5-րդ դարից սկսած, բայց այս հայկական պետության օրոք միայն բարձրացավ և դարձավ երկրի վարչական, արհեստագործության, առևտրի ու կուլտուրայի զարգացման խոշոր կենտրոններից մեկը: Ճանապարհորդ Վիլլեբրանդ Օլդենբուրդի վկայությամբ 13-րդ դարի սկզբին Միսը անպարիսպ մի քաղաք էր, ուր բնակություն էին հաստատել «անթիվ ու մեծատուն» մարդիկ¹:

Պատմություն: Կիլիկիայի Թորոս Ա իշխանապետը գահակալման սկզբին տեղի հայերի աջակցությամբ բյուզանդական տիրապետությունից ազատագրել է Միսը և մոտակայքում հիմնել Դրագարկի վանքը, որն այնուհետև դարձել է նաև Ռուբինյանների դամբարան: 1114 թվականի նոյեմբերի 13-ի երկրաշարժից խիստ տուժել է նաև Միսը, գոհվել են բազմաթիվ բնակիչներ:

Մլեհ իշխանապետը վերակառուցել է Միսը և 1173-ին այն հռչակել է Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք: Լևոն Բ Մեծագործը հիմնովին վերակառուցել, պարսպապատել է, արքունի ապարանքով, աշխարհիկ ու կրոնական շենքերով, պարտեզ-գրեսարաններով ու ծաղկանոցներով ճոխացրել է Միսը:

«Կիլիկիոյ հայկական թագաւորութեան փառապանծ մայրաքաղաքն էր Միսը: Քաղաքին կից բարձունքի մը վրայ, ապառաժոտ կարմրագույն եւ կրային քարաբլուրի կատարին կը բարձրանար Միսի նշանաւոր բերդը, բոլորովին առանձնութեան մը մեջ, խոր անդունդներ եւ անմերձենալի վիհեր ձայն կը բաժնէին շրջակայ բարձունքներէն»²:

Տարսուն: Քաղաք Դաշտային Կիլիկիայում, Կյուղնոս գետի զույգ ափերին: Տարսունի հիմնադրումը վերագրվում է Տարսիսին (Նոյի որդի Հաբեթի սերնդից): Այն Կիլիկիայի ամենախոշոր վաճառաշահ ու հարուստ քաղաքն էր: Հայկական թագավորության ժամանակաշրջանում Տարսունն ուներ բազմազգ բնակչություն: Տարսունի

¹ Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ա., Պողոսյան Ս. «Հայ ժողովրդի պատմություն. սկզբից մինչև XVIII դարի վերջը», Երևան, 1975թ., էջ 553:

² Հովհաննիսյան Մ., «Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները», Վենետիկ-Ս. Ղազար, 1989թ., էջ 33, <http://goo.gl/9XckwJ> 05.04.16]] .:

նավահանգիստը տարեկան հարյուրավոր առևտրական նավեր էր ընդունում:

Ներսես Լամբրոնացու արքեպիսկոպոսության ժամանակներից Տարսուրը դարձել է միջնադարյան հայ մշակույթի առաջատար կենտրոն, ունեցել բարձրագույն դպրոց: Տարսուրի մայր տաճարում՝ Ս.Ստեփանյան, տեղի են ունեցել Լևոն Բ Մեծագործի և նրա հաջորդների թագադրման արարողությունները: 1375 թ Կիլիկիայում հայկական պետության անկումից հետո Տարսուրը, ընկնելով Եգիպտոսի արաբական սուլթանության, ապա 1487-ից օսմանյան սուլթանության տիրապետության ներքո, հետզհետե ավերվել է և վերածվել անշուք ավանի:

Ադանա: Քաղաք է Դաշտային Կիլիկիայում: Արհեստագործության և առևտրի նշանավոր կենտրոն է եղել Ադանա քաղաքը, որը բուռն կերպով սկսում է զարգանալ 12-րդ դարի երկրորդ կեսին: Այդ ժամանակաշրջանում ապրող մատենագիրների վկայությամբ Ադանան 12-13-րդ դարերում մարդաշատ, արհեստագործությամբ ու առևտրով զարգացած, ոսկով և արծաթով հարստացած քաղաք էր:

Երբ խաչակիրները անցնում էին Կիլիկիայով, Ադանան գտնվում էր Հերոսմյան տուն և Լաբրոնի տերասպետ Օշինի իշխանության ներքո: 1907թ. աշնանը խաչակիրները գրավեցին Ադանան: Իշխան Լևոն Ա-ն, 1130-1132 թվականներին ետ նվաճելով Դաշտային Կիլիկիան, Ադանան միացրեց Ռուբինյան նորակազմ իշխանությանը: 12-14-րդ դարերում այն մտել է Կիլիկիայի Հայկական թագավորության կազմի մեջ: Եղել է արհեստագործական և առևտրի նշանավոր կենտրոն: Ադանայում տեղի են ունեցել 1303 և 1316 թվականների եկեղեցական ժողովները: 13-14-րդ դարերում Ադանայում կառուցվել են թագավորական պալատը՝ Ս. Մինաս տաճարով, Ս. Աստվածածին և Ս. Ստեփանոս եկեղեցիները: Ս. Ստեփանոսի մոտ հայերն ունեցել են նաև Ս. Հակոբ և Ս. Մարգիս եկեղեցիները, որոնք հետագայում կործանվել են:

«Ատանա շատ հին քաղաք է. հնուց ծանոթ էր ճամբորդներուն և վաճառականներուն, բայց ոչ նույն անունով. հավանաբար հին անունն էր SARUS»³:

Մամեստիա: Քաղաք Դաշտային Կիլիկիայում, Ադանայից մոտ 25 կմ հյուսիս-արևելք, Պիրամոս (Չահան) գետի աջ ափին: VII-X դդ.

³ Հովհաննիսյան Ս. , նշվ. աշխ., էջ 226:

Մամեստիան տիրել են մե՛րթ արաբները, մե՛րթ բյուզանդացիները: X-XI դդ. հայերը կազմել են Մամեստիայի բնակչության գերակշռող տարրը: XI դարի 1 – ին կեսին Բյուզանդիան այն հանձնել էր հայ իշխան Ապլղարիպ Արծրունուն: Նույն դարի վերջին Մամեստիան նվաճեցին խաչակիր ասպետները (այդ ժամանակ Մամեստիայի քաղաքապետն էր Ասպետ հայ իշխանը):

XII դ. 1-ին կեսին հզորացած Ռուբինյանները հաղթեցին խաչակիրներին և ամբողջ Դաշտային Կիլիկիան Մամեստիայով հանդերձ միավորեցին Կիլիկյան Հայաստանին: Մամեսը դարձավ համանուն նահանգի կենտրոնը: 1152-ին բյուզանդական զորավար Անդրոնիկոսը պաշարեց Մամեստիան և փորձեց զավթել այն: Սակայն Թորոս Բ Մեծ իշխանը ջախջախեց նրան և ազատագրեց Մամեստիան: 1188-ին Լևոն Բ Մեծը Մամեստիայի հսկողությունը հանձնարարեց Չորտվանել Սասնեցու որդի Հեթումին՝ նրան կնության տալով իր եղբոր՝ Ռուբենի դստերը՝ Ալիսին:

Անարգաբա: Անարգաբան գտնվել է Դաշտային Կիլիկիայում՝ Սիս քաղաքից մոտ 25 կմ հարավ-արևելք՝ Սաուրան և Սիս գետերի միջև ընկած հարթավայրում: Ամրոցը կառուցված էր մոտ 200 մ բարձրությամբ ժայռաբլրի վրա և երեք կողմից անմատչելի էր: Ամրոցի արևմտյան ստորոտին տարածվում էր բուն քաղաքը: Քաղաքն ու ամրոցը եղել են Կիլիկիայի հայկական թագավորության կենտրոններից: 1909 թվականի Ադանայի կոտորածի ժամանակ սպանվել է նաև Անարգաբայի հայ բնակչությունը: Թուրքերը քաղաքն ու ամրոցը ներկայացնում են որպես Անավարգա:

Հետաքրքիր տեղեկություն.

Կիլիկիայի հայկական թագավորության Անարգաբա քաղաքում և ամրոցում (ներկայումս Թուրքիայի տարածքում Անավարգա գյուղն է) կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել է աշխարհում առաջին երկկողմանի ճանապարհը: Այս մասին հայտնում է թուրքական «Անադոլու» լրատվական գործակալությունը:

Չուքուրովայի համալսարանի դասախոս, հնագետ Ֆաթիհ Գյուլշենը հայտնել է, որ 34 մետր լայնություն և 2700 մետր երկարություն ունեցող երկկողմանի ճանապարհը համարվում է անտիկ աշխարհի առաջին և ամենամեծ պողոտան, որը հոժ գիծ է ունեցել:

«Ճանապարհը տարբեր քաղաքակրթությունների է պատկանել՝ Բյուզանդիային, Մասանյան պետությանը, Հայկական թագավորությանը

և Օսմանյան կայսրությանը: Իրականացված աշխատանքների արդյունքում հաջողվել է բացել պողոտայի 250 մետրը», – ասել է Գյուլշենը⁴:

Հայկական թագավորության տարիներին հիմնված, բայց առևտրի ու արհեստագործության գործում հոչակ ձեռք բերած նավահանգստային քաղաքներ էին Այասն ու Կոռիկոսը:

Այաս: Արտաքին և ներքին առևտրի, արհեստագործության զարգացման տեսակետից Կիլիկիայի ամենանշանավոր քաղաքն Այասն էր, որը եվրոպացիներն անվանում էին «*նավահանգիստ թագավորին հայոց*»: Տարանցիկ առևտրից հայկական թագավորությունը մեծ եկամուտներ էր ստանում: Կիլիկյան Հայաստանի քաղաքային բնակչությունը բազմազգ էր: Հայերից բացի այդտեղ ապրում էին նաև հույներ, ասորիներ, հրեաներ և այլք: Հոչակավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն 1271թ. եղել է Այասում և նկարագրել նրա աշխույժ կյանքը: Այդ նկարագրության մեջ ասված է. «... Երկիրն ունի բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր և ամեն ինչ ունի առատորեն ... Նրանք, այսինքն՝ հայերը, ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայաս (Այաս), որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում: Որովհետև դուք պետք է իմանաք, որ բոլոր համեմունքները և մետաքսյա ու արծաթյա կերպասները, արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը: Ե՛վ Վենետիկի, և՛ Ջենովայի, և՛ ուրիշ երկրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները կամ գնելու ինչ որ իրենք պետք ունեն»⁵ :

Այաս քաղաքի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդել նաև Ֆլորենցիայի վաճառական ընկերության գործակալ Պալտուչչի Բեկոլոդին իր «Հրահանգ վաճառականության» գրքում: Նա 1336 -1340 թթ. գրել է, որ Կիլիկիան և հատկապես նրա Այաս քաղաքը առևտրի ու վաճառականության խոշորագույն կենտրոն է եղել, ուր մշտապես բնակվել են վաճառականներ⁶:

Այն շրջապատված է կիտրոնի և նարնջի այգիներով, մոտակայքում կան անտառներ: Քաղաքը մասնակցել է Արևելքից Եվրոպա կատարվող տարանցիկ առևտրին: Իտալացիները կոչել են այն *Լայաս*: Ունեցել է հզոր միջնաբերդ, որից հիմա միայն ավերակներ են պահպանվել:

⁴ <http://www.1in.am/1585845.html>, 05.04.16 | .

⁵ Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ս., Պողոսյան Ս. նշված աշխատությունը, էջ 554:

⁶ Նույն տեղում, էջ 554

Կոռիկոս: «Շովային Կիլիկիոյ պարսպապատ բերդաքաղաքներէն մէկն էր Կոռիկոս. ունէր իր միջնաբերդը՝ բարձր դիրքով՝ ծովափի մէկ ժայռոտ հյուանդանին վրայ»⁷:

Պատմություն: Կոռիկոսը նավահանգստային բերդաքաղաք էր Կիլիկյան Հայաստանում՝ Միջերկրական ծովի ափին՝ Մելնկիայից 45 կմ հյուսիս-արևելք: Թորոս Երկրորդ իշխանի գահակալման տարիներին Կոռիկոսը միացավ Կիլիկյան Հայաստանին: 1206 թվականին Լևոն Առաջին թագավորը հիմնավորապես ավարտեց Կոռիկոսի վերակառուցումները: Շովային բերդի ամրությունները տակավին կանգուն են: Նրա նավահանգիստը հարմարեցվեց մեծաքանակ և խոշոր նավերի ընդունման համար: Այնտեղ հաստատվեց մաքսային գլխավոր կետերից մէկը: Կոռիկոսում պահպանվել են բնակելի ու հասարակական շէնքերի, թաղածածկ մատուռների, գմբեթավոր տաճարների մնացորդներ: Կոռիկոսի ավերակներն այժմ թուրքերն անվանում են Քոռկոս:

Նշեմ, որ Թուրքիայի 13 պատմական վայրեր ներառված են UNESCO-ի համաշխարհային ժառանգության պահպանման ժամանակավոր ցանկի մեջ, և դրանցից երկուսը Կիլիկյան թագավորության մեզ հասած կարևոր նմուշներն են՝ Ադանայի մերձակայքում գտնվող Անարգաբա ամրոցը և Մերսին նահանգի «Քրզ Գալէսի»-ն (Կոռիկոս)⁸ :

Այսպիսով, Կիլիկյան Հայաստանում քաղաքը ոչ միայն վարչատնտեսական, այլև ռազմական միավոր էր, քանզի քաղաքային բնակչության մի մասը զինվորական ծառայություն էր կատարում: Կիլիկիայի քաղաքները հանդիսացել են նաև արհեստագործության և առևտրի կենտրոններ, նպաստել են երկրի ներսում գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքի ապրանքայնացման պրոցեսի ուժեղացմանը և քաղաքային կյանքի ու շուկայական հարաբերությունների ծավալմանն ու խորացմանը, մի երևույթ, որ իր շրջապատույտի մեջ էր առել ոչ միայն արհեստավորներին ու առևտրականներին, այլև ֆեոդալական որոշ տարրերի և գյուղացիների:

⁷ Հովհաննիսյան Մ. նշված աշխատությունը, էջ 242:

⁸ <http://akunq.net/am/?cat=51,06.04.16> .

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 13-14-ԸՂ ԴԴ.**

Մեղա Մեղքոյան

Վրեժ Համբարձումյանի անվան հ. 17 հիմնական դպրոց,
9-րդ դասարան
Ուսուցիչ՝ Տաթևիկ Եսայան

Հայերը Կիլիկիայում հաստատվել են դեռևս հնագույն ժամանակներից և պատմական տարբեր իրադարձությունների բերումով նրանց թիվը գնալով ավելացել է: Շրջադարձային նշանակություն ունեցող նաև Անիի Բագրատունյաց թագավորության անկումը (1045թ), որի հետևանքով հայերի հոսքը դեպի Կիլիկիա ավելի ուժեղացավ և հիմք հանդիսացավ այնտեղ առանձին հայկական իշխանությունների, որոնք էլ տարան դեպի հայկական թագավորության ստեղծմանն ու հռչակմանը: Հայկական թագավորությունը, բնականաբար, պետք է ձգտեր հզորության ու այդպիսի պայմաններում նրա համար կարևոր նշանակություն ուներ հատկապես մերձավորարևելյան ավազանում կատարվող առևտրում խոշոր դերակատարում ունենալը: Պետք է ասել, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը ինչպես նախկին Մեծ Հայքի թագավորությունը, գտնվում էր աշխարհագրական այնպիսի դիրքում, որտեղ խաչվում էին առևտրական ճանապարհները: Այս առումով ուսումնասիրելով Կիլիկիայի առևտրական հարաբերությունները հարևան երկրների հետ կարելի է պատկերացում կազմել նաև հայ վաճառականության կատարած մեծ դերի մասին Օսմանյան Թուրքիայում հատկապես, որ Հայկական լեռնաշխարհն միշտ հանդիսացել է հարևան երկրների համար կովի թատերաբեմ, բանուկ ճանապարհների և առևտրական տարանցիկ գոտի լինելու պատճառով: Չի կարելի բացառել նաև այն, որ հայ ժողովուրդը առևտրական հարաբերություններով միշտ էլ աչքի է ընկել իր ձեռքբերումներով աշխարհի տարբեր ծայրերում՝ Հնդկաստանում և այլուր, ուր հայ վաճառականներին հարգել և ճանաչել են ռուսական ցարն ու պարսիկ շահը: Կիլիկիայում նույնպես հայերը հիմնվելով և ունենալով անկախ պետականություն՝ անշուշտ առաջնային դիրք պետք է գրավեյին տարածաշրջանի առևտրի իրականացման գործում, հատկապես, որ առևտուրը միշտ էլ հանդիսացել է յուրաքանչյուր հզոր պետության գոյատևման և

դիվանագիտական քայլերի հաջող դրսևորման գրավական: Դա են վկայում թե Կիլիկիայի հայկական պետության և թե առանձին հզոր պետությունների միջև մղվող պայքարի ավարտին հստատված հաշտության պայմանագրերում տեղ գտած առևտրական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ կետերը: Մակայն պետք է փաստել, որ Կիլիկիայի հայկական պետության անկման պատճառներից գլխավորը նրա իրականացրած առևտրին հարևանների կողմից տիրելու ձգտումն էր, որի դեպքում Կիլիկիայում ուղղակի հայկական թագավորությունը գոյատևել չի կարող: Այս առումով հատուկ ուշադրության է արժանի առևտրի՝ որպես Հայոց թագավորության անկման գործոն հանդիսանալու հիմնախնդիրը: Վերոհիշյալին հնարավորինս ամբողջական մոտեցում ցուցաբերելու նպատակով հարկ է ներկայացնել այն գլխավոր սկզբունքը, որի միջոցով իրականացնելու ենք նշվածի 13-14րդ. վերլուծությունը: Այդ տեսանկյունից կարևոր են Արևելքի և Արևմուտքի միջև տեղի ունեցած ռազմաքաղաքական վճռորոշ իրադարձությունները, որոնք շրջադարձային նշանակություն էին ունենում նաև միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար: Համադրելով աշխարհաքաղաքական այդ կարևոր փոփոխությունների և Կիլիկիան Հայաստանի միջազգային առևտրական պայամանագրերի կնքման տվյալները՝ կարելի է բավականին փաստարկված ներկայացնել առևտրական շահի և քաղաքական հարաբերությունների փողազդեցության ընթացքը:

Միջազգային առևտուրն առաջնային նշանակություն ուներ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության համար: Լայն սպառում ապահովելով բազմատեսակ ապրանքների համար՝ այն խթանում էր երկրի արհեստների ու գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև մեծ եկամուտներ բերում պետական գանձարան: Արդեն XIII դ. սկզբից Կիլիկյան Հայաստանն առևտրական կապեր հաստատեց միջերկրածովյան երկրների՝ մասնավորապես Վենետիկի և Ջենովայի հանրապետությունների հետ, որոնք անմիջապես սկսեցին մրցակցել Կիլիկյան հայոց թագավորությունում ամուր դիրքեր գրավելու համար: Գրեթե հարյուր քառասուն տարի Հայկական Կիլիկիան կարևոր դերակատարում էր պահպանում միջերկրածովյան առևտրում, ինչը չէր կարող չանդրադառնալ պետության արտաքին քաղաքականության վրա:

Միջերկրածովյան առևտրում Կիլիկյան Հայաստանի ներգրավումը, աշխարհաքաղաքական վճռորոշ իրադարձություններով

պայմանավորված՝ ընթացել է մեր կարծիքով հստակ արտահայտվող ժամանակափուլերով. ա) Առաջին փուլը պետք է սկսել 1201 թվականով, երբ Սալահ ադ-Դինի արշավանքներից հետո խաչակիրների նավահանգիստներում առևտրական գործունեություն ծավալող իտալական հանրապետություններն իրենց հայացքներն ուղղեցին արդեն լայն ծովափ ունեցող Կիլիկյան Հայաստանին: Ջարգացումներին մեծ թափ հաղորդեց նաև Լատինական կայսրության ձևավորումը, որից հետո հատկապես ջենովացիներն ավելի մեծ շահագրգռվածությամբ ձգտեցին դեպի Կիլիկիա. բ) Հաջորդ փուլը սկզբնավորելու համար կարելի է առանձնացնել Մերձավոր Արևելքում 1240-ական թվականների մոնղոլական արշավանքները, որի գագաթնակետն Հուլավուրի կողմից 1258 թ. Բաղդադի գրավումն էր: 1261 թ. Բյուզանդիայի կայսրության վերականգնումն ու Նիմֆեյան պայմանագիրը սրեցին ջենովավենետիկյան հակամարտությունը: Եթե Ջենովայի առջև լայն բացվեցին Սև ծովի դարպասները, ապա Վենետիկը սկսեց ավելի կայունացնել իր դիրքերն Արևելյան Միջերկրականում՝ հատկապես Կիլիկյան Հայաստանում: Իսկ 1268 թ. Անտիոքի նվաճումը խաչակրաց տիրույթների մոտալուտ անկման ահազանգն էր, որից հետո իտալական հանրապետությունները սկսեցին էլ ավելի ամրացնել իրենց դիրքերը Հայոց թագավորությունում. գ) Երրորդ՝ ամենավճռական ժամանակափուլը մեկնարկեց 1291 թ. Արևելքում խաչակիրների անկումով, որից հետո Կիլիկյան Հայաստանը արավելրոպական պետությունների և Եգիպտոսի սուլթանության տիրույթների միջև ընթացող առևտրական փոխհարաբերություններում ստանձնեց կարևորագույն միջնորդի երկրի դեր: Այդ դերակատարումն ավելի ընդգծված բնույթ էր կրում հատկապես պապական արգելքների խստացման ժամանակամիջոցների ընթացքում: Ընդ որում, ընդհուպ մինչև 1337 թ. Այասի անկումը, միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի նշանակությունը մշտապես վերելք է ապրել:

Կիլիկիայի առևտրական գլխավոր դարպասի կարևորությունն այնքան մեծ էր, որ նրա կործանումը Արևմուտքում քաղաքական որոշ գործողությունների ալիք առաջացրեց: Դեռևս 1320 թ. Հովհաննես XXII պապը եվրոպական պետություններից կտրականապես պահանջել էր դադարեցնել Եգիպտոսի սուլթանության հետ առևտրական շփումները: Տեղի տալով պապության ճնշումներին՝ 1323 թ. վենետիկյան իշխանությունները նույնպես նման արգելքներ սահմանեցին իրենց

հպատակների համար, որոնք տարածվում էին նույնիսկ հասարակ ճանապարհորդությունների վրա: Ալեքսանդրիայում վենետիկցիները ստիպված են լինում նույնիսկ փակել իրենց հյուպատոսությունը: Հովհաննես XXII-ը 1326 թ. կայացնում է աննախադեպ որոշում՝ իրեն նախորդած պապերի գահակալման ժամանակ մամլուքներին ռազմամթերք վաճառած բոլոր անձինք այդուհետև համարվելու էին հերետիկոսներ¹: Նույն՝ 1323 թ., Հովհաննես XXII-ը որոշում է 30000 ֆլորին գումար ուղարկել Կիլիկյան Հայաստան՝ Այասը վերականգնելու համար²: Լևոն Դ-ին ուղղած նամակում պապը գրել էր, որ իր նվիրակներին պատվիրել էր այդ 30000 ֆլորինը փոխառնել ֆլորենտական Բարդի ընկերությունից և տրամադրել Հայոց թագավորությանը, միաժամանակ նշելով, որ այդ ձեռնարկումն իրեն հորդորել է իրականացնել Մարինո Մանուտոն: Այդուհանդերձ, գումարը բավական ուշացումով է տեղ հասնում, իսկ մինչ այդ հայերը սեփական ուժերով և կարճ ժամանակում վերականգնել էին Այասը³: Լևոն Դ-ը փորձում է էլ ավելի սերտացնել Կիլիկյան Հայաստանի առևտրական կապերն արևմտաեվրոպական պետությունների հետ: Հայոց արքան 1330 թ. ամուսնանում է Սիցիլիայի թագավոր Ֆրեդերիկ III Արագոնցու (1296-1337) դստեր՝ Կոնստանսի հետ ⁴, իսկ մեկ տարի անց երկու թագավորությունների միջև կնքվում է առևտրական պայմանագիր⁵: Բավական երկար բանակցություններից հետո 1333 թ. նոյեմբերի 10-ին Լևոն Դ-ը Վենետիկի դոժ Ֆրանչեսկո Դանդոլոյի (1328-1339) դեսպանին նոր արտոնագիր է շնորհում: Նկատենք, որ թեև Այասի անկմանն ընդամենը մեկ տարի էր մնացել, ըստ Պեգոլոտտիի՝ այնտեղ առևտուր էին անում ոչ միայն ջենովացի ու վենետիկցի, այլ նաև կատալոնացի, պրովանսցի ու սիցիլացի վաճառականները: 1335 թ. իշխան Աբուսայիդի (1317-1335) մահից հետո Իշխանությունը սկսում է արագորեն քայքայվել: Հովհաննես XXII և նրան հաջորդած Բենեդիկտոս XII (1334-1342) պապերի՝ Լևոն Դ-ին ուղղած հավաստիացումները, թե Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ VI Վալուան (1328-1350) նախապատրաստում է

¹ Ashort E., Levant Trade in the Later Middle Ages, Princeton, New Jersey, 1983 էջ 44-49

² Նեքսես Պալիենցի ժամանակագրական հատվածները, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմ. Հակոբյան Վ. Ա., Ե., 1956, էջ 70

³ Ալիշան Ղ., Միսուան, Վենետիկ, 1885: էջ 390-391

⁴ Յովհան Դարդել, Ժամանակագրություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891 էջ 29-30

⁵ Լևոն Ե և իր հրովարտակը // Բազմավեպ, 1847 էջ 92

խաչակրաց նոր արշավանք՝ մնացին սոսկ խոսքեր: Եվ արդեն 1335 թ. Եգիպտոսի սուլթանի հրամանով Հալեպի մամլուք էմիր Ալթուն-Բուղայի զորքերը ներխուժում են Կիլիկյան Հայաստան և հասնելով Տարսոն՝ ճանապարհին թալանի ենթարկում Մամեստիան և Ադանան: Հաջորդ տարի մամլուքները, կարամանյան թուրքմենները կրկին ներխուժում են Կիլիկիա: Միայն 1337 թ. Եգիպտոսի սուլթանը համաձայնում է խաղաղության պայմանագիր կնքել՝ ծանր պայմաններ դնելով Լևոն Դ-ի առջև: Կիլիկյան Հայաստանը զրկվում էր մինչև Պիրամոս գետն ընկած տարածքներից՝ այդ թվում և Այասից ⁶: Հայկական խոշորագույն նավահանգստի կորուստը ծանր հարված էր երկրի տնտեսությանը: Պատահական չէ, որ մինչ այդ Կիլիկիայի վրա իրականացված բոլոր՝ նույնիսկ ամենաավերիչ ասպատակություններից հետո էլ միջազգային մեծածավալ առևտրից գոյացող եկամուտների շնորհիվ բավական կարճ ժամանակում պետության տնտեսական կյանքը բնականոն հունի մեջ էր ընկնում⁷: Փաստորեն կարելի է ասել, որ Այասի կորուստը միջազգային առևտրում Հայկական Կիլիկիայի վերջակետն էր: Եվրոպայում և Արևելքում XIII-XIV դդ. տեղի ունեցած քաղաքական շրջադարձային իրադարձությունների և Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական պայմանագրերի կնքման ժամանակագրական սովալները քննելիս՝ անմիջապես աչքի է զարնում դրանց փոխպայմանավորվածության բարձր աստիճանը: Սովորաբար քաղաքական նշանակալից յուրաքանչյուր փոփոխությանն անմիջապես հաջորդել է Վենետիկի, Ջենովայի կամ Եվրոպական այլ պետությունների հետ առևտրական պայմանագրերի ստորագրումը: Դա թույլ է տալիս փաստելու, որ Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում միջազգային առևտրի վրա խարսխված տնտեսական շահի գործոնն առաջնահերթ նշանակություն է ունեցել: XIII դ. կեսից՝ մամլուքների իշխանության հաստատումից սկսած, Եգիպտոսի սուլթանության արտաքին քաղաքականության գերխնդիրն է դառնում հնարավորինս չեզոքացնել Իշխանության և Եվրոպայի դաշինքի համար ամուր նախապայմաններ ձևավորող յուրաքանչյուր գործոն: Հայկական Կիլիկիան այդ բազմակողմանի համագործակցության հիմնական դերակատարներից էր: Ընդ որում, առանձնահատուկ կարևորություն

⁶ Микаелян Г., История Киликийского Армянского государства, Е., 1952. էջ 457

⁷ Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005: էջ 405-407

ուներ Կիլիկիայի դերն առևտրական փոխհարաբերություններում, որի հետ մեկտեղ, Հայկական թագավորությունը կամրջի դեր էր կատարում Հուլավյանների տերության և Եվրոպայի միջև ընթացող թանկարժեք մետաղների շրջանառության համար⁸: Քանի դեռ Մերձավոր Արևելքում Հուլավյանները ռազմաքաղաքական գերակայություն ունեին, իսկ Արևմուտքը, հանձինս խաչակրաց արշավանքների սպառնալիքների ու արգելքների քաղաքականությամբ իրականացվող տնտեսական շրջափակման, ազդեցիկ քաղաքական լծակներ ուներ, մամուլքներն իրենց ռազմավարական ծրագրերում ստիպված էին բավական զգուշություն ցուցաբերել: Եթե XIV դ. առաջին քառորդին Եվրոպայում հնչող խաչակրաց արշավանքների կոչերից Եգիպտոսի սուլթանությունը կարող էր նույնիսկ շատ չզգուշանալ, ապա տնտեսական շրջափակումը նրան ճնշելու թերևս ամենաազդեցիկ գործիքն էր: Նման պարագայում Կիլիկիան և Կիպրոսը մամուլքների համար կենսական նշանակության ապրանքների կարևորագույն աղբյուրների էին վերածվում: Արդեն նշել ենք, որ այդ միջնորդական դերում Հայոց թագավորության նշանակությունը շատ մեծ էր: Չունենալով թանկարժեք մետաղների մեծ ծավալների արդունահանում՝ Եգիպտոսի սուլթանության պետական գանձարանի համար միջազգային առևտուրը դրանց կուտակման հիմնական միջոցն էր: Սակայն XIV դ. 30-ական թվականների վերջին, երբ այլևս չկար մոնոպոլական վտանգը, խաչակրաց նոր արշավանքի հիմնական կազմակերպիչներ Ֆրանսիան և Անգլիան աստիճանաբար ընկղմվում էին Հարյուրամյա պատերազմի մեջ, իսկ պապության գործածած արգելքները սպառել էին իրենց ուժը, իսկ Եգիպտոսի սուլթանությունն իր ռազմաքաղաքական նախագծերում գրեթե լիակատար ազատություն էր ստանում: Մյուս կողմից՝ Փոքր Ասիայում գնալով հզորացող թյուրքական պետական կազմավորումները սպառնում էին իրենց ձեռքը վերցնել Մերձավոր Արևելքում նվաճողական քաղաքականության գերակայությունը: Առաջ անցնելով մամուլքներից՝ թյուրքերն իրենք կարող էին նվաճել թե՞ Կիլիկյան Հայաստանը, և թե՞ Կիպրոսը, ինչն ի վերջո կհանգեցնեք նրանց առևտրատնտեսական, իսկ ապա նաև քաղաքական գերակայությանն Արևելյան Միջերկրականում ու Մերձավոր Արևելքում: Այս դեպքում արդեն Եգիպտոսի սուլթանությանը

⁸Spufford P., Money and Its Uses in Medieval Europe, Cambridge, 1988 էջ 149-156

մնում էր անցնել վճռական քայլերի, որոնցում Հայոց թագավորության նվաճմանն առաջնահերթ նշանակություն էր տրված:

Հոդվածում ներկայացված է Կիլիկյան Հայաստանի առևտրատնտեսական հարաբերությունները 13-14դդ: Այս ժամանակահատվածում Կիլիկյան Հայաստանը գտնվում էր իր ծաղկման գագաթնակետին և առևտրական ակտիվ կապերով կապված էր մերձավորարևելյան երկրների և Եվրոպայի հետ և վերածվել էր տարանցիկ առևտրային գոտու: Հատկապես մեծ դեր էր խաղում Այաս նավահանգիստը, որը միշտ էլ հանդիսացել է կովախնձոր Կիլիկիայի հայկական թագավորության հարևանների միջև: Փաստորեն, տիրել Այասին կնշանակեր Կիլիկիայի հայկական թագավորության կործանում:

Ուսումնասիրելով Կիլիկյան Հայաստանի և հարևան երկրների միջև եղած առևտրատնտեսական հարաբերությունները եկել ենք այն եզրակացության, որ Կիլիկիայի հայկական թագավորության կործանման գլխավոր պատճառներից մեկը հանդիսացել է նրա ունեցած գերակշիռ դերը միջազգային առևտրի տնօրինման գործընթացում:

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՑԹԸ
ԼԵՎՈՆ Բ ՄԵԾԱԳՈՐԾԻ ՕՐՈՔ**

Լևոն Մինասյան

Լ. Տոլոստոյի անվան հ.128 հիմնական դպրոց, 8-րդ դասարան
Ուսուցիչ՝ Լիդա Խաչատրյան

Հայ ժողովրդի պատմության ամենահետաքրքիր էջերից է հայկական կիլիկյան թագավորությունը: Առաջանալով հայկական լեռնաշխարհից դուրս այս թագավորությունը գոյություն ունեցավ գրեթե երեք հարյուր ամյակ: Կիլիկյան Հայաստանը դարձել էր Եվրոպան, Ասիան ու Աֆրիկան միմյանց կապող բոլոր առևտրական ուղիների խաչմերուկը: Նրա տարածքով էր անցնում նշանավոր Մետաքսի ճանապարհը: Ցամաքային ու ծովային ուղիներով Կիլիկյան կապվում էր Մեծ Հայքի, Միջագետքի, Պարսկաստանի, Հնդկաստանի ու Չինաստանի, ինչպես նաև՝ Սկյութիայի Ղրիմի, դանուբյան և միջերկրածովյան բոլոր երկրների հետ:

Կիլիկյան թագավորության գլուխը, գերագույն տերն ու միանձնյա կառավարիչը հայոց թագավորն էր, ով օժտված էր բացառիկ իրավունքներով: Թագավորի իրավասության տակ էր երկրի ներքին ու արտաքին հարաբերությունների ողջ համակարգը: Նա էր ղեկավարում երկրի արտաքին հարաբերությունները, ղեսպաններ առաքում Կոստանդնուպոլիս, Հռոմ, Ֆրանսիա, Անգլիա, Եգիպտոս, Մոնղոլիա և այլուր, նա էր գլխավորում երկիր բանակը, պատերազմ հայտարարում և խաղաղության դաշինք կնքում:

Կիլիկյան հայկական պատմության ուսումնասիրությունը ունի մեծ նշանակություն, քանի որ մշակութային հարստությունները, որ ստեղծվել էին այստեղ, կազմում են հայ ժողովրդի մշակութային հարստության շատ կարևոր մաս: Կիլիկյան հայկական թագավորությունը իր գագաթնակետին հասավ Լևոն Բ Մեծագործի ժամանակ: Այդ ժամանակաշրջանում Կիլիկյան հայկական թագավորությունը սփռված էր միջերկրական ծովի ափին՝ Ալեքսանդրետայից մինչև Սելևկիա և հանդիսանում էր մերձավոր արևելքի ամենահզոր պետություններից մեկը:

Այսպիսով Լևոն երկրորդի ամենամեծ նվաճումը այն էր, որ նա հայկական իշխանությունը վերածեց հայկական թագավորության, ինչը ընկալվեց նրա ժամանակակիցների կողմից ինչպես հայկական պետականության վերականգնում: Լևոն երկրորդի օրոք հայ ժողովուրդը կիլիկիայում կարողացավ զարգացնել իր բազմադարյան մշակույթը՝ պահպանելով իրենց լեզուն, կրոնը և ինքնությունը: Հայոց թագավորության մայրաքաղաքը՝ Միսը, դարձավ Հայկական մշակույթի կենտրոններից մեկը: Քաղաքը հայտնի էր իր մեծ բնակչությամբ, ինքնատիպ եկեղեցիներով, շքեղ պալատներով, ճանաչված համալսարաններով, այգիներով և այլն: Բացի Միսից՝ կիլիկիայի մշակութային կենտրոններից էին հանդիսանում Տարսոնը, Մարաշը, Պապեռոնը և այլն: Հիմնադրվեցին նոր խոշոր վանական համալիրներ՝ որոնցից էին Կարմիր վանքը, Հռոմկլան և այլն, այդ տեղերում նաև բացվեցին դպրոցներ և վարժարաններ, որտեղ կային ցուցադրված հազարավոր արժեքավոր ձեռագիր գրքեր, որոնք զարդարված էին Թորոս Ռոսլինի և Պիցակի գեղեցիկ մանրանկարներով: Հազարավոր այդպիսի ձեռագրեր հասել են մեր օրեր և հիմա պահպանվում են մատենադարանում:

Կիլիկիա այցելել էին այնպիսի ճանանչված գիտնականներ՝ ինչպիսիսն էին Վարդան Մեծը, Մխիթար գոշը և հայտնի հայ բանաստեղծ Հովհաննես Երզնկացին: Կիլիկյան-Հայկական նկարագրով ձեռագրերը մեծ քանակով պահպանվել են և բնականաբար գրավում են ուշադրություն: Կիլիկյան Հայաստանի հայտնի մշակութային կոթողներից էին Հռոմկլան, Սկևռան, Դրագարկը որտեղ աշխատում էին հայտնի վարպետներ, ինչպիսիսն էին Կիրակոսը, Հովանեսը, Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիցակը և այլք: Նրանց մանրանկարները այնքան կատարյալ էին, որ գիտության մեջ նրանք ընդունվում են որպես գրիստոնեական արևելքի արվեստի ամենակատարյալ նմուշները: Երևանի Մեսրոպ մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկում ողջ հասակով պատկերված է Լևոն Բ-ն, երբ դեռևս թագաժառանգ էր: Լևոն Բ-ն հագած է կապույտ գույնի պատմուճան, որի վրա կրում է կարմիր գույնի թիկնոց: Կապույտ պատմուճանի վրա դեղին ոսկեթելով գործված են կլոր մեղալիոններ: Մեղալիոնների ներսում գործված է գլխով դեպի ձախ

¹ Հայկական սովետական հանրագիտարան 5-րդ հատոր (էջեր՝ 408-426, Կիլիկյան Հայաստան):

շրջված և վարգի դիրքով առյուծ: Կենդանու մեջքի միջին մասում գործված է կլոր գունդ, որը հանդիսանում է իշխանության խորհրդանիշը:

1262 թվականին, Լևոն Բ թագավորի և Կեռան թագուհու ամուսնության առթիվ Թորոս Ռոսլինն ընդօրինակել է մի նոր <<Ավետարան>>, որի 288ա էջում պատկերված են թագավորն ու թագուհին՝ պաշտոնական հանդերձանքով: Լևոն Բ թագավորը հագած է կապույտ գույնի պատմուճան և կրում է բաց ծիրանագույն թիկնոց: Պատմուճանի վրա կարմիր գույնով պատկերված են մեղալիոններ, որոնց ներսում նույն գույնով, գլխով դեպի ձախ դարձած առյուծ է պատկերված: Այն ամբողջովին կրկնում է Լևոն Բ-ի նախորդ նկարի առյուծապատկերը: Թիկնոցի վրա սպիտակ գույնով մեղալիոններ են պատկերված, որոնց ներսում գլխով դեպի աջ ու ձախ դարձած մարդու դեմքով արծիվներ են պատկերված: Մեղալիոնների առաջացրած կորագիծ քառակուսու ներսում պատկերված են պոչի վրա հենված, թևեչր մարմնից հորիզոնական դիրքով հեռացված դիմահայաց արծիվներ: Թռչունը կտուցով շրջված է դեպի աջ: Կեռան թագուհին հանդերձավորված է կապույտ պատմուճանով և կարմիր գույնի թիկնոցով: Պատմուճանը դրվագագատված է ոսկեգույն և կարմիր գույնի թելերով: Ոլորուն նախշագարդի ներսում պատկերված է պոչի վրա հենված, թևերը մարմնից ուղղահայաց հեռացրած, դիմահայաց, թագակիր, մարդու դեմքով արծիվ: Լևոն Բ թագավորի հագուստի վրա պատկերված առյուծը, մարդու դեմքով արծիվները կրկնում են շուրջ 200 տարի առաջ Կարսի Գագիկ Աբասյան թագավորի, Գորանդուխտ թագուհու և Մարեմ արքայադստեր հագուստի վրա եղած պատկերները և ներկայացնում Հայոց արքայատների ժառանգորդության փաստը²:

Հնուց Կիլիկիան հայտնի էր իր արծաթագործությամբ և ոսկերչությամբ, որն իր զագաթնակետին հասավ Լևոն Բ-ի ժամանակ: Դեռ VI-VII դարերում կիլիկիան հայտնի էր որպես փոքր ասիաի ոսկերչության կարևոր կենտրոն, իսկ Լևոնի օրոք տեղի ունեցող տնտեսական աճը էլ ավելի զարգացրեց տվյալ բնագավառը: Դրա մասին են խոսում մեր օրեր հասած բացառիկ նմուշները, որոնք տարբերվում են իրենց բարձր զեղարվեստական առանձնահատկություններով և տեխնիկական կատարումներով³: Ցավոք սրտի պահպանված նմուշների քանակը շատ չէ՝

² Լ. Ագարյան, կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դարերում(էջ՝ 25) :

³ Ալեքսեյ Սուքիասյան, Կիլիկյան Հայկական Պետության պատմություն XI-XIV դդ. (էջեր՝ 66-68):

տասնյակից ոչ ավելի և նրանք կազմում են հայ վարպետների կողմից ստեղծած իրերի չնչին մասը: Այդ երևույթը պարզ բացատրելի է, քանի որ նյութական արժեք ներկայացնող թանգարժեք մետաղներից պատրաստված իրերը առևանգվում էին պատերազմների ժամանակ և վերածուլվում էին տարադրամ պատրաստելու նպատակով: Կան որոշ գրական տեղեկություններ, որոնք հաստատում են տվյալ փաստը: Օրինակ XII դարի պատմաբան Վարդան Մեծը հայտնում է , որ 1111թ. Հայոց իշխան Թորոսը հարձակվելով Կենդրոսկավիս ամրոցի վրա և զավթելով ամրոցի գանձարանը մեծ քանակ ոսկե իրեր տեղափոխեց Վախկ:

Այլ աղբյուրից հայտնի է դառնում, որ հանրահայտ Ներսես Լամբրոնացին ձուլելով իր ունեցած եկեղացիական սպասքը, վաճառեց այն 30000 դախեկանով և բաժանեց այն աղքատներին:

Հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1292թ.: Այդ թվականի ամռանը՝ եգիպտական մամլուքները հարձակվեցին հայ կաթողիկոսների նստավայրի՝ Հռոմկլաի վրա: Մամլուքները ոչնչացրեցին ամրոցը և գրավեցին բոլոր քրիստոնեական սրբությունները: Սրբություններից մեկը Գրիգոր Լուսավորիչի աջն էր, նրա գավազանը և սուրբ Հռիփսիմեի կոշիկը: Հատկանշական է, որ այդ ողբերգական իրադարձությունը արտացոլված է չափածո կերպով՝ արծաթե մասունքատուփի վրա, պատրաստված 1297 թ. Սկեվրի վանքում:

...Հռոմկլան գրավված էր:
Բնակիչները՝ որոնք գտնվում էին
այնտեղ,
պատանդ էին վերձրվել:
Նրա անկրկնելի
եկեղեցիները՝
տրորված են եղել անհավատների վոտքերով:
Սուրբ առարկաները՝
Կեղտոտված էին եղել թշնամու ձեռքերով
և սուրբ գրքերը
անխղճորեն ոչնչացված էին:⁴

Այսպիսով տարբեր պատմական և գրականագիտական տվյալները լրացնում են Գիլիկյան Հայաստանի ոսկերչական արվեստի զարգացման

⁴ Ա.Հովանիսյան, Գիլիկյան հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները (էջ՝ 110):

պատկերը: Նրանցից մենք տեղեկանում ենք մեզ չհասած ստեղծագործությունների, նրանց վրա եղած գրությունների, զարդարվեստի, օրինաչափությունների, դրանց ստեղծողների, պատմական գործիչների մասին, ում ճակատագիրը կապվում էր այդ հուշարձանների հետ:

Լևոն Բ-ի օրոք կիլիկյան Հայաստանն Արևելք-Արևմուտք առևտրին մասնակցում էր իր գյուղատնտեսական և արհեստագործական ապրանքներով: Արտահանում էին երկաթ, գունավոր մետաղներ, շինափայտ, հացահատիկ, բուրդ, ձիեր: Առևտրի զարգացմանը նպաստում էին Հայոց թագավորների կողմից եվրոպացի վաճառականներին տրված առևտրական արտոնությունները: Այսպես՝ 1201թ. արտոնություններ ստացան ջենովացիները, իսկ 1271 թ.՝ վենետիկցիները⁵: Քաղաքային բնակչության նշանակալից մասը զբաղվում էր արհեստագործությամբ: Արհեստավորները ստեղծում էին իրենց կազմակերպությունները՝ համքարությունները (եղբայրություն): Քաղաքի սահմաններում միևնույն մասնագիտության արհեստավորները միավորվում էին մեկ համքարության մեջ: Համքարության անդամ էին դառնում այն արհեստավորները, որոնք ունեին սեփական արհեստանոց: Նրանք ունեին վարպետի կոչում: Արհեստանոցում նրանց օգնում էին ենթավարպետները և աշկերտները: Նրանք վարպետ կարող էին դառնալ արհեստագործական որոշակի հմտություններ ձեռք բերելուց հետո:

Կիլիկյան Հայաստանում զարգացած էին մետաղամշակությունը, պղնձագործությունը, զինագործությունը, ոսկերչությունը, կաշեգործությունը և զանազան այլ արհեստներ:

Արհեստի և առևտրի զարգացման համար խիստ կարևոր էր նաև դրամաշրջանառության ճիշտ կազմակերպումը: Դրամների թողարկումը սկսվել էր դեռևս Ռուբինյան իշխանության շրջանում և շարունակվել մինչև պետության կործանումը: Հիմնական դրամական միավորը արծաթե դրամն էր: Քիչ չէին նաև պղնձե դրամները: Արծաթե դրամը, որը կոչվում էր թագավորական, օգտագործել են նաև այլ երկրներում: Կիլիկիայի թագավորության շրջանում դրվագվում էին մեծ քանակությամբ պղնձե ու արծաթե մետաղադրամներ: Եղել են նաև բիլոնե դրամների թողարկումներ (արծաթի համեմատաբար ցածր պարունակությամբ):

⁵ Ս. Բոռնագյան, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում (էջեր 261-264):

Արծաթե մետաղադրամների թողարկումները շատ տարածված էին: Սկզբնական շրջանում դրանք դրվագվում էին բարձր հարգի արծաթից և տարբեր արժեք ունեին՝ երկդրամ, դրամ, կես դրամ: Լևոն Երկրորդի (1271-1289 թթ.) գահակալության ավարտից հետո տնտեսական ու քաղաքական պատճառների հետևանքով սկսեցին թողարկվել ցածր հարգի արծաթե դրամներ, որոնք կոչվում էին թագվորիններ: Կիլիկիայի Հայկական թագավորության մետաղադրամների հետ միաժամանակ շրջանառության մեջ էին նաև հարևան երկրների դրամները՝ սելջուկներինը, մամլուքներինը և այլն⁶:

Հետագոտողների մոտ մեծ հետաքրքրություն է առաջացնում և Կիլիկյան Հայաստանի ճարտարապետությունը, որը ունեցել է մի շարք առաձևահատկություններ, որոնք դրսևնորվել են շինությունների կառուցման ժամանակ: Զարգացման յուրահատուկ պայմանները էականորեն նպաստել են քաղաքների, ամրոցների, եկեղեցիների, աշտարակների ու այլ կառույցների շինարարությանը: Պաշտպանական և հուշարձանային համալիրների կառույցների համար որպես հիմնական շինանյութ ծառայել է բնակաքան քարերը՝ ավազաքար, կրաքար, գրանիտ և այլն: Երեսպատման համար օգտագործվել է մարմար, փայտատեսակներից օգտագործվել են մայրին, կաղնին, ձիթենին:

Ամրոցներն ու բերդերը կառուցվում էին խոշոր կոպտատաշ քարերից, սոսնձում կրաշաղախով: Եկեղեցիների և հուշահամալիրների պատերը սրբատաշ էին արվում, իսկ լիցքը մանր քարերով: Բացվածքներն ավարտվում էին կիսաշրջան, սլաքային և աղեղնային կամարներով: Գմբեթային ծածկերում կիրառվում էին առագաստաթաղային կառուցվածքներ, զարդարվում էին մարմարով և խճանկարներով: Կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող ամրոցները պաշտպանված էին օժանդակ փոքր ամրոցներով, կառուցված ղժվարամասչելի դիրք ունեցող վայրերում: Մասնավորապես նման ձևով էին կառուցված Միս, Անարգաբա, Լամբրոն ամրոցները: Հատուկ ուշադրություն էր դարձվում ամրոցների ջրամատակարարմանը, և յուրաքանչյուր ամրոց ուներ մեկ կամ երկու ջրամբար: Գրեթե յուրաքանչյուր ամրոցում կամ դղյակում կար մի եկեղեցի, իսկ քաղաքներում մի քանիսը (մասնավորապես Միս քաղաքում դրանք 20-ից ավելի էին): Եկեղեցիները և մատուռները կառուցում էին

⁶ Գրիգոր Միքայելյան, Կիլիկյան Հայկական Պետության պատմությունը (էջ՝ 78):

ուղղանկյուն հատակագծով, կիսաշրջանաձև աբսիդով որպես միանավ բազիլիկներ: Նշանավոր վանքերից են Կոռիկոսի մեծ եկեղեցին, Սիսի Սուրբ Սոֆյայի տաճարը, Հռոմկլայի, Ադանայի, Պապեռոնի եկեղեցիները⁷: Կիլիկիայի հայերը, հատկապես ճարտարապետության ոլորտում, մեծ քանակով ներմուծություններ կատարեցին եվրոպական մշակույթ, օրինակ եկեղեցաշինության և ամրոցաշինության որոշ տարրեր: Հայկական աշտարակները կլոր հատակագծեր ունեին, որը հետագայում վերցրին Հիվանդախնամները և օգտագործեցին իրենց աշտարակների կառուցման մեջ: Հատկանշական է պատմաբան Վիլիելմ Տյուրոսացու տեղեկությունը այն մասին, որ 1124 թվականին Տյուրոս քաղաքի պաշարման ժամանակ, պարիսպների կործանման աշխատանքներին մասնակցել է անտիոքցի հայ ինժեներ Ավետիքը:

Արդի գրականության մեջ կան որոշ տվյալներ Կիլիկյան Հայաստանի երաժշտության մասին, որի հիմքը՝ X-XI դարերից այստեղ գաղթած հայերի բանավոր ու գրավոր երաժշտական ավանդույթներն են, որոնցից սակայն շատ քիչ տվյալներ են պահպանվել: Պահպանվել են գուսանական երաժշտության նմուշներ, որոնցից է Հեթում Ա-ի որդի Լևոն Գ թագավորի գերության առթիվ հորինված գուսանական քնարական-վիպական բնույթ ունեցող «Աւա՛ղ զԼեոնն ասեմ» հայրենասիրական երգը, «Մսրա թալանի» երգը և այլն:

Կիլիկյայի հայ գուսանների ստեղծագործությունները խաչակիրների շնորհիվ հաղորդվել են նաև Պրովնասի տրուբադուրների ստեղծագործությանը: Կիլիկիյում նշանակլի զարգացում է ապրել թվերգի երաժշտական բաղադրիչը, իր մեջ՝ ներառելով բուն երգեցողության խազագրեր: 13-րդ դարում Սիսում հրապարակվել է խազավոր Շարականի ամբողջական խմբագրությունը՝ «Խըլկցի» անվանումով, ըստ Գրիգոր Խուլ նշանավոր վարժապետի անվան: Կիլիկյան վանքերից Հռոմկլան, Սսի դպրոցը, Ակները, Արքակաղինը, Դրագարկը, Մլիճը, Սկևռան, եղել են ոչ միայն Կիլիկյան, այլ ընդհանրապես հայ երաժշտարվեստի մեծ կենտրոններ: Կիլիկյան Հայաստանի ստեղծած հոգևոր արժեքները իրենց ողջ փայլով մտան հայոց մշակույթի ու պատմության ընդհանուր գանձարան, և այդ տեսանկյունից Կիլիկիայի պատմության ուսումնասիրումը մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի պատմության համար:

⁷ Յովհաննիսեան Մ., Հայկական Կիլիկիայի բերդերը ու բերդաքաղաքները(էջ 15):

Ո՛Վ ԻՄ ՀԱՃԸՆ, ԳԵՂԱԾԻԾԱ՛Ղ ՀԱՅՐԵՆԻՔ...

Ալբերտ Հովհաննիսյան

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4
հիմնական դպրոց,
Ուսուցիչ՝ Հայաստան Միմոնյան

Հաճըն - այն սոսկ քաղաքի անուն չէ, այլ պատմությունն է իմ ծննդավայրի, այն հայրենիք է, հերոսական ուժի ու պայքարի հնոց, քաջերի ամրոց ու Կիլիկյան Տավրոսի արծիվների բույն:

Հաճըն քաղաքը տեղադրված է Կիլիկիայի հյուսիսում, Քերմես լեռան հարավային հանդիպագոտիներից մեկի վրա: Հաճընը Ատանայի կուսակալության ամենակարևոր գավառն է իր 84 գյուղերով եւ 30-35 հազար բնակիչներով: Կիլիկիան արտաքին աշխարհի հետ կապվում է 3 դռներով, որոնցից մեկը Հաճընն է: Այն հյուսիսից Կապադովկիան և Փոքր Ասիայի խորերը միացնում է Կիլիկիային:¹ Հաճընի դիրքը՝ անառիկ և անմատչելի, օդը՝ մաքուր, առողջարար, ջուրը՝ զով, առատ, առողջարար, արեւելքից հոսում է Գրտետ գետը, արեւելքից՝ Չաթախը:

Հաճընի շրջակայքում կային արծաթի, պղնձի, երկաթի բազմաթիվ հանքեր:

Հաճընը բաժանված էր թաղերի՝ Մանկըր թաղ, Գըրըմ, Թըլըսըմ, Գալէնտեր, Թօփճու, Իսլամ Թաղ:

Հաճընն ուներ հասարակական բաղնիք, 7 կամուրջներ՝ Յակոբայ կամուրջը, Քարկավունի կամուրջը, Հովիվներու կամուրջը, Զեպեյի կամուրջը, Պուրուխօ Գանտայան, Կեօքճիւենց Գանտայան, Թաղարնուցօ Գանտայան: Շրջակայքում կային ևս յոթ կամուրջներ:²

Հաճընի հարավային մասում, Գրտետի գետեզերքին գտնվում էր Կառավարական պալատը, որը երկհարկանի շինություն էր: Վերին հարկը ծառայում էր որպես ոստիկանության բնակատեղի, կառավարության պաշտոնատեղ, Գայմագամի նստավայր, դատարան և հեռագրատուն: Ստորին հարկը հատկացված էր բանտի և ոստիկանների ձիերի համար նախատեսում էր որպես ախոռ:

¹ Պողոսեան Հ., Հաճընի ընդհանուր պատմությունը, Lou- Անճէլըս, Քալիֆօրնիա, 1942թ., էջ 108

² Նույն աշխատություն, էջ 169

Հաճընի Վերին Թաղում գտնվում էր քաղաքապետարանը, որի պատերը զարդարված էին 'Պլաքի' քարերով: Այն կառուցվել էր 1902թ.: Հաճընի վերջին քաղաքապետը Կարապետ Չալյանն էր:

Հաճընում կային 6 եկեղեցի, որոնցից 3-ը՝ լուսավորչական, 2-՝ բողոքական, 1-ը՝ կաթոլիկ: Կար 1 մզկիթ իսլամի հետետորդների համար: Կային 9 գերեզմանոցներ:

Հայ առաքելական եկեղեցում նշանավոր առաջնորդներից էր Պետրոս Արքեպիսկոպոս Սարաճեանը, որը Կիլիկիայի անկումից հետո հաստատվել է Կիպրոսում, իսկ 1940թ. ընտրվել է Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս:

Հաճընի տարածքը հարմար չէր հողամշակույթյան համար: Հողագործության համար անբարենպաստ հողերը նպաստավոր էին այգեգործության համար:

Հաճընցին բնածին արհեստավոր էր: Տարածված արհեստներից էին խաղախորդությունը, շավար հյուսելու արհեստը, գուլպայագործությունը, կտավագործությունը, ձեռագործությունը, գորգագործությունը, ներկարարությունը և այլ բազմաթիվ արհեստներ:³

Հաճընի ժողովուրդը բարեպաշտ և աղոթասեր էր: Հաճընցու առօրյան սկսվում էր արևածագին եկեղեցի գնալով: Ճաշելուց հետո պարտադիր ասում էին.<Օրհնյալ ես Աստված>: Օրհնանքները պարզապես կաթում էին կանանց շուրթերից: Առաքելական 3 եկեղեցիներն են՝ Սբ. Աստվածածին, Սբ. Գևորգ և Սբ. Թորոս, վանքերից՝ Սբ. Հակոբը:

Հաճընն ուներ իր հոգեկան առանձնահատկությունները հարազատորեն պատկերացնող սովորություններ ու տոնակատարություններ, որոնք ուրույն կերպով ներկայացնում էին հաճընցու հոգեկան ներքնաշխարհը: Հաճընցիների կյանքը նահապետական էր: Նրանք հարգում էին մեծերին, ամոթխածությամբ ու ակնածանքով վերաբերվում նրանց: Հաճընցի կինը իր ամուսնու գլխի թագն էր, միշտ բարեսիրտ էր, համեստ, քիչ պահանջկոտ, աղքատասեր, ողորմություն տալը նրա լավագույն հատկանիշներից մեկն էր: Նա հարգանք ու պատիվ ընծայող էր, ամուսնու սիրո, վշտի ընկերն ու

³ Պողոսեան Հ., Հաճընի ընդհանուր պատմությունը, Lou- Անձևլըս, Քալիֆորնիա, 1942թ., էջ185

մխիթարիչը:⁴ Տարազը – տղամարդիկ կրում էին կտավե շապիկ և վարտիք, վրայից ալ կարմիր սև կամ գունավոր <մանուսայե անթերի>: Ձմռանը վրայից հագնում էին <ապա> :Որպես գլխանոց աղքատները կրում էին քիվահ՝ հարուստները՝ ֆես: Որպես ոտնաման կրում էին <եեմենի>, <ճիզմե>, <գունտուրա>, <փօստալ>, <փապուճ> եւ այլն:⁵ Կանայք հագնում էին ձեռագործ կտավե շապիկ, մանուսայե վարտիք ու զրպուն, իբրեւ գոտի մեջքներին կապում էին շալ: Տարիքավոր կանայք իրենց գլխին կապում էին եամշօղ, նորահարսները քողով ծածկում էին երեսները: Որպես ոտնաման հագնում էին ճիզմե, փափուճ և այլն:

Ուտելիքները - հաճընցիների սիրված ուտելիքներն են՝ պուլղուր, կորկոտ, ոսպ, սիսեռ, մսախառն բանջարեղեն, ապուրներ, խաղողի տերևներով սարքված սարմաններ, դավուրմա, փլավ, դդումի ապուր, մսով ու սոխով եփած գրգարթմա, խաշլամա, պաստրրմա, երշիկ և այլն: Ավանդական և տոնական ճաշատեսակն էր ճիտապուրը, որը հայտնի է հարիսա անունով: Հացը թխվում էր թաղային փուռերի մեջ և տարածված էին հացի բազմաթիվ տեսակներ: Սովորություն կար ամեն մի հացը եփելուց առաջ յուրաքանչյուրի տակը դնել կլոր, խոշոր և ախորժահամ տերև, հաճընցի կինը դա անվանում էր Հացի Թուփ:

Գրեթե ամեն մի տուն ուներ իր այգին ու պարտեզը, ամեն տուն լի էր մրգերով ու բանջարեղեններով, օղիով, գինով:

Հաճընի ընտանեկան, խնամիական, արյունակցական և դրացիական հարաբերությունները խիստ հետաքրքրական էին, ամեն մի տուն մի անառիկ բերդ էր: Հաճընցին ուներ իր հատուկ գավառաբարբառը, որը հպարտության զգացողություն էր առաջացնում ցանկացած հաճընցու մեջ: Հաճընում տարածված էր ժողովրդական բժշկությունը և գիտական բժշկությունը, կային նշանավոր բեկաբույժներ, ջրաբույժներ, մանկաբարձներ: Հաճընի մեջ տպարան չկար, սակայն կային ընթերցասրահներ ուր հավաքվելով հաճընցի ընթերցասեր ժողովուրդը կարդում էին <Մասիս>, <Սիհուն>, <Միջակ> և այլ թերթեր: Հաճընում կային ժողովրդական երգիչներ: Եղել են լուսանկարիչներ, որոնցից առաջինը Եփրեմ Ներսիսյանն է:

⁴ Պողոսեան Հ., Հաճընի ընդհանուր պատմությունը, Lou- Անճելըս, Քալիֆօրնիա, 1942թ., էջ 193

⁵ Պողոսեան Հ., Հաճընի ընդհանուր պատմությունը, Lou- Անճելըս, Քալիֆօրնիա, 1942թ., էջ 195

Տոնակյան օրերը - խրախճանքներ և տոնախմբություններ էին կազմակերպվում Մբ. Հակոբի, Մբ.Աստվածածնի, Մբ.Գևորգի, Մբ. Թորոսի, Մբ. Սարգիսի, Մբ. Գրիգորի, Մբ.Մինասի, Մբ. Վարվառի օրերին: Մեծ շքեղությամբ նշվում էին Ծննդյան տոները, Ջրօրհները՝ հունվարի 6-ին, Տեառնընդառաջը, Բարեկենդանի տոնը, Մեծ Պահքը, Չատիկը:

Կրթական կյանքը - Հաճընի կրթական առաջին կենտրոնը հանդիսացել է Մբ. Հակոբի վանքը, վանահայրերը հանդես են եկել իբրև ուսուցիչներ, հետագայում կրթությունը թևակոխել է նոր շրջան:Հայ լուսավորչականների հովանու ներքո բացվել է Կեղրոնական Վարժարանը, հայ ավետարանչականների հովանու ներքո <Յով> կամ Աղջկանց Բարձրագույն Վարժարանը, Հաճընի Ակադեմիան: Մբ. Աստվածածին եկեղեցուն կից 5 հարկանի մեծ շինության մեջ իր գործունեությունն է ծավալել Աղջկանց Սահակ- Մեսրոպյան Վարժարանը: Երկսեռ առաջին մանկապարտեզը բացվել է 1912թ., հետո այն փոխադրվել է Սահակ Մեսրոպյան Վարժարան: Եղել են որբանոցներ:Հաճընի մեջ թուրքերը ունեցել են տարրական (Բպտիստային) և բարձրագույն (իտատի) երկու վարժարաններ:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՃՐՆԻ 1920Թ. ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ. Հայ ժողովրդի պատմությունը չափվում է հազարամյակներով, որոնք ուղեկցվել են հերոսապատմությունով ու դաժան գոյապայքարներով: Ճակատամարտեր, հերոսամարտեր, ինքնապաշտպանական կռիվներ- ահա այն հնոցները, որտեղ հայ ժողովուրդը ապացուցել է ապրելու ի՛ր իրավունքը: Կիլիկիայի Հաճնի 1920թ. ութամսյա դյուցազնամարտը հայ ժողովրդի պատմության ազատագրական պայքարի հերոսական և անմոռանալի էջերից մեկն է, ինքնահաստատման ու դաժան գոյապայքարի խոսուն վկան: Այն հայոց պատմագրության թերևս ամենաքիչ ուսումնասիրված թեմաներից է՝ Լեռնային Կիլիկիայի հինավուրց քաղաքներից մեկը՝ Հաճընը, Առաջին աշխարհամարտից առաջ ուներ մոտ 30-35000 ազգաբնակչություն, բացառապես հայեր, որոնք 1915թ. ահավոր եղեռնի ժամանակ զինաթափվեցին ու արտրվեցին Տեր-Ջորի անապատները, որտեղ նրանց մեծ մասը ոչնչացավ: 1918թ. հոկտեմբերի 30-ին՝ Մուղրոսի զինադադարից հետո, տարագրության ամբողջ դառնությունը ճաշակած շուրջ 6000 հաճընցիներ վերադառնում են Հաճըն՝ հայրենի ծուխը կրկին ծխեցնելու վճռականությամբ: Սակայն հաճընցիների

⁶ Սանջյան Հ., <Հաճընի հերոսական ինքնապաշտպանությունը 1920թ.>,1991թ. էջ 3

խանդավառությունը կարճ է տևում: Մարաշի աղետից հետո արդեն որոշակի է դառնում, որ Ֆրանսիան Կիլիկիան թողնելու է թուրքերին, և նման դիվանագիտական խարդավանքների գոհը պետք է դառնար ոչ միայն Հաճընը, այլև ողջ Կիլիկյան Հայաստանը: 1920թ. սկզբներից Հաճընի դրությունը գնալով ծանրանում էր: Քեմալական վտանգն արդեն բացահայտ էր դարձել: Վերահաս աղետին հաճընցիները որոշում են դիմագրավել կազմակերպված՝ զենքը ձեռքներին: Հաճընի ինքնապաշտպանության գործը ղեկավարելու համար ստեղծվում է զինվորական բարձրագույն մարմին՝ Սարգիս Ճեպեճյանի գլխավորությամբ: Արամ Կայծակը՝ Թերզյանը, որի <<Վրեժ>> խմբի պարտականությունն էր օգնության հասնել վտանգված դիրքերին, նշանակվեց Ս.Ճեպեճյանի տեղակալ: Հաճընում ստեղծվում է <<Ինքնապաշտպանության բարձրագույն ժողով>> էպիսկոպոս Պետրոս Սարաճեանի գլխավորությամբ: Ինքնապաշտպանության Բարձրագույն ժողովի հրամանով զորակոչվում են Հաճընի 15-60 տարեկան բոլոր տղամարդիկ: Կարապետ Օղլուգյանը նշանակվում է 1-ի վաշտի հրամանատար, Մեսրոպ Շիրսումյանը՝ 2-րդ, Մկրտիչ Մանասյանը՝ 3-րդ, Վահան Ալթունյանը՝ 4-րդ, իսկ Պետրոս Թերզյանը՝ հեծելաջոկատի հրամանատար: Քաղաքը բաժանվում է չորս դիրքի՝

- 1.Իժ Օլուզ – հյուսիս-արևելյան
- 2.Տոնուզ- Մեքե – հյուսիս-արևմտյան
- 3.Կեօյնիկ- հարավ- արևելյան
- 4.Չալդան- հարավ-արևմտյան

Հիշյալ բոլոր դիրքերն էլ լեռնային էին, որը և բավական հեշտացնում էր ինքնապաշտպանության գործը: Փորվում էին խրամատներ, կառուցվում նոր դիրքեր: Ինքնապաշտպանության կենտրոնատեղի է դառնում Սբ.Աստվածածին եկեղեցին: Այս օրհասական պայմաններում, երբ Հաճընի կապը արտաքին աշխարհի հետ խզված էր, իսկ դրսից ակնկալվող օգնությունը՝ բացառված, հաճընցիները ստիպված էին անհավասար կռիվ մղել քեմալական զերակշիռ ուժերի դեմ:

- Ամբողջ ինն ամիս պայքար անմոռաց,
 Արծիւների բույն Հաճընը գոռաց:
 Շեփորդ հնչեցու՛ր, հերոս Ճեպեճի,
 Վճռեր է կռուիլ ամեն հաճընցի:
 Հաճընցի ծնանք, մեռնինք հաճընցի:

Գայլին դեմ առյիծ ամեն հաճընցի:⁷

Մարտի 13-ին Հաճընից ստացված մի հեռագրում ասվում էր. <Պաշարուեցանք, կըմեռնինք, անմիջապես օգնութեան համար պետք եղած տեղերը դիմէք>:⁸ Նման պայմաններում, երբ դրսից ակնկալվող օգնությունը չէր հասնում Հաճըն, ապա հաճընցիները կամ պետք է նահանջեին Սիս, կամ էլ պետք է մնային տեղում, ընդունեին անհավասար կռիվը, որը ոչ այլինչ էր, եթե ոչ ստույգ մահ բոլորի համար: Պետրոս եպիսկոպոս Մարաճյանի ստորագրությամբ հեռագիր է ուղարկվում Հաճըն, ուր ասվում էր. <Կըցավիմ, որևէ օգնութիւն մի սպասէք: Անմիջապես նահանջէք Սիս: Աստուած պահապան ըլլա ձեզի>:⁹ Հաճընցիները որոշում են նահանջել, սակայն Կիլիկիայի ազգային խորհրդի ազդեցիկ անդամ Միհրան Տամատյանը հեռագրում է. <Ասկեառաջ Մարաճեանի ստորագրութիւնով եկած հեռագրին կարևորություն մի տաք: Կորովնիդ բարձր պահեցէք: Վստահ եղէք, թե ամեն պարագայտակ դուք էք և Դուք պիտի ըլլաք հաղթողը>:¹⁰ Նահանջի պատրաստություններ տեսնող հաճընցիները ստանալով Տամատյանի հեռագիրը, կարծում են, թե իրավիճակը փոխվել է: Կառավարիչ Չայյանը, սակայն հորդորում է հաճընցիներին՝ բռնելու նահանջի ճամփան: Հաճընին շուտով հասցվում է երկրորդ հարվածը: Հաճընին օգնելու նպատակով Հաճըն եկող բոլոր կամավորական ջոկատները զինաթափվում էին կամ պաշարվում: Ֆրանսիացիների օգնությունը որպես կանոն, խոստումներից այն կողմ չէր անցնում: 1920թ. մարտի 28-ին սկսվում է թուրքերի կանոնավոր բանակի հարձակումը: Արդեն հուլիսի 13-ի անհաջող գրոհից հետո քեմալականները զինադադար են առաջարկում, հուլիսի 16-ին նույն թուրքերը հաճընցիներից պահանջում են հանձնել զենքերը: Հայերը, անշուշտ գիտակցում էին, թե ինչ է իրենց սպասում զենքերը հանձնելուց հետո և, բնական է որ մերժում են այն: Սակայն սովի ուրվականը և զինամթերքի պակասը լուրջ անհանգստություն է պատճառում հաճընցիներին: Ինքնապաշտպանության կոմիտեն վճռում է գրավել քաղաքին մեծ ավերածություններ

⁷ Բանաստեղծություն <Հաճընի հերոսամարտին քայլերգը>, հեղինակ՝ Գեորգ Կառվարենց, 1922թ.

⁸ Պողոսեան Հ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը >, Lou- Անճէլըս, Քալիֆորնիա, 1942թ., էջ 650

⁹ Թէրզեան Սոկրատ Յ. <Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը>, Պուէնոս Այրէս, 1956թ.

¹⁰ Պողոսեան Հ., նշվ. աշխատություն, էջ 652

պատճառող թուրքական թնդանոթը: Հանկարծակի եկած թշնամին լքում է Սուրբ Սարգսի դիրքը՝ հայերին թողնելով բավականաչափ ռազմամթերք:¹¹ Արամ Թերզյանի հրամանատարությամբ հաճընցի քաջերը օգոստոսի 6 լույս 7-ին գրավում են Տոնուզ- Մեքե բարձունքի վրա գտնվող թնդանոթը, սակայն հնարավորություն չունենալով այն տեղափոխել քաղաք, գլորում են դեպի ձորը: Բայց քանի որ թնդանոթը չէր վնասվել, ժողովուրդը այն տեղափոխում է Սբ. Աստվածածին եկեղեցու բակ: Այս հարձակումից հետո թուրքերը մարտադաշտում թողնում են մոտ 300 դիակ: Հայերի կորուստը կազմում է 15 սպանված մարտիկ: <<Օղանաւ եկաւ մեծ աւետիսով, մեր սրտեր լեցավ ուրախ յոյսերով....>>:¹² Ավա՛ղ, դրսից Հաճընին օգնելու ցանկություններն ու հույսերը այդպէս էլ չիրականացան: Ֆրանսիական իշխանությունները կասեցնում էին կամավորական խմբերի մուտքը Հաճըն: Մեպտեմբերի 22-ին շուրջ 300 հաճընցիներից կազմված կամավորական խումբը Ախարճայում զինաթափվում է, որով էլ կտրվում է կործանման դատապարտված հերոս Հաճընի հույսի վերջին աղբյուրը: Պարենի և զինամթերքի պակասը լրացնելու համար կոմիտեն որոշում է հարձակվել Հաճընի հյուսիսում գտնվող Ռումլու և Գյուզելիմ գյուղերի վրա: Մեպտեմբերի 23-ի գիշերը հաճընցիները հարձակվում են վերոհիշյալ գյուղերի վրա: Տողանբէյը հազիվ ձողոպրում է Վահկա: Հաճընն ապրում է կարճատև անդորրի մի շրջան: Հոկտեմբերի սկզբին կառավարիչ Չալյանը առաջարկում է օգուտ քաղել թուրքերի ժամանակավոր թուլությունից և նահանջել, սակայն այդ առաջարկը չի ընդունվում: Քեմալականների նոր համալրված զորքը սկսվում է վճռական հարձակումը: 1920թ. հոկտեմբերի 15-ին՝ ճակատագրական օրը՝ վաղ առավոտյան քեմալականները անցնում են կատաղի հարձակման և ներխուժում քաղաք: Ավերվում, հրդեհվում են բազում շինություններ: Խուճապահար ժողովուրդը շարժվում է դեպի քաղաքի հնարավոր ելքերը, բայց թշնամին ամենուրեք գնդացիներ էր տեղադրել՝ փակելով հաճընցիների ճանապարհը: Օգտվելով առաջացած խուճապից քեմալականները մտնում են քաղաք ու գազանաբար վերացնում գրեթե բոլոր բնակիչներին: Ահա թե ինչ է գրում ֆրանսիացի պատմաբան Պոլլյու Վեուն Հաճընի կոտորածի մասին. <Ներս մտան թուրքերը, գազաններու պէս մռնչելով, եւ

¹¹ Պողոսեան Հ., նշվ. աշխատություն, էջ 684

¹² Բանաստեղծություն <Օղանաւ>, հեղինակ՝ Արամ –Սսպետ, Ստանա, 1921թ.

վերջակետ դրին: Դուռներու ներքեւէն արիւնը գետի պէս կհոսէր: Քահանաներ, կիներ, երեխաներ, մումերը ձեռքներուն մէջ, իրենց անձը տրամադրեցին գերագոյն զոհողութեան... եւ խարոյկները վառեցան քսան օրեր եւ հրկիզեցին անոնց մարմինները»¹³: Հաճընցիների որոշ խմբեր կարողանում են ձեռքել պաշարման օղակը: Շուրջ 387 փրկված հաճընցի անցնում է Ադանա, ապա՝ Դէօրթ-Յուլ: Հաճընը 8 ամիս կովեց հերոսի պէս և ընկավ աստվածային վեհանձնությամբ:

Որոշ հեղինակներ Հաճընի անկման ամբողջ պատասխանատվությունը գցում են հայ ազգային մարմինների, հատկապէս Միհրան Տամատյանի խղճին: Իսկ հիշատակված փաստերն ապացուցում են, որ Հաճընի անկումը առաջին հերթին արդյունք էր ֆրանսիական զինվորական և քաղաքական իշխանությունների թրքանպաստ դիրքորոշման: Սակայն Հաճընի անկման գլխավոր պատասխանատուն ասպետական Ֆրանսիան էր, որը պատրաստվում էր վաճառել ողջ կիլիկեհայությանը՝ 1921թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրով:

Հաճընի հերոսական դյուցազնամարտի դասերը այսօր էլ արդիական են և Արցախյան ազատամարտի այսօրվա հերոսները կերտում են նորօրյա սխրանքներ, որոնք հերոսապատում են ներկա և գալիք սերունդների համար՝ որպէս ազգի և ժողովրդի ապրելու և հարատեւելու գիտակցում:

Նոր Հաճըն. «Հաճընը ոչ ևս է» - այսպէս մահագոյի ձևով Հաճընի անկման լուրը առաջինը հայտնեց Ատանայի «Տավրոս» թերթը 1920թ. հոկտեմբերի 24-ին:¹⁴

Ոչ, Հաճըն անունը չի կարող ջնջվել: Այն պիտի վերածնվի, այն էլ՝ մայր հայրենիքում: Այսպէս վճռեցին հաճընցիները և անմիջապէս սկսեցին կյանքի կոչել այդ երազանքը: Հայրենի հողի վրա 1958թ. նոյեմբերի 4-ին վերածնվում են Հաճըն անունն ու նրա փառավոր հիշատակը՝ ծնունդ տալով ներկայումս ծաղկող ու բարգավաճող Նոր Հաճըն քաղաքին: Ճակատագիրը վերապրող հաճընցիներին սփռում է աշխարհով մեկ: Պատվախնդիր հաճընցիները, արծվաբույն Հաճընի անմար ջահը սրտերում վառած, դեգերեցին օտար ափերում, մաքառեցին

¹³ Պոյաճեան Տ., Հայկական լեզուներ, Ուոթըրթաուն, Մէս., 1965, էջ 319

¹⁴ Պողոսեան Հ., «Հաճընի ընդհանուր պատմությունը», Lou- Անճէլըս, Քալիֆօրնիա, 1942թ. էջ 718

ու հաստատվեցին՝ ստեղծելով գաղութներ իրենց ազգային, հասարակական, կրթական, եկեղեցական կառույցներով և հայրենակցական միություններով: 1973թ. կանգնեցնելով Կիլիկիայի Հաճնի 1920թ. հերոսամարտի նահատակների հիշատակը հավերժացնող հուշակոթող՝ հերոս հաճընցիների հետնորդները հավերժացնում են իրենց նախնիների սխրագործությունը: Կոթողն այդ պատմում է հաճընցիների անհավասար կռվի մասին՝ մեզ սերունդներին թողնելով հայրենասիրության ու ազատասիրության դասեր: Հերոսական ոգու հուրը միշտ վեր է բարձրանում, վերածնվում այն հոգիներում, որոնք պատմության դաժան քառուղիներում կանգնում են կյանքի ու մահվան ճամփաբաժնի վրա՝ հանուն կյանքի: Այդ կյանքը բոլորինս է, ապրենք երկար ու միշտ հիշենք մեր հերոսների անձնուրաց հայրենասիրության վառած հրդեհի բոցերը: Փա՛ռք ու պատիվ հերոսամարտեր կերտողներին, նրանց սերունդներին ու Հաճընի հիշատակը վառ պահողներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	3
ԲԱԺԻՆ 1.	
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ	
Գայանե Միրաքյան, Նանե Ներսիսյան	
Հայկական պետականության հիմնադրման պատմական գործոնները.....	4
Ռոբերտ Հարությունյան	
Կիլիկյան հայոց թագավորությունը. նրա դերը աշխարհաքաղաքական հարաբերություններում և միջազգային առևտրում.....	8
Կարեն Ավդայան, Վահե Կարապետյան	
Դիվանագիտության դերը Կիլիկյան Հայաստանի պետականության կայացման գործում.....	14
Մարիետա Ալեքսանյան	
Լևոն Մեծագործ արքա.....	22
Մովսես Աղեկյան	
Կիլիկիայի հայոց թագավորության հռչակումը.....	29
Մարիամ Մուկուչյան, Սոնա Ասատրյան	
Կիլիկիայում Հեթումյան հարստության հաստատումը.....	34
Ռոզա Աբրահամյան	
Կիլիկյան Հայաստանը մոնղոլների և մամլուքների միջև. Հեթում Ա-ի դիվանագիտական քայլերը.....	43
Մոսե Միմավորյան	
Կիլիկյան Հայաստանի հարաբերությունները իսաչակիրների և սելջուկների հետ.....	51
Ալբերտ Նիկողոսյան	
Կիլիկյան Հայաստանը Լևոն Ա-ի և Թորոս Բ-ի գահակալման օրոք.....	58
Ռուզաննա Մարգարյան, Անի Հակոբյան	
Լևոն 6-րդ Լուսինյան. Կիլիկիայի դեգերող արքան.....	63
Արարատ Գևորգյան	
Եգիպտոսի մամլուքներն ու Կիլիկյան Հայաստանի անկումը.....	76

ԲԱԺԻՆ 2.

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ
ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ**

Գայանե Եսայան

Կիլիկյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը և
պետական կարգը 84

Թագուհի Տոռոզյան

Կիլիկիայի հայկական պետության պետական կարգը 91

Լիլիթ Ներսեսյան

Կիլիկյան Հայաստանի պետական կարգը 100

Իրինա Մաշուրյան

Կիլիկիայի հայկական դրամները 106

Նունե Հակոբյան

Կիլիկիայի գրիչներն ու ծաղկողները 117

Միլենա Խալենյան

Կիլիկյան Հայաստանի վաճառաշահ քաղաքները
և առևտրի զարգացման նախադրյալները 125

Հայկ Մնացականյան

Կիլիկյան Հայաստանի քաղաքները 132

Մեղա Մելքոնյան

Կիլիկյան Հայաստանի առևտրական հարաբերությունները 13-14-րդ . դդ 138

Լևոն Մինասյան

Կիլիկյան հայկական թագավորության մշակույթը.
Լևոն Բ Մեծագործի օրոք 145

Ալբերտ Հովհաննիսյան

Ո՛վ իմ Հաճըն, գեղածիծա՛ղ հայրենիք 152

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՐՈ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Աշակերտական գիտաժողովի նյութերի ժողովածու

Համակարգչային չափաբերման, էջադրման,
ձևավորման աշխատանքները՝ Տաթև Ավագյանի

Տպագրությունը՝ «Ռիզոգրաֆ» եղանակով
Թուղթը՝ Օֆսեթ
Չափսը՝ 60 x 84^{1/8}
Տառատեսակ՝ Sylfaen
Տպաքանակ՝ 250
Գինը՝ պայմանագրային

ISBN 978-9939-866-02-4

Եվրասիա միջազգային համալսարան
ՀՀ, 0014, Երևան Ազատության 24/2
Հեռ.՝ (+374 10) 299088
Էլ.փոստ՝ info@eiu.am
Էլ.կայք՝ www.eiu.am